

Լ. Ն. ՄԵՐՐԱԲՅԱՆ
Գ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ի Ր Ա Վ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ուսումնական ձեռնարկ



ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ»
2016

ՀՏԴ 340(07)
ԳՄԴ 67.0g7
Մ 579

Չրապարակվել է ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսներ՝

***իրավագիտության դոկտոր Արմեն Հայկյանց
իրավագիտության թեկնածու Արսեն Մանուկյան***

Մեհրաբյան Լ., Սուքիասյան Գ.

Մ 579 Իրավագիտություն: Ուսումնական ձեռնարկ/ Լ. Մեհրաբյան, Գ. Սուքիասյան. - Եր.: Տնտեսագետ, 2018.- 332 էջ:

Տնտեսագետ ուսանողներին ներկայացվող՝ բուհական դասընթացի ուսումնական ծրագրին համապատասխան շարադրված «Իրավագիտություն» ուսումնական ձեռնարկում լուսաբանվում են պետության և իրավունքի առանցքային հիմնախնդիրները, սահմանադրական, վարչական, աշխատանքային և քաղաքացիական իրավունքի ինստիտուտները:

Աշխատանքի հիմքում ՀՀ սահմանադրությունը և ՀՀ վարչական, աշխատանքային ու քաղաքացիական օրենսգրքերն են:

ՀՏԴ 340(07)
ԳՄԴ 67.0g7

ISBN 978-9939-61-192-1

© «Տնտեսագետ», 2018



Մեհրաբյան Լ. Ն. (IV, V բաժիններ)
Սուքիասյան Գ. Ա. (I-III բաժիններ)

ԹԵՄԱ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հարց 1. Պետության հիմնական հատկանիշները

Պետության ծագման գործընթացի ուսումնասիրությունն ունի ոչ միայն ճանաչողական, այլև քաղաքական-գործնական նշանակություն: Այն հնարավորություն է ընձեռում հասկանալու ինչպես դրա սոցիալական բնույթը, այնպես էլ առանձնահատկություններն ու հիմնական գծերը:

Մարդկային հասարակության պատմության բոլոր ժամանակներում տարբեր երկրների քաղաքական կյանքի տեսության և պրակտիկայի առանցքում եղել և այսօր էլ մնում է պետությունը՝ որպես ինստիտուտ: Ծագման պահից ի վեր այն էապես տարբերվել է ինչպես իրենից առաջ գոյություն ունեցած պետական կազմավորումներից, այնպես էլ ոչ պետական կառուցվածքներից և կազմակերպություններից՝ միայն իրեն հատուկ հատկանիշներով:

Պետության ծագմանը, դրա հիմնական հատկանիշների պարզաբանմանը նվիրվել են բազմաթիվ իրարամերժ հետազոտություններ, որոնք այսօր էլ սոցիոլոգների, քաղաքագետների, տնտեսագետների և իրավագետների շրջանում ընկալումների բազմազանությունն ու տարակարծություններ են առաջացնում: Պետության ծագման պատճառների լուսաբանմանն ուղղված համաշխարհային մտքի հետազոտություններում, որպես ընդհանուր օրինաչափություններ, նշվում են մարդկության համայնական հասարակարգի երկարատև զարգացման գործընթացում աստիճանաբար ստեղծվող որակական վերափոխումների նախադրյալները: Աշխատանքի գործիքների կատարելագործմանը զուգահեռ, մարդիկ ձեռք էին բերում արտադրական հմտություններ, բարձրանում էր աշխատանքի արտադրողականության մակարդակը, ստեղծվում էին նշակութա-

յին արժեքներ, հաստատվում բարոյականության նորմեր: Հասարակության անդամների շահերը դառնում էին առավել բազմաբնույթ և հակասական:

Արտադրության նախնադարյան եղանակից որակապես նորին անցնելու գործում էական դեր է խաղացել աշխատանքի հասարակական բաժանումը՝ փոխարինելով տղամարդու և կնոջ միջև աշխատանքային գործառույթների բնական տարանջատմանը: Որպես աշխատանքի առաջին խոշոր հասարակական բաժանման օրինակ է դիտարկվում անասնապահության անջատումը հողագործությունից: Հետագայում վերջինից անջատվեց արհեստը: Առավել ուշ առանձնացան մարդկանց խմբեր, որոնք զբաղվում էին ապրանքափոխանակությամբ: Այս ամենը նպաստեց արտադրության գործիքների կատարելագործմանը, որն էլ, իր հերթին, խթանեց աշխատանքի արտադրողականության մակարդակի բարձրացումը: Մարդը սկսեց ավելի շատ ապրանք արտադրել, քան անհրաժեշտ էր իրեն ապրելու համար: Հասարակության մեջ առաջացավ հավելյալ արդյունք, որն էլ հանգեցրեց մասնավոր սեփականության ձևավորմանը:

Հավելյալ արդյունքը հնարավորություն էր տալիս առանձին ընտանիքներին, նրանց գլխավորներին, առաջին հերթին՝ ավագանիներին, զորապետներին և քրմերին իրենց ձեռքում կենտրոնացնելու աշխատանքի միջոցներ, ավելցուկ ապրանքների պաշարներ, իսկ հետագայում՝ նաև անջատ հողատարածքներ: Ծագեց մասնավոր սեփականությունը, և հասարակությունը սկսեց շերտավորվել ըստ զույքային հատկանիշների: Երևան եկան հարուստներ և աղքատներ, որոնց շահերը սկսեցին հակասել միմյանց: Հարուստները ջանում էին ամրապնդել իրենց տնտեսական հզորությունը, իսկ աղքատները՝ փոխել իրենց կախյալ վիճակը: Ձևավորված արտադրատեղանակի պայմաններում տոհմացեղային իշխանությունն անգոր էր և հարմարեցված չէր այնպիսի հասարակական գործեր կառավարելուն, որտեղ հասարակության անդամների շահերն անհամատեղելի էին և ունեին հակամարտ բնույթ: Ի վերջո, հասարակական իշխանությամբ պայմանավորված, տատանվեց կառավարման հավասարակշռությունը: Այս պատճառով էլ տոհմացեղային հարաբերություններում գործող ապրանքային արտադրական հարաբերությունների հիմքի վրա սաղմնավորվեց իշխանագոր այլ մարմին, որը պետք է կարողանար ապահովել հասարակությունից աստիճանաբար անջատվող սեփականատերերի շահերի առավելությունը սեփականագուրկ ամբոխից: Հասարակությունը մարդկանց տնտեսապես անհավասար խմբերի տրոհվելու հետևանքով ծնվեց իշխանության մի այնպիսի ձև՝ ըստ որի մի կողմից պետք է պաշտպան-

վեին ունևոր խավի շահերը, իսկ մյուս կողմից՝ զսպվեին տնտեսապես կախյալ վիճակում գտնվողների ցանկությունները: Հասարակությունից առանձնացված այդպիսի կազմակերպություն էր ստրկատիրական պետությունը:

Անցյալի և ներկայի գիտական միտքը, ինչպես նշվեց, առաջ է քաշել պետության ծագման մի քանի տեսություններ: Դրանցից հիմնականներն են բնական-իրավական, օրգանական, հոգեբանական, բռնության և տնտեսական տեսությունները¹, որոնք ինչպես նախկինում, այնպես էլ այսօր իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում են և նպաստում են պետության ծագման պատճառների և հատկանիշների լուսաբանմանը:

Պետության ծագման պատճառները ներկայացնող տեսությունների շարքում, կարևորելով իրական հանգամանքների ճիշտ և խոր վերլուծությունները, զնահատվում է տնտեսական մատերիալիզմի հսկայական ծառայությունը տնտեսական գործոնի բացառիկ նշանակությունն ապացուցելու գործում: Այս առումով, մատերիալիստական տեսության ելակետն այն է, որ պետությունը ծագել է ամենից առաջ տնտեսական պատճառներով, մասնավորապես՝ աշխատանքի հասարակական բաժանման, հավելյալ արդյունքի և մասնավոր սեփականության առաջացման, ինչպես նաև հակադիր տնտեսական շահեր ունեցող դասակարգերի տրոհման հիման վրա: Որպես այդ գործընթացների օբյեկտիվ արդյունք՝ այն ճնշման և կառավարման հատուկ միջոցներով զսպում է դասակարգերի հակամարտությունը՝ առավելապես պաշտպանելով տնտեսապես տիրողների շահերը: Միանգամայն հասկանալի է, որ այս տեսության ակունքներում արտադրատնտեսական հարաբերություններն են, որոնց անբաժան մասն է պետությունը:

Իրավագետները պետության, դրա հիմնական հատկանիշների և պետական իշխանության բնութագրումներում անառարկելիորեն շեշտադրում են հետևյալ գործոնները.

- ա) քաղաքական իշխանության միասնական տարածքային կազմակերպում,
- բ) հասարակության կառավարման հատուկ ապարատի առկայություն՝ բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար,
- գ) իշխանության ինքնիշխան կազմակերպում (սուվերենություն),

¹ Дидро Д., Соч., т. VII, М., 1939, Руссо Ж.Ж., Об общественном договоре, М., 1938, Спенсер, Основание социологии, т. I, II, СПб, 1908, Гумплович Л., Общее учение о государстве, СПб, 1910, Петражицкий Л., Теория права и государства, теорией нравственности, т. 1, СПб, 1907, Маркс К., Энгельс Ф., соч., т. 21, Ленин В., Полн. соб. соч., т. 33, 39.

դ) հասարակական կյանքի իրավական կազմակերպում¹:

Ժամանակակից իրավագետների մի ստվար հատված, ի լրումն վերը նշված գործոնների, հիմք ընդունելով Արևելքի և անտիկ աշխարհի պետությունների ծագման և զոյատևման հարուստ փորձը, որպես պետության հիմնական գործառույթ առանձնացնում է նաև հարկերի հավաքագրումը՝ առանց որի վերջինիս գոյությունը հատկապես մեր օրերում կասկածի տակ է առնվում²:

Իրավագիտության մեջ պետության ծագման, դրա հատկանիշների լուսաբանման հարցերում անդրադարձը հարկերին և տուրքերին վկայում է այն մասին, որ նյութական, արտադրական, տնտեսական հարաբերությունները մշտապես եղել են մարդկանց կենսագործունեության աղբյուր: Ժամանակի ընթացքում, հասարակության թուլլովությանմբ և աջակցությամբ ձևավորված պետական իշխանության միջոցով, պետությունը վերածվել է քաղաքական կազմակերպության՝ իրեն հատուկ ինստիտուտների շնորհիվ իրականացնելով պետական և քաղաքական կառավարում:

Այսպիսով, որպես հասարակության տարբեր սոցիալական խմբերի անհաշտության արգասիք, պետությունն աստիճանաբար ձևավորում է ոչնչով չսահմանափակվող պետական իշխանություն, որը զարգացման որոշակի աստիճանում, ընդարձակելով իր սահմանները, վերածվում է քաղաքական իշխանության:

«Իշխանություն» հասկացության ժամանակակից սահմանումներում այսօր էլ անփոփոխ կերպով պահպանվում է «մեկ կամքի ենթարկվածությունը մյուսին» արտահայտությունը՝ միայն ավելացնելով՝ «ենթարկվածությունը» տվյալ պահին իշխող հանրային կամքին³: Հասարակական կյանքում իշխանությունն անհրաժեշտ է առանձին անհատների կամքը կոլեկտիվի կամքին ենթարկելու, մարդկանց գործունեության կազմակերպման և համակարգման համար: Այսպիսի հարցադրմամբ՝ իշխանությունը հասարակական գործառույթ է, որը հատուկ է հասարակական կեցության յուրաքանչյուր ձևի: Ժամանակակից աշխարհում հասարակության և իշխանության փոխադարձ կապվածության հարաբերությունների ճշգրիտ լուսաբանման համար կարևոր չէ, թե իրավագիտության մեջ ձևավորված տեսություններն ինչպիսի ուղղվածություն ունեն՝ սոցիա-

¹ Проблемы общей теории и права и государства (уч. для вузов), "Норма", М., 2001.

² Խրոպանյուկ Վ., Պետության և իրավունքի տեսություն, Ե., «Գոշ», 1997, էջ 69-74: Общая теория государства и права (академический курс), уч. для вузов, том 1, М., "Зеркало", 1998, с. 10.

³ Теория государства и права. Курс лекций, М., 1997, с. 44.

լակա՞ն, քաղաքակա՞ն, թե՞ տնտեսական:

Մարդկային հասարակության վաղ շրջանում իշխանությունը հասարակական կյանքի կարգավորման գործոն էր: Անմիջականորեն ձուլված լինելով ողջ հասարակությանը՝ այն արտահայտում էր նրա շահերը և հասարակական իշխանություն էր՝ բառի իսկական իմաստով:

Ընդ որում, հասարակական իշխանությունը նույնպես հարկադրական բնույթի է, քանի որ իշխանության իրագործումն ամեն մի հասարակությունում ենթադրում է փոքրամասնության՝ մեծամասնությանը ենթարկվածություն, որը կարող է կատարվել միայն որոշակի ներգործությամբ: Այդուհանդերձ, մարդկային հասարակության առաջացման առաջին փուլում, երբ չկային դասակարգեր, սոցիալական խավեր, հարկադրանքը միանգամայն այլ կերպ էր դրսևորվում՝ ոչ թե ֆիզիկական բռնությամբ, այլ հասարակական կարծիքի ուժով՝ «փոքրամասնությունը՝ մեծամասնությանը» ենթարկելով:

Պետությունը, յուրացնելով հասարակական իշխանությունը, այն փոփոխում է, այսպես կոչված, **հրապարակային** կամ, որ իր էությանմբ նույնն է, պետական իշխանության: Հրապարակային իշխանությունն իր բովանդակությամբ, կազմակերպվածությամբ և ձևով հատուկ բնույթի հասարակական իշխանություն է: Այն կազմավորվում է բնակչությունից անկախ և մեծամասնության կամքին հակառակ, դառնալով մարդկանց իր կամքը պարտադրող հատուկ տարակարգ, որն առանձնանում, վեր է կանգնում հասարակությունից՝ ուրիշներին կառավարելու համար: Ելնելով կառավարման շահերից ու նպատակներից՝ ձևավորվում է հարկադրման որոշակի ապարատ, որի հիմնական գործելաձևը բռնության կիրառումն է:

Ինչպես տպավորիչ կերպով գրում է Ֆ. Էնգելսը, յուրաքանչյուր պետության մեջ գոյություն ունի հրապարակային իշխանություն, որը կազմված է ոչ միայն զինված մարդկանցից, այլև իրային կցորդներից՝ բանտերից և ամեն տեսակի այլ հարկադրիչ հիմնարկներից, որոնք հասարակության տոհմային կառուցվածքին բնորոշ չէին: Պետության մեջ **հրապարակային իշխանությունը** բնակչությունից առանձնացված իշխանություն է, այն ձուլված չէ ողջ հասարակությանը, անմիջականորեն չի համընկնում բնակչության հետ²: Հասկանալի է, որ հրապարակային կամ պետական իշխանությունն իր էությամբ հասարակական բնույթի է՝ օժտված այնպիսի կառուցվածքով, որտեղ կառավարման ապարատը ներկայացնում են հա-

¹ Королев А.И., Мушкин А.Е., Государство, власть, "Правоведение", 1961, N2.

² Մարքս Կ., Էնգելս Ֆ., Ընտիր էջեր, երկու հատորով, հ. 2, Ե., 1950, էջ 409:

տուկ բնագավառների մարդիկ, հարկադրիչ հիմնարկները, և, իհարկե, մեծ դեր ունեն հարկերը և այլ պարտադիր վճարները: Վերջիններիս բացակայությունը կործանիչ ազդեցություն կունենա պետության գոյատևման համար: Հասարակական իշխանության հասկացությունը, ըստ էության, բացահայտում է իշխանության սոցիոլոգիական տեսակետը, մինչդեռ հրապարակային իշխանությունը, լինելով քաղաքական հասկացություն, ցույց է տալիս հասարակական իշխանության պետական կազմակերպություն լինելը: Դժվար չէ նկատել, որ իրավական բովանդակությամբ՝ «հասարակական իշխանություն» հասկացությունը նշանակալիորեն ավելի լայն է, քան «հրապարակային իշխանությունը», քանի որ «իշխանություն» բառն այստեղ գործածվում է սոցիալական գործառույթի և քաղաքական կատեգորիայի իմաստներով:

Հրապարակային իշխանությունը, աստիճանաբար տարանջատվելով բնակչությունից, կենսագործվում է վերջինիս պաշտոնական ներկայացուցչի՝ պետության միջոցով, որը բնակչությանը և հասարակական կյանքի մյուս ոլորտները կառավարում է միասնական իշխանության դրսևորումներով (դրանք հասարակության կառավարման առօրյա կյանքում հանդես են գալիս որպես իշխանության կազմակերպման գործունեության տարբեր ձևեր):

Պետական իշխանության հիմքում ի սկզբանե եղել և այսօր էլ մնում են այն արտադրատնտեսական հարաբերությունները, որոնք ծնունդ են տվել պետությանը: Այլ խոսքով, պետական իշխանությունը դրա հատկանիշների հանրագումարային արդյունքի գործնական դրսևորումն է՝ ըստ կազմակերպման ձևերի: Պետության հատկանիշների դրսևորմանը համապատասխան՝ ստեղծվել է պետական մարմինների համակարգ, որի միջոցով կյանքի են կոչվել իշխանության տարբեր ձևեր: Հասարակության պատմական զարգացմանը զուգընթաց, պետական կառավարման ոլորտում, ըստ իշխանության կազմակերպման ձևի, զատվել են օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները:

Միաժամանակ, պետության հատկանիշներից բխող իշխանության կազմակերպումն իրականացնող մարմինների ամենօրյա գործունեության ձևերին համապատասխան, հասարակությունում առաջացել է պետական իշխանության իրականացումը սահմանազատելու անհրաժեշտություն, որի արդյունքում ձևավորվել են իշխանության բաժանման հանրահայտ տեսությունները: Դրանց հիմքում կառավարման առօրյա խնդիրներն են, որոնք, հասարակության զարգացմանը զուգընթաց, փոփոխվում են: Ի վերջո, չի բացառվում, որ ժամանակի ընթացքում կարող են առաջանալ պետական իշխանության կազմակերպման նոր ձևեր, որոնք էապես

կտարբերվեն այսօր հայտնի բոլոր ձևերից: Անկասկած, այդպիսի փոփոխությունները պայմանավորված են պետությունը սնող արտադրատնտեսական հարաբերություններով, որոնք պետության բնութագրիչների շարքում պետք է համարել հիմնականը: Դրսևորման ձևերն են հարկերը, պետության օգտին կատարվող բազմաբնույթ պարտադիր վճարները և փողը՝ ժամանակակից աշխարհում իր բոլոր գործառույթներով:

Պետությունը, **հարկերը և տուրքերը** հասարակության երկվորյակ օրգանական մասն են. դրանցով են պայմանավորված հասարակության յուրաքանչյուր անդամի տնտեսական, սոցիալական, քաղաքական և քաղաքացիական իրավունքները, ինչպես նաև ազատությունների երաշխավորված հնարավորությունները: Ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում պետական իշխանությունների բաժանման և կազմակերպման նորանոր իրավական տեսություններ են ձևավորվում, որոնց շարքում, լայն առումով, առանձնանում է պետական իշխանության տնտեսական ուսմունքը՝ նվիրված ֆինանսական իշխանության դրսևորման ձևերին:

Յարց 2. Պետության գործառույթի հասկացությունը, տեսակները

Պետության գործառույթները դրա էությունն արտահայտող գործունեության հիմնական ուղղություններն են, այդ թվում՝ հանրային իշխանության իրավական կազմակերպման գործընթացը: Պետք է նկատել՝ պետության գործունեության մեջ իրատեսական են համարվում այն գործառույթները, որոնք բխում են դրա բնույթից և համապատասխանում են դրա էությանը: Իսկ այն գործառույթները, որոնք դուրս են պետության գործունեության շրջանակից և իրենց գործնական դրսևորումներով չունեն պետական բնույթ, չեն կարող համարվել պետական:

Պետության գործառույթների առանձնահատկությունը, էությունը և իմաստը **անհատների գործունեության որոշակի պետական-իրավական կարգի կազմակերպման, իրականացման և պահպանության մեջ են¹:**

Պետության գործառույթները բազմազան են՝ պայմանավորված տվյալ պահին հասարակության առջև ծառայած խնդիրներով: Դրանք, որպես պետության ամենօրյա խնդիրների լուծմանն ուղղված գործունեության **տեսակ**, պետականորեն կարգավորում

¹ Ներսեսյանց Վ.Ս., Իրավունքի և պետության տեսություն (բուհական դասագիրք), Ե., «Նաիրի», 2001, էջ 87:

են որոշակի բովանդակություն ունեցող հասարակական հարաբերությունները: Գործառույթների բովանդակություն ասելով պետք է հասկանալ օրենսդիր և գործադիր-կարգադիրչ գործունեությունների այն ուղղությունները, որոնք պետությունն իր մարմինների միջոցով իրականացնում է հասարակական կյանքի տվյալ ոլորտներում: Օրինակ՝ պետության ամենօրյա խնդիրներից մեկը քաղաքացիների՝ օրենքով վերապահված իրավունքների և շահերի պաշտպանությունն է, որի իրականացման համար կատարելագործվում է սահմանադրական իրավունքների շրջանակը, խախտումների դեպքում՝ երաշխավորվում դրանց դատական պաշտպանությունը, հոգ է տարվում արդարադատության օբյեկտիվության ապահովման համար:

Պետության գործառույթները, կապված հասարակության զարգացման ուղղությունների հետ, փոփոխական են: Պետության և իրավունքի տեսությանը վերաբերող վերջին հրատարակումներում հեղինակները տարբեր դասակարգումներ են առաջարկում: Այսպես՝ ակադեմիկոս Վ. Ներսիսյանցը պետության **հիմնական գործառույթներ է համարում իրավասահմանը, իրավաիրացմանը, իրավապաշտպանը, ինչպես նաև արտաքին պետականը**: Նշվածներից առաջին երեքը հեղինակը դասում է ներքին գործառույթների շարքին, քանի որ դրանք առնչվում են պետության ներքին ինքնիշխանությանը: Չորրորդը պետության **արտաքին գործառույթն է և բնութագրում է պետության արտաքին ինքնիշխանության իրականացումը**:

Պետության գործառույթները բխում են ներքին և արտաքին խնդիրների բովանդակությունից, ուստի իրավագետները դասակարգում են դրանք որպես ներքին և արտաքին: Ընդ որում, դրանք սերտորեն փոխկապակցված են, ամրապնդում ու լրացնում են մեկը մյուսին:

Իրավասահման գործառույթը պետության՝ գործող իրավունքի բոլոր աղբյուրների և նորմերի սահմանմանն ուղղված գործունեությունն է:

Իրավաիրացման գործառույթը պետության գործունեությունն է՝ սահմանված իրավունքը կենսագործելու ուղղությամբ: Էությունն այն է, որ պետության մեջ սահմանված իրավունքը մշտապես և անշեղորեն գործի և լինի իրական **գործող իրավունք**:

Իրավապաշտպան գործառույթը պետության՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը, հասարակական ու քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում օրինականության և իրավակարգի հաստատմանն ուղղված գործունեությունն է: Նպատակը պայքարն է իրավախախտումների և հան-

ցագործությունների դեմ և համապատասխան կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը:

Պետության արտաքին գործառույթը դրա՝ որպես միջազգային հարաբերությունների ինքնիշխան սուբյեկտի գործունեությունն է, որը բազմաբնույթ է. երկրի պաշտպանունակության ապահովում, բնակչությանն արտաքին վտանգից պաշտպանություն, այլ պետությունների հետ համագործակցության (քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային և այլն) կազմակերպում ու ապահովում, երկրի սահմաններից դուրս իր քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանություն, պետությունների միջազգային հանրության ամրապնդում ու զարգացում, պատերազմների հաղթահարում և ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդում¹:

Ընդհանրացնելով պետության գործառույթների հասկացության և տեսակների վերլուծությունները, ուսումնական նյութը դյուրին դաձնելու նպատակով, կարելի է ասել, որ ժամանակակից պետություններն իրենց առօրյա խնդիրները լուծում են ներքին և արտաքին գործառույթների միջոցով:

Պետության ներքին, համախմբված գործառույթների թվին են դասվում.

Տնտեսական գործառույթ, որն ուղղված է՝

1. պետական բյուջեի ձևավորմանը և դրա կատարման վրա հսկողության սահմանմանը,
2. երկրի տնտեսական զարգացման ընդհանուր ծրագրերի մշակմանը (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ),
3. տնտեսության ամենաառաջնային ճյուղերի զարգացման խթանմանը,
4. ձեռնարկատիրական գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Սոցիալական գործառույթ, որի նպատակն է՝

1. հասարակության կարիքավոր անդամներին սոցիալական օգնության տրամադրումը,
2. առողջապահության, սպասարկման, կրթության, հանգստի, հաղորդակցության, բնակարանային շինարարության ոլորտներում համահասարակական ծրագրերի մշակումն ու կենսագործումը:

Հարկահանման և հարկերի զանձման գործառույթ, որի նպատակն է՝

¹ Ներսեսյանց Վ.Ս., Իրավունքի և պետության տեսություն (բուհական դասագիրք), Ե., «Նաիրի», 2001, էջ 87-88:

1. համապետական և տեղական կենտրոնացված դրամական հիմնադրամի ստեղծումը,
2. ֆինանսական և հարկային համակարգի գործունեության կազմակերպումը,
3. տնտեսավարող սուբյեկտների եկամուտների հաշվառումն ու հարկումը:

Քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության գործառույթ` ըստ որի իրականացվում է`

1. հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների իրավական նորմերի պահանջների ապահովում, քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանություն,
2. իրավախախտումների և հանցագործության դրսևորումների դեմ պայքարի կազմակերպում:

Էկոլոգիական (բնապահպանական) գործառույթ, որը միտված է`

1. մարդու կյանքի բնական անվտանգության պայմանների ապահովմանը,
2. շրջակա միջավայրի պահպանության կազմակերպմանը և դրա վերականգնմանը,
3. բնական հարստության պահպանությանը և խնայողական օգտագործմանը:

Ժամանակակից աշխարհի բոլոր պետությունների գործառույթների մի մասն ուղղված է սեփական երկրի պաշտպանությանը, այլ պետությունների հետ որոշակի հարաբերությունների հաստատմանը, միջազգային առևտրատնտեսական, գիտատեխնիկական համագործակցության զարգացմանը: Պետությունների միջազգային փոխհարաբերություններին վերաբերող խնդիրները, որպես կանոն, լուծվում են արտաքին գործառույթների գործադրմամբ, որոնց թվին են դասվում երկրի պաշտպանությունը, միջազգային խաղաղության և անվտանգության ապահովումը, միջպետական տնտեսական և առևտրաֆինանսական, մշակութային, գիտատեխնիկական և տեղեկատվական համագործակցության հաստատումը և այլն:

Երկրի պաշտպանության գործառույթը նպաստում է պետության զինված ուժերի հզորացմանը, երկրի պետական սահմանների անձեռնմխելիության և ամբողջականության պահպանմանը, հարձակումների կանխմանը, տվյալ ոլորտում միջազգային պայմանագրերի պահանջների կատարմանը:

Միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման գործառույթը բոլոր խաղաղասեր պետությունների` արտաքին աշխարհի հետ հարաբերությունների հաստատման գերակա ուղղությունն է, որն արտահայտվում է սանձազերծվող համաշխարհային պատերազմների կանխմամբ, զանգվածային ոչնչացման

զենքերի արտադրության և վաճառքի, քիմիական և կենսաբանական զենքերի գործածության արգելմամբ և ոչնչացմամբ, ինչպես նաև քաղաքական և ռազմական փոխգիշույնների և հավասարակշռության հաստատմամբ:

Միջպետական տնտեսական և առևտրաֆինանսական համագործակցության գործառույթի նպատակն այլ պետությունների հետ առևտրաֆինանսական հարաբերությունների հաստատումն է, հարկային և մաքսային ոլորտների արտաքին տնտեսական կապերի ընդլայնումն ու համագործակցությունը, միասնացումը (ինտեգրումը) համաշխարհային տնտեսությանը, գործարար հարաբերությունների ակտիվացումը, պետությունների արտաքին տնտեսական փոխհարաբերություններում որևէ պետության մենաշնորհային դերի վերացումը:

Միջպետական, մշակութային, գիտատեխնիկական և տեղեկատվական համագործակցության գործառույթի իրականացմանն անմիջական մասնակցություն ունի Միավորված ազգերի կազմակերպությունը: Այս նպատակով ստեղծվել են մասնագիտական այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն և ՄԱԳԱՏԵ-ն (ատոմային էներգիայի միջազգային գործակալություն), որոնք միջազգային գիտատեխնիկական համագործակցության շրջանակներում պետք է ապահովեն գիտական տեղեկատվություն, արվեստի ստեղծագործությունների, երաժշտական և մշակութային նվաճումների փոխանակում, մասնագետների փոխադարձաբար պատրաստում, գիտաժողովների նախապատրաստում, ինչպես նաև գիտության, տեխնիկայի, արվեստի, մշակույթի ճանաչված մասնագետների անմիջական շփումների կազմակերպում:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն պետության գործառույթների դասակարգման մի շարք այլ տարբերակներ, որոնց չափորոշիչները գործնականում ճշգրտորեն արտացոլում են պետությունների առօրյա խնդիրների լուծման անհրաժեշտությունը: Պետության գործառույթները դասակարգվում են ըստ՝

- 1) ուղղվածության,
- 2) շարունակականության,
- 3) տարածքային ընդգրկման,
- 4) պետության էության հետ կապի¹:

Ըստ ուղղվածության, ինչպես վերը նշվեց, **պետության գործառույթները լինում են ներքին և արտաքին**: Ներքին գործառույթները միտված են պետությունների ներքին խնդիրների լուծմանը, իսկ արտաքինը՝ այլ պետությունների հետ որոշակի հարաբե-

¹ Протисов В.М., Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-е изд. Перераб. И доп., М., Юрайт-М, 2007, с. 87.

րությունների հաստատմանն ու զարգացմանը, երկրի պաշտպանության ամրապնդմանը: Պետությունների ներքին և արտաքին գործառույթներն անքակտելի են:

Ըստ շարունակականության չափանիշի՝ պետության գործառույթները բաժանվում են մշտականի և ժամանակավորի: Մշտական գործառույթները ձևավորվել են պետության ստեղծման հետ մեկտեղ: Այդպիսին է երկրի պետական սահմանների պաշտպանության գործառույթը: Ժամանակավոր գործառույթները պայմանավորված են պետության սոցիալ-տնտեսական և միջազգային իրավական փոխհարաբերություններով: Ըստ անհրաժեշտության ձևավորված գործառույթները, իրադրության փոփոխություններին զուգընթաց, կարող են փոփոխվել: Դրանք հիմնականում վերաբերում են պետությունների ներքին սոցիալ-տնտեսական, շուկայական հարաբերությունների, զենքի պետական կարգավորման և այլ խնդիրների:

Ըստ պետության տարածքային գործունեության՝ հայտնի են համապետական և տեղային (լոկալ) գործառույթներ: Համապետական իրականացվում է պետության ողջ տարածքում, իսկ տեղայինը՝ դրա որոշակի հատվածում:

Պետության էությունն արտահայտող գործառույթները դասակարգվում են որպես համասոցիալական և դասակարգային: Վերջինս պայմանավորված է հենց պետության էությամբ: Ինչ վերաբերում է համասոցիալական գործառույթին, ապա դա կապված է պետությունների կողմից հասարակության տարբեր խավերի, հատկապես անապահով ընտանիքների սոցիալական ապահովության, բնակարանային, առողջապահական և համանման այլ խնդիրների լուծման հետ:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** պետության տեղը և դերը հասարակության քաղաքական համակարգում: Պետության ծագման անհրաժեշտությունը և պատճառները:
- 2. Կարողանալ** դասակարգել պետության հատկանիշները և գործառույթները:
- 3. Տիրապետել** ժամանակակից պետությունների էության դրսևորումների առանձնահատկություններին:

ԹԵՄԱ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Յարց 1. Պետության ձևի հասկացությունը

«Պետության ձև» հասկացությունն արտացոլում է դրա ներքին կառուցվածքի առանձնահատկությունները՝ բացահայտելով բարձրագույն և տեղական մարմինների կազմակերպման կարգը, գործունեության սկզբունքները, այն ձևերն ու մեթոդները, որոնց միջոցով իրացվում է պետական իշխանությունը, ինչպես նաև փոխգործակցությունը բնակչության հետ: Պետության ձևը պայմանավորված է դրա առաջացման և զարգացման որոշակի պայմաններով, տվյալ երկրի ազգային կազմով, պատմական և ազգային ավանդույթներով, տարածքի չափով, կրոնական և այլ գործոններով:

Պետության ձևը և դրա էությունը քարացած երևույթներ չեն: Դրանք մշտապես փոփոխվում ու զարգանում են տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարական և բազմաթիվ այլ գործոնների ազդեցությամբ, հետևաբար՝ փոխվում են նաև դրանց վերաբերյալ պատկերացումները¹: Հասարակության պատմության զարգացման տարբեր փուլերում ձևավորվել են բազմաթիվ ուսմունքներ, սակայն իրավագիտության մեջ ներկայումս «պետության ձև» հասկացությունը լուսաբանվում է ըստ երեք փոխկապակցված բաղադրատարրերի՝ **պետական կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև և պետական (քաղաքական) վարչակարգ (ռեժիմ)**:

Ներկայում պետության ձևի էությունը բնութագրելու համար կարևոր նշանակություն ունեն դրա ազգային կազմի, պատմական անցյալի, ավանդույթների, զարգացման մակարդակի բնութագրիչները, որոնք կարող են դառնալ նաև որոշակի փոփոխությունների պատճառներ: Նույնչափ որոշիչ գործոններ են նաև պետության աշխարհագրական դիրքը և միջազգային կապերը: Տնտեսական, քաղաքական, մշակութային համագործակցության ձևերը հատկապես տնտեսապես թույլ զարգացած երկրներին ներկայումս կողմնորոշում են դեպի պետական իշխանության կազմակերպման կարգի փոփոխություններ՝ ընդօրինակելով առավել զարգացած երկրների պետական իշխանության և կառավարման մարմինների պետաիրավական շինարարության հարուստ փորձը: Այս առումով, առանցքային նշանակություն ունեն պետության կառուցվածքի այնպիսի բաղադրամասերի բովանդակության լուսաբանումները, ինչպիսիք են պետության կառավարումը, կառուցվածքի ձևերը, պետական (քա-

¹ Խրոպանյուկ Ն.Վ., Պետության և իրավունքի տեսություն, էջ 119, Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն (դասախոսություններ), Ե., 2003, էջ 124:

ղաքական) վարչակարգը:

Պետական կառավարման ձևն արտահայտում է տվյալ պետության պետական իշխանության բարձրագույն մարմինների կազմակերպման կարգը, գործունեության սկզբունքները, փոխհարաբերությունները պետական մյուս մարմինների և բնակչության հետ:

Պետության կառուցվածքի ձևն արտացոլում է տվյալ պետության տարածքային կառուցվածքը, ինչպես նաև տարածքային միավորների փոխհարաբերությունները պետության ամբողջ տարածքում:

Պետություններն ըստ կառուցվածքի ձևերի լինում են պարզ (ունիտար) և բարդ (դաշնային և համադաշնային (կոնֆեդերատիվ)):

Պետության պետական (քաղաքական) վարչակարգը պետական իշխանության իրականացման ձևերի, եղանակների, միջոցների ամբողջությունն է:

Իրավաբանական գրականության մեջ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր «պետական վարչակարգ» հասկացության շուրջ միասնական կարծիք գոյություն չունի: Տարակարծությունների պատճառը պայմանավորված է հասարակության քաղաքական համակարգի սուբյեկտներով: Սովորաբար, երբ խոսքը պետության ձևի մասին է, որպես կանոն, հասկացվում է ոչ թե պետական, այլ քաղաքական վարչակարգը, որը բնութագրում է քաղաքական համակարգն ընդհանրապես: Այստեղ էական դերակատարումներով հանդես են գալիս քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները և շարժումները, որոնք գործնականում կյանքի են կոչում պետական իշխանության կազմակերպումը:

Պետական վարչակարգը դրսևորվում է միայն պետական մարմինների միջոցով՝ իրավական ձևերով և հնարքներով: Պետական (քաղաքական) վարչակարգը, կապված իշխանության իրականացման ձևերի և մեթոդների առանձնահատկությունների հետ, հանդես է գալիս ժողովրդավարական (դեմոկրատական) և ամբողջատիրական (ավտորիտար) վարչակարգերի տեսքով¹:

Չարք 2. Պետության կառավարման ձևերը

«Պետության կառավարման ձև» հասկացության շնորհիվ հնարավորություն է ընձեռնվում իրավաբանորեն բացահայտելու և լուսաբանելու պետության այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են պետական իշխանության բարձրագույն մարմինների

¹ Теория государства и права, ЛГУ, 1982, с. 48; Теория государства и права (курс лекций), «Юристъ», М., 1997, с. 78-79.

կազմակերպման կարգը և գործունեության մեթոդները (միանձնյա, կոլեգիալ (խորհրդակցական) ղեկավարում), բարձրագույն իշխանության ստանձման և փոխանցման (ժառանգաբար, ընտրությունների միջոցով) կարգը: Նշված սկզբունքները, որպես ընդհանուր օրինաչափություններ, հիմք են տալիս պետություններն ըստ կառավարման ձևերի բաժանելու երկու խմբի.

ա) միապետություն,

բ) հանրապետություն:

Միապետությունը կառավարման այնպիսի ձև է, որտեղ բարձրագույն իշխանությունը ժառանգականության սկզբունքով պատկանում է մեկ անձի՝ միապետին կամ թագավորին: Պատմականորեն գոյություն ունի միապետության երկու տեսակ՝ **բացարձակ և սահմանափակ** (ներկայացուցչական): Բացարձակ միապետություններում միապետը պետության բարձրագույն մարմինն է: Նա իրականացնում է օրենսդիր, գործադիր և դատական գործառնություններ: Միապետի իշխանությունը սահմանափակված չէ որևէ ներկայացուցչական մարմնով: Բացարձակ միապետություններ են համարվում Յիս Արևելքի պետությունները, Արևմուտքում՝ Ֆրանսիայի թագավորները, Ռուսաստանում՝ կայսրերը և այլն:

Յիս Արևելքի աշխարհագրական պայմանները, հողի մասնավոր սեփականությունը և մեծածավալ հասարակական աշխատանքները նպաստեցին կենտրոնացված և ուժեղ հանրային իշխանության առաջացմանը: Յողի՝ որպես մասնավոր սեփականության օբյեկտի պաշտպանությունը, ինչպես նաև միասնական ոռոգման համակարգերի կառուցումը պետությունը դարձնում էին արտադրության կազմակերպիչ: Այս հանգամանքները խթանեցին ուժեղ, ոչնչով չսահմանափակված միապետական իշխանության ձևավորումը, որտեղ ամբողջ իշխանությունը պատկանում էր միապետին: Վերջինս երկիրը կառավարում էր հզոր ռազմաբյուրոկրատական ապարատի միջոցով: Այսօր երկրագնդում գնալով աննշան են դառնում բացարձակ միապետությունները: Ներկայում բացարձակ միապետական կառավարման ձև ունեն Սուդանը, Արաբիան, Կատարը, Օմանը, Արաբական Միացյալ Եմիրությունները և Բրունեյը: Ինչ վերաբերում է ներկայացուցչական (սահմանափակ) միապետությանը, ապա վերջինիս պատմականորեն բնորոշ են **ավատատիրական, դասային-ներկայացուցչական և սահմանադրական կառավարման ձևերը**:

Հասարակության արտադրատնտեսական հարաբերությունների և արտադրողական ուժերի զարգացումը բնատնտեսության քայքայման պատճառ դարձավ: Ապրանքափոխանակման ոլորտում երևան եկան բովանդակությամբ նոր՝ ապրանքադրամական հարա-

բերություններ, որոնք հիմնավոր նախադրյալ էին դասային-ներկայացուցչական միապետության անցնելու համար: Այս պայմաններում միապետի իշխանությունը սահմանափակվում էր դասային-ներկայացուցչական մարմնով, այսինքն՝ տարբեր դասերի հոգևորականության, ազնվականության, վաճառականների իրավախորհրդատու լիազորություններով: Դասային-ներկայացուցչական ժողովների գումարումը, լիազորությունների ծավալը կախված էին միապետի կամքից: Կառավարման այս ձևը բնորոշ էր ֆեոդալական մասնատվածությունից բացարձակ միապետության անցման ժամանակաշրջանին: Միապետն ուներ օրենսդիր, զործադիր և դատական միանձնյա իշխանություն:

Սահմանադրական միապետությունը, որպես պետության կառավարման ձև, պատմականորեն փոխարինել է բացարձակ միապետությանը: Այս դեպքում միապետի իշխանությունը, սահմանադրության հիման վրա, սահմանափակվում է խորհրդարանի՝ որպես ժողովրդավարական ներկայացուցչական մարմնի օրենսդրական իշխանությամբ: Ընդ որում, խորհրդարանի ստորին պալատի պատգամավորներին ընտրում է բնակչությունը, իսկ վերին պալատը, որպես կանոն, ձևավորվում է ժառանգականության սկզբունքով, միապետի նշանակմամբ և այլն: Կառավարման այս ձևին բնորոշ են **դուալիստական և խորհրդարանական կառավարման** տարատեսակները: Եթե բացարձակ միապետությանը խորթ են սահմանադրությունը, խորհրդարանը, իշխանությունների բաժանումը, ապա դուալիստական միապետությունում պետական իշխանությունը կրում է երկակի բնույթ: Իշխանությունը բաժանվում է միապետի նշանակած կառավարության և օրենսդիր խորհրդարանի միջև: Կառավարությունը բաղկացած է անկախ խորհրդարանի կուսակցական կազմից և պատասխանատու է միայն միապետի առջև¹: Վերջինս օժտված է բացարձակ վետոյի իրավունքով և իր հայեցողությամբ կարող է արձակել խորհրդարանը: Դուալիստական միապետությունում խորհրդարանի լիազորությունները սահմանափակված են օրենսդրության և բյուջեի հաստատման հարցերով: Ներկայումս դուալիստական կառավարման ձև ունեն Յորդանանը, Քուվեյթը և Մարոկկոն, որտեղ խորհրդարանի ընդունած բոլոր իրավական ակտերը, այդ թվում՝ կառավարությանը հայտնած անվստահության քվեն պետք է հաստատի թագավորը:

Այսօր սահմանադրական միապետություններում (Անգլիա, Բելգիա, Իսպանիա, Նիդեռլանդներ) պետության գլուխ համարվող միապետի լիազորությունները շատ կողմերով ունեն ձևական

¹ Марченко М.Н., Теория государства и права (учебное пособие), М., "Проспект", 2015, с. 75.

բնույթ, քանի որ նա թագավորում է, սակայն չի կառավարում: Խորհրդարանական միապետությունում կառավարությունը ձևավորվում է խորհրդարանում ընտրությունների ընթացքում մեծամասնություն ստացած կուսակցությունների ներկայացուցիչներից և պատասխանատու է նրանց առջև: Օրենսդրական իշխանությունը պատկանում է խորհրդարանին, գործադիր իշխանությանը, կառավարությանը, որոնք, նշված գործառույթներից բացի, խորհրդարանի պատվիրած օրենսդրության ուժով ընդունում են նորմատիվ իրավական ակտեր և օրենսդրական նախաձեռնության իրավունքի շրջանակներում ակտիվորեն մասնակցում են օրենսդրական գործունեությանը:

Ժամանակակից պետությունների կառավարման մյուս ձևը հանրապետությունն է, որը երևան է եկել կապիտալիստական հասարակարգի զարգացման փուլում: Անդրադարձ կատարելով պատմությանը՝ տեսնում ենք, որ կառավարման այս ձևը դեռևս անտիկ ստրկատիրական պետություններին է հայտնի եղել: Օրինակ՝ Աթենական պետությունում պետական մարմիններ ընտրում էր Աթենքի քաղաքացիներից կազմված ժողովը: Մեր օրերում կառավարման հանրապետական ձևը բնորոշվում է նրանով, որ բարձրագույն իշխանությունը պատկանում է ժողովրդի՝ որոշակի ժամկետով ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընտրած մարմիններին:

Այսօր աշխարհում գործում են խորհրդարանական և նախագահական հանրապետություններ, որոնք, ըստ էության, իշխանությունների բաժանման սկզբունքի դրսևորման առանձին տարբերակներ են: Կառավարման այս տարատեսակները տարբերվում են նրանով, թե պետական իշխանության որ մարմինն է ստեղծում կառավարություն և ղեկավարում դրա գործունեությունը՝ խորհրդարանը, թե՞ նախագահը, և դրանցից որի՞ն է հաշվետու կառավարությունը:

Խորհրդարանական է կոչվում այն հանրապետությունը, որտեղ խորհրդարանը, որպես բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմին, ձևավորում է կառավարություն և վերահսկում է դրա գործունեությունը:

Խորհրդարանական հանրապետությունում նախագահի ընտրությունը նույնպես կատարվում է խորհրդարանի կողմից: Միաժամանակ, հանրապետության նախագահն իրավունք ունի արձակելու խորհրդարանը, մասնակցելու կառավարության ղեկավարի նշանակմանը, ստորագրելու խորհրդարանի ընդունած օրենքները և, ըստ անհրաժեշտության, ընդունելու իրավական ակտեր:

Նախագահը նաև պետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է: Ներկայում խորհրդարանական պետություններ են Իտալիան, Յունաստանը, Ավստրիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը և շատ այլ երկրներ:

Ժամանակակից պետական կառավարման ձևի տարատեսակներից մեկը **նախագահական հանրապետությունն է**: Առանձնահատկությունն այն է, որ, պառլամենտարիզմի հետ միաժամանակ, նախագահի ձեռքում են կենտրոնանում պետության գլխի և կառավարության գլխի լիազորությունները: Նախագահական հանրապետությունում ոչ միայն խորհրդարանը՝ որպես բարձրագույն օրենսդիր ներկայացուցչական մարմին, այլև նախագահին՝ որպես պետության և գործադիր իշխանության գլուխ, ընտրում է բնակչությունը: Քաղաքակիրթ պետություններում նախագահական հանրապետության կառավարման ձևը վկայում է, որ այստեղ նախագահին ընտրում է անմիջականորեն բնակչությունը՝ համընդհանուր, ուղղակի ընտրության միջոցով: Դիցուք՝ Ֆրանսիայում կամ ԱՄՆ-ում անուղղակի ընտրությամբ բնակչությունն ընտրում է ընտրողներին, որոնք էլ, իրենց հերթին, նախագահին: Ընդ որում, մեր օրերում գոյություն ունեն նախագահական հանրապետության մի քանի տարատեսակներ, որոնք հիմնականում սահմանազատվում են իշխանությունների տարբեր ճյուղերի իրավասությունների, լիազորությունների շրջանակով, ինչպես նաև այդ պետությունների սահմանադրություններով ամրագրված ուժերի զսպվածության և հակալիզիռների համակարգով:

Պետությունների կառավարման համակարգերի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք պետություններում գործում է խառը՝ կիսանախագահական կառավարման ձևը: Հետխորհրդային շրջանի մի շարք անկախ հանրապետություններ, իրենց սահմանադրություններում իշխանությունների բաժանման սկզբունքների որոշ պայմանների թելադրանքով, ուժեղացրին կամ պակասեցրին իշխանության թևերից որևէ մեկի իրավասությունները, հետևաբար՝ լիազորությունների տնօրինման շրջանակները:

Հարց 3. Պետության կառուցվածքի ձևերը

Պետության ձևի բաղադրատարրերից մեկը կառուցվածքի ձևն է, որը բնութագրում է պետական իշխանության տարածքային կազմակերպումը, պետության ներքին բաժանումը մասերի և դրանց իրավական վիճակի առանձնահատկությունները, պետության և դրա բաղկացուցիչ մասերի՝ պետական մարմինների հետ փոխհարաբերությունների բնույթը:

Տարածքային կառուցվածքի ներքին փոխհարաբերությունների հարադրումներով, պետություններն ըստ կառուցվածքի ձևի լինում են պարզ (ունիտար) և բարդ (դաշնային) կամ համադաշնային (կոնֆեդերատիվ):

Պարզ (ունիտար) պետությունն ամբողջական, կենտրոնացված, վարչատարածքային միավորներից բաղկացած միասնական կազմավորում է: Այդ միավորներն օժտված չեն պետական ինքնիշխանության հատկանիշներով և ենթարկվում են իշխանության կենտրոնական մարմիններին: Վարչատարածքային միավորներ են համայնքները, մարզերը, շրջանները և այլն: Պարզ պետությունների իրավական առանձնահատկությունն այն է, որ ամբողջ երկրի համար գոյություն ունեն միասնական ընդհանուր բարձրագույն ներկայացուցչական, կառավարման և դատական մարմինների համակարգեր, որոնք կազմակերպում և ղեկավարում են տեղական մարմինների գործունեությունը: Պարզ պետություններն ունեն միասնական քաղաքացիություն և մեկ սահմանադրություն:

Բարդ է համարվում միասնական ինքնիշխան միութենական պետությունը, որի սուբյեկտներն իրենց տարածքային և ազգային-տարածքային կազմավորումների սահմաններում ու միասնական դաշնային պետության ինքնիշխանության շրջանակներում օժտված են ինքնուրույն պետական-իրավական կարգավիճակով, ունեն պետական իշխանության մարմինների սեփական համակարգեր և օրենսդրություններ:

Դաշնային պետության կազմի մեջ մտնող և այլ ազգերին պատկանող պետական կազմավորումները կամ պետությունները համարվում են դաշնության սուբյեկտներ: Բարդ պետությունները կազմավորվել են ազգային կամ տարածքային հատկանիշներով: Դաշնային պետություններն ունեն միասնական զինված ուժեր, ֆինանսական, դրամական և հարկային համակարգեր: Դրանց հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ մի շարք պետաիրավական հաստատություններ ունեն երկակի կառուցվածքային մակարդակ: Խոսքը իշխանության մարմինների, օրենսդրության համակարգերի, ինչպես նաև քաղաքացիության կարգավիճակի մասին է:

Համադաշնությունը (կոնֆեդերացիա) ինքնիշխան պետությունների՝ որոշակի նպատակների հասնելու համար պայմանագրով ստեղծված հանրություն է: Ստեղծման հիմք կարող է դառնալ ռազմական, տնտեսական, քաղաքական բնույթի խնդիրների համատեղ լուծման անհրաժեշտությունը: Այս ամենով է պայմանավորված համադաշնության գործունեության ժամկետը: Որպես պետությունների միություն այն ունի ժամանակավոր բնույթ: Պետությունների պատմական փորձը ցույց է տալիս, որ միավորման պատճառների վերանալուց հետո համադաշնությունները լուծարվում են կամ վերածվում դաշնության: Համադաշնությունում ստեղծվում են բարձրագույն մարմիններ, որոնց որոշումները անդամ պետությունների համար պարտադիր են, եթե դրանք հաստատված են նրանց

բուլորի կամ մեծամասնության կողմից:

Համադաշնությունն ինքնիշխանությամբ օժտված չէ, և այն նոր պետություն չի կարող կազմավորել, նրա սուբյեկտները ցանկացած պահի կարող են դուրս գալ համադաշնության կազմից:

Հարց 4. Պետական (քաղաքական) վարչակարգի ձևերը

Պետություններն ինչպես նախկինում, այնպես էլ այսօր հանրային իշխանությունն իրացնում են որոշակի իրավակարգի շրջանակներում: Պատմականորեն պետական (քաղաքական) վարչակարգերի ձևերը, իրենց էությամբ լինելով իրավական, մեծապես տարբերվել են միմյանցից: Պետական վարչակարգերի տարբերությունները հիմնականում պայմանավորված են պետությունների ընդհանուր և իրավական զարգացածության մակարդակով, իշխանության գործադրման ձևերի, եղանակների, հնարքների և մեթոդների բովանդակությամբ:

Յուրաքանչյուր պետական վարչակարգ բնութագրվում է անհատի, քաղաքացու և հասարակության ազատության աստիճանով: Պատահական չէ, որ պետությունների տիպաբանությունը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու պետաիրավական վարչակարգերի, դրանց գործադրած եղանակների և մեթոդների մասին:

Պետական վարչակարգը, որպես իրավաքաղաքական կատեգորիա, դրսևորվում է, որպես կանոն, երկու եղանակով՝ ա) ժողովրդավարական, բ) հակաժողովրդավարական: Ըստ այդմ էլ, պետությունների պատմական տիպերից և պետական կառավարման ձևերից անկախ, բնութագրվում է դրանց էությունը: Անդրադառնալով ժամանակակից պետության ու քաղաքացիական հասարակության պայմաններում ժողովրդավարական վարչակարգի էությանը՝ հարկ է նկատել, որ վերջինս երաշխավորում և պաշտպանում է մարդու անօտարելի բնական իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիական իրավունքների լայն շրջանակը, օրենքի գերակայությունը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման սկզբունքը: Ժողովրդավարական իրավաքաղաքական վարչակարգն ապահովում է բազմակուսակցականություն, ժողովրդի իշխանության հաստատում՝ հանրաքվեների և ազատ ընտրությունների միջոցով, պետական իշխանության գործունեության նկատմամբ՝ հասարակական հսկողություն:

Պետական իշխանության գործադրման այն բուլոր ձևերը և մեթոդները, որոնք անհատի դեմ են, ոտնահարում են նրա իրավունք-

ները, խոչընդոտում նրա ազատ գործունեությունը, **հակաժողովրդավարական** են: Պատմականորեն այդպիսի վարչակարգը դրսևորվել է որպես ամբողջատիրություն (տոտալիտար), ինքնակալություն (ավտորիտար), ռասիզմ, ֆաշիզմ և այլն:

Այդ վարչակարգին բնորոշ է հասարակական կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ պետության անմիջական վերահսկողությունը, հասարակական կազմակերպությունների համապետականացումը, պետության գերակայությունը օրենքի նկատմամբ, ազգային պետական կազմավորումների, հատկապես՝ ազգային փոքրամասնությունների շահերի անտեսումը, կրոնական աշխարհայացքի ժխտումը և այլ հակաժողովրդական դրսևորումներ:

Այսպիսով՝ պետության ձևի երկու բաղադրամասերը՝ կառավարումը և կառուցվածքը, բնութագրում են պետության կազմակերպակառուցվածքային կողմերը, իսկ պետական վարչակարգն արտացոլում է պետության ձևի բովանդակությունը:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** պետության ձևի հասկացության բովանդակությունը և բաղադրիչները:
- 2. Կարողանալ** լուսաբանել պետության կառուցվածքի, կառավարման, պետական վարչակարգի տեսակները, դրանց իրավական առանձնահատկությունները:
- 3. Տիրապետել** ժամանակակից պետությունների ձևի և պետական վարչակարգերի առանձնահատկություններին և դրսևորումներին:

ԹԵՄԱ 3. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ (ՄԵԽԱՆԻԶՄԻ) ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հարց 1. Պետական ապարատի հասկացությունը

Պետական ապարատը սոցիալ-քաղաքական բարդ կազմավորում է, որն ընդգրկում է պետական, այսինքն՝ իշխանության լիազորություններով օժտված մարմինները: Պետությունն իր մարմինների և հիմնարկների համակարգի միջոցով ղեկավարում է հասարակությունը, հաստատում և իրականացնում քաղաքական իշխանության որոշակի վարչակարգ, պաշտպանում իր սահմանների անձեռնմխելիությունը:

«Պետական ապարատ» հասկացությունն իրավաբանական գրականության մեջ նախկինում և այսօր էլ մեկնաբանվում է տարբեր կերպ: Ընդ որում, շրջանառվում են «պետական ապարատ» և «պետական մեխանիզմ» հասկացությունները, որոնք էապես տարբերվում են միմյանցից: Այս իրավաբանական կատեգորիաների սահմանազատման հիմնական չափանիշը «ապարատի» և «մեխանիզմի»՝ պետական կազմավորում լինելու հարցի մեջ է: Արդարացիորեն նշվում է, որ պետական ապարատը չի կարելի նույնացնել պետական իշխանությանը¹: Պետական ապարատը պետության մարմինների համակարգն է, որի միջոցով կազմակերպվում է միասնական պետական իշխանության գործառույթների իրականացումը և ապահովվում ժողովրդի մասնակցությունն այդ իշխանության կենսագործմանը: Դրան համապատասխան՝ պետական իշխանության մարմինը միասնական պետական իշխանության ապարատի բաղկացուցիչ մասն է՝ օժտված պետական իշխանական լիազորություններով և հանդես է գալիս պետության անունից՝ կենսագործելու որոշակի բովանդակության գործառույթներ կամ պետական իշխանության գործունեության որոշակի ձևեր²:

Ժամանակակից պետությունները և դրանց ապարատներն ունեն բազմաթիվ մարմիններ, որոնց միջև, պետական միասնական իշխանության կենսագործման ձևերին համապատասխան, բաշխված են իշխանական լիազորությունները: Եթե նկատի առնենք, որ պետական իշխանության խնդիրները և գործառույթները բարդ են ու բազմատեսակ, ապա հասկանալի կդառնա, թե ինչու են յուրաքան-

¹ Лукьянов А.И., Лазарев Б.М., Советское государство и общественные организации, “Госюриздат”, М., 1961, с. 43-50.

² Александров Н.Г., Калинычев Ф.И., Мицкевич А.В., Недавний А.Л., Самошенко И.С., Туманов В.А., Шебанов А.Ф., Теория государства и права, М., 1968, с. 301.

չյուր պետության մեջ հույժ կարևորվում դրա գործունեության ձևերի, գործառույթների բովանդակության, պետական մարմինների դասակարգման հիմնահարցերը:

Նման դասակարգումը հնարավորություն է ընձեռում պետական իշխանության գործառույթները բաշխելու տարբեր պետական մարմինների միջև: Իրավաբանական գրականության մեջ ճանաչում է գտել այն տեսակետը՝ համաձայն որի պետության մարմինների դասակարգման հիմքում պետական իշխանության գործառույթների բովանդակությունն է կամ, որ գրեթե նույնն է, այդ իշխանության գործունեության հիմնական ձևերը: Գործառույթների և ձևերի՝ վերը բերված դասակարգմամբ, պետական իշխանության մարմինները կարելի է բաժանել հետևյալ տեսակների կամ համակարգերի. **պետական իշխանության ներկայացուցչական մարմիններ, պետական իշխանության գործադիր մարմիններ, դատական մարմիններ**¹: Սակայն, տարածում ունի նաև, այսպես կոչված, «հնգանդամ» կամ «վեցանդամ» բաժանումը (ներկայացուցչական, պետական կառավարման, արդարադատության և դատախազության, զինված ուժերի, պետական անվտանգության և հասարակական կարգի պահպանման, դիվանագիտական ծառայության մարմիններ):

Անդրադառնալով ժամանակակից իրավագիտության մեջ «պետական ապարատ» հասկացության լուսաբանումներին, դժվար չէ նկատել, որ հեղինակների ճնշող մեծամասնությունը գերապատվությունը տալիս է «պետական մեխանիզմ» հասկացությանը:

Պետական մեխանիզմը (ապարատը) մարմինների, հիմնարկների և պաշտոնատար անձանց համակարգ է, որը սահմանված կարգով օժտված է պետական իշխանության լիազորություններով և կատարում է պետության գործառույթները²: Այսպիսով՝ պետության մեխանիզմ (ապարատ) ասելով ընդունված է հասկանալ պետական իշխանության կազմակերպական կառուցվածքը, պետության գոյության և պետական իշխանության իրացման կառուցվածքային ձևերը: Պետությունն իր մարդկային հարադրությամբ կազմված է ազատ անհատներից՝ պետության քաղաքացիներից: Այդ իմաստով, ամբողջ պետական մեխանիզմը (ապարատը), բոլոր պետական մարմինները և հիմնարկները (օրենսդիր, գործադիր, դատական և այլն) քաղաքացիների կազմակերպված խմբեր են, որոնք սահմանված կարգով օժտված են այս կամ այն

¹ Тихомиров Ю.А., Власть и управление в социалистическом обществе, «Юридическая литература», М., 1968, с. 68.

² Ներսեսյանց Վ.Ս., Իրավունքի և պետության տեսություն (բուհական դասագիրք), Ե., «Նաիրի», 2001, էջ 89:

պետական-իշխանական լիազորություններով և իրականացնում են դրանք: Պետական ապարատը, որպես պետական մարմինների համակարգ, միախլուսված է ընդհանուր կազմակերպական և գործունեության սկզբունքներով: Դրանք իրավական ելակետային դրույթներ են, որոնցով պայմանավորված է պետական մարմինների կազմակերպման և գործունեության կարգը: Այդ սկզբունքներն են.

- պետության՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանման, ճանաչման և պաշտպանման առաջնայնությունը,
- ժողովրդավարությունը և ժողովրդական իշխանությունը,
- իշխանությունների տարանջատումը,
- օրինականությունը (պետական մարմինները ստեղծվում և գործում են ըստ սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի),
- հրապարակայնությունը և թափանցիկությունը, որոնք ապահովում են հանրության ամենօրյա տեղեկացվածությունը պետության գործունեությանը,
- արհեստավարժությունը (պրոֆեսիոնալիզմը) խորհրդակցական (կոլեգիալ) և միանձնյա ղեկավարման մեջ,
- պետական ծառայողների ընտրությունը և նշանակումը պետական պաշտոնների,
- աստիճանակարգությունը՝ ըստ որի վերադաս մարմինների որոշումները պարտադիր են ստորադասների համար:

Վերոնշյալ սկզբունքներով են պայմանավորված պետական մեխանիզմին (ապարատին) բնորոշ ընդհանուր հատկությունները, որոնք կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

- ա. բաղկացած է հատուկ կառավարմամբ զբաղվող մարդկանց այնպիսի մասնագիտացած խմբերից, որոնք զբաղվում են օրինաստեղծ, օրինակիրառ, իրավապաշտպան գործունեությամբ,
- բ. հանդես է գալիս որպես միասնական նպատակներով գործող պետական և հասարակական մարմինների և հիմնարկների համակարգ, որի ամենօրյա գործունեությունը համագործակցական բնույթի է,
- գ. բոլոր մարմիններն իրենց գործառույթներն իրականացնում են համոզման միջոցով, որի անհնարինության դեպքում՝ պետական հարկադրանքի ուժով,
- դ. կոչված է ապահովելու մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, դառնալու հուսալի երաշխիք քաղաքացիների օրինական շահերի պաշտպանության ոլորտում՝ հասարակության շրջանակներում ապահո-

վելով անհատի և պետության փոխհարաբերությունների ներդաշնակություն¹:

Չարք 2. Պետական մարմնի հասկացությունը, հատկանիշները և դասակարգումը

Կառուցվածքային առումով, **պետական մարմինը** պետական իշխանական իրավագործությունների որոշակի ծավալով օժտված պետական իշխանության մեխանիզմի (ապարատի) կառուցվածքային մաս է: Պետության մեխանիզմը (ապարատը) կազմող բոլոր պետական մարմինները, հիմնարկները, պաշտոնատար անձինք և կազմավորումները գործում են ըստ սահմանված իրավական կարգի: Դրանց պետական-իշխանական իրավագործությունները, իրացման կարգը, ձևերը և ընթացակարգերը սահմանվում ու կարգավորվում են օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով: «Պետական մարմին» եզրույթը հավասարազոր է միասնական պետական իշխանության գործառույթներ իրականացնող պետական մարմինների համակարգի բոլոր ձևերին: Այս համատեքստում միանգամայն իրավացի են «պետական իշխանության մարմին» հասկացությանը սահմանափակ մեկնաբանում տվող իրավագետները:

Այս մեկնաբանումը, անշուշտ, նշված պետական մարմինների ինքնուրույն գոյությունը կասկածի տակ չի դնում, ինչպես հաճախ թվում է որոշ հեղինակների: Ինքնուրույն գոյությունը սահմանված է գործող սահմանադրական նորմերով և հաստատված՝ պետական շինարարության երկարատև փորձառությամբ: Պետական մարմինների դասակարգումը կատարվում է նաև ըստ պետության կառուցվածքի: Պետական մարմինների առանձին տեսակներ կամ համակարգեր, սահմանադրական իրավադրույթներին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան, միմյանցից տարբերվում են տեսակային առանձնահատկություններով (կազմավորման եղանակ ու իրավական հիմքեր, իրավասություն, ներքին կառուցվածք և այլն): Պետական իշխանության մարմինների յուրաքանչյուր համակարգ (ներկայացուցչական, գործադիր, դատական), իր առանձնահատուկ գծերի շնորհիվ, ուրույն տեղ է զբաղեցնում պետական ապարատում:

Պետական իշխանության ներկայացուցչական մարմինները պետության համար հատուկ և բացառիկ նշանակություն ունեն: Դա պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով: Առաջին հեր-

¹Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, Ե., «Գոշ», 1997, էջ 161-162:

թին՝ դրանք պետական իշխանության էությունն են և կարելի է բնութագրել որպես սկզբնական և անմիջական մարմիններ:

Իշխանությունների բաժանման սկզբունքի համաձայն, ըստ ժողովրդավարական մի շարք պետությունների սահմանադրությունների, հռչակվել է, որ պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման հիման վրա: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններն ինքնուրույն են: Իշխանությունների բաժանման այս ընդհանուր դրույթները հետագայում որոշակի են դարձել պետությունների սահմանադրությունների համապատասխան գլուխներում, որոնք սահմանում են պետության գլխի (նախագահի), խորհրդարանի, կառավարության, դատական իշխանության կարգավիճակը և լիազորությունները:

Ըստ ՀՀ սահմանադրության 88-րդ հոդվածի՝ հանրապետության օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը, որի՝ որպես ներկայացուցչական մարմնի կազմակերպման կարգը սահմանված է «ՀՀ ընտրական օրենսգրքով»: Աժ՝ որպես պետական մարմնի կառուցվածքը, իրավասության շրջանակներն ամրագրված են ՀՀ սահմանադրությամբ:

Պետական ապարատի համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում պետական իշխանության գործադիր մարմինները, որոնք, ըստ գործող սահմանադրական օրենսդրության, պետական կառավարման մարմիններ են: Այս անվանումը որոշ ճշգրտման կարիք ունի:

Կառավարումն օրգանապես կապված է իշխանության հետ: Ավելին, դա որոշ չափով հենց իշխանության արտահայտությունն է: Այդ իմաստով, և՛ ներկայացուցչական, և՛ գործադիր-կարգադրիչ մարմինները միասնական պետական իշխանության մարմիններ են ու իրականացնում են պետական կառավարում: Սահմանադրական օրենսդրությունը, գործադիր-կարգադրիչ մարմինները սահմանելով որպես կառավարման մարմիններ, ընդգծում է դրանց գլխավոր գործառույթները՝ ներկայացուցչական մարմինների ակտերի գործադրման կազմակերպում, հասարակական արմատական հիմնահարցերի լուծման ապահովում: Ներկայացուցչական և գործադիր-կարգադրիչ մարմինների փոխհարաբերությունը, կարծում ենք, կարելի է արտահայտել նաև այսպես՝ առաջինները գոյություն ունեն պետական կարգի ուժով, երկրորդները՝ պետական իշխանության ակտերի: Պետական իշխանության գործադիր-կարգադրիչ մարմինները՝ կառավարությունը, նախարարությունները, կառավարությանն առընթեր պետական կոմիտեները, վարչությունները, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարությունը, բաժիններն ու վարչություններն իրենց իշխանական լիազորությունների սահման-

ներում գործում են միանգամայն ինքնուրույն և հանդես են գալիս պետության անունից:

Կառավարման մարմինների գործունեությունը, ինչպես երևում է նրանց անվանումից, ենթաօրենսդրական բնույթ ունի, այսինքն՝ ուղղված է օրենքների կատարմանը և տեղի է ունենում օրենքների հիման վրա:

Օրենքը, որպես կանոն, գործադիր մարմիններին չի կապում գործողության որևէ որոշակի եղանակի հետ: Վերջիններս, ելնելով տարբերակված և արդյունավետ ղեկավարման շահերից, որոշակիացնում են օրենքների և ներկայացուցչական մարմինների հրապարակած ակտերի դրույթները կամ էլ այդ նորմերի շրջանակներում հրապարակում են այլ ակտեր: Հենց դա է վկայում գործադիր մարմինների օպերատիվ ինքնուրույնության մասին:

Պետական իշխանության համակարգում հատուկ տեղ ունեն դատական մարմինները: Պետությունների արդի սահմանադրական օրենսդրություններում վերջիններս առանձնացված են որպես պետական մարմինների ինքնուրույն խումբ՝ ընդգծելով դրանց տարբերությունները ներկայացուցչական և գործադիր մարմիններից, ինչպես նաև ցույց տալով ընդհանրությունները:

Իրավաբանական գրականության մեջ տրված է դատական մարմինների՝ որպես իրավապահպան մարմինների սահմանումը: Անհրաժեշտ է նշել, որ «**իրավապահպան**» եզրույթը վերագրվում է պետության գործունեությանն առհասարակ՝ բացահայտելով պետական մարմինների էական գործառնություններից մեկը:

Անդրադառնալով դատարանի և դատախազության միջև գոյություն ունեցող սերտ կապին՝ հարկ է նշել, որ դա պայմանավորված է օրենքների խստիվ և անշեղ կատարման, հասարակական և պետական կարգի պահպանման ու ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության ընդհանուր խնդիրներով: Սակայն, այդ ընդհանրության հետ մեկտեղ, դատարանի և դատախազության միջև առկա են էական տարբերություններ, որոնք կապված են դրանց կազմակերպական, աշխատանքի մեթոդների և ձևերի հետ:

Արդարադատությունը պետական իշխանության իրականացումն է որոշակի դատավարական կարգով: Դատական ակտերի՝ որոշումների, վճիռների և դատավճիռների մեջ իրավաբանական արտահայտություն է գտնում դատական գործունեությունը: Դատական ակտերը տարբերվում են ներկայացուցչական և գործադիր-կարգադիրչ մարմինների ակտերից, քանի որ չունեն իրավաստեղծ և օպերատիվ կառավարման բնույթ:

Դատական մարմինների կազմակերպման և գործունեության հիմնական սկզբունքներն ամրագրված են ինչպես պետությունների սահմանադրություններում, այնպես էլ դատական օրենսգրքերում: ԶՅ սահմանադրության 162-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում է միայն դատարանը: Դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն սահմանադրությանը և օրենքին: Դատական իշխանությունն իրացվում է սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարությունների միջոցով: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է: Սահմանադրության մեջ ամրագրված են նաև դատավորների անկախության, անփոփոխելիության և անձեռնմխելիության սկզբունքները: Ըստ ԶԶ սահմանադրության 163-րդ հոդվածի՝ հանրապետությունում գործում են սահմանադրական, վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի, ընդհանուր իրավասության, ինչպես նաև վարչական դատարաններ: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

ԶԳ դատական իշխանության մարմինների համակարգում առանձնանում է Սահմանադրական դատարանը, որի խնդիրները, գործառույթները, լիազորությունները, դատարանի անդամների լիազորությունները, իրավական վիճակը, դատարան դիմելու իրավունքի իրականացման կառուցակարգն ամրագրված են ինչպես սահմանադրությամբ, այնպես էլ «Սահմանադրական դատարանի մասին» ԶԴ օրենքով, որտեղ առանձին գլուխներով սահմանված են սահմանադրական դատավարության իրականացման սկզբունքները, գործերի քննության դատավարական կարգը, մասնակիցների իրավական վիճակը:

Պետական ապարատի առանցքը կազմող պետական մարմինների դերի, նշանակության և էության հիմնահարցերի հետազոտությունները թույլ են տալիս ասել, որ վերջիններս տարբերվում են մյուս՝ ոչ պետական կազմակերպություններից և կառույցներից:

Պետական մարմիններին բնորոշ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են.

- 1) պետության միասնական կառուցվածքում հարաբերականորեն ինքնուրույն հանդես գալը,
- 2) կազմակերպման և գործունեության կարգի՝ օրենքով ամրագրված լինելը,
- 3) որոշակի կառուցվածքը, նպատակների ընդհանրությունը, ծառայողական ապարատը,
- 4) իրավունքների և պարտականությունների հստակ շրջանակը՝ սահմանված օրենքով և տվյալ մարմնի առջև դրված խնդիր-

ների բնույթից բխող,

5) իշխանության լիազորություններով օժտված լինելը, պետության անունից հանդես գալը,

6) իրավաստեղծ գործառույթը և գործադրման համար պարտադիր նորմատիվ, ինչպես նաև անհատական բնույթի իրավական ակտերի հրապարակումը,

7) հարկադրանքի կիրառման իրավունքով օժտված լինելը:

Վերջապես, պետական մարմիններն ունեն ֆինանսավորման որոշակի աղբյուրներ, որոնց շնորհիվ իրագործում են իրենց խնդիրներն ու գործառույթները:

Պետական ապարատում պետական մարմիններն ըստ գրաված տեղի և դերի, ինչպես նաև կարգավիճակի՝ դասակարգվում են.

1. ըստ իշխանությունների տարանջատման սկզբունքի՝

ա) օրենսդիր մարմիններ,

բ) գործադիր մարմիններ,

գ) դատական մարմիններ,

2. ըստ պետական ապարատի համակարգում գրաված տեղի՝

ա) կենտրոնական և տեղական մարմիններ,

3. ըստ որոշումների ընդունման կարգի՝

ա) խորհրդակցական (կոլեգիալ) և միանձնյա մարմիններ,

4. ըստ իրավական գործունեության ձևի՝

ա) իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան մարմիններ,

5. ըստ իրավասության բնույթի՝

ա) ընդհանուր իրավասության մարմիններ,

բ) հատուկ իրավասության մարմիններ,

գ) միջճյուղային իրավասության մարմիններ,

դ) ճյուղային մարմիններ:

Այսպիսով՝ իր էությամբ և բնույթով միասնական պետական իշխանությունը կենսագործվում է որոշակի ձևերում, որոնց համապատասխանում են պետական մարմինների որոշակի համակարգեր: Այդ հանրագումարն էլ հենց պետական մարմինների ընդհանուր համակարգն է կամ պետական ապարատը:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

1. **Իմանալ** «պետական ապարատ» և «պետական մեխանիզմ» հասկացությունների բովանդակային կառուցվածքը:

2. **Կարողանալ** դասակարգել պետական մարմիններն ըստ իշխանության դրսևորումների, նշել գործառութային առանձնահատկությունները և հատկանիշները:

3. **Տիրապետել** պետական ապարատի և պետական մարմինների համակարգային փոփոխությունների սկզբունքներին և հիմքերին:

ԹԵՄԱ 4. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հարց 1. Իրավունքի հասկացությունը, հատկանիշները

Մարդկային հասարակության զարգացման պատմությունը, սկսած նախնադարյան տոհմատիրական կարգերից մինչև մեր օրերը, վկայում է, որ հասարակությունն առանց մարդկային հարաբերությունների կարգավորման չի կարող հարատևել: Հետևաբար՝ հասարակության ու անհատի կամքին ենթարկվելն օբյեկտիվ իրականությունից բխող որոշակի վարքագիծ է, որի շնորհիվ կարգավորվում են հասարակական հարաբերությունները: Հասարակության մեջ ձևավորված վարքագծի կանոնների ուժով են կանոնակարգվում մարդկանց արտադրատնտեսական գործունեությունը, նյութական բարիքների ստեղծումը և բաշխումը, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Այս կարգն իրեն զգացնել է տվել տոհմացեղային հարաբերություններում, որտեղ տոհմի անդամների փոխադարձ կապը կարգավորվում էր ընդունելի վարքագծային կանոններով և այնպիսի սոցիալական նորմերով, ինչպիսիք էին սովորույթները: Հետևաբար՝ բոլոր իրավական ուսմունքների մեջ միանգամայն ճիշտ պետք է համարել ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանցի այն պնդումը, որ իրավունքն օբյեկտիվ սոցիալական երևույթ է՝ օժտված իրեն բնորոշ հատկություններով և սերտորեն կապված մարդկանց հավասարության, սոցիալական արդարության հաստատման հետ: Հարկադրանքը, բռնությունը իրավունքի օբյեկտիվ հատկությունը չեն, այլ արտաքինապես պետության կողմից իրավունքին հաղորդվող որակ¹:

Իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորչի հասկացության էության, գործառույթների ճիշտ ընկալման համար էական և ուսանելի նշանակություն ունեն ժամանակի ընթացքում ձևավորված այն բազմաբնույթ իրավական ուսմունքները, որոնց իմացությունն անհրաժեշտ է իրավունքի ժամանակակից դերն արժեքավորելու համար: Որպես իրավունքի գիտական ուղղություն՝ ձևավորվել է բնական իրավունքի տեսությունը, որի ներկայացուցիչներն այն կարծիքին էին, որ, բացի պետության սահմանած դրական իրավունքից, գոյություն ունի դրանից վեր կանգնած, հասարակության յուրաքանչյուր անդամի համար ընդհանուր բնա-

¹ Ներսեսյանց Վ.Ս., Իրավագիտություն (իրավունքի և պետության ընդհանուր տեսության դասընթացի ներածություն), Ե., 2002, էջ 8:

կան իրավունք՝ մատնացույց անելով կյանքի, աշխատելու, ազատ զարգացման, ինչպես նաև պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը: Բնական իրավունքի տեսության հիմնաքարը մարդու բնածին և անօտարելի իրավունքների առկայությունն է, ինչը պետք է հարգվի և պաշտպանվի պետության կողմից:

Իրավագիտության մեջ **իրավունքի** հասկացության եության և դրա սոցիալական նշանակության ուսումնասիրությանն ուղղված մի շարք այլ տեսություններ էլ գոյություն ունեն (սոցիալագիտական, հոգեբանական, մատերիալիստական և այլն), որոնք յուրովի են բացահայտում իրավունքի դերն ու նշանակությունը հասարակական կյանքում: Ընդհանրացնելով այս հասկացության վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր ուսմունքները՝ դժվար չէ նկատել, որ դրանցից յուրաքանչյուրը, յուրովի լուսաբանելով հասարակական կյանքում իրավունքի՝ որպես հարաբերությունների կարգավորչի դերի և նշանակության հարցերը, ունեն մի շարք ընդհանրություններ, որոնք համակցությունը լիարժեք է դարձնում իրավունքի ընդհանուր բնութագիրը:

Վերոնշյալ ուսմունքների դրույթներում դժվար չէ նկատել այն օրինաչափությունները, որոնք բացահայտել են այդ տեսությունների ներկայացուցիչները: Մասնավորապես.

- 1) Իրավունքը սոցիալական երևույթ է, հասարակության գոյության անհրաժեշտ պայման:
- 2) Իրավունքն անհատի, հասարակության կանքի դրսևորման նորմատիվ ձև է, որի նպատակն ամբողջ հասարակության շահերի ու պահանջմունքների, սոցիալական արդարության ապահովումն է:
- 3) Իրավունքը սեփականության բոլոր ձևերի երաշխավորն ու պաշտպանն է:
- 4) Իրավունքը, որպես վարքագծի չափ, սահմանում և սանկցիավորում (հաստատում) է պետությունը:

Իրավունքը բնութագրող տեսակետների բազմաբնույթ լինելը հնարավորություն է ընձեռում բացահայտելու վերջինիս՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորչի **առանձնահատուկ հատկանիշները:**

Ժամանակակից քաղաքակիրթ երկրներում իրավական նորմերը սահմանում և սանկցիավորում է պետությունը: Իրավունքի նորմն ընդհանուր բնույթի վարքագծի կանոն է, գործելակերպի չափ որոշակի իրադրությունում, որի պահանջները հասցեագրված են ոչ թե տվյալ անձին, այլ հասարակության բոլոր անդամներին, որոնք կհայտնվեն դրա ազդեցության ոլորտներում: Իրավունքի այս հատկանիշն արտահայտում է դրա գործառույթային նշանակությունը՝

որպես իրավահարաբերությունների մասնակիցների վարքագծի ընդհանուր կարգավորիչ:

Իրավունքի նորմերն ըստ անհրաժեշտության պահպանվում են պետական հարկադրանքով: Եթե իրավունքի նորմերի պահանջները կանավոր չեն կատարվում, ապա պետությունը հարկադրանքի միջոցներով ներագդում է իրավունքի նորմը խախտողի վրա, ստիպում է նրան կատարել պահանջը: Այս հատկանիշով է իրավունքը տարբերվում սոցիալական այլ նորմերից՝ պայմանավորելով նաև իրավունքի համապարտադիր լինելը: Իրավական նորմերի գործողությունը, անկախ սուբյեկտների կարգավիճակից, տարածվում է բոլոր անձանց վրա, որոնց դրանք հասցեագրված են:

Իրավունքը նորմերի միասնական համակարգ է, որը պարտադիր է տվյալ պետության տարածքում բնակվող անձանց պատար: Դրա բովանդակությունը գրավոր կերպով ամրագրված է պաշտոնական աղբյուրներում՝ նորմատիվ ակտերում (օրենսդրություն), իրավական սովորույթներում, դատական նախադեպերում: Ի տարբերություն սոցիալական մյուս նորմերի, իրավական նորմերը որոշակի են: Դրանց բովանդակության մեջ հստակեցված են նորմի գործողության պայմանները, գործադրման ընթացքում առաջացող իրավունքների և պարտականությունների բնութագիրը, ինչպես նաև այն իրավական հետևանքները, որոնք կարող են վրա հասնել այդ նորմի պահանջների չկատարման և ոչ պատշաճ կատարման դեպքում: Սոցիալական նորմերը, որպես կանոն, ձևով որոշակի չեն, այլ գործում են նորմ-սկզբունքների տեսքով: Վերջիններս շատ ընդհանուր են և չունեն որոշակիություն:

Այս վերլուծությունների հիման վրա **իրավունքը կարելի է բնորոշել որպես համապարտադիր կանոնների համակարգ, որը սահմանվում և պահպանվում է պետության կողմից, արտահայտում է երկրի բնակչության ընդհանուր և անհատական շահերը և հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների պետական կարգավորիչ¹:**

Չարք 2. Իրավունքի սկզբունքները, դրանց նշանակությունը և դասակարգումը

Չասարակության առաջընթացը պայմանավորված է հասարակական գիտակցության տարբեր ձևերի զարգացածության աստիճանով: Այստեղ վճռորոշ են նաև իրավագիտական այն գաղափարները, որոնք պայմանավորված են գիտատեխնիկական առաջընթա-

¹ Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, Ե., «Գոշ», 1997, էջ 222:

ցով, հասարակության կրթական և մշակութային մակարդակով: Զարգացած հասարակությանը բնորոշ է այնպիսի իրավական վերնաշենք, որը հագեցած է անհատի և հասարակության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ժողովրդավարական սկզբունքներով և որոնց ելակետային, կողմնորոշիչ, նպատակաուղղված դրույթները գործող օրենսդրության և իրավական ակտերի հիմքում են:

Իրավունքի սկզբունք ասելով պետք է հասկանալ այն բոլոր հիմնական գաղափարները, որոնք, որպես ելակետային դրույթներ, պետության իրավաստեղծ գործունեության ընթացքում որոշակիացվում են իրավական նորմերի բովանդակությամբ և վերջիններիս իրացման գործընթացում հանդես են գալիս որպես իրավական կարգավորման բոլոր ոլորտներին ուղղորդող հասցեագրումներ: Իրավունքի սկզբունքներն ըստ հանրայնության աստիճանի լինում են՝ ա) հիմնական, բ) միջյուրային և գ) ճյուղային:

Հիմնական կամ ընդհանուր սկզբունքները ներկայացնում են գլխավոր, կողմնորոշիչ և նպատակաուղղված այն գաղափարները, որոնք ելակետային են իրավունքի բոլոր ճյուղերի համար: Դրանք իրավացիորեն կարող են համարվել հասարակության իրավական կառուցվածքի ողնաշարը:

Իրավունքի **միջճյուղային** հիմնական սկզբունքներն այն դրույթներն ու գաղափարներն են, որոնք հստակեցնում և ուղղորդում են իրավունքի մի շարք ճյուղերի գործունեությունը: Օրինակ՝ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսդրությամբ այս ճյուղերի համար որպես ելակետ է ընդունվում մրցակցությունը:

Վերջապես, իրավունքի **ճյուղային սկզբունքներն** այն ելակետային դրույթներն են, որոնք իրավունքի միայն այդ ճյուղի իրավական կարգավորման հիմքում են: Օրինակ՝ ֆինանսական իրավունքի ճյուղային սկզբունքն է **սոցիալական նպատակաուղղվածությունը**, կամ ընտանեկան իրավունքում գործում են **ամուսնության կամավորության** և այլ սկզբունքներ:

Ինչպես նկատում ենք, իրավունքի սկզբունքները դրա էությունն ու բովանդակությունն են, որոնք մի կողմից արտահայտում են իրավունքի օրինաչափությունները, իսկ մյուս կողմից՝ գործում իրավական կարգավորման յուրաքանչյուր ոլորտում: Իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ էությունն արտահայտվում է այնպիսի հիմնական սկզբունքների միջոցով, ինչպիսիք են սոցիալական արդարությունը, քաղաքացիների իրավահավասարությունը, իրավունքների և պարտականությունների միասնությունը, համոզման և հարկադրանքի համակցումը, մարդասիրությունը (հունանիզմը), ժողովրդավարությունը (դեմոկրատիզմ) և այլն:

Սոցիալական արդարության հասկացությունը բազմակողմանի է և ընդգրկում է հասարակական կեցության տարբեր ոլորտներում, օրինակ՝ տնտեսական, քաղաքական, բարոյական, հոգևոր, ինչպես նաև իրավական: Ըստ վերջինիս՝ գնահատվում է անհատի իրավական վիճակը, նրա դերն ու նշանակությունը հասարակական կյանքում: Պահանջվում է, որ հասարակական հարաբերությունները, դրանց հետևանքները համարժեք լինեն: Այսպես՝ կյանքում պետք է համարժեք լինեն աշխատանքը և վարձատրությունը, հանցանքը և պատիժը, մարդկային բոլոր գործողությունները և հետևանքները: Այս տեսակետից, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը պետք է իրականացվի սոցիալական արդարության հիմքի վրա:

Իրավական արդարությունն իր բովանդակությամբ էապես տարբերվում է սոցիալականից: Այն, որպես կանոն, իրավական ոլորտներում ունի հստակ դրսևորումներ, ձևական-որոշակի արտահայտվածություն, որը շատ հաճախ կապվում է պետական հարկադրանքի իրականացման հետ: Իրավական համակարգն ըստ էության հակված է սոցիալական արդարության պահանջները կատարելուն և գործնականում հանդես է գալիս այդ սկզբունքի պաշտպանի դիրքում: Այսպիսով՝ սոցիալական արդարության սկզբունքն իրավունքի և իրավական նորմերի հիմքում է և հասարակական հարաբերությունները կարգավորելիս հանդես է գալիս որպես նորմատիվ արժեքավորման չափանիշ:

Քաղաքացիների իրավահավասարության սկզբունքը, որպես կանոն, իրավաքաղաքական նշանակություն ունի, քանի որ, ինչպես նկատում են մի շարք իրավաբան գիտնականներ, այն ուղղակիորեն բխում է սոցիալական արդարության սկզբունքից և առնչվում է «հավասարություն» հասկացությանը: Անկասկած, «հավասարությունը» հանդես է գալիս որպես իրավահավասարության նյութական հիմք, սակայն, ինչպես մարդկային հասարակության զարգացման պատմությունն է վկայում, հասարակության մեջ մարդիկ երբեք էլ հավասար դեր չեն ունեցել արտադրության գործիքների և միջոցների նկատմամբ, առավել ևս, տարբեր է նրանց մասնակցությունը նյութական բարիքների արտադրության և բաշխման գործընթացներում: Այլ խոսքով՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում էլ տիրում է բնական անհավասարությունը: Այս սկզբունքի էությունն ու նպատակն այն է, որ մարդիկ ունենան օրենքով սահմանված հավասար իրավունքներ և պարտականություններ վերը հիշատակված գործունեության, հասարակական սեփականության ոլորտում: Այսինքն՝ օրենքը բոլոր քաղաքացիների համար պետք է սահմանի միասնական ելման կետ, մեկնարկը պետք է

տրվի հավասար պայմաններում: Անկախ ազգությունից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, նրանց իրավունքներն ու պարտականությունները պետք է ամրագրված լինեն պետության սահմանադրությամբ և գործող օրենքներով:

Իրավունքների և պարտականությունների միասնության սկզբունքի համաձայն՝ հասարակության մեջ քաղաքացիների իրավունքները և պարտականությունները պետք է ներդաշնակ լինեն միմյանց այնպես, որ մեկի իրավունքներն և պարտականությունները համապատասխանեն մյուսինին, և անհատների այս համակեցությունը պետք է բխի հասարակության նկատմամբ ունեցած պարտավորություններից:

Իրավունքի հումանիզմի (մարդասիրության) սկզբունքն առաջին հերթին արտահայտում է պետության, հասարակության և անհատի փոխհարաբերությունները՝ որպես իրավունքի բոլոր ճյուղերի օրենսդրության անբաժան մաս: Դրա առանձին դրսևորումներ այսօր երևում են հատկապես պատժողական իրավունքի ճյուղերում, որտեղ արտոնությունների ամբողջական համակարգեր են սահմանված մեծահասակների, անչափահասների, կանանց նկատմամբ՝ դատարանների կողմից պատժամիջոցներ կիրառելիս: Պատահական չէ, որ ՀՀ սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում հիմնական օրենքի ուժով պաշտպանվում են մարդու կյանքի իրավունքը, անձնական ազատության և անձեռնմխելիության և բազմաթիվ այլ արժեքներ, որոնք, գերագույն շահ համարվելով, մարդասիրությունից ելնելով, պաշտպանում է պետությունը: Ներկայում երևան են եկել մարդասիրության գաղափարների նոր դրսևորումներ, որոնք ամրագրված են իրավական պաշտպանությանն ուղղված օրենսդրական ակտերում, և ըստ այդմ՝ պետությունները հատուկ հոգածություն են դրսևորում քաղաքացիների առողջության ապահովման, երեխաների և փոքրահասակների, ծերերի, կանանց, ինչպես նաև սոցիալապես անապահով խավերի աջակցության նկատմամբ:

Հանդգնան և հարկադրանքի համակցման իրավական սկզբունքը պետական կառավարման ժողովրդավարական (դեմոկրատական) ձևերից մեկն է: Ժամանակակից պետություններն աչքի են ընկնում պետական գործունեության ոլորտում համոզման մեթոդների լայն կիրառմամբ, ինչը դրսևորվում է տարբեր ձևերով: Դրանց շարքին է դասվում, օրինակ, իրավական ակտերի ընդունումը: Իրավունքի մի շարք ճյուղերում (ֆինանսական, հարկային) մինչև համապատասխան օրենսդրական ակտի ընդունումը, նախապես բացատրվում են դրա անհրաժեշտությունը և կարևորությունը հասարակության և պետության համար: Տեսական քննարկումների

և բացատրական աշխատանքների արդյունքում ձևավորվում է համոզմունք՝ իրավական ակտի հետագա կիրառման մասին: Սակայն, միշտ չէ, որ բացատրական աշխատանքները, իրավական ակտի նախագծի քննարկումները կամ դրա ընդունված տարբերակը կյանքում իրացվում են համոզման ճանապարհով: Շատ հաճախ հասարակությունն այն չի ընդունում կամ անտեսում է: Այս դեպքում գործում է պետական հարկադրանքն իր պատժիչ համակարգով՝ օրենքով սահմանված կարգով և օրենքի շրջանակներում՝ առանց նսեմացնելու խախտողի արժանապատվությունը կամ վիրավորելու նրան: Հարկադրանքը, որպես բարդ իրավական կատեգորիա, տարբեր ներգործության միջոցների ամբողջությունն է, որով իրավախախտին ենթարկում են նյութական, ֆիզիկական և բարոյական ներգործության: Պետական հարկադրանքի կիրառումը խիստ նպատակային բնույթ ունի: Որպես սկզբունք՝ այն, առաջին հերթին, ուղղված է իրավախախտի դաստիարակմանը և վերադաստիարակմանը, որոնց շնորհիվ հասարակության մեջ ձևավորվում է հարգանք օրենքի նկատմամբ: Այն, միաժամանակ, նպատակ ունի նախագուշացման ճանապարհով կանխարգելելու իրավախախտումները, պաշտպանելու հասարակական կարգը և վերականգնելու քաղաքացիների խախտված իրավունքները:

Իրավունքի սկզբունքների համակարգում այսօր պետությունների տնտեսական, սոցիալական և իրավական գործունեության ոլորտներում առանձնանում է ժողովրդավարությունը (դեմոկրատիզմը):

Ժողովրդավարության սկզբունքն առաջին հերթին արտահայտում է պետական իշխանության պատկանելությունը: Այսպես՝ ՀՀ սահմանադրության 2-րդ հոդվածում ասվում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև սահմանադրամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Սահմանադրական այս նորմ-սկզբունքը ժողովրդավարական իշխանության գերագույն դրսևորում է, որ վկայում է անհատի և հասարակության՝ պետության գործերին մասնակցելու և միջամտելու անսահմանափակ իշխանության մասին:

Իրավունքի՝ վերը ներկայացված համընդհանուր սկզբունքները դրսևորվում են դրա բոլոր ճյուղերում և ուղեցույց են ճյուղային մնացած բոլոր սկզբունքների իրացման համար:

Յարց 3. Իրավունքի գործառույթի հասկացությունը և դասակարգումը

«Իրավունքի գործառույթ» հասկացությունը բնութագրում է բարդ սոցիալական երևույթ: Այն նպատակ ունի իրավականորեն կարգավորելու հասարակության տնտեսական, սոցիալ-նշակութային կյանքի բոլոր հարաբերությունները: Հետևաբար՝ կարելի է պնդել, որ իրավունքի էությունը և հասարակական նշանակությունը դրսևորվում են դրա գործառույթների միջոցով:

Իրավունքի գործառույթների հասկացության, դրանց տեսակների դասակարգման հարցում իրավագիտության մեջ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր մեկ միասնական կարծիք գոյություն չունի: Իրավաբանական գրականության էջերում տեղ գտած տեսակետներն ընդհանրացնելով, կարծում ենք, իրավունքի գործառույթի հասկացության ճիշտ լուսաբանում պետք է համարել այն, երբ այդ գործառույթներն ուսումնասիրվում են իրավունքի խնդիրների և նպատակների հետ փոխկապակցված, քանի որ վերջիններս ճիշտ են արտահայտում իրավունքի էությունը հասարակական կյանքում: Ինչպես գիտենք, իրավունքն իր ծագմամբ անխզելիորեն կապված է պետության հետ, հետևաբար՝ դրա գործառույթները շատ բանով հանրնկնում են պետության խնդիրներին, նպատակներին և պետական իշխանության գործառույթներին: Պետության գործառույթները ժամանակի մեջ կարող են լինել ընթացիկ և հեռանկարային, որոնցով էլ և պայմանավորված է այդ պահին գործող իրավունքի գործառույթների բնույթը:

«Իրավունքի գործառույթներ» հասկացության մասին իրավաբանական գրականության մեջ նախկինում արտահայտված մի շարք հիմնարար դրույթներ այսօր իրենց տեղն են գտել նոր հրապարակումներում, ընդ որում, առանց էական փոփոխությունների:

Այսպիսով, հայտնի տեսակետներն ընդհանրացնելով, իրավունքի գործառույթները լուսաբանվում են որպես.

- 1) իրավական ներգործության,
- 2) հասարակական հարաբերությունների առանձին ոլորտների իրավական կարգավորման հիմնական կամ սոցիալական ներգործության ուղղություններ¹:

Սրանք բացահայտում են իրավունքի դերն ընդհանրապես հասարակական զարգացման և առաջադիմության գործընթացներում: Իրավունքի գործառույթներն իրենց սոցիալական ներգործությամբ

¹ Матузова Н.И., Малько А.Б., Теория государства и права (курс лекции), «Юрист», М., 1997, с. 154-158.

կարող են հանդես գալ որոշակի դրսևորվող այնպիսի գործառույթներով, ինչպիսիք են, օրինակ, պատմամշակութայինը, մշակութայինը, դաստիարակչականը, սոցիալականը, վերահսկողությամբ, կողմնորոշող տեղեկատվությամբ և այլն:

Բացի ընդհանուր սոցիալականից, իրավունքին բնորոշ են **հատուկ իրավական** այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են կարգավորիչը և պաշտպանականը:

Կարգավորիչ գործառույթը, հասարակական առաջընթացի պահանջներին համապատասխան, ապահովում է հասարակական հարաբերությունների կազմակերպումը տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական գործունեության ոլորտներում: Որպես կանոն, այն կյանքի է կոչվում և իրացվում հասարակական հարաբերությունների վրա իշխանական ներգործության ճանապարհով: Իշխանական ներգործության հիմնական միջոցը պետության սահմանած իրավական նորմերն են, որոնք ամրագրում են հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծի դրսևորման արտաքին կողմերը՝ ամրապնդված օրենսդրությամբ: Յետևաբար՝ յուրաքանչյուր անհատ, քաղաքացի պարտավոր է գործել օրենքի պահանջներին համաձայն: Նրանք, ովքեր խախտում են պահանջները կամ իրավունքների շրջանակները, դրսևորելով հակաիրավական վարքագիծ, կարող են հայտնվել օրենքի իշխանության ներգործության ոլորտում: Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը կարող է դրսևորվել տարբեր բովանդակությամբ, ուստի տարբեր է լինում նաև պետական ներգործությունը, հետևաբար նաև՝ հարկադրանքի բնույթը: Իրավունքի կարգավորիչ գործառույթը մի դեպքում հասարակական հարաբերությունների պարզ կարգավորիչ է, երկրորդ դեպքում կարող է սահմանափակել կամ արգելել գործող հասարակական հարաբերությունները, երրորդում՝ խրախուսել հասարակական հարաբերությունների մասնակիցներին, չորրորդում՝ հստակեցնել այդ հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Այս գործառույթի վերլուծություններից պարզ երևում է, որ վերջինս հասարակական հարաբերությունների կարգավորման միջոցով հասնում է այդ հարաբերությունների պաշտպանությանը, սահմանափակմանը, խրախուսմանը և այլ դրսևորումների, որոնք ընդլայնում են իրավունքի գործառույթների թիվը: Ըստ էության, իրավունքի սոցիալական երևույթն ունի մեկ հիմնական և անփոփոխ գործառույթ՝ հասարակական հարաբերությունների կարգավորումը: Իրավունքի կարգավորիչ գործառույթը կարող է ունենալ **կարգավորիչ-ստատիկ** և **կարգավորիչ-դինամիկ** դրսևորումներ:

Կարգավորիչ-ստատիկ գործառույթի միջոցով նորմատիվ իրավական ակտերում ամրագրվում են այն հասարակական հարաբերությունները, որոնց տրվում է իրավական ձև: Գործող իրավական ակտերում այս գործառույթն արտահայտվում է իրավունքի տարբեր սուբյեկտների կարգավիճակի այնպիսի տարրերի սահմանմամբ, ինչպիսիք են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասությունը, իրավասուբյեկտությունը: Կարգավորիչ-ստատիկ գործառույթն իրացվում է լիազորող և արգելող նորմերով:

Իրավունքի կարգավորիչ-դինամիկ գործառույթը սահմանում է վարքագծի այնպիսի դրսևորումներ, որոնք ապահովում են հասարակական հարաբերությունների մշտական կատարելագործումն ու զարգացումը: Այն իրականացվում է պարտավորեցնող նորմերի միջոցով: Այս գործառույթն առավելապես կիրառվում է հարկային, մաքսային, ֆինանսական և այլ իրավունքի ճյուղերում:

Ինչ վերաբերում է դասագրքերում տեղ գտած **պաշտպանական գործառույթի** էությանը, ապա դա ուղղված է հակաիրավական վարքի կանխմանն ու խափանմանը:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** իրավունքի հասկացությունը, հատկանիշները և սկզբունքները:
- 2. Կարողանալ** դասակարգել իրավունքի գործառույթները, բնութագրել դրանցից յուրաքանչյուրի իրավական առանձնահատկությունները:
- 3. Տիրապետել** իրավունքի ժամանակակից ըմբռումներին:

ԹԵՄԱ 5. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հարց 1. Իրավական նորմի հասկացությունը, հիմնական հատկանիշները և տեղը սոցիալական նորմերի համակարգում

Մարդկային հասարակության զարգացման վաղ շրջանում ծագած իրավական, բարոյական, սովորության, կրոնական, քաղաքական և այլ նորմերը հասարակական հարաբերությունների կարգավորման միջոց են, որոնց առաջացումը կապված է մարդկանց վարքագիծը կարգավորելու անհրաժեշտության հետ:

Սոցիալական նորմերն ըստ էության վարքագծի կանոններ են, որոնք կարգավորում են մարդկանց և կազմակերպությունների առօրյա փոխհարաբերությունները: Դրանց գործունեության ու ներազդման շրջանակները չափազանց լայն են՝ հասցեագրված լինելով ոչ թե անհատ անձանց, այլ դրանց որոշակի շրջանակի և գործելով անսահմանափակ դեպքերի համար: Նորմերը մարդկանց և կազմակերպությունների փոխհարաբերությունների կարգավորիչ են և նախատեսում են հնարավոր կամ անհրաժեշտ վարքագծի սահմաններ: Հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր սոցիալական (բարոյական, կրոնական, քաղաքական, սովորության և այլն), այդ թվում՝ իրավական նորմերն ունեն մի շարք ընդհանրություններ: Այսպես՝ բոլոր **սոցիալական նորմերը մարդկանց վարքագծի կանոններ են**, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսին պետք է լինեն կամ կարող են լինել մարդկային արարքները, գործողությունները, որոնց նրանք համապատասխանեցնում են իրենց վարքագիծը: Սոցիալական նորմերի առանձնահատկությունն այն է, որ դրանք, ի տարբերություն անհատական կանոնների, **ընդհանուր բնույթի են, այսինքն՝ դրանց պահանջները վերաբերում են ոչ թե որևէ անհատի, այլ ողջ հասարակությանը**: Վերջապես, սոցիալական նորմերը հասարակության մեջ մարդկանց վարքի **պարտադիր կանոններ են**, և պահանջների կատարումը պարտադիր է բոլոր նրանց համար, որոնց դրանք վերաբերում են: Սոցիալական նորմերի պարտադիրությունն անհրաժեշտության դեպքում կարող է ապահովվել ոչ միայն հասարակական կարծիքի ուժով, այլև հարկադրանքով¹: Պահանջները խախտող անձը, կախված խախտման հասարակական վտանգավորության աստիճանից,

¹ Марченко М.Н., Теория государства и права (учебное пособие), М., "Проспект", 2015, с. 104.

կարող է ենթարկվել պետական կամ հասարակական ներգործության: Այս առանձնահատկությունների ուժով էլ սոցիալական նորմերը հանդես են գալիս որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ և ակտիվորեն գործում են մարդկանց և պետությունների վարքագծի վրա՝ որոշելով նրանց գործելակերպի ուղղությունները:

Իրավական նորմերը, որպես սոցիալական նորմերի տարատեսակ, օբյեկտիվորեն օժտված են մի շարք յուրահատկություններով, որոնք թույլ են տալիս իրավունքի նորմերը տարբերել ոչ իրավական սոցիալական նորմերից: Իրավունքի նորմը բնութագրվում է.

1. վարքագծի համապարտադիր-նորմատիվ բնույթով, ուստի դրա նորմերի պահանջների կատարումը պարտադիր է,
2. վարքագծի ձևական-որոշակի կանոններով,
3. սահմանվում կամ սանկցիավորվում է պետության իրավասու մարմնի կողմից և ամրագրված է պաշտոնական պետական ակտերում,
4. իրացումը ապահովվում է պետական հարկադրանքի ուժով:

Հասարակական կյանքում սոցիալական նորմերի դերն ու նշանակությունը պատկերացնելու համար փորձենք համեմատական տանել իրավունքի և բարոյականության միջև:

Բարոյականությունը, որպես հասարակական կեցությունը բնութագրող սկզբունքների, նորմերի համակարգ, կարգավորում է մարդկանց վարքագիծը բարու և չարի, արդարի և անարդարի գնահատման դիրքերից: Բարոյականության և իրավունքի նորմերն ունեն կարգավորման միասնական օբյեկտ՝ հասարակական հարաբերությունները, որոնք հասարակության զարգացման արդյունք են: Միաժամանակ, իրավունքի և բարոյականության նորմերը որոշակիորեն տարբերվում են միմյանցից իրենց ծագման բնույթով, արտահայտման ձևերով, իրացման եղանակներով, ինչպես նաև գնահատման չափանիշներով: Այսպես՝ բարոյականությունն արտահայտվում է հասարակության գիտակցության մեջ, մինչդեռ իրավունքն ունի գրավոր ձև և արտացոլվում է հատուկ նորմատիվ ակտերում, բարոյական նորմերն իրացվում են հասարակական ներգործության միջոցներով, իսկ իրավունքինը՝ պետական ներգործությամբ, հարկադրանքով: Ըստ գնահատման չափանիշների՝ բարոյական նորմերն ընդգծում են հասարակական հարաբերությունների բարի և չար, արդար և անարդար լինելու հանգամանքները, մինչդեռ իրավունքի նորմերը, բնութագրում են մարդկանց կամային գործողությունների օրինականությունը կամ անօրինականությունը:

Հասարակական հարաբերությունների կարգավորման ընթացքում իրավունքը և բարոյականությունը փոխգործակցում են:

Դրանց պահանջները երբեմն համընկնում են: Այն, ինչ դատապարտում և խրախուսում է իրավունքը, նույնն անում է նաև բարոյակա-նությունը: Եվ ընդհակառակը, բազմաթիվ բարոյական նորմեր կյանքի ընթացքում վերածվում են իրավականի:

Սոցիալական նորմերի համակարգում ընդգծելով իրավական նորմերի դերը և նշանակությունը՝ նշենք, որ դրանք պետության կողմից սահմանված և սանկցիավորված, ձևական-որոշակի վարքագծի համապարտադիր կանոններ են, որոնք ամրագրված են իրավական ակտերում և կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները:

Իրավական նորմի սոցիալական դերը հասարակական հարաբե-րությունների տիպային պետական կարգավորիչ լինելն է: Իրավունքի նորմերը, որպես մարդկանց վարքագծի համապարտադիր տի-պային կանոններ, արտահայտում են իրավունքի բովանդակությունը: Իրավունքն իրավական նորմերի համակցություն է, իսկ իրա-վունքի նորմը՝ մեկ տիպային վարքագծի կանոն: Իրավունքի նորմե-րը հասարակական կյանքում արտահայտվում են նորմատիվ իրա-վական այնպիսի ակտերով, ինչպիսիք են սահմանադրությունը, օրենքը, հրամանագիրը և այլն:

Չարք 2. Իրավական նորմի կառուցվածքը

Իրավական նորմը հասարակական հարաբերությունները կար-գավորող միասնական իրավունքի ներքին կառուցվածքի հիմքն է: Իրավունքի այս կամ այն ճյուղի կատարելությունը պայմանավոր-վում է նորմատիվ իրավական հասցեագրումների բնույթով, իսկ իրավական նորմով բնութագրվում է համապատասխան իրավունքի ճյուղի կառուցվածքի միասնությունը: Յետևաբար՝ իրավունքի նորմն ունի ոչ միայն ճանաչողական, այլև գործնական մեծ նշանա-կություն: Իրավագետների ճնշող մեծամասնությունը կարծում է, որ իրավական նորմի կառուցվածքն արտահայտում է ներքին ձևը, բո-վանդակության կառուցվածքի կազմակերպմանն անհրաժեշտ եղա-նակները, նորմի կառուցվածքային տարրերի կապը և, վերջապես, ոչ միայն համապարտադիր որոշակի - ձևական վարքագիծը, այլև դրա ներքին կառուցվածքի տարրերի համակարգված անբաժան կապն ու փոխներգործությունը: Իրավունքի նորմի կառուցվածքի ուսումնասիրությունները վկայում են, որ դրա առանձին բաղադրա-մասեր կարող են հանդես գալ հարաբերականորեն ինքնուրույն բո-վանդակությամբ՝ մատնացույց անելով իրենց տեղը, դերը և նշանա-կությունը իրավական նորմի միասնական կառուցվածքում: Այսպի-սի հարցադրմամբ՝ իրավական նորմը կառուցված է ըստ փոխկապ-

ված երեք տարրի՝ ըստ հիպոթեզի (վարկածի), դիսպոզիցիայի և սանկցիայի:

Հիպոթեզն իրավունքի նորմի կենսական պայմանները, փաստական հանգամանքները ցույց տվող հատվածն է, որի առկայությունը իրավահարաբերության մասնակիցների համար առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում է իրավունքները: Այսպես՝ ֆինանսական իրավունքում իրավական նորմերն առանձնանում և տարբերվում են իրավունքի մյուս ճյուղերի իրավանորմերից՝ ըստ հիպոթեզի որոշակի շարադրման: Օրինակ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք և, որպես կատեգորիկ հանգամանք, պարտադիր է համարում տարվա մեջ 183 օր ՀՀ-ում գտնվելը կամ կենսական շահ ունենալը:

Դիսպոզիցիան իրավունքի նորմի՝ իրավունքների և պարտականությունների թույլատրելի շրջանակները ներկայացնող տարր է, որն արտահայտում է իրավահարաբերության մասնակցի հնարավոր և անհրաժեշտ վարքագծի կանոնները: Այն, օրինակ, հարկային իրավանորմերի հիմքն է, որտեղ հստակ շարադրված են հարկային իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները, որոնք իրենց բնույթով կատեգորիկ են, և դրանց խախտման դեպքում անհապաղ կարող են կիրառվել հարկային իրավական պատասխանատվության տարբեր միջոցներ:

Սանկցիան իրավունքի նորմի այն բաղադրատարրն է, որի խախտման դեպքում գործում են իրավական հետևանքներ՝ հարկադրանքի և պատասխանատվության կիրառման տեսքով: Այն իրավունքի նորմի ամենադինամիկ մասն է, որն արագորեն է արձագանքում հասարակության և պետության կյանքում կատարվող էական տեղաշարժերին և հնարավորություն է ընձեռում տևական դարձնելու իրավունքի նորմի գործողության ժամկետը՝ իր վրա վերցնելով պատասխանատվության և հարկադրանքի միջոցների տեսակների՝ ըստ անհրաժեշտության փոփոխությունները: Իրավունքի նորմի սանկցիաները բազմաբնույթ են և բխում են համապատասխան իրավունքի ճյուղի կարգավորման առարկայի և մեթոդի առանձնահատկություններից: Այլ խոսքով, իրավունքի նորմի սանկցիաներն ունեն ճյուղային պատկանելություն և կարող են լինել քրեաիրավական, վարչաիրավական, քաղաքացիաիրավական, ինչպես նաև կարգապահական իրավական բնույթի: Օրինակ՝ քրեաիրավական սանկցիաներն ամրագրված են քրեական օրենսգրքերում և արտահայտվում են տարբեր պատժամիջոցների տեսքով (տուգանք, ազատազրկում, ցմահ ազատազրկում և այլն), որոնք կիրառում է միայն դատարանը: Իրավունքի նորմի եռատարր կա-

ռուցվածքի հարցում իրավագիտության մեջ տարակարծություններ չկան, թեև իրավունքի որոշ ճյուղերի, ինչպիսիք են քրեականը, սահմանադրականը, վարչականը, ֆինանսականը և այլն, իրավական նորմերը միշտ չէ, որ այդպիսին են: Այսպես՝ քրեական իրավունքի հատուկ մասի ցանկացած հանցակազմ վերլուծելիս համապատասխան հոդվածում բացակայում է հիպոթեզը, կամ սահմանադրական իրավունքում և սահմանադրական նորմերում ակնառու են միայն դիսպոզիցիայի հատկանիշները, իսկ սանկցիաներն իսպառ բացակայում են: Այս իրավիճակն առավել բարդ է, երբ պարզաբանվում են իրավունքի նորմի և իրավական ակտերի հոդվածների շարադրանքի հարաբերակցության հարցերը: Նկատենք, որ իրավունքի նորմատիվ աղբյուրներում իրավունքի նորմի կառուցվածքային մասերը ձեռք են բերում որոշակի յուրահատկություններ, մասնավորապես.

- 1) իրավական նորմերն արտահայտվում են նորմատիվ ակտի մեկ հոդվածում,
- 2) իրավական նորմերն արտահայտվում են նորմատիվ ակտի մի քանի հոդվածում,
- 3) իրավական նորմի կառուցվածքային տարրերն արտահայտվում են միասեռ կամ հարակից նորմատիվ ակտերի հոդվածներում, գլուխներում կամ բաժիններում, այդ թվում՝ նաև իրավունքի այլ ճյուղերի ակտերում¹:

Ֆարց 3. Իրավական նորմի տեսակները

Իրավական նորմերի դասակարգումն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական-կիրառական մեծ նշանակություն, որի շնորհիվ հստակեցվում են այս կամ այն իրավունքի ճյուղերի իրավական նորմերի դերն ու ծառայողական նշանակությունը պետության իրավական համակարգում:

Իրավական նորմերի դասակարգումը հնարավորություն է ընձեռում պարզելու նորմի գործառույթներն իրավական կարգավորման մեխանիզմում, ինչպես նաև ներգործության աստիճանը՝ հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում:

Իրավական նորմերի դասակարգումը կատարվում է տարբեր հիմքերով, սակայն գործնական կիրառման համար կարևորվում են դասակարգման հետևյալ տեսակները.

Իրավական նորմերի դասակարգում՝ ըստ իրավունքի ճյուղերի. կատարվում է ըստ այն հասարակական հարաբերություններ

¹ Н.И. Матузова, А.В. Малько, Теория государства и права, с. 324.

րի տեսակների, որոնք տվյալ իրավունքի ճյուղի կարգավորման առարկան են և, բնականաբար, կարգավորվում են իրավունքի այդ ճյուղի նորմերով: Մասնավոր իրավունքի նորմերով կարգավորվում են այն հասարակական հարաբերությունները, որոնց սուբյեկտների փոխհարաբերությունները կառուցվում են հասարակության կամքի ազատ դրսևորման սկզբունքների հիման վրա: Հասարակական հարաբերությունները կարգավորելիս հանրային իրավունքում համապատասխան նորմերը սահմանվում են ըստ սուբյեկտների ենթակա և անհավասար կարգավիճակի: Այս հարաբերություններում կողմերից մեկը մշտապես պետական իշխանության լիազորություններով օժտված պետական մարմին է:

Մասնավոր իրավունքին են պատկանում քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, ինչպես նաև քաղաքացիական հասարակության զարգացման հետ կապված այլ իրավունքի ճյուղերի նորմեր: **Հանրային իրավունքը** միավորում է պետական, վարչական, ֆինանսական, հարկային, քրեական դատավարության և այլ ճյուղեր՝ կարգավորելով պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեությունը:

Իրավական նորմերի դասակարգումը կատարվում է նաև ըստ **հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ** ունեցած դերի՝ համաձայն որի **իրավական նորմերը լինում են կարգավորիչ, իրավապահպան և մասնագիտացված:**

Կարգավորիչ իրավական նորմերը, որպես կանոն, սահմանում են հասարակական հարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները, ամրագրում իրավաչափ վարքագծի սահմանները: Կարգավորիչ իրավունքի նորմերը, ըստ մարդկանց վարքագծի վրա ներգործելու եղանակի, ամրագրվում են իրավունքի նորմի դիսպոզիցիայում: Դրանք բաժանվում են երեք խմբի՝ պարտավորեցնող, արգելող և լիազորող:

Այս իրավական նորմերի հասկացությունները, դերը և նշանակությունը փորձենք լուսաբանել ըստ տնտեսագիտությանը հարակից՝ հարկային իրավունքի ճյուղի նորմերի:

Ըստ պահանջի աստիճանի՝ կարգավորիչ նորմերը լինում են իմպերատիվ (կատեգորիկ) և դիսպոզիտիվ: Իմպերատիվ արտահայտման ձևեր են իրավական թելադրանքի կատեգորիկությունը, իրավունքի նորմերի կիրառման քանակական և որակական պայմանների, եղանակի որոշակիությունը, դրանից դուրս այլ գործողությունների արգելքը: Դիսպոզիտիվությունը իրավունք (հնարավորություն) է տալիս վարվելու այլ կերպ, քան նշված է նորմում: Այս հիմքի վրա երբեմն դիսպոզիտիվ են համարվում այն նորմերը, որոնք սահմանում են իրավահարաբերության բովանդակությունը այն դեպքում, եթե կողմերն այլ բան չեն պայմանավորվել (օրինակ՝

«Եթե պայմանագրում այլ բան նախատեսված չէ»՝ այն իմաստով, որ կողմերին իրավունք է տրված, ըստ պայմանագրի, հետ կանգնել այդ նորմից): Ինչպես յուրաքանչյուր իրավական նորմի, այնպես էլ հարկայինի հիմքում դիսպոզիցիան է: Հարկային իրավական նորմերն ըստ դիսպոզիցիայի հատկանիշի նույնպես բաժանվում են երեք խմբի՝ պարտավորեցնող, արգելող և լիազորող:

Պարտավորեցնող հարկային իրավական նորմերն իրավահարաբերությունների մասնակիցներին պարտավորեցնում են կատարել որոշակի գործողություններ, սահմանում են նրանց իրավունքները, նախանշում պարտավորությունների շրջանակները: Օրինակ՝ ՀՀ հարկային օրենսգիրքը սահմանում է հարկ վճարողների պարտավորությունները, նշված ժամկետում հարկային տեսչությանը հաշվետվություններ և հաշվարկներ ներկայացնելը կամ օրենքով սահմանված հարկերը ժամանակին վճարելը:

Հարկային **արգելող** իրավական նորմերն իրավահարաբերությունների մասնակիցների համար սահմանում են պասիվ վարքագիծ, արգելում են որոշակի գործողությունների կատարումը, որոնք ուղղակիորեն կարող են առաջ բերել հարկային իրավական նորմի պահանջների խախտում՝ բոլոր իրավական հետևանքներով հանդերձ: Արգելող հարկային իրավական նորմերը ոչ միայն փոքրաթիվ են, այլև լայն կիրառում չունեն: Նորմերի այդ տեսակն արգելում է հարկային իրավական հարաբերությունների մասնակիցների ազատ գործելակերպը: Վերջիններիս կարգավորման ժամանակ հարկային օրենսդրության բնագավառում ընդլայնվում են պարտավորեցնող նորմերի կիրառման այն ոլորտները, որոնք շահերի տեսանկյունից ձեռնտու են կողմերի համար:

Հարկային **լիազորող** իրավական նորմերը սահմանում են իրավահարաբերությունների մասնակիցների ինքնուրույն գործելակերպի թույլատրելի սահմանները: Դրանք ինքնուրույն որոշումներ ընդունելու հնարավորություններ են ընձեռում իրավահարաբերությունների մասնակիցներին: Ելնելով հարկային իրավական նորմերի ընդհանուր առանձնահատկություններից՝ դժվար չէ նկատել, որ նորմերի այս տեսակին էլ է բնորոշ օրենքի պահանջների պարտադիր կատարման սկզբունքը: Այսօր շուկայական հարաբերություններն օբյեկտիվորեն են ներազդում պետության իրավաստեղծ գործունեության վրա՝ նախապես կողմնորոշելով հատկապես տնտեսական հարաբերություններում առկա հարկային իրավական նորմերի բնույթը: Լիազորող հարկային իրավական նորմերում պարտադիր պատվիրանների տեսքով հանդես են գալիս հասարակական հարաբերությունների վրա ներազդման տնտեսական միջոցներ, որոնք, միաժամանակ, նպատակ են հետապնդում բարձրաց-

նելու տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնությունը՝ ազատ կողմնորոշվելու պետության հանդեպ հարկային պարտավորությունների կատարման աղբյուրների ընտրության հարցում:

Հարկային իրավունքի նորմերի համահավաք ուսումնասիրություններից դժվար չէ նկատել, որ վերջիններս բովանդակությամբ կարող են ունենալ նաև նյութական և գործընթացային բնույթ: Ըստ հասարակական հարաբերությունների կարգավորման դերի՝ իրավական նորմերը դասակարգվում են նաև որպես **իրավապահպան և մասնագիտացված: Իրավապահպան իրավական նորմերը** սահմանվում են ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումների կարգավորման նպատակով, կիրառվում են իրավախախտումների դեպքում, պարունակում են պետական հարկադրանքի ներգործության տարբեր միջոցներ:

Իրավական նորմերի համակարգում հատուկ տեղ են զբաղեցնում **մասնագիտացված** իրավական նորմերը: Դրանց սոցիալական նշանակությունը կարգավորիչ իրավական նորմերի իրացման ապահովումն է: Այս նորմերում շարադրված վարքագծի կանոններն ունեն լրացուցիչ բնույթ, օժանդակում են մյուս իրավական նորմերի կիրառմանը:

Իրավագիտության մեջ իրավունքի **նորմերն ըստ կարգավորիչ գործողության ոլորտի և ծավալի բաժանվում են ընդհանուր, հատուկ և բացառիկ տեսակների:**

Իրավական **ընդհանուր նորմերը**, որպես կանոն, կարգավորում են հասարակական հարաբերությունների ավելի լայն շրջանակ, քան հատուկները՝ կիրառելով ընդհանրացման ավելի բարձր չափ: Ինչ վերաբերում է **հատուկ նորմերին**, ապա վերջիններս, ի տարբերություն ընդհանուրի, պարունակում են ավելի մանրամասն իրավական պահանջներ, քանի որ լիարժեքորեն են հաշվի առնում հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները:

Բացառիկ նորմերը դրսևորվում են որոշակի վերապահումներով՝ տարբերվելով ընդհանուր և հատուկ նորմերից: Ի տարբերություն հատուկ նորմերի, որոնք հասարակական հարաբերությունները կարգավորում են ընդհանուր նորմերին համապատասխան, բացառիկ նորմերը նախատեսում են կանոններ, որոնք հակասում են և՛ ընդհանուր, և՛ հատուկ նորմերին: Այդ իսկ պատճառով դրանք վարքագծի բացառություններ են:

Ըստ անձանց շրջանակի՝ իրավունքի նորմերը բաժանվում են **ընդհանուրի և հատուկի: Ընդհանուր նորմերը** տարածվում են բոլոր անձանց վրա, ովքեր ապրում են տվյալ տարածքում: **Հատուկ նորմերը** գործում են միայն որոշակի խմբի անձանց նկատ-

մամբ (օրինակ՝ հարկային, մաքսային աշխատողներ, զինծառայողներ և այլն):

Իրավական նորմերն ունեն նաև մի շարք այլ դասակարգումներ: Այս համակարգում, որպես դրանց տեսակ, առանձնանում են **իրավատեխնիկական** նորմերը, որոնք կարգավորում են մարդկանց վարքագիծը՝ կապված տեխնիկայի կիրառման հետ: Տեխնիկական նորմերի նշանակությունը բնության ուժերի՝ տեխնիկապես առավել տնտեսվար և էկոլոգիապես անվտանգ եղանակով ճիշտ օգտագործելն է: Այս նորմերն արտահայտում են մարդկանց՝ բնությանը, առարկաներին, աշխատանքային գործիքներին, տարբեր տեխնիկական միջոցներին առավել նպատակահարմար վերաբերվելու վարքագիծը: Հասարակության համար առավել կարևոր տեխնիկական նորմերն ունեն **իրավական բնույթ**:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** իրավական նորմի հասկացությունը, կառուցվածքը, դերը և նշանակությունը հասարակական, պետական կյանքում:
- 2. Կարողանալ** սահմանել իրավական նորմի տեսակները, դասակարգել դրանք ըստ իրավական առանձնահատկությունների:
- 3. Տիրապետել** իրավական սոցիալական նորմերի առանձնահատկություններին:

ԹԵՄԱ 6. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐԻ (ՁԵՎԻ) ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հարց 1. Իրավունքի աղբյուրի հասկացությունը, տեսակները

Իրավունքի սոցիալական երևույթը հասարակության մեջ դրսևորվում է որոշակի ձևերով, որոնց վերաբերյալ իրավաբանական տեսական գրականության մեջ նախկինում և այսօր գոյություն ունեն տարբեր տեսակետներ՝ ըստ որոնց «իրավունքի ձև» հասկացությունը հաճախ նույնացվում է «իրավունքի աղբյուրի» հետ: Որոշ իրավագետներ էլ փորձում են մեղմել տարածայնությունները՝ սահմանազատելով «իրավունքի աղբյուր» և «իրավունքի ձև» հասկացությունները, ընդգծելով, որ «իրավունքի ձևը» ցույց է տալիս, թե ինչպես է կազմակերպված և արտահայտված իրավունքը, իսկ «իրավունքի աղբյուրները» բնութագրում են իրավունքի բովանդակության ձևավորման հոսքերը և այն գործոնների համակարգը, որոնց ազդեցությամբ սահմանավորվում և արտաքննապես դրսևորվում է իրավունքը¹: «Իրավունքի աղբյուր» արտահայտությունն օգտագործվում է երկու տարբեր նշանակությամբ՝ նյութական և ձևական իմաստներով:

Իրավունքի նյութական աղբյուրը ձևավորվում է որոշակի գործընթացների հիման վրա, օրինակ՝ հասարակության արտադրատնտեսական հարաբերություններ, անհատի և հասարակության տարբեր շերտերի նյութական ապահովություն և այլն: Որպեսզի տնտեսական պահանջներն արտահայտվեն իրավական ակտերում, պետք է վերածվեն իրավագիտակցության և, որպես հասարակական պահանջ, սահմանվեն իրավական նորմերի բովանդակությունում: Իրավագիտության մեջ դա ձեռք է բերել **«իրավունքի ձևական աղբյուր»** անվանումը: Այլ խոսքով, **«իրավունքի ձևական աղբյուր»** գործող իրավունքի բովանդակության արտաքին դրսևորման ձևն է, որն այսօր իրավաբանական գրականության մեջ ստացել է «իրավունքի ձև» անվանումը:

Իրավունքի աղբյուրներն իրավունքի բովանդակության դրսևորման իրավաբանական որոշակի ձևեր են: Սա նշանակում է, որ գործող իրավունքի նորմերը դրսևորվում են իրավունքի միայն պաշտոնապես ճանաչված աղբյուրներում, որոնք իրավունքի նորմերի ամրագրման և գոյության ձևեր են²:

¹ Матузова Н.И., Малько А.В., Теория государства и права, с. 329:

² Ներսեսյանց Վ.Ս., Իրավունքի և պետության տեսություն (բուհական դասագիրք), Ե., «Նաիրի», 2001, էջ 155:

Իրավունքի պատմական տիպերի ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բոլոր ժամանակներում իրավունքը բնորոշվում է աղբյուրների (ձևերի) հետևյալ տեսակներով.

- 1) սովորութային,
- 2) դատական նախադեպ,
- 3) նորմատիվ իրավական ակտեր,
- 4) նորմատիվ իրավական պայմանագրեր:

Սովորութային իրավունքը մարդկանց՝ ժամանակի ընթացքում փաստացի ձևավորված վարքագծի կարգավորման կանոններն են, որոնք պետության երևան գալուց հետո հաստատվել են դրա կողմից՝ որպես իրավունքի համապարտադիր նորմեր և գործնականում ճանաչվել որպես իրավական սովորույթներ: Պետության սովորութային իրավունքը, որպես իրավունքի աղբյուր (ձև), կիրառվում է նաև այն դեպքում, երբ նորմատիվ իրավական ակտերում ուղղակիորեն ձևավորվում են այնպիսի իրավական դրույթներ, որոնք գործնականում վաղուց ձևավորված այս կամ այն սովորույթի բովանդակությունն են: Այս դեպքում գործ ունենք պետականորեն արտահայտված սովորույթի՝ որպես իրավունքի ինքնուրույն աղբյուրի հետ: Այսօր իրավունքի աղբյուրների (ձևերի) համակարգում գործնական նշանակությամբ առանձնանում է **դատական նախադեպը**:

Դատական նախադեպը որոշակի գործով դատական վճիռն է, որն ունի համապարտադիր կանոնի նշանակություն բոլոր նմանօրինակ գործերի նույնպիսի վճիռների համար: Դատական փորձը (պրակտիկան) իրավունքի աղբյուրի է վերածվում այն դեպքում, երբ գործող օրենսդրության անորոշության կամ համապատասխան իրավական ակտերի բացակայության պատճառով դատարանը հարկադրված է որոշակիացնելու իրավական նորմի բովանդակությունը կամ իրավունքի բացթողումները լրացնելու համար՝ ստեղծելու նոր նորմեր: Նախադեպի նշանակություն ունեցող վճիռներ ընդունելու իրավունք ունեն միայն բարձրագույն դատական ատյանները:

Իրավունքի աղբյուրների (ձևերի) համակարգում, հասարակական հարաբերությունների կարգավորման առումով, կարևորվում են նորմատիվ իրավական ակտերը՝ որպես պետության իրավաստեղծ գործունեության արդյունք: Դրանք պարունակում են վարքագծի նոր կանոններ: Հենց դրանով էլ նորմատիվ իրավական ակտերը տարբերվում են մնացած բոլոր իրավական, ինչպես նաև տարբեր տեսակի ոչ իրավական բնույթի ակտերից: Նորմատիվ իրավական ակտերը բազմազան են: Որպես իրավունքի որոշակի աղբյուրներ՝ դրանք կազմում են տարբեր իրավաբանական ուժ ունեցող ակտերի աստիճանական համակարգ:

Չարք 2. Նորմատիվ և ենթաօրենսդրական իրավական ակտերի հասկացությունը, տեսակները

Իրավունքի աղբյուրների (ձևերի) համակարգում այսօր կենսական նշանակություն են ձեռք բերում նորմատիվ իրավական ակտերը՝ դառնալով պետությունների ինչպես ներքին տնտեսական, այնպես էլ միջազգային հարաբերություններում ձևավորվող, հասարակության համար կենսական նշանակություն ունեցող հարաբերությունների կարգավորիչ: «Նորմատիվ իրավական ակտեր» հասկացությունն ամրագրված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, որտեղ նշված է. «Նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված՝ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ ՀՀ սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որը սահմանում է իրավական նորմ կամ նորմերը, փոփոխում կամ դադարեցնում է գործողությունը: Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ»: Նորմատիվ իրավական ակտերն օժտված են մի շարք հատկանիշներով.

- 1) դրանք պետության իրավասու մարմինների իրավաստեղծ կամ ժողովրդի անմիջական կամքի արտահայտության (հանրաքվեի) արդյունք են,
- 2) պարունակում են վարքագծի համապարտադիր կանոններ, որոնցով տարբերվում են իրավական ակտերից (անհատական, ոչ նորմատիվ), որոնք իրավունքի աղբյուրներ չեն,
- 3) ձևակերպվում են պաշտոնական փաստաթղթերում և ունեն իրավական անվանումներ (օրենք, հրամանագիր), հրապարակվում են ակտն ընդունող մարմնի անունով,
- 4) դրանցում իրավունքի նորմերը խմբավորվում են ըստ որոշակի կառուցվածքի (բաժիններ, գլուխներ, հոդվածներ),
- 5) օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման,
- 6) ուղղված են հասարակության համար կենսական նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունների կարգավորմանը և, ի տարբերություն անհատական ակտերի, գործում են տևական ժամանակ¹:

¹ Матузова Н. И., Малько А. В., Теория государства и права, с. 334.

Ուսումնական և գործնական կողմնորոշիչ նշանակություն ունի նորմատիվ իրավական ակտերի դասակարգումն ըստ իրավաբանական ուժի հատկանիշի, որի համաձայն դրանք բաժանվում են օրենքների և ենթօրենսդրական ակտերի:

Նորմատիվ իրավական ակտերի աստիճանական համակարգը գլխավորում է **օրենքը** և, առաջին հերթին, սահմանադրությունը՝ որպես հիմնական, բարձրագույն օրենք: Անդրադառնալով «օրենք» հասկացությանը՝ պետք է նկատել, որ այն բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ հատուկ կարգով կամ ժողովրդի ընդունած նորմատիվ ակտ է, որ կոչված է կարգավորելու հասարակության և պետական կյանքի համար կենսական նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունները և օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով: Օրենքի տարատեսակներ են սահմանադրությունը, սահմանադրական օրենքները, օրենսգրքերը և ընթացիկ օրենքները: Նորմատիվ իրավական ակտերի համակարգում առանձնանում է սահմանադրությունը, որը մյուս օրենքներից տարբերվում է այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են.

- 1) սահմանադրաիրավական նորմերն ունեն հիմնարար բնույթ, այսինքն՝ իրավունքի մնացած բոլոր ճյուղերի նորմերը բխում են սահմանադրության նորմերից, մանրամասնում են դրանց դրույթները,
- 2) սահմանադրությունն օժտված է **իրավաբանական բարձրագույն ուժով**, գործում է պետության ամբողջ տարածքում, և գործող մնացած բոլոր իրավական ակտերը չպետք է հակասեն դրան, հակառակ դեպքում գործում է սահմանադրաիրավական նորմը,
- 3) սահմանադրաիրավական նորմերն ունեն **բովանդակային լայն ընդգրկում**, այսինքն՝ ներազդում են հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային կյանքի վրա,
- 4) սահմանադրությունը **մարմնավորում է ժողովրդի պետական կամքը** և, որպես ժողովրդական կամքի դրսևորում, դրանում ամրագրվում են հասարակության զարգացման խնդիրները, նպատակները, կազմակերպման և կենսագործման սկզբունքները,
- 5) սահմանադրաիրավական յուրաքանչյուր նորմ անհատականացված է. դրանք վերաբերում են յուրաքանչյուր քաղաքացու, հասարակական գործունեություն ծավալող յուրաքանչյուր սուբյեկտի,
- 6) սահմանադրությունն ունի ընդունման և փոփոխման յուրահատուկ կարգ՝ ըստ հանրաքվեի կամ համաժողովրդական հարցումների:

Նորմատիվ իրավական ակտերի համակարգում սահմանադրությունից հետո առավել բարձր իրավաբանական ուժ ունեն օրենքները: Դրանք ընդունում են պետական իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմինները՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Օրենքները բաժանվում են երկու խմբի՝ ա) կողիֆիկացված (օրենսգրքեր) և բ) ընթացիկ (չկողիֆիկացված):

Օրենսգիրքը հասարակական կյանքի որոշակի բնագավառների բոլոր հիմնական հարաբերությունների ամբողջական և միատեսակ իրավական կարգավորմանն անհրաժեշտ ընդհանուր սկզբունքների և կոնկրետ նորմերի համաձայնեցված համալիր է: Օրենքները հիմնականում ճյուղային բնույթ ունեն և հանդես են գալիս որպես իրավունքի մեկ ճյուղի սկզբունքների և նորմերի համակցություն (օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք կամ ՀՀ քրեական օրենսգիրք):

Իրենց տեսակարար կշռով գործնականում աչքի են ընկնում ընթացիկ (չկողիֆիկացված) օրենքները, որոնք կարգավորում են առանձին, առավել կարևոր հասարակական հարաբերությունները կամ այդ հարաբերությունների որոշակի փոխկապակցված հանրագումարը (օրինակ՝ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք և այլն):

Ընդհանրացնելով «օրենք» հասկացության դերի և նշանակության վերլուծությունները նորմատիվ իրավական ակտերի համակարգում՝ կարելի է առանձնացնել այն հատկանիշները, որոնցով դա սահմանազատվում է իրավական մյուս ակտերից: Այսպես.

- ա) օրենքն ընդունվում է օրենսդիր մարմնի կամ հանրաքվեի միջոցով,
- բ) օրենքն անցնում է նախապատրաստման և ընդունման հստակ կարգ,
- գ) օրենքն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով,
- դ) օրենքը կարգավորում է հասարակական կյանքի համար կենսական նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունները,
- ե) օրենքը պետք է արտահայտի իրավունքի էությունը, ժողովրդի կամքն ու շահերը:

Նորմատիվ իրավական ակտերի կազմում նշանակալից թիվը պատկանում է **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին**: Դրանք պետական մարմինների իրավաստեղծ այն ակտերն են, որոնք ընդունվում են օրենքների հիման վրա և չեն հակասում դրանց: Ենթաօրենսդրական իրավական ակտերն օրենքների համեմատ օժտված են ցածր իրավաբանական ուժով: Դրանք հիմնականում կարգավորում են այնպիսի հասարակական հարաբերու-

թյուններ, որոնք ծագում են պետական կառավարման ոլորտում և նպատակաուղղված են գործադիր իշխանության տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական գործառույթների իրականացմանն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային հարաբերություններում:

Ըստ ակտը հրապարակող սուբյեկտների և ակտի գործողության ոլորտների՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը լինում են ընդհանուր, տեղական, գերատեսչական բնույթի: Ընդհանուր բնույթի ենթաօրենսդրական ակտերը հետևում են օրենքներիին, քանի որ իրենց գործողությունը տարածում են պետության սահմաններում գտնվող բոլոր քաղաքների վրա: Մեծ է այս ակտերի դերը հասարակական կյանքում: Ունենալով ընդհանուր իրավասության բնույթի պետական կառավարման ոլորտ՝ դրանց շնորհիվ ոչ միայն կազմակերպվում է հասարակության տնտեսական, սոցիալական կառավարումը, այլև համակարգվում են գործադիր իշխանության գործունեության բոլոր ուղղությունները: Լինելով գործադիր իշխանության բարձրագույն մարմինների իրավաստեղծ գործունեության արդյունք՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, դրանց բնույթը և իրավական ուժը մեծապես կախված են **պետական կառավարման ձևից**: Ըստ պետության կառավարման ձևի՝ դրանք ունեն իրավական դրսևորման երկու տեսակ.

- 1) նախագահի նորմատիվ հրամանագրեր,
- 2) կառավարության որոշումներ:

Նորմատիվ հրամանագրերը նախագահի՝ սահմանադրությամբ վերապահված իրավաստեղծ գործունեության իրավական ձև են: Դրանցով կարգավորվում են պետական կառավարմանն առնչվող ամենաբազմազան հասարակական հարաբերությունները: Նախագահը կարող է ընդունել նաև ոչ նորմատիվային բնույթի հրամանագրեր, անել կարգադրություններ, որոնք չպետք է հակասեն սահմանադրությանը և գործող օրենքներին: Ինչ վերաբերում է կառավարության որոշումներին, ապա դրանք ունեն նորմատիվ բնույթ և ընդունվում են պետության սահմանադրության, գործող օրենքների և նախագահի հրամանագրերի հիման վրա՝ միտված լինելով վերջիններիս կատարմանը: Այսպիսի իրավական առանձնահատկություններ ունեն նաև վարչապետի կարգադրությունները:

Պետական կառավարման ոլորտում հատկապես մեծ է **գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի** դերը: Սրանք ընդհանուր գործողության նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ունեն ճյուղային բնույթ, քանի որ հասարակական կյանքի որևէ ոլորտի կառավարման կենտրոնական մարմնի գործունեության իրավական ձև են: Խոսքը բոլոր նախարարությունների, գերատես-

չությունների, պետական կոմիտեների և այլ մարմինների մասին է, որոնք իրենց հանձնարարված ոլորտի կառավարումը կազմակերպում են այնպիսի իրավական անհատական ակտերի միջոցով, ինչպիսիք են հրամանները, հրահանգները, կանոնադրությունները, որոնք կարող են վերաբերել առողջապահության, կրթության, հարկային, մաքսային, բանկային և այլ ոլորտների հասարակական հարաբերությունների կարգավորմանը:

Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի թվին են դասվում տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը: Սրանք կարող է ընդունել ինչպես տեղական ներկայացուցչական մարմինը (ավագանի), այնպես էլ ինքնակառավարման մարմնի ղեկավարը (քաղաքապետ):

Տեղական ներկայացուցչական մարմինն ընդունում է որոշումներ (օրինակ՝ «Որոշում տեղական բյուջեի մասին»), իսկ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարին իրավունք է վերապահված ոչ միայն ընդունել որոշումներ, այլև անել կարգադրություններ: Այս ակտերի գործողությունը սահմանափակված է տեղական իշխանությանը ենթակա տարածքով և պարտադիր է տվյալ տարածքում ապրող բոլոր անձանց համար: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համակարգում են ներառվում **ներկազմակերպական** ակտերը, որոնք հրապարակվում են տարբեր կազմակերպությունների, ընկերությունների ղեկավարների կամ ընդհանուր ժողովների, տնօրենների խորհուրդների կողմից: Այս իրավական ակտերը ներկազմակերպական են համարվում, քանի որ հրապարակողներն առանձին կազմակերպություններ են և դրանք տարածվում են միայն այդ կազմակերպությունների անդամների վրա: Կարող են վերաբերել ինչպես կառավարմանը, այնպես էլ արտադրության, առևտրային, ուսումնական գործունեության կարգավորմանը: Ներկազմակերպական ենթաօրենսդրական իրավական ակտերը հրապարակվում են որոշումների և հրամանների ձևով:

Ինչ վերաբերում է ներկազմակերպական բնույթի կարգադրություններին, ապա դրանք կարող են անել կազմակերպությունների ղեկավարները, նրանց տեղակալները, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների պետերը: Որպես կանոն, կարգադրություններն արվում են կազմակերպության ղեկավարի հրամանի պահանջների կատարման ուղղությամբ:

Վերջապես, իրավունքի աղբյուր են **նորմատիվ իրավական այն պայմանագրերը**, որոնք պարունակում են գործող իրավունքի նոր նորմեր:

Այսպիսի պայմանագրերը կարգավորում են միջազգային իրավական հարաբերությունները և իրենց ուրույն տեղն ունեն ինչպես

մասնավոր, այնպես էլ հանրային իրավունքի ոլորտում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության 6-րդ հոդվածում ասվում է, որ միջազգային պայմանագրերը հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, և եթե ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

Հարց 3. Նորմատիվ իրավական ակտերի ներգործությունը տարածության և ժամանակի մեջ և ըստ անձանց շրջանակների: Օրենքի հետադարձ ուժը

Նորմատիվ իրավական ակտերի գործողության ժամկետը, այսինքն՝ հրապարակումից հետո ուժի մեջ մտնելը, դրանցում փոփոխություններ կատարելը, ուժը կորցրած ճանաչելը, ինչպես նաև որոշակի տարածքում գործելն ու ըստ անձանց շրջանակների ներգործելն իրավական էական նախապայմաններ են, որոնք ունեն գործնական, կիրառական մեծ նշանակություն: Նորմատիվ իրավական ակտերը սկսում են գործել ուժի մեջ մտնելու պահից: Տարբեր պետություններում դրանց գործողության, հատկապես՝ ուժի մեջ մտնելու պահի ժամկետները միատեսակ չեն:

Պետությունների իրավաստեղծ գործունեության ուսումնասիրությունները թույլ են տալիս ընդհանրացնելով ասել, որ նորմատիվ իրավական ակտը.

- ա) ուժի մեջ է մտնում այն ընդունելու պահից,
- բ) գործում է հրապարակելուց որոշակի ժամկետ անցնելուց հետո (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության օրենքները ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման պահից 10 օր հետո),
- գ) ուժի մեջ է մտնում նշված ժամկետում կամ ուժի մեջ մտնելու մասին հատուկ ակտով նշված ժամկետում:

Նորմատիվ իրավական այն ակտը, որում ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն (իրավական հետևանքներ չեն առաջացնում և իրավահարաբերությունների կարգավորման համար իրավական հիմք չեն): Նորմատիվ իրավական ակտերի որոշ մասը հրապարակման ենթակա չէ: Այնուամենայնիվ,

դրանց ուժի մեջ մտնելու կարգը նույնպես սահմանված է «Իրավական ակտերի մասին» օրենքով:

Նորմատիվ իրավական ակտերի գործողությունը ժամանակի մեջ հստակ պատկերացնելու համար անդրադառնանք ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 78-րդ հոդվածին՝ ըստ որի իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն օրենքով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում: Այնուհետև օրենքում նշվում է, որ հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող, պատասխանատվությունը խստացնող իրավական ակտերին:

Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի **հետադարձ ուժ**: Եթե նորմատիվ իրավական ակտում կատարվել են փոփոխություններ, լրացումներ կամ չեղյալ են ճանաչվել դրա որոշակի հատվածներ, ապա գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա: Ինչ վերաբերում է այն նորմատիվ իրավական այն ակտերին, որոնք ուժը կորցրած են ճանաչվել, ապա դրանց գործողությունը տարածվում է մինչև ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա:

Կարևոր է նաև նորմատիվ-իրավական ակտերի գործողության ժամկետի տևողության հարցը: ՀՀ հիշատակված օրենքում ասվում է, որ եթե տվյալ իրավական ակտում կամ այն գործողության մեջ դնելու մասին իրավական ակտում ուղղակի ժամկետ նախատեսված չէ, ապա նման ակտերի գործողության ժամկետն անսահմանափակ է:

Նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից գործում է **որոշակի տարածքում**: Պետական տարածքն ինքնիշխանության հիմնական հատկանիշներից մեկն է, դրա նյութական դրսևորումը: Միջազգային իրավունքում պետական իշխանության գերակայությունը պայմանավորված է պետական տարածքով: Պետության գերակայությունն ասելով առաջին հերթին պետք է հասկանալ պետական իշխանության գերագույնությունն այդ տարածքում գտնվող բոլոր անձանց և կազմակերպությունների նկատմամբ: Պետական տարածքում բոլոր նորմատիվ իրավական ակտերն ուժ ունեն ինչպես տվյալ պետության քաղաքացիների և իրավաբանական ան-

ծանց, այնպես էլ այդտեղ գտնվող օտարերկրյա քաղաքացիների և կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց համար: Պետական իշխանության կենտրոնական մարմինների ընդունած բոլոր իրավական ակտերը գործում են ողջ պետության տարածքում: Ինչ վերաբերում է տեղական իշխանության մարմինների ընդունած իրավական ակտերին, ապա դրանք գործում են համապատասխան վարչաքաղաքական բաժանումներում, որոնք պետական ամբողջ տարածքի մասեր են (նահանգ, հանրապետություն, ինքնավար հանրապետություն, մարզ, համայնք և այլն):

Նորմատիվ իրավական ակտերն ունեն ներգործության մեկ այլ ոլորտ՝ **այն անձանց շրջանակը**, որոնց վրա տարածվում են համապատասխան իրավական ակտերը: Նորմատիվ իրավական ակտի գործողությունը, ըստ անձանց շրջանակի, տարածքային գործողության անբաժան մասն է, քանի որ բոլոր իրավական ակտերը, անկախ բնույթից, գործում են պետության ամբողջ տարածքում, բացառությամբ այն նորմերի, որոնց տրված է գործողության էքստերիտորիալ բնույթ: Խոսքն այստեղ վերաբերում է հատկապես դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունների ներկայացուցիչների, ինչպես նաև այլ պետություններում հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվությանը: Իրավունքի ճյուղերի իրավական նորմերն իրենց ուժը տարածում են բոլոր քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա: Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց որոշ իրավունքներ մեկ այլ պետության տարածքում գործում են սահմանափակումներով: Այսպես՝ եթե օտարերկրյա քաղաքացիներն այլ պետության մեջ նրանց քաղաքացիներին հավասար օգտվում են սեփականության, ընտանեկան, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից, ինչպես նաև հավասար պատասխանատվություն են կրում քրեական և վարչական օրենսդրության պահանջների խախտումների համար, ապա այդ նույնը չի կարելի ասել վարչաքաղաքական ոլորտները կարգավորող օրենսդրությունից օգտվելու մասին: Այսպես՝ քաղաքական բնույթի համապատասխան իրավունքների և պարտականությունների սուբյեկտներ չեն կարող դառնալ օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք: Նրանք չեն կարող մասնակցել այլ պետության պետական իշխանության մարմինների ընտրություններին կամ ընտրվել այդ մարմիններում, ինչպես նաև չեն կարող մասնակցել այդ պետության կառավարմանը:

Նորմատիվ իրավական որոշ ակտերում երբեմն ուղղակիորեն ընդգծված են հատուկ սուբյեկտներ, որոնց հասցեագրված են այդ նորմերի պահանջները: Նման դեպքերում իրավական ակտը վերաբերում է ոչ թե պետության տարածքի բոլոր, այլ հստակ հատկանիշներով բնութագրվող որոշակի կատեգորիայի անձանց: Օրինակ՝ իրավական ակտում կարող է խոսվել միայն հարկային ծառայության աշխատողների կամ զորակոչի տարիքի հասած անձանց մասին և այլն: Վերջապես, նորմատիվ իրավական ակտի գործողությունը, ըստ անձանց շրջանակի և առանձնահատկությունների, ներկայացվում է պետությունների քրեական օրենսդրություններում: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է. «Քրեական օրենքների գործողությունը ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած անձանց նկատմամբ»:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** իրավունքի աղբյուրի հասկացությունը, կառուցվածքային ակտերն ու դրանց տեսակները:
- 2. Կարողանալ** բնութագրել նորմատիվ և ենթաօրենսդրական իրավական ակտերի հասկացությունները, առանձնահատկությունները, սահմանազատել դրանք ըստ իրավական ակտի անվանման՝ որպես իրավունքի աղբյուր:
- 3. Տիրապետել** նորմատիվ և ենթաօրենսդրական ակտերի դերին և նշանակությանը պետության գործունեության ոլորտներում:

ԹԵՄԱ 7. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎԱԿԱՐԳԵՐԸ

Հարց 1. Իրավունքի համակարգի հասկացությունը, կառուցվածքը և փոխհարաբերությունը օրենսդրության համակարգի հետ

Հասարակության զարգացման պատմությունը վկայում է, որ յուրաքանչյուր պետությունում ինչպես անցյալում, այնպես էլ այսօր գոյություն ունեն իրավական տարբեր ձևերով արտահայտված իրավանորմեր, որոնք միտված են համընդհանուր խնդիրների և նպատակների իրագործմանը: Այլ խոսքով, իրավական նորմերի բազմազանությունը միակ հենքն է, որի վրա ձևավորվում է իրավունքի համակարգը: Իրավունքի համակարգ գոյություն ունի միայն այն դեպքում, երբ վերջինս կազմող իրավական նորմերը հանդես են գալիս որպես օրգանապես ամբողջական, միասնական իրավական երևույթներ և փոխադարձաբար ներազդում են միմյանց վրա: Իրավունքի համակարգը, որպես **օրգանական միասնություն**, իրավական նորմերի պատահական, մեխանիկական հավաքածու չէ. այն արտացոլում է իրավական հասարակական հարաբերությունները, կարգավորում է դրանք և նպաստում նոր հասարակական հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը: Իրավունքի համակարգը բնութագրվում է ոչ միայն օրգանական միասնության և ամբողջականության հատկանիշներով, այլև այնպիսի բնութագրիչներով, ինչպիսիք են նորմերի տարբերությունները և փոխհարաբերակցությունը, ինքնուրույն կերպով հանդես գալու հնարավորությունը, օբյեկտիվությունը և այլն:

Իրավունքի համակարգը կազմող իրավական նորմերն արտացոլում են պետական կամք, իրավական համակարգի կարգավորման համապատասխան մեխանիզմների միասնություն: Այդ նորմերի բաժանման-բաշխման շնորհիվ ձևավորվում են իրավունքի ճյուղեր, ինստիտուտներ՝ ըստ հասարակական հարաբերությունների բազմատեսակության:

Անդրադառնալով իրավունքի համակարգի ներքին կառուցվածքին՝ կարող ենք ասել, որ դրա բաղկացուցիչներն են.

- 1) իրավական նորմերը,
- 2) իրավունքի ինստիտուտը,
- 3) իրավունքի ենթաճյուղը,
- 4) իրավունքի ճյուղը:

Իրավունքի կառուցվածքային միասնական բաղադրատարրն **իրավունքի նորմն է**: Իրավունքի համակարգը ներառում է հասա-

րակական զանազան հարաբերություններ կարգավորող տարբեր իրավական նորմեր: Ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ գոյություն ունի **փոխկապակցվածություն** կարգավորվող հարաբերությունների և դրանք կարգավորող նորմերի միջև: Օրինաչափությունն այն է, որ **միասեռ հարաբերությունները կարգավորվում են միակարգ նորմերով**: Ըստ այդմ՝ իրավունքի համակարգում իրավական նորմերը խմբավորվում են որպես իրավունքի ճյուղեր և իրավական ինստիտուտներ:

Իրավունքի ճյուղն իրավական նորմերի համակցություն է, իրավունքի համակարգի ինքնուրույն մաս և կարգավորում է որակապես միասեռ հասարակական հարաբերությունները: Ճյուղն իրավունքի համակարգի ամենից խոշոր տարրն է: Ժամանակակից իրավունքի համակարգերի հիմնական ճյուղեր են սահմանադրականը, վարչականը, քրեականը, ֆինանսականը, քաղաքացիականը, աշխատանքայինը, ինչպես նաև դատավարության այնպիսի իրավունքի ճյուղեր, ինչպիսիք են քրեականը, քաղաքացիականը, վարչականը, դատավարականը¹:

Ինչպես հիշատակվեց, իրավունքի տեսության գիտությունը տարբերում է նյութական և դատավարական ճյուղեր: **Նյութական իրավունքի նորմերն** ամրագրում են հասարակական հարաբերությունների սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, իսկ դատավարական իրավունքի նորմերը սահմանում են նյութական իրավունքի նորմերի իրականացման ընթացակարգը:

Դատավարական իրավունքի ճյուղերի նորմերը իրավաբանական որոշակիություն են հաղորդում իրավունքի տարբեր սուբյեկտների փոխհարաբերություններին՝ իրավունքը սահմանող, իրավապահպան և իրավակիրառ գործունեության բոլոր փուլերում: Դատավարական-իրավական ձևերն ու ընթացակարգերն անձի իրավունքների և ազատությունների իրական լինելու կարևոր իրավաբանական երաշխիքներ են ու ամբողջ իրավունքի արդյունավետ գործողությանն անհրաժեշտ պայմաններ: Իրավունքի համակարգը ճյուղերի և ինստիտուտների բաժանելով՝ բացահայտվում է իրավունքի կառուցվածքային տարրերի համակցությունն ըստ իրավական կարգավորման առարկայի և մեթոդի:

Իրավունքը հանրայինի և մասնավորի բաժանելու անհրաժեշտություն է ծագում, քանի որ իրավունքի յուրաքանչյուր համակարգում դրա նորմերը կոչված են կարգավորելու ու ապահովելու հանրային, այսինքն՝ հասարակության, պետության և մասնավոր անձանց շահերն ու հարաբերությունները: Նորմերի համակցությունը,

¹ Սուբխասյան Գ., Մաքսային իրավունք, Ե., 2016, էջ 12:

որը միտված է համընդհանուր շահերի ապահովմանը, անվանում են հանրային իրավունք (օրինակ՝ սահմանադրական, քրեական, վարչական, ֆինանսական իրավունքների ճյուղերը): Մասնավոր անձանց շահերի ու հարաբերությունների ապահովմանը միտված նորմերի համակցությունը անվանում են մասնավոր իրավունք (դիցուք՝ քաղաքացիական, աշխատանքային իրավունքների ճյուղերը):

Իրավունքի ճյուղի ինքնուրույն կառուցվածքային բաժանումներից մեկն **իրավական ինստիտուտն** է: Այն միավորում է նորմեր, որոնք կարգավորում են որոշակի տեսակի հասարակական հարաբերությունների միայն մի մասը: Այլ խոսքով, **իրավական ինստիտուտը** հասարակական հարաբերությունների որոշակի տեսակ կարգավորող միակարգ նորմերի հանրագումար է (օրինակ՝ ֆինանսական իրավունքում՝ բյուջետային իրավական ինստիտուտը, որը միայն բյուջետային հարաբերություններ կարգավորող մեկ տեսակի փոխկապակցված բյուջետային իրավական նորմերի խումբ է): Իրավական ինստիտուտը իրավունքի ճյուղից տարբերվում է կարգավորման ծավալով, քանի որ, վերջինիս հետ համեմատած, ավելի նեղ շրջանակի նորմեր է ընդգրկում: Իրավունքի համակարգում այն հարաբերականորեն ինքնուրույն և կայուն է (օրինակ՝ քաղաքացիական իրավունքում՝ սեփականության կամ պայմանագրային իրավական ինստիտուտները):

Իրավական ինստիտուտներն ունեն իրենց տեսակները, որոնց դասակարգման չափանիշներ են.

- ա) տարածման ոլորտը,
- բ) կարգավորման չափերը:

Ըստ տարածման ոլորտի՝ ինստիտուտները լինում են ճյուղային (օրինակ՝ հարկային իրավունքի ինստիտուտը՝ ֆինանսական իրավունքում, սեփականության իրավունքի ինստիտուտը՝ քաղաքացիական իրավունքում), իսկ ըստ կարգավորման չափերի՝ պարզ և համալիր: Պարզ ինստիտուտը կարգավորում է միասեռ հասարակական հարաբերությունների որևէ մեկ որոշակի տեսակ, իսկ համալիրը ներառում է մի քանի ինստիտուտներ (օրինակ՝ պայմանագրային իրավունքի ինստիտուտը քաղաքացիական իրավունքի այնպիսի ինստիտուտների համակցությունն է, ինչպիսիք են փոխատվությունը, առք ու վաճառքը, մատակարարումը, վարձակալությունը և այլն):

Հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում իրավունքի և օրենսդրության համակարգերը **փոխհարաբերակցվում են**: Իրավունքի համակարգն օբյեկտիվ երևույթ է, որը ձևավորվում է հասարակական կյանքի ընդհանուր օրինաչափությունների հիման վրա, իսկ օրենսդրությունը հանդես է գալիս որպես

իրավունքի աղբյուրների ամբողջություն, որն առօրյալում իրավական նորմերի արտահայտման ձև է: Ինչպես իրավունքի, այնպես էլ օրենսդրության համակարգը բարդ կառուցվածք է: Այստեղ նորմատիվ իրավական ակտերն ըստ ճյուղային հատկանիշի բաժանվում են հարաբերականորեն ինքնուրույն խմբերի: Այս սկզբունքից ելնելով՝ առանձնացվում են քրեական, քաղաքացիական, ֆինանսական, հարկային և այլ օրենսդրություններ: Նորմատիվ իրավական ակտերը տարբերակվում են նաև ըստ իրավաբանական ուժի՝ դասակարգվելով որպես սահմանադրություն, սահմանադրական օրենքներ, օրենսգրքեր, ընթացիկ օրենքներ, գործադիր իշխանության մարմինների նորմատիվ, գերատեսչական ակտեր և այլն: Օրենսդրության համակարգն օբյեկտիվորեն պայմանավորված է հասարակական հարաբերությունների բնույթով: Դրա վրա որոշակի ազդեցություն են թողնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են իրավաբանական տեխնիկան, դրա զարգացման մակարդակը և այլն: Գործնականում օրենսդրության համակարգը մեծապես պայմանավորված է իրավունքի համակարգով, որի կառուցման օրինաչափություններն օրենսդրի համար ուղեցույց են այս կամ այն նորմատիվ ակտն ընդունելիս: Այդ պատճառով իրավունքի և օրենսդրության համակարգերը հիմնականում համընկնում են, և օրենսդրության ճյուղերը կառուցվում են իրավունքի ճյուղերին համապատասխան: Միաժամանակ, օրենսդրության ճյուղը հարաբերականորեն ինքնուրույն կողիֆիկացված նորմատիվ ակտերի համակցություն է, որի հետևանքով իրավունքի և օրենսդրության համակարգերը շատ հաճախ չեն համընկնում (օրինակ՝ եթե օրենսդրության ճյուղն ընդգրկում է իրավունքի տարբեր ճյուղերի նորմեր, ապա համընկնման մասին խոսք լինել չի կարող):

Չարք 2. Իրավական կարգավորման առարկան և մեթոդը

Իրավունքի համակարգը ճյուղերի բաժանելիս հաշվի է առնվում երկու չափանիշ՝ կարգավորման առարկան և կարգավորման մեթոդը: Կարգավորման առարկան այն է, ինչի վրա ազդում է իրավունքը: Որպես կանոն, իրավունքի ազդեցության ոլորտներն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորվում են իրավական նորմերով: Իրավունքի համակարգը կազմող իրավունքի ճյուղերը միավորում են այնպիսի իրավական նորմեր, որոնք կարգավորում են օբյեկտիվորեն տարբերակված իրավական կարգավորում պահանջող հասարակական հարաբերությունների տարբերվող տեսակները:

Իրավունքի կարգավորման առարկայի ուսումնասիրության պահանջն առաջին հերթին բխում է իրավունքի զարգացման և կատարելագործման օբյեկտիվ անհրաժեշտությունից: Պետական մարմինների՝ հասարակության բազիսային հարաբերությունների ներգործության միջոցների աճը հանգեցնում է իրավական հարաբերությունների ընդլայնմանը, որը, իր հերթին, պետական մարմինների իրավաստեղծ գործունեության ընդլայնման և կատարելագործման պահանջ է առաջադրում: Գործող իրավունքի զարգացման ընթացքում երևան են գալիս նոր, բնույթով առանձնահատուկ հասարակական հարաբերություններ, որոնք իրենց կարգավորման յուրահատուկ իրավական նորմերով դառնում են իրավունքի նոր, երբեմն էլ՝ ինքնուրույն ճյուղեր:

Իրավագիտության մեջ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր գիտնականների մի մասը կարծում է, որ իրավունքի համակարգը բաղկացած է ճյուղային երկու խմբից.

ա) հիմնական,

բ) համալիր (կոմպլեքսային):

Իրավունքի **հիմնական** ճյուղերի թվին են դասվում սահմանադրականը, վարչականը, ֆինանսականը, քրեականը, քաղաքացիականը:

Իրավունքի **համալիր** ճյուղերը պարունակում են այնպիսի իրավական նորմեր, որոնք վերաբերում են ոչ միայն իրավունքի հիմնական ճյուղերին, այլև, ներքին կարգավորման տեսակետից, ունեն միասնական կարգավորման առարկա: Որպես հասարակական հարաբերությունների որոշակի հատուկ խումբ, որը կարգավորվում է այդ հարաբերություններին բնորոշ իրավական նորմերով, նորմերի այդ խումբը հանդես է գալիս իրավունքի հիմնական ճյուղի կառուցվածքում: Այսպես՝ գործող ֆինանսական իրավունքի ներքին կառուցվածքում գոյություն ունեն հարկային և բյուջետային հարաբերությունները կարգավորող որոշակի իրավական նորմերի խմբեր, որոնք, առանձին վերցրած, ֆինանսական իրավունքի ենթաճյուղ են կամ իրավական ինստիտուտ (բյուջետային): Հասարակական հարաբերությունների բնույթը, ինչպես նկատում ենք, երբեմն հնարավորություն է չի ընձեռում իրավունքի համակարգը ճյուղերի բաժանելով որոշելու այդ ճյուղերից յուրաքանչյուրի ինքնուրույնությունը, այդ իսկ պատճառով սահմանազատման հիմքում դրվում է երկրորդ՝ «կարգավորման մեթոդ» հասկացությունը:

Իրավունքի **կարգավորման մեթոդը** իրավական հնարքների, ձևերի, եղանակների այն ամբողջությունն է, որի միջոցով իրավական նորմն ազդում է հասարակական հարաբերությունների վրա՝ ապահովելով իրավունքի կարգավորիչ գործառույթը հասարակա-

կան կյանքում¹: Հետևաբար՝ իրավական կարգավորման արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է իրավական նորմում ամրագրված մեթոդի բնույթով, որի միջոցով ապահովվում է առաջադրված նպատակների անխափան իրականացումը: Իրավունքի կարգավորման առարկայի և մեթոդի հարաբերակցությունը վկայում է, որ կարգավորման առարկան գլխավոր նյութական այն չափանիշն է, որի ուժով իրավունքի համակարգի նորմերը բաշխվում են ըստ իրավունքի ճյուղերի՝ ապահովելով հասարակական հարաբերությունների օբյեկտիվ գոյությունը, ինչպես նաև դրանք հեռու պահելով պետական մարմինների իրավաստեղծ գործունեությունում դրսևորվող սուբյեկտիվ կամքից և ցանկություններից: Իրավունքի կարգավորման առարկայի տարաբնույթ լինելը պահանջ է առաջադրում իրավունքի համակարգը բաժանելու ճյուղերի, իսկ առանձնացված ճյուղերի կարգավորման մեթոդների բնույթի ընտրությունը թողնվում է համապատասխան իրավաստեղծ պետական մարմնի կամքին:

Ժամանակակից իրավագիտության մեջ իրավունքի ճյուղերի կարգավորման մեթոդների հարցը տարակարծություններ է առաջացրել: Ընդհանրացնելով եղած տեսակետները՝ կարելի է ասել, որ իրավական կարգավորման մեթոդներն ունեն երկու ուղղություն.

- 1) իրավունքի յուրաքանչյուր ճյուղ ունի իր սեփական մեթոդը,
- 2) իրավունքի բոլոր ճյուղերը կիրառում են միասնական իրավունքի միջոցներ²:

Հասարակական հարաբերությունների կարգավորման փորձը վկայում է, որ իրավունքին բնորոշ են իրավական կարգավորման միասնական մեթոդներ, որոնք գործադրվում են իշխանակազմակերպական, արգելքների և թույլտվության եղանակների կիրառմամբ: Վերջիններին ամբողջությունն էլ հենց կազմում է հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության միջոցների բովանդակությունը:

Ավանդաբար, իրավունքի բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորման համար սահմանված է երկու մեթոդ.

- 1) իմպերատիվ կամ կատեգորիկ,
- 2) դիսպոզիտիվ:

Իմպերատիվ մեթոդը կիրառվում է վարչական, ֆինանսական, հարկային իրավունքի ճյուղերում և ենթադրում է իրավահարաբերության կողմերի անհավասարություն:

¹ Сорокин В. Д., Метод правового регулирования (теоретические проблемы), "Юридическая литература", М. 1976, с. 84.

² Алехин А. Н., Кармолицкий А. А., Козлов Ю. М., Административное право Российской Федерации, М., 1997, с. 31-37.

Դիսպոզիտիվ մեթոդը սահմանում է վարքագծի ընտրության հնարավորություն, որի համար հատկանշական է իրավահարաբերության կողմերի հավասարությունը: Ներկայում կարգավորման դիսպոզիտիվ մեթոդը բնորոշ է մասնավոր իրավունքի ճյուղերին (օրինակ՝ քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան):

Իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների վրա ներգործության մեթոդի և դրա կիրառման անհրաժեշտությանը կանդրադառնանք հարկային իրավունքին բնորոշ կարգավորման մեթոդների վերլուծության համատեքստում: Որպես հարկային իրավունքի առանձնահատկություն՝ պետք է նշել այն, որ հարկային գործունեություն ծավալելու ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները կարգավորվում են ինչպես դիսպոզիտիվ, այնպես էլ իմպերատիվ բնույթի իրավական ներգործության միջոցներով:

Չարք 3. Նորմատիվ իրավական ակտերի համակարգումը և ձևերը

Իրավական նորմերը, որպես վարքագծի համապարտադիր կանոններ, հիմնականում արտահայտվում են նորմատիվ իրավական ակտերով, որոնք պետական մարմիններն ընդունում են ըստ հասարակական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության: Նորմատիվ իրավական ակտերի մեծ տեսակարար կշիռը, երբեմն նաև դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների առարկաների ընդհանրությունները բացասաբար են անդրադառնում կարգավորիչ գործառույթի արդյունավետության վրա: Գործնականում հաճախ են հանդիպում իրարամերժ, հակասական, չհամաձայնեցված, երբեմն էլ՝ ոչ անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտեր, ուստի, կարող ենք ասել, որ դրանց համակարգումը լուրջ և պատասխանատու գործընթաց է:

Համակարգել նորմատիվ իրավական ակտերը՝ նշանակում է կանոնակարգել դրանք, կատարելագործել դրանց որակը՝ նպաստելով հասարակական հարաբերություններում իրավական արժեքների դերի բարձրացմանը: Կատարելով համապատասխան ուսումնասիրություններ՝ իրավաստեղծ մարմինները հնարավորություն են ունենում բացահայտելու գործող օրենսդրության բացերը, անհամապատասխանությունը հասարակական պահանջներին, իրավական ակտերի միջև գոյություն ունեցող հակասությունները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկելու նշված թերությունների վերացման ուղղությամբ: Նորմատիվ իրավական ակտերի համակարգումը չափա-

զանց անհրաժեշտ գործընթաց է գործող օրենսդրության արդյունավետ կիրառման համար: Նորմատիվ իրավական ակտերի պահանջների պարզ և հասկանալի լեզվով շարադրված լինելը յուրաքանչյուրին հասանելի է դարձնում դրանց իմաստը՝ լուծելով քաղաքացիների իրավական դաստիարակության, իրավական մշակույթի ամրապնդման մի շարք խնդիրներ: Այսպիսով՝ որքան օրենսդրությունը հասանելի է հասարակական լայն զանգվածներին, այնքան նրանց համար պարզ են պետության պահանջները, հասկանալի են սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրներ արտացոլող ծրագրերը և զարգացման հեռանկարները: Նորմատիվ իրավական ակտերի համակարգումը կատարվում է երեք հիմնական ձևերով.

- ա) օրինակարգում (կողիֆիկացում),
- բ) միավորում (ինկորպորացում),
- գ) համախմբում (կոնսոլիդացում)¹:

Օրինակարգումը (կողիֆիկացում) օրենսդրության համակարգման ձև է, որի ընթացքում տարբեր ակտեր միավորվում են մեկ ակտում, փոխվում է դրանց բովանդակությունը, և ստեղծվում է մեկ նոր՝ ամբողջական ակտ: Նոր ակտում կարող են պահպանվել իրենց նշանակությունը չկորցրած գործող նորմերը: Այսպիսով՝ օրինակարգված ակտն իր բնույթով, դրույթների պարունակությամբ նոր իրավական ակտ է: Այդպիսի օրինակարգված (կողիֆիկացված) ակտեր են օրենսդրության հիմունքները, օրենսգրքերը, կանոնադրությունները: Օրինակ՝ ՀՀ «Քրեական օրենսգիրքն» ունի համաճյուղային բնույթ, ներառում է քրեական իրավունքին վերաբերող բոլոր իրավական նորմերը, իսկ օրենսդրության հիմունքները սահմանում են իրավունքի որևէ ճյուղի հիմնարար դրույթները, սկզբունքները, որոնք առավելապես օգտագործվում են բարդ (դաշնային) պետությունների սուբյեկտների փոխհարաբերությունները կարգավորելիս՝ որպես օրինակարգման գործունեության նորմատիվ իրավական հիմքեր:

Նորմատիվ իրավական ակտերի համակարգման մյուս ձևը **միավորումն է (ինկորպորացում)**: Այս դեպքում նորմատիվ իրավական ակտերը համախմբվում են ըստ այբբենական, ժամանակագրական, թեմատիկ հատկանիշների՝ առանց դրանց իրավական բովանդակության մեջ փոփոխություններ կատարելու: Միավորումը կարող է կատարվել երկու նորմատիվ իրավական ակտերի՝ ա) պաշտոնական և բ) ոչ պաշտոնական հրապարակումով: Նորմատիվ իրավական ակտերը միավորելիս, անհրաժեշտության դեպքում, կատարվում է հրապարակվող ակտերի տեքստերի մշակում՝ հանելով ուժը

¹ Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն (բուհական դասագիրք), Ե., «Նաիրի», 2001, էջ 210:

կորցրած, հնացած դրույթները, իհարկե, ինչպես վերը նշվեց, անփոփոխ թողնելով դրանց բովանդակությունը: Արգելվում է նաև խմբագրական միջամտությունը:

Յանախմբումը (կոնսոլիդացում), որպես համակարգման ձև, արտահայտվում է հասարակական հարաբերությունների միևնույն ոլորտում գործող մի շարք նորմատիվ իրավական ակտերի միավորումով՝ անփոփոխ թողնելով դրանց բովանդակությունը: Յանախմբված նորմատիվ իրավական նոր ակտն ընդունում է իրավաստեղծ մարմինը: Այս ակտի ընդունմամբ նախկին հանախմբված (կոնսոլիդացված) ակտերը կորցնում են իրենց իրավաբանական ուժը և դադարում գործելուց: Նորմատիվ իրավական ակտերի հանախմբումը պետք է տարբերել միավորումից, քանի որ հանախմբման դեպքում հնացած նորմերը պաշտոնապես փոփոխվում են կամ դադարեցվում:

Նորմատիվ իրավական ակտերի համակարգումը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ձևի բարելավման արդյունավետ միջոց է:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** իրավունքի և օրենսդրության համակարգերի մեթոդաբանությունը, դրանց հասկացությունները, կառուցվածքը և սահմանազատման չափանիշները:
- 2. Կարողանալ** լուսաբանել իրավունքի ճյուղերի սահմանազատման հիմքերն ըստ կարգավորման առակայի և մեթոդի:
- 3. Տիրապետել** իրավունքի և օրենսդրության համակարգերի փոխհարաբերակցությանը:

ԹԵՄԱ 8. ԻՐԱՎԱՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Չարց 1. Իրավահարաբերության հասկացությունը, հիմնական հատկանիշները

Մարդկային հասարակությունը քաղաքացիների միավորումների տարբեր ձևերի փոխհարաբերությունների, մարդկանց գործունեության համակցությունն է, որի բնույթից ելնելով՝ ձևավորվում են տնտեսական, քաղաքական, բարոյական, իրավական և այլ բնույթի հասարակական հարաբերություններ: Հասարակության շրջանակներում անհատների և նրանց միավորումների գործողությունների հետևանքով ծագող հարաբերություններն ընդունված է համարել հասարակական (սոցիալական): Իրավագիտությունն ուսումնասիրում է հասարակական հարաբերությունների այն մասը, որը ներառում է սոցիալական նշանակություն ունեցող վարքի կանոններ, այսինքն՝ սահմանվում է իրավունքի նորմով: Իրավահարաբերության հասկացության բնութագրումը դասվում է բարդ հիմնահարցերի շարքին: Սովորաբար, իրավահարաբերությունները համապատասխան իրավունքի ճյուղի, երբեմն էլ՝ մի քանի ճյուղերի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններ են, որոնց մասնակիցները միմյանց հետ կապված են պետության կողմից պաշտպանվող փոխադարձ իրավունքներով և պարտականություններով: Քաղաքացիական շրջանառության մեջ ձևավորվող հասարակական հարաբերությունների մեծ մասը իրավական բնույթ է ձեռք բերում միայն այն դեպքում, երբ կարգավորվում է համապատասխան իրավական նորմերով, որոնք ներգործելով՝ դրանց տալիս են իրավաբանական ձև կամ, այլ կերպ ասած, դրանք դառնում են իրավահարաբերություններ, իսկ մասնակիցները՝ իրավահարաբերության սուբյեկտներ: Յուրաքանչյուր իրավահարաբերություն ունի գիտակցական-կամային բնույթ, որը ծագում է իրավական նորմերի հենքի վրա, իսկ մասնակիցները ձեռք են բերում սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ: Մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կապը կազմում է ցանկացած իրավահարաբերության կառուցվածքը: Այդպիսի կապի բացակայության դեպքում իրավահարաբերություն չի կարող առաջանալ:

Այսպիսով՝ «իրավահարաբերություն» հասկացությունը կարելի է բնորոշել որպես իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություն, որի կողմերը հանդես են գալիս որպես իրավական նորմերով սահմանված փոխադարձ իրավունքների և պարտականությունների կրողներ: Իրավահարաբերությունների մի

մասը կրում է համալիր բնույթ, ինչը պայմանավորված է ներկայի պետական գործունեության բնույթով և պետական գործունեության ոլորտում ծագող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առարկայով՝ հիմնված իշխանության և ենթակայության սկզբունքների վրա: Իրավական հարաբերությունները հասարակականից սահմանազատվում են մի շարք առանձնահատկություններով: Առաջինն այն է, որ դրանք ծագում, դադարում կամ փոփոխվում են **միայն իրավաբանական փաստերի հիման վրա:** Առօրյայում մարդիկ միմյանց հետ տարբեր հարաբերությունների մեջ են, որոնք ունեն ընտանեկան, ընկերական, աշխատանքային, զույգային բնույթ, և բոլորը չէ, որ կարգավորվում են իրավական նորմերով: Իրավահարաբերության ձև են ձեռք բերում միայն այն հարաբերությունները, որոնք կարգավորվում են իրավական նորմերով, քանի որ միայն դրանցով է սահմանվում մարդկանց իրավունքների և պարտականությունների շրջանակը, և վերջիններս, որպես իրավական նորմում ամրագրված պահանջներ, ունեն որոշակի հասցեագրումներ և մարդկանց միջև առաջացնում են իրավական հարաբերություններ:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ իրավահարաբերության մասնակիցներն օժտված են **փոխադարձ իրավունքներով և պարտականություններով:** Գործող իրավական ակտերը, եթե իրավահարաբերության մեկ մասնակցին օժտում են իրավունքով, ապա մյուսի վրա դնում են իրավաբանական պարտականություն (օրինակ՝ ըստ բանկային վարկի պայմանագրի, բանկն իրավունք ունի հաճախորդին տրամադրելու վարկ, իսկ հաճախորդը պարտավոր է սահմանված ժամկետում վերադարձնել այն):

Երրորդ առանձնահատկությունն ունի **գիտակցական-կամային** բնույթ: Որպես կանոն, իրավական բոլոր նորմերում արտահայտված է պետության կամքը, սակայն այն չի կարող իրականության վերածվել, կենսագործվել հասարակական կյանքում, եթե բացակայում են իրավական հարաբերության մասնակիցների կամ թեկուզ դրանցից մեկի ցանկությունը, կամքի դրսևորումը, որոնք իրացվում են որոշակի գործողությամբ կամ անգործությամբ (օրինակ՝ հարկային իրավունքում հարկի գանձումը պայմանավորված է հարկման ենթակա օբյեկտի առկայությամբ՝ առանց որի անհնար է օրենքով սահմանված պետական կամքի դրսևորումը):

Վերջապես, չորրորդ առանձնահատկությունն այն է, որ իրավական հարաբերությունները հասարակական հարաբերություններից սահմանազատվում են նրանով, որ **երաշխավորվում և պաշտպանվում են պետության, նրա լիազոր մարմինների կողմից:** Օրինականության և իրավակարգի պահպանությունը պետական

մարմինների գերակա խնդիրներից մեկն է: Իրավապահ մարմինները, անշեղորեն կատարելով իրավական նորմերի պահանջները, պաշտպանում են իրավահարաբերության մասնակիցների շահերը՝ գործնականում կիրառելով օրենքով սահմանված պատասխանատվության բոլոր տեսակները իրավախախտների նկատմամբ: Իրավահարաբերության առանձնահատկությունն այնք է համարել նաև վերջինիս դասակարգումն ըստ տեսակների և ծագման նախապայմանների:

Իրավահարաբերությունների դասակարգումն ըստ տեսակների կատարվում է տարբեր չափանիշներով: Ելնելով իրավական կարգավորման առարկայի առանձնահատկություններից՝ իրավահարաբերությունները բաժանվում են ըստ իրավունքի ճյուղերի (օրինակ՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, քրեական, քաղաքացիական և այլն):

Ըստ բնույթի՝ իրավահարաբերությունները լինում են նյութական և վարութային (օրինակ՝ քրեական, քաղաքացիական, վարչական, ինչպես նաև դատավարական):

Ըստ գործառությանի դերի՝ իրավահարաբերությունները լինում են կարգավորիչ և պաշտպանական՝ կապված պետական հարկադրանքի կիրառման հետ:

Կախված մասնակիցների թվից՝ իրավահարաբերությունները լինում են.

ա) պարզ. ծագում են երկու սուբյեկտի միջև (օրինակ՝ առք ու վաճառք, փոխատվություն, նվիրատվություն),

բ) բարդ. ծագում են մի քանի սուբյեկտների միջև (օրինակ՝ հարկային, մաքսային պատասխանատվության):

Կախված կողմերի որոշակիության աստիճանից՝ իրավահարաբերությունները լինում են.

ա) հարաբերական. որոշակի են բոլոր մասնակիցները, լիազորված և պարտավոր սուբյեկտները (օրինակ՝ գնորդը և վաճառողը),

բ) բացարձակ. հայտնի է միայն իրավագոր կողմը, իսկ պարտավոր են համարվում մնացած բոլոր հնարավոր սուբյեկտները (օրինակ՝ սեփականության, հեղինակային իրավահարաբերությունները),

գ) ընդհանուր. ծագում են բոլորի համար՝ անկախ նրանց կամքից և գործում են անժամկետ (օրինակ՝ այլոց իրավունքները հարգելու և պահպանելու իրավահարաբերությունը):

Իրավահարաբերությունների ծագման նախադրյալներ են համարվում այն պայմանները, որոնք ծնում են իրավահարաբերություններ: Իրենց բնույթով դրանք երկուսն են՝ **նյութական և իրավաբանական:**

Նյութականում արտացոլվում են մարդկանց կենսական շահերը, որոնց պահանջից ելնելով՝ նրանք մտնում են իրավահարաբերությունների մեջ: Նյութական նախադրյալ կարող է դառնալ իրավահարաբերության օբյեկտը, որի համար սուբյեկտները մտնում են իրավական հարաբերության մեջ:

Իրավահարաբերության իրավաբանական նախադրյալներ են իրավունքի նորմերը, իրավասուբյեկտությունը և իրավաբանական փաստը: Իրավունքի նորմը և իրավահարաբերությունը իրավական կարգավորման անհրաժեշտ և բավարար պայմաններ են: Իրավունքի նորմը սահմանում է իրավահարաբերության մասնակիցների շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Այն, միաժամանակ, իրավունքի նորմի պահանջների իրացման ձև է:

Ֆարց 2. Իրավահարաբերության կառուցվածքը

Իրավական հարաբերությունները, որպես իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների տարատեսակ, իրենց ներքին կառուցվածքով ոչնչով չեն տարբերվում միմյանցից: Այս իմաստով, ամեն մի իրավահարաբերություն ունի իր տարրերը, որպիսիք են իրավահարաբերության սուբյեկտները, օբյեկտները և բովանդակությունը (իրավունքներ և պարտականություններ): Ժամանակակից իրավական գրականության մեջ փորձ է արվում սահման դնելու իրավունքի և իրավահարաբերության սուբյեկտների միջև, ինչը տեսական և գործնական նշանակություն ունի: Ենթադրելով այն դիրքորոշումը, որ «իրավունքի սուբյեկտն» ավելի ընդգրկուն հասկացություն է և ներառում է իրավահարաբերության սուբյեկտներին վերագրվող տարրերը, կարելի է ասել, որ վերջիններս իրական իրավասուբյեկտությամբ օժտված ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք ցանկացած դեպքում կարող են հանդես գալ որպես հարաբերությունների մասնակիցներ՝ օժտված լինելով որոշակի իրավունքներով և պարտականություններով: Իրավունքի սուբյեկտները, մասնակցելով որոշակի իրավահարաբերությունների, իրացնում են իրավանորմերով իրենց վերապահված իրավունքները և պարտականությունները, ձեռք են բերում սուբյեկտիվ իրավունքներ կամ պարտականություններ՝ որակվելով որպես իրավական հարաբերությունների մասնակիցներ: Իրավական հարաբերությունների սուբյեկտները կարելի է բաժանել 3 խմբի.

1. հասարակական-տարածքային միավորներ,

2. կոլեկտիվ սուբյեկտներ,
3. անհատական սուբյեկտներ:

Հայաստանի Հանրապետությունը, որպես միատարր ազգային պետական միավոր, ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, հանդես է գալիս որպես իրավունքի **հատուկ սուբյեկտ**:

Պետությունն իրավունքի հատուկ սուբյեկտ է համարվում այն յուրահատկությունների ուժով, որով նա պետական, տնտեսական, քաղաքական և քաղաքացիական իշխանության կրող է դառնում, հանրային իրավունքի սուբյեկտ, ինքն է սահմանում ներքին և արտաքին գործունեության շրջանակները, իր և իրավունքի մյուս սուբյեկտների իրավահարաբերություններին մասնակցելու սահմանները, ծավալն ու բովանդակությունը: Նա հարաբերություններին մասնակցում է անսահմանափակ պետաիշխանական լիազորություններով: Միայն քաղաքացիաիրավական հարաբերություններին է, որ մասնակցում է քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Այդ դեպքում նրա նկատմամբ կիրառվում են իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող իրավական նորմերը: Սահմանադրության 179-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:

Համայնքները, որպես իրավունքի հասարակական-տարածքային սուբյեկտներ, սահմանադրությամբ օժտված են բյուջետային լայն իրավունքներով: Համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում դրա կատարումը, օրենքով նախատեսված կարգով սահմանում տեղական հարկեր և տուրքեր (հոդված 185): Հայաստանի Հանրապետությունը և տեղական ինքնակառավարման մարմինները, որպես իրավունքի սուբյեկտներ, հանդես են գալիս ամենատարբեր իրավահարաբերություններում, կրում են իրավունքներ և պարտականություններ: Այսպես՝ պետությունը պատասխանատու է ներքին պարտքի, կենտրոնական բանկից ստացված վարկերի և այլ ֆինանսական գործառույթների համար:

Իրավահարաբերության **կոլեկտիվ սուբյեկտները** գործունեության բնույթով և նպատակներով բազմազան են: Սրանց թվին են դասվում պետական իշխանության և կառավարման մարմինները, կազմակերպությունները, հիմնարկները, ինչպես նաև սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված կազմակերպությունները: Որպեսզի այս մարմիններն իրավական հարաբերությունների մեջ մտնեն, անհրաժեշտ է, որ լինեն **իրավունակ: Իրավունակությունն օրենքով նախատեսված կամ օրենքով թույլատրված իրավունքներն ունենալու և պարտականությունները կրելու**

ունակությունն է: Իրավական հարաբերությունների ծագման նախադրյալ է դրա կողմերի իրավունակությունը: Պետական իշխանության մարմինների, ինչպես նաև տնտեսական կազմակերպությունների իրավունակությունն սկսվում է դրանց կազմակերպման և իրավասության որոշման պահից: Հենց այդ պահից էլ մեկնարկում է դրանց **գործունակությունը**, այսինքն՝ իրավունակությունը կենսագործելու ունակությունը: Այլ խոսքով, գործունակությունն իրավահարաբերության մասնակցի ունակությունն է իր գործողություններով իրականացնելու իրավունքներ և պարտականություններ:

Պետական իշխանության և կառավարման մարմինները, ինչպես նաև տնտեսական կազմակերպություններն ունեն օրենքով կամ այլ նորմատիվ ակտերով սահմանված որոշակի իրավասություններ, որոնց շրջանակում էլ հանդես են գալիս որպես իրավական հարաբերությունների սուբյեկտներ: Իրավունակությունը ենթադրում է, որ պետական և տնտեսական բոլոր մարմիններն օժտված են պետական իշխանության և գործադիր-կարգադրիչ լիազորություններով, որոնց բնույթը և ծավալը պայմանավորված են տվյալ մարմինների իրավասություններով: Բոլոր մարմինների և տնտեսական կազմակերպությունների իրավասություններն իրենց արտացոլումն են գտնում դրանց կանոնադրություններում, ինչպես նաև այլ նորմատիվ ակտերում:

Որպես իրավական հարաբերությունների **կոլեկտիվ սուբյեկտներ**՝ պետական իշխանության և կառավարման ինչպես ընդհանուր (կառավարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ), այնպես էլ ճյուղային և հատուկ իրավասության մարմինները վերոնշյալ հիմնադիր իրավական ակտերի ուժով, որպես իրավական հարաբերությունների մասնակիցներ, կարող են իրենց իրավասության սահմաններում հրապարակել նորմատիվ և անհատական (որոշումներ, հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ) բնույթի իրավական ակտեր և դրանց կատարումն ապահովել հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Իրավունքի կոլեկտիվ սուբյեկտների իրավունակությունը կարող է լինել **ընդհանուր և հատուկ**:

Ընդհանուր իրավունակությանը բնորոշ է պետության գործունեությանը մասնակցելը, իսկ **հատուկին**՝ գործունեության ընթացքում հատուկ խնդիրների լուծման և հանձնարարությունների կատարման ունակությունը, որով օժտված են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և այլն:

Իրավունքի կոլեկտիվ սուբյեկտների համակարգում անհրաժեշտ է առանձնացնել **պաշտոնատար անձանց**, որոնց իրավունակության և գործունակության իրավական գնահատման հարցերը երբևիցե չեն լուսաբանվել:

Պետության գործառույթներին հատուկ ժամանակակից հիմնախնդիրները, իրավական հարաբերությունների կարգավորմանը միտված օրենսդրությունը հրամայաբար պահանջում են սահմանել պետական ծառայողների, հատկապես՝ տնտեսական մարմինների պաշտոնատար անձանց (կազմակերպության ղեկավար, գլխավոր հաշվապահ) իրավունակության և գործունակության, դրանց ծավալի, բովանդակության և իրավական հետևանքների կարգավորման հիմնահարցերը: Օրինակ՝ ֆինանսական գործառնությունների իրականացման իրավունքը և պատասխանատվությունը, ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, դրված է տնտեսական կառույցի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վրա: Այս պաշտոնատար անձանց կողմից ֆինանսական գործառնությունների իրականացումը իրավական նշանակություն ունի միայն տվյալ կառույցի սահմաններում:

Իրավական հարաբերությունների կոլեկտիվ սուբյեկտների ամենատարածված տեսակը **սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված կազմակերպություններն են:** Ի տարբերություն պետական իշխանության և կառավարման մարմինների, որոնք կենսագործում են պետության գործառույթները, կազմակերպությունները ստեղծում են նյութական ու մշակութային բարիքներ, բավարարում հասարակության անմիջական՝ նյութական և հոգևոր պահանջները: Դրանց գործունեության բովանդակությունը արտադրելու, բաշխելու, դաստիարակելու, ուսուցանելու, կենցաղային սպասարկման մեջ է:

Կազմակերպությունների իրավունակությունը ծագում է դրանց ստեղծման պահից, իսկ իրավասությունը որոշվում է կանոնադրությամբ: Կազմակերպությունը, որպես իրավաբանական անձ, ստեղծված է համարվում, և դրա իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից: Որպես իրավունքի սուբյեկտ՝ իրավունակությունը դրա կարգավիճակի միայն մեկ տարրն է: Երկրորդ տարրը **գործունակությունն է**, որն առաջանում է իրավունակության հետ միասին, կազմակերպության ստեղծման պահին: Տնտեսական կազմակերպությունների գործունեությունը, բնականաբար, պայմանավորված է դրանցում ընդգրկված մարդկանց գործունեությամբ, քանի որ միայն մարդիկ են ունակ իրականացնելու գիտակցված գործունեություն: Սակայն, մարդկանց դերն իրավաբանական անձի գործունեության իրականացման մեջ տարբեր է: Միասնական, մպատակային գործունեության կազմակերպման, իրավաբանական անձի կամք ձևավորելու, նրա գործունեությունը ղեկավարելու, իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանձնելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածը սահ-

մանում է «իրավաբանական անձի մարմին» հասկացությունը: Յետևաբար՝ իրավաբանական անձի իրավունակությունը և գործունակությունը իրականացնում է ոչ թե իրավաբանական անձը՝ որպես այդպիսին, այլ նրա մարմինը: Այլ խոսքով, գործունեություն իրականացնելիս որպես իրավական հարաբերությունների սուբյեկտ հանդես են գալիս ոչ թե կազմակերպությունները, այլ դրանց գործադիր մարմինները (օրինակ՝ տնօրենը): Կազմակերպության գործունեությունն իրականացնում է գործադիր տնօրինությունը՝ ղեկավարները, այլ ոչ թե ամբողջ աշխատակազմը: Իրավական հարաբերությունների անհատական սուբյեկտներ կարող են լինել ոչ միայն հանրապետության քաղաքացիները, այլև օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք: ԴՅ քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան օրից և դադարում՝ նրա մահվան հետ: Քաղաքացիների՝ որպես իրավական հարաբերությունների սուբյեկտների գործունակության բացահայտման համար էական նշանակություն ունեն աշխատանքային և քաղաքացիական իրավունքի ճյուղերի մշակած և օրենսդրական ամրապնդում ստացած գործունակության սկզբունքները, որոնք էապես կապված են նրանց հոգեկան, տարիքային որակների, դրանց փոփոխությունների հետ: ԴՅ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ **գործունակություն** է համարվում քաղաքացու՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար պարտավորություններ ստեղծելու ու դրանք կատարելու ունակությունը: Քաղաքացին լրիվ գործունակ է համարվում 18 տարեկանը լրանալու պահից: Այս սկզբունքն առանց բացառությունների կիրառվում է նաև իրավունքի մյուս ճյուղերի սուբյեկտների համար:

Իրավական հարաբերության կառուցվածքի հաջորդ տարրը իրավահարաբերության օբյեկտն է: Ժամանակակից իրավագիտության մեջ օբյեկտի հարցն առավել վիճելի է: Անհրաժեշտ է նկատել, որ **իրավահարաբերության օբյեկտն** այն է, ինչին ուղղված է սուբյեկտիվ իրավունքներով ու պարտականություններով օժտված, շահերով պայմանավորված իրավական հարաբերության մասնակցի վարքագիծը: **Օբյեկտն** իրավական հարաբերության անհրաժեշտ տարրն է: Իրավահարաբերությունների օբյեկտների մեկնաբանման հարցում իրավագիտության մեջ կա երկու մոտեցում: Մի մասի կարծիքով՝ իրավահարաբերություններ կարող են համարվել միայն սուբյեկտների գործողությունները, մարդկանց վարքագիծը: Երկրորդ խումբն այն կարծիքին է, որ օբյեկտները շատ տարաբնույթ են, մասնավորապես.

- 1) նյութական բարիքներ՝ առարկաներ, արժեքներ, գույք,

- 2) ոչ նյութական բարիքներ՝ կյանք, առողջություն, պատիվ և արժանապատվություն,
- 3) հոգևոր արդյունքներ՝ գրականության, արվեստի ստեղծագործություններ,
- 4) արժեթղթեր և փաստաթղթեր (դրամ, բաժնետոմս),
- 5) իրավահարաբերության մասնակիցների գործողությունների արդյունքներ:

Իրավական հարաբերության օբյեկտը ճիշտ պատկերացնելու նպատակով փորձենք այն լուսաբանել հարկային իրավահարաբերությունների օբյեկտների բացահայտմամբ, քանի որ այս դեպքում օբյեկտը դիտարկվում է ոչ միայն որպես նյութական և ոչ նյութական արժեքներ, այլ իրավահարաբերության մասնակիցների **գործողություններ**:

Գործնականում հարկային հարաբերությունները կարգավորվում են ըստ իրավունքի որոշակի նորմերի, որոնց հանրագումարում առաջանում են հարկային բազմաթիվ ինստիտուտներ: Ցանկացած հարկատեսակի մասին օրենքում առանձնացված են.

- 1) հարկ վճարողները (սուբյեկտները),
- 2) հարկի օբյեկտը,
- 3) հարկի միավորը և դրույքը,
- 4) չհարկվող նվազագույնը,
- 5) հարկի վճարման ժամկետները,
- 6) արտոնությունները:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ հարկային իրավունքի սուբյեկտներն օժտված են համապատասխան իրավունքներով և պարտականություններով, դրանց ուժով կատարում են իրավաբանական նշանակության գործողություններ, որոնք կազմում են **իրավահարաբերության բովանդակությունը**: Առանցքայինը տվյալ իրավահարաբերության սուբյեկտների իրավունքներն ու պարտականություններն են, քանի որ դրանցով են որոշվում նրանց գործելակերպի ուղղությունները և նպատակը: Իրավահարաբերության ընթացքում մասնակիցներն իրենց իրավունքներն ու պարտականություններն իրացնում են որոշակի գործողություններ կատարելով (օրինակ՝ հարկային իրավահարաբերության բովանդակությունը, կապված իրավահարաբերության օբյեկտների հետ, ունի նյութական բնույթ (որոշակիացնում է հարկային իրավահարաբերությունների առանձնահատկությունները) և հստակեցնում է իրավահարաբերության օբյեկտի շուրջ ծագած՝ նրա մասնակիցների իրավունքների և պարտականությունների շրջանակը):

Ֆարց 3. Իրավաբանական փաստեր

Իրավահարաբերությունները, ընդհանրապես, ինքնին չեն առաջանում: Դրանք ծագում, փոփոխվում կամ դադարում են կյանքի որոշակի հանգամանքների (փաստերի) վրա հասնելու հետևանքով:

Իրավահարաբերությունները ձևավորվում և փոփոխվում են իրականության մեջ գոյություն ունեցող այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնց հետ օրենքը կապում է որոշակի իրավական հետևանքների առաջացումը: Այսպիսի հանգամանքներն իրավագիտության մեջ ընդունված է անվանել իրավաբանական փաստեր: Իրավական հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման համար հիմք են իրավաբանական փաստերը (օրինակ՝ հարկ վճարելու գործողությունը) կամ եղելությունները (օրինակ՝ մարդու ծնունդը, մահը, երկրաշարժը, ջրհեղեղը և այլն): Իրավական նորմերը դրանց առկայության հետ են կապում որոշակի իրավական հետևանքների առաջացումը: Այսպիսով՝ իրավաբանական փաստերը կյանքի որոշակի հանգամանքներ են, որոնց հետ իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը կամ դադարեցումը: Դրանք, **սուբյեկտի անհատական կամքի հետ ունեցած կապի** տեսակետից, բաժանվում են երկու խմբի՝ գործողություններ և եղելություններ: **Գործողություններն** այն փաստեր են, որոնք կատարվում են մարդկանց կամքով և, փաստորեն, մարդկանց կամքի արտահայտությունն են: Օրինակաբանության տեսակետից, մարդկանց բոլոր գործողությունները բաժանվում են իրավաչափի և ոչ իրավաչափի:

Իրավաչափ գործողությունները հանգեցնում են մարդու՝ իրավունքի նորմով նախատեսված իրավաբանական իրավունքների և պարտականությունների ծագմանը: Դրանք, իրենց հերթին, բաժանվում են իրավաբանական ակտերի և իրավաբանական արարքների: Իրավական հարաբերություններն առավելապես ծագում են իրավաչափ գործողությունների, նորմատիվային և անհատական իրավական ակտերի արդյունքում: Այդպիսի նորմատիվային իրավական ակտ է համարվում ամեն տարի ԱԺ-ի կողմից ընդունվող «Պետական բյուջեի մասին» օրենքը: Իրավական հարաբերության փոփոխությունները, որպես կանոն, չեն կարող տեղի ունենալ դրա մասնակիցների ցանկությամբ, այլ այն նորմատիվային ակտերի պահանջով, որոնք փոփոխություններ են սահմանում բուն իրավական ակտի հանգամանքներում և եղելություններում (օրինակ՝ բյուջետային հատկացումների ավելացումը կամ պակասեցումը առաջ է բերում համապատասխան իրավական հարաբերության փոփոխում): Իրավաբանական արարքներն իրավաչափ այնպիսի գործո-

ղություններ են, որոնք հատուկ ուղղված չեն իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը, սակայն կարող են առաջ բերել այդպիսի հետևանքներ (օրինակ՝ տնտեսավարող սուբյեկտի գանգատի հիման վրա գանգատը քննության առնող հարկային մարմինն իրավունք ունի մինչև դրա լուծումը՝ դադարեցնելու հարկերի գանձումը. այս օրինակում գանգատն իրավաբանական արարք է, որի ուժով հարկային իրավահարաբերության մասնակիցը դադարեցնում է հարկի վճարումը): Իրավաբանական արարքները, որպես իրավաչափ գործողությունների համակցություն, կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի.

1. իրավաբանական արարքներ, որոնց նպատակը հարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանությունն է, այսինքն՝ երբ իրավահարաբերության մասնակիցն օգտվում է պետության գործունեության ոլորտում իրեն վերապահված իրավունքից (դիմում կամ բողոք ներկայացնել),
2. իրավաբանական արարքներ, որոնք ուղղվում են իրավահարաբերությունների մասնակիցների կողմից պարտավորությունների կատարմանը (հարկերի մասին հաշվետվություններ ներկայացնել կամ հարկային տեսչության հարկը վճարելու մասին հիշեցում):

Ոչ իրավաչափ են այն գործողությունները, որոնց կատարելն արգելված է օրենքով, այսինքն՝ չեն համապատասխանում իրավական նորմերի պահանջներին, առաջ են բերում իրավախախտումներ: Ոչ իրավաչափ գործողություններն իրավունքի տեսանկյունից որակվում են որպես գանցանքներ և հանցագործություններ: Այսպես, ըստ 33 քրեական օրենսգրքի, տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկերից և պարտադիր այլ վճարներից հրաժարվելը դիտվում է ոչ իրավաչափ գործողություն, իրավախախտում, որի համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն: Ոչ իրավաչափ են ճանաչվում ոչ միայն ակտիվ գործողությունները, այլև անգործությունը, որը կարող է տեղի ունենալ օրենքով սահմանված գործողությունների կատարումից ձեռնապահ մնալու կամ պարտավորությունները չկատարելու եղանակներով: Անգործության դրսևորումը, որպես ոչ իրավաչափ գործողություն, պետական ֆինանսների ոլորտում առաջ է բերում ֆինանսական պարտավորություն:

Իրավահարաբերություններ գործնականում կարող են առաջանալ ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի իրավաբանական փաստերի հիման վրա: Այսպիսի իրավահարաբերությունների ծագման հիմքն ընդունված է համարել **բարդ**: Այսպես՝ ներդրումների առունով, հատկապես կապիտալ շինարարության և վերանորոգման

ոլորտում, ֆինանսական իրավահարաբերություններ կարող են առաջանալ, եթե առկա են իրավաբանական այնպիսի փաստեր, ինչպիսիք են շինարարության թույլտվությունը, նախագծային-նախահաշվային փաստաթղթերը, ֆինանսավարման ընդհանուր և տեղական պլանները և այլն: Սրանցից մեկի բացակայության դեպքում կապիտալ շինարարությունը չի սկսվի, հետևաբար՝ ֆինանսահրավական հարաբերություններ չեն առաջանա:

Իրավական հարաբերությունները ծագում, փոփոխվում և դադարում են նաև եղելության հիման վրա, որը մարդու կամքից անկախ վրա հասնող երևույթների համակցություն է (օրինակ՝ մահ, ծնունդ, բնական աղետներ, դժբախտ դեպքեր և այլն):

Վերլուծությունները վկայում են, որ իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման պայմանները, այսինքն՝ իրավաբանական փաստերը նախատեսվում են ըստ իրավական նորմերի վարկածի:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** «իրավահարաբերություն» հասկացության սահմանումը, հիմնական հատկանիշները և առանձնահատկությունները, իրավահարաբերությունների սահմանագատման հիմքերը:
- 2. Կարողանալ** լուսաբանել իրավահարաբերության կառուցվածքը, դրա սուբյեկտները, օբյեկտները և բովանդակությունը, ինչպես նաև իրավաբանական փաստերն ու դրանց տեսակները:
- 3. Տիրապետել** իրավահարաբերության նախադրյալներին:

ԹԵՄԱ 9. ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Չարք 1. Իրավախախտման հասկացությունը, տեսակները

Չասարակական կյանքում, քաղաքացիական հարաբերություններում անհատները երբեմն դրսևորում են անցանկալի, վնասակար, վտանգավոր վարքագիծ, որը հակասում է պետության սահմանած իրավական նորմերի պահանջներին: Իրավունքը կարգավորում է մարդկանց վարքագիծը: Չասարակական հարաբերությունների այն մասը, որը կարգավորված չէ իրավական նորմերով, իրավաբանական նշանակություն չունի և չի կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ: Իրավական նորմում ամրագրված հասցեագրումները մարդիկ և նրանց միավորումները (կազմակերպությունները) կարող են խախտել միայն որոշակի գործողությունների միջոցով: Մարդկանց գործողությունները, կախված իրավունքի պահանջներից, դրանց համապատասխանությունից կամ անհամապատասխանությունից, բաժանվում են **երկու հիմնական տեսակների` իրավաչափի և ոչ իրավաչափի:**

Իրավունքի սուբյեկտների ոչ իրավաչափ գործողությունները, դրանց տեսակների ու հետևանքների իրավաբանական վերլուծությունը հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու իրավախախտման մասին: Այլ խոսքով, ոչ իրավաչափ վարքագիծը, որպես իրավունքի պահանջների խախտում, արտահայտվում է **«իրավախախտում»** իրավաբանական հասկացության միջոցով: Չետևաբար` իրավախախտումը **սուբյեկտի հակաիրավական, հանրորեն վտանգավոր, մեղավոր արարքն է, որի համար գործող օրենսդրությամբ նախատեսված է իրավաբանական պատասխանատվություն:** Իրավախախտմանը հատուկ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են.

- 1) արարք է (գործողություն կամ անգործություն),
- 2) մեղավորությամբ (դիտավորությամբ կամ անզգուշությամբ) կատարված արարք է,
- 3) հակաիրավական է, հակասում է իրավական նորմերին,
- 4) հանրորեն վտանգավոր է,
- 5) արարքը և վտանգավոր հետևանքը պատճառականորեն կապված են,
- 6) իրավաբանական պատասխանատվությունն իրավախախտման հետևանք է:

Արարքի **հակաիրավականությունը** սուբյեկտի համապատաս-

խան գործողությանը կամ անգործությանը գործող իրավական նորմերի պահանջների խախտումն է: Իրավախախտման **հանրորեն վտանգավոր արարքը** հակասում է հասարակության գոյության պայմաններին, խախտում է հասարակության կենսագործունեությանն անհրաժեշտ հասարակական հարաբերությունները: Ինչ վերաբերում է իրավախախտմանը՝ որպես **մեղավորությանը** դրսևորված արարք, ապա այդ հակահրավական գործունեությունը իրավաբանական բնորոշմամբ ունի գիտակցված-կամային բնույթ: Կախված սոցիալական վտանգավորության աստիճանից՝ բոլոր իրավախախտումները բաժանվում են **հանցագործությունների և զանցանքների**: Գործնականում դրսևորված ցանկացած իրավախախտում ունի իրավաբանական կազմ:

Իրավախախտման իրավաբանական կազմը դրա հատկանիշների ամբողջությունն է, որն անհրաժեշտ է և բավարար իրավաբանական պատասխանատվության ենթարկելու համար: Կազմի տարրեր են իրավախախտման օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտիվ կողմը և սուբյեկտը:

Իրավախախտման օբյեկտն իրավական կարգավորում ստացած հասարակական հարաբերություններն են, գործող իրավունքի կողմից կարգավորվող ու պաշտպանվող անհատական ընդհանուր արժեքներն ու բարիքները (օրինակ՝ գույք, պատիվ, կյանք և այլն), որոնք հակահրավական գործողությունների հետևանքով վնասվել են:

Իրավախախտման **օբյեկտիվ կողմն** իրավունքի նորմերով նախատեսված հատկանիշների համակարգ է, որ բնութագրում է օբյեկտիվ իրականության մեջ իրավախախտման արտաքին դրսևորումը: Կարևորվում է այն հատկանիշը, որը բնութագրում է գործողությունը (օրինակ՝ մաքսային օբյեկտի չհայտարարագրումը կամ հարկի մասին հաշվետվություն չներկայացնելը):

Գործողությունը կամ **անգործությունը** իրավախախտման առանցքային հատկանիշ է, որին վերագրվում են հասարակական վտանգավոր հետևանքներ, ինչպես նաև պատճառական կապ գործողության (անգործության) և հետևանքների միջև: Իրավախախտման տարրերից է իրավախախտում կատարած անձի՝ իր թույլ տված իրավախախտումը գնահատելու հնարավորությունը և նրա հոգեկան վիճակը, որն իրավագիտության մեջ համարում են **սուբյեկտիվ կողմ**: Ի տարբերություն ֆիզիկական անձանց, իրավահարաբերությունների այնպիսի յուրահատուկ մասնակիցներ, ինչպիսիք են իրավաբանական անձինք, օժտված չեն անհատական գիտակցությամբ, այդ պատճառով իրավագիտության մեջ արտահայտվում են տեսակետներ կազմակերպությունների մեղքի լիար-

ժեք բացահայտման անհնարինության վերաբերյալ: Իրավախախտման կազմի սուբյեկտիվ կողմի (մեղքի դրսևորման) հատկանիշի հետ կապված՝ պետք է նկատել, որ, ՀՀ օրենսդրության համաձայն, դա կիրառելի է միայն այնպիսի իրավախախտումների համար, որոնք առաջացնում են վարչական կամ քրեական պատասխանատվություն (օրինակ՝ ըստ հարկային օրենսդրության՝ վարչական և քրեական պատասխանատվության ենթարկվում են միայն քաղաքացիները, մինչդեռ կազմակերպությունը մեղքի զնահատման խնդիր չի ունենում այն իրավախախտումների համար, որոնց պատասխանատուն է): Մեղքը, ինչպես նշվեց, իրավախախտողի հոգեկան վերաբերմունքն է իր հակաիրավական վարքի նկատմամբ, որն ունի դրսևորման երկու ձև. ա) դիտավորություն և բ) անզգուշություն: Դիտավորությամբ կատարված իրավախախտումը կարող է լինել ուղղակի կամ անուղղակի:

Իրավախախտումը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե իրավախախտողը գիտակցել է իր գործողության (անզործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է վնաս հասցնել:

Անուղղակի կատարված իրավախախտման համար բնութագրական է այն, որ իրավախախտողը գիտակցել է իր գործողության (անզործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն չի ցանկացել այդ հետևանքների իրականացում, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք:

Ինչ վերաբերում է իրավախախտողի կողմից մեղքի անզգուշ դրսևորմանը, ապա դա գործնականում արտահայտվում է երկու եղանակով. ա) ինքնավստահությամբ և բ) անփութությամբ: Իրավախախտումն ինքնավստահությամբ կատարված է համարվում այն դեպքում, երբ անձը նախատեսել է իր գործողության (անզործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն:

Անփութությամբ կատարված են համարվում այն իրավախախտումները, երբ անձը չի նախատեսել իր գործողության (անզործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք¹:

¹ Մեղքի ձևերի սահմանումները տրված են ՀՀ քրեական օրենսգրքի 28-30-րդ հոդվածներում:

Վերջապես, իրավախախտման կազմի տարրերն են նրա **սուբյեկտները**, որոնք կարող են լինել անհատական և կոլեկտիվ:

Իրավախախտման սուբյեկտներ կարող են լինել որոշակի տարիքի հասած ֆիզիկական անձինք, ինչպես նաև իրավագործունակությամբ օժտված կազմակերպությունները, օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց կարգավիճակի առանձնահատկությունները մանրագնին վերլուծված են «Իրավահարաբերությունների կառուցվածքը» բաժնում:

Ֆարց 2. Իրավախախտման տեսակները

Հասարակության համար վտանգ ներկայացնող բոլոր իրավախախտումներն ըստ իրենց հակաիրավական հատկությունների և վտանգավորության աստիճանի բաժանվում են հանցագործությունների ու զանցանքների: Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածում ասվում է, որ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված, հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: Միաժամանակ, հոդվածի երկրորդ մասում նշվում է, որ հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

Վտանգավորության աստիճանից ելնելով՝ քրեական իրավունքում հանցագործությունները բաժանվում են տեսակների: ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածում տարբերակվում են ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր ու առանձնապես ծանր հանցագործություններ: Բացի հանցագործություններից, մյուս բոլոր իրավախախտումները համարվում են զանցանք: Չանցանքներն ըստ խախտման բնույթի բաժանվում են վարչականի, կարգապահականի ու քաղաքացիական-իրավականի: Հայաստանի Հանրապետության գործող՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրքը սահմանում է վարչական զանցանքի հասկացությունը. «**Վարչական զանցանքը** պետական կամ հասարակական կարգի, սեփականության ձևերի, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների նկատմամբ ունեցող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) գործողություն կամ

անգործությունն է, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն»։ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը վարչական զանցանքների շարքին է դասույն այնպիսի իրավախախտումներ, ինչպիսիք են քաղաքացիների և բնակչության առողջության դեմ ուղղված ոտնձգությունները, հողօգտագործման, անասնաբուժական–սանիտարական կանոնների խախտումը, տրանսպորտի, առևտրի, ֆինանսների և կառավարման այլ ոլորտների իրավախախտումները։ Իրավախախտումների տեսակների շարքում առանձնանում են կարգապահական զանցանքները, որոնք հիմնականում վերաբերում են աշխատանքային օրենսդրության խախտումներին։

Կարգապահական զանցանքը կարելի է բնութագրել որպես քաղաքացու՝ աշխատանքային, ծառայողական, կարգապահական կանոնադրությամբ սահմանված կանոնների հակաիրավական, մեղավոր խախտումներ, որոնք համար նախատեսված է համապատասխան կարգապահական տույժ (օրինակ՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրության՝ կազմակերպություններում աշխատանքային կարգուկանոն է հաստատվում ըստ ներքին աշխատանքային կարգի պահպանության կանոնների, որոնց պահանջների խախտումը կարգապահական զանցանք է)։ Կարգապահական զանցանքներ են համարվում այնպիսի իրավախախտումներ, ինչպիսիք են աշխատանքից ուշանալը, անհարգելի բացակայությունը, պարտադիր բուժզննությամբ չհետաքրքրվելը և այլն։ Ջանցանքների մի մասն առաջանում է գույքային և անձնական ոչ գույքային բնույթի՝ օրենքով պաշտպանվող հարաբերությունների հասցեագրումների պահանջների խախտումներից։ Այսպիսի զանցանքներն հակաիրավական արարքներ են, որոնք խախտում են քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված իրավակարգը՝ համարվելով **քաղաքացիաիրավական զանցանքներ**։ Դրանք իրենց բնույթով կարող են լինել պայմանագրային և ոչ պայմանագրային։ Պայմանագրային իրավախախտումներին հատուկ են պայմանագրային պարտավորությունները խախտելը, դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը։

Ոչ պայմանագրային իրավախախտումները (զանցանքները) առաջանում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասից։

Չարց 3. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը, սկզբունքներն ու տեսակները

Իրավաբանական պատասխանատվությունը գործող իրավա-նորմերի խախտման դեպքում սանկցիայի կիրառումն ու իրականա-ցումն է: Դասագրքերում «իրավաբանական պատասխանատվու-թյուն» հասկացությանը տրվում են տարբեր բնութագրեր, որոնք ընդհանրացնելով կարող ենք ասել, որ դա իրավական նորմի սանկ-ցիայով ամրագրված՝ նյութական, ֆիզիկական և բարոյական բնույ-թի հարկադրանքի միջոցների ամբողջությունն է, որ կիրառում են դատարանները և իրավասու պետական մարմինները կամ պաշտո-նատար անձինք՝ իրավախախտում կատարած անձանց նկատ-մամբ: Իրավախախտման դեպքում սանկցիա կիրառելիս պատաս-խանատվության ենթարկվողի համար առաջանում են աննպաստ հետևանքներ, որոնք իրավախախտողին պետության անունից որո-շակի գրկանքներ են պատժառում:

Իրավաբանական պատասխանատվությունը լինում է քրեական, վարչական, կարգապահական, նյութական և քաղաքացիական: Այս բոլոր տեսակներն իրենց կիրառման ընթացքում ելնում են իրավա-բանական պատասխանատվության այնպիսի սկզբունքներից, ինչ-պիսիք են **օրինականությունը, հիմնավորվածությունը, արդա-րությունը, պատասխանատվության անխուսափելիությունը, հումանիզմը** և այլն:

Օրինականության սկզբունքի հենքը սահմանադրական այն նորմն է՝ ըստ որի բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև (հոդ-ված 14.1.): Իրավախախտման դեպքում պատասխանատվությունն իր բոլոր տեսակներով կարող է վրա հասնել միայն օրենքով սահ-մանված հակաիրավական, հանրության համար վտանգ ներկայաց-նող գործողությունների կամ անգործության համար: Իրավա-խախտների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրա-ռելիս օրենսդրության պահանջների կատարումն ապահովվում է վերադաս մարմինների, պաշտոնատար անձանց կողմից համա-կարգված վերահսկողությամբ, դատախազական հսկողությամբ, բողոքարկման իրավունքով, ինչպես նաև օրենսդրությամբ սահ-մանված այլ միջոցներով:

Հիմնավորվածության սկզբունքն արտացոլում է պատասխա-նատվության հիմնավորման դատավարական կողմը, այսինքն՝ պա-տասխանատվություն կիրառվում է միայն այն դեպքում, երբ դատա-վարական հնարքների օգտագործմամբ բացահայտվում է հակա-իրավական գործողության օբյեկտիվ պատկերը, բազմակողմանի և

ամբողջական հետազոտությունների շնորհիվ ձեռք բերված ապացույցների միջոցով լիազոր պետական մարմինները հասնում են օբյեկտիվ իրականության վերականգնմանը ու բացահայտում անձի մեղքը կատարված արարքում:

Արդարության սկզբունքը պահանջում է, որ իրավախախտի նկատմամբ կիրառվող պատասխանատվությունը լինի արդարացի, համապատասխանի իրավախախտման ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, իրավախախտի անձի հասարակական բնութագրին:

Իրավաբանական **պատասխանատվության կիրառման անխուսափելիության սկզբունքը** կիրառելիս իրավախախտում թույլ տված յուրաքանչյուր անձ ենթարկվում է պատասխանատվության՝ անկախ սոցիալական դիրքից, զբաղեցրած պաշտոնից ու սեռից, և դրանից հնարավոր է ազատվել միայն օրենքով սահմանված կարգով ու հիմքերով:

Իրավաբանական պատասխանատվություն գործադրելիս լիազոր մարմինները պարտավորվում են հարգել մարդու արժանապատվությունը: Արգելվում են խոշտանգումները, դաժան, անմարդկային վերաբերմունքը, որպիսիք հակասում են գործող օրենսդրությանը: Պատասխանատվության տեսակները պայմանավորված են իրավախախտման բնույթով, դրա հասարակական վտանգավորության աստիճանով: Դրանց շարքում ամենախիստը **քրեաիրավական պատասխանատվությունն է**, որը գործող քրեական օրենքով նախատեսված է որպես հանցակազմի համար սահմանված պատիժ: Քրեական պատիժ նշանակվում է միայն դատարանի կողմից՝ համապատասխան դատավճռով, և այն ունի չափազանց անհատական, անձնական բնույթ: Քրեական պատասխանատվության ենթակա են միայն որոշակի տարիքի հասած ֆիզիկական անձինք (ուժ տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը, իսկ ծանր հանցագործությունների դեպքում՝ 14 տարին): Քրեական իրավախախտների համար պատիժներ նշանակելիս դատարանները հաշվի են առնում մի շարք այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են անձի և կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը, ծանրացնող և մեղմացնող հանգամանքները և այլն: Անձը քրեական պատասխանատվությունից լրիվ կարող է ազատվել միայն այն դեպքում, եթե հանցագործության կատարման պահին եղել է անմեղսունակ:

Իրավաբանական պատասխանատվության տարատեսակ է **վարչական պատասխանատվությունը**, որն ընդգրկում է այն բոլոր իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու հայցերը, որոնք վերաբերում են պետական կառավարման ոլորտին և հիմնականում ուղղված են գործադիր իշխանության

դեմ: Վարչական պատասխանատվությունն արտահայտվում է վարչական իրավախախտների համար վարչական տույժերի կիրառմամբ, որոնք, որպես կանոն, սահմանվում են պետական կառավարման մարմինների, դրանցում պաշտոնական դիրք զբաղեցնող անձանց կողմից: Կարող են կիրառվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքերով նախատեսված տույժի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են նախազգուշացումը, տուգանքը, իրավախախտման կատարման գործիք կամ անմիջական օբյեկտ համարվող գույքի բռնագրավումը, փոխհատուցելի առգրավումը, հատուկ իրավունքներից զրկելը: Վարչական պատասխանատվությունն իր կիրառման կարգով, վարույթով, պատասխանատվությունը բացառող հանգամանքներով նման է քրեական պատասխանատվությանը և տարբերվում է դրանից հիմնականում ներգործության միջոցներով և իրավական հետևանքներով, քանի որ դատվածություն են առաջացնում միայն քրեական պատժամիջոցները:

Հաջորդ տեսակը **կարգապահական պատասխանատվությունն է**, որը կիրառվում է աշխատանքային հարաբերությունների ոլորտում և արտահայտվում անմիջական ենթակայության կարգով՝ ղեկավարների կողմից կարգապահական զանցանք թույլ տված անձանց նկատմամբ՝ մեղավոր անձին կարգապահական տույժի ենթարկելու եղանակով: Գործող աշխատանքային օրենսդրությունը կարգապահական զանցանքների համար սահմանում է տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են դիտողությունը, նկատողությունը, խիստ նկատողությունը, աշխատանքից ազատելը, իսկ զինվորական, ոստիկանական և այլ իրավապահ ծառայություններում, ըստ «կարգապահական կանոնադրությունների», կիրառվում են, օրինակ, կոչումներից զրկելը կամ պաշտոնի իջեցումը:

Վերջապես, իրավաբանական պատասխանատվություն է կիրառվում նաև քաղաքացիական օրենսդրության խախտումների դեպքում: Խոսքը վերաբերում է գույքային և անձնական ոչ գույքային իրավահարաբերությունների սուբյեկտների շահերի պաշտպանությանը, որն իրականացվում է **քաղաքացիական-իրավական պատասխանատվության** կիրառմամբ: Քաղաքացիական իրավախախտումների համար իրավաբանական պատասխանատվություն իրականացվում է քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով: Քաղաքացիների քննությամբ պատասխանատվություն կարող են սահմանել ընդհանուր իրավասության դատարանները: Գործող օրենսդրությամբ թույլատրվում է խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացնել նաև վարչական դատարանների միջոցով: Վերջիններս քննում են վարչական կարգով ընդունված որոշումների օրինականությունը, ինչպես նաև այդ կապակցությամբ բերված բողոք-

ները: Քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող է կիրառվել ոչ միայն ակնհայտ խախտումների դեպքում, այլև մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցող վիճակի վերականգնման կամ հավանական խախտումները կանխարգելելու պահանջների, վիճահարույց գործարքներն անվավեր ճանաչելու, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքային իրավունքների և օրինական այլ շահերի պաշտպանման պահանջով:

Իրավական պատասխանատվության տեսակների մեջ կարելի է առանձնացնել **նյութականը**, որը կիրառվում է աշխատանքային պայմանագրով ամրագրված աշխատանքային հարաբերությունների ընթացքում:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է նյութական պատասխանատվության հիմքերը: Այսպես՝ ըստ 231-րդ հոդվածի՝ նյութական պատասխանատվություն է առաջանում այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի կողմերից մեկը (գործատուն կամ աշխատողը), չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով իր պարտականությունները, վնաս է պատճառում մյուսին: Այստեղ սահմանվում են նաև այն խախտումները, որոնց դեպքում նյութական պատասխանատվության են ենթարկվում և՛ գործատուն, և՛ աշխատողը: Օրինակ, ըստ 234-րդ հոդվածի, գործատուի նյութական պատասխանատվություն է առաջանում, եթե.

- ա) աշխատավարձը դժբախտ դեպքի հետևանքով կամ էլ մասնագիտական հիվանդությունից չապահովագրված աշխատողը հիվանդացել է, ստացել է խեղում կամ մահացել է,
- բ) վնասի հետևանքով աշխատողը կորցրել է գույքը, այն ոչնչացել է կամ էլ օգտագործման համար դարձել ոչ պիտանի,
- գ) թույլ է տրվել աշխատողի կամ այլ անձանց գույքային իրավունքների այլ խախտումներ:

Նշված դեպքերում գործատուն հատուցում է պատճառված վնասը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Սահմանվում են նաև աշխատողին նյութական պատասխանատվության ենթարկելու դեպքերը: Դիցուք, ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի, աշխատողը պարտավոր է փոխհատուցել գործատուին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է.

- ա) գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու,
- բ) նյութական գերածախս թույլ տալու,
- գ) նյութական արժեքներին անխնամ վերաբերվելու, դրանք չապահպանելու հետևանքով, ինչպես նաև այն դեպքերում, որոնք սահմանված են հիշատակված հոդվածում:

Նույն օրենսգրքի 238-րդ հոդվածով սահմանվում է գործատուից պատճառված վնասի հատուցման կարգը՝ լրիվ ծավալով: Այսպես՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, բայց ոչ ավելի, քան իր երեք ամսվա միջին աշխատավարձի չափն է: Աշխատողը լիակատար նյութական պատասխանատվություն կարող է կրել միայն այն դեպքում, երբ գործատուի հետ կնքել է գրավոր պայմանագիր լիակատար նյութական պատասխանատվության մասին, որտեղ նշված են այն արժեքները, որոնց համար աշխատողը ստանձնում է լիակատար նյութական պատասխանատվություն:

Այսպիսով՝ նյութական պատասխանատվությունն աշխատողի հակահրավակական գործարքների հետևանքով կազմակերպայումնը հասցված այն վնասներն են, որոնք սահմանված են օրենքով կամ աշխատանքային պայմանագրով:

Ֆարց 4. Օրինականության և իրավակարգի հասկացությունը, տարրերը

Օրինականությունը, այս բառի քաղաքական-իրավաբանական իմաստով, ժամանակակից քաղաքակիրթ պետությունների պետական վարչակարգի (ռեժիմի) կենսագործման հիմնական մեթոդներից մեկն է, որն արտահայտվում է պետական բոլոր մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից պետության բարձրագույն ներկայացուցչական մարմնի ընդունած օրենքների և դրանցից բխող, դրանց համապատասխանող այլ նորմատիվ ակտերի ճշգրիտ պահպանմամբ ու կատարմամբ: Ժամանակակից պետություններում օրինականությունն իրավական որոշակի ռեժիմ է՝ ըստ որի իրավական ակտերի համակարգում պետք է պահպանվի օրենքի գերակայությունը: Այն իր գործողությամբ ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները, ապահովում համապատասխան ներդաշնակություն, պաշտպանում հասարակության յուրաքանչյուր անդամի շահերը՝ օբյեկտիվորեն տարբերակելով դրանք: Օրինականության հասկացությունը ժամանակակից իրավաբանական գրականության մեջ բնորոշվում է երկու տեսանկյունից՝ ձևական և իրավաբանական:

Օրինականության ձևական հայեցակարգը օրինականությունը բնորոշում է որպես պետության և հասարակության սոցիալական պահանջ, որը հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցներին պարտավորեցնում է բարեխղճորեն պահպանել և անշեղորեն կատարել գործող իրավունքի նորմերի պահանջները:

Օրինականության իրավաբանական հայեցակարգը կառուցված է իրավունքի և օրենքի տարանջատման գաղափարի վրա և, դրանով իսկ, բացի իրավունքի նորմերի կամ օրենքների իրականացման պահանջից, ընդգրկում է նաև դրանց բովանդակային հատկությունները:

Օրինականության բովանդակությունը և էությունը որոշակիացվում են համապատասխան սկզբունքների և պահանջների հասկացությունների միջոցով: **Օրինականության սկզբունքներն** այն հիմնական, առաջնային գաղափարներն ու դրույթներն են, որոնք արտահայտում են օրինականության բովանդակությունը, իսկ պահանջները՝ իրավական նորմերում արտահայտված, ընդհանուր կարգով ձևակերպված համապարտադիր հասցեագրումները, որոնք ունեն պահանջի բնույթ և մարդկային հարաբերությունները դարձնում են օրինական:

Օրինականությունը, միաժամանակ, սկզբունքների հանրագումար է, որին բնորոշ են.

1. համընդհանրությունը և միասնությունը. պահանջվում է, որ իրավունքի նորմերը երկրի ողջ տարածքում բոլորի կողմից հասկացվեն և կիրառվեն միատեսակ,
2. սահմանադրության և օրենքների գերակայությունը. օրենքներն օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով և հասարակական հարաբերությունների հիմնական կարգավորիչներն են,
3. մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորվածությունը. պետությունը, ելնելով մարդու իրավունքների սահմանադրական ամրագրումներից, պետք է ստեղծի բոլոր անհրաժեշտ պայմանները նրանց՝ սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար, ըստ այդմ՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի դատական պաշտպանության իրավունք:

Պետությունը օրինականության պահանջների անշեղ ապահովման նպատակով սահմանում է մի շարք երաշխիքներ:

Առանձնացվում են օրինականության երաշխիքների հետևյալ տեսակները՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, գաղափարական, կազմակերպական և հատուկ-իրավաբանական: Հատուկ իրավաբանական երաշխիքները իրավական ինստիտուտներ և կառուցակարգեր են, որոնք կոչված են երաշխավորելու իրավունքի նորմերի կենսագործումը (օրինակ՝ արդարադատություն, հսկողություն և վերահսկողություն և այլն):

Օրինականության պահանջն ուղղակիորեն հարաբերվում է կարգապահության հասկացության հետ, որը **մարդկանց վարքագծին ներկայացվող որոշակի պահանջներն են՝ կատարել սո-**

ցիալական բոլոր նորմերը: Օրինականության հասկացությունը նեղ է կարգապահության հասկացությունից, քանի որ առաջինը նշանակում է միայն իրավական նորմերի կենսագործում, իսկ երկրորդն ընդգրկում է բոլոր սոցիալական նորմերի պահանջների կատարումը: Օրինականության նպատակն ամուր իրավակարգի ստեղծումն է, իսկ կարգապահության կենսագործման հետևանքը հասարակական կարգի պահպանումն է: Ըստ հասարակական կյանքի ոլորտների՝ կարգապահությունն ունի դրսևորման մի շարք տեսակներ՝ պետական, զինվորական, աշխատանքային, պայմանագրային:

Իրավաբանորեն ձևակերպելով ընդհանրացմենք՝ իրավակարգը փաստական հասարակական հարաբերությունների համակարգ է, որը հաստատվում է իրավունքի նորմերի լրիվ և ճշգրիտ իրականացմամբ և երաշխավորում է իրավական կարգավորման նպատակների կենսագործումը: Այն օրինականության կենսագործման արդյունք է: Եթե բոլոր սոցիալական նորմերի գործողության արդյունքում կարգապահության պահանջով հաստատվում է հասարակական կարգը, ապա իրավական նորմերի գործողության արդյունքում ձևավորվում է հասարակության իրավակարգը, որի առաջացմանը մասնակցում են իրավական կարգավորման կառուցակարգի (մեխանիզմի) բոլոր տարրերը:

Իրավական կարգավորման կառուցակարգի բովանդակությունն այն երևույթներն ու գործընթացներն են, որոնք ուղղակիորեն ներգործում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման գործընթացի վրա, որի անմիջական օբյեկտը կամ արդյունքը իրավաբանորեն նշանակալի որոշումները կամ գործողություններն են: Յուրաքանչյուր կառուցակարգ, գործիքային բաղադրամասերի հետ միասին, ներառում է սուբյեկտային կազմ, փոխկապակցվածություն և փոխգործողություններ, որոնք ապահովում են դրա գործունեությունը, ինչպես նաև հարաբերություններ, որոնք ծագում են իրավական կարգադրագրերի պրակտիկ կենսագործման գործընթացում: Այդ հիմնավորմամբ իրավական կարգավորման կառուցակարգի շրջանակներում պայմանականորեն կարելի է առանձնացնել հետևյալ կառուցվածքային բաղադրատարրերը.

ա) իրավական միջոցներ,

բ) սուբյեկտներ, որոնք իրականացնում են գործունեություն՝ ուղղված հասարակական հարաբերությունների կարգավորմանը կամ իրավական նորմերի կենսագործմանը որոշակի հարաբերություններում, որոնք պետք է ընկալել որպես իրավաբանորեն նշանակալի գործունեություն և գործունեության նշանակալի արդյունքներ: Դրանք կարող են վկայել իրական

օրինականության և իրավակարգի անհրաժեշտության փաստը ցանկացած հասարակական կեցության համար:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ՝** ի՞նչ է իրավախախտումը, իրավաբանական պատասխանատվությունը, դրանց տեսակները, սահմանազատման չափանիշները:
- 2. Կարողանալ** դասակարգել իրավախախտումները, բացահայտել իրավախախտման կազմը, սահմանազատել զանցանքները հանցագործություններից:
- 3. Տիրապետել** իրավախախտների դեմ մղվող պայքարի իրավական քաղաքականությանը:

Գրականության ցանկ

1. Անթուրյան Ա. Է., Ինքնակենսագրություն /Ա. Է. Անթուրյան, Ա. Է. Թորոնտո: ՆԻԱ. (ընթացում): «Լուսին», 2013.
2. Լավաթյան Լ. Ի., Օմիդյան Թորոնտոյի լուսնային (ուրախության փոփոխություն), Լ., «Ինքնակենսագրություն», 2015.
3. Լուսնային Ա. Ի., Ինքնակենսագրություն. Լ., «Լուսնային», 2017.
4. Լուսնային Օմիդյան Թորոնտոյի լուսնային. Անթուրյան. Երկր. 3-3-0 մի. (լուսնային. Լ. Ի. Լավաթյան) Լ., 2001.
5. Ինքնակենսագրություն, Լ., «Շրջան», 2017.
6. Ինքնակենսագրություն, Լ., Բնական-Անթուրյան, «Շրջան է լուսնային», 2017.
7. Ինքնակենսագրություն, Լ., «Բնական-անթուրյան լուսնային», 2017.
8. Ինքնակենսագրություն. Լ., Ինքնակենսագրություն, «Երկր – Լ», 2016.
9. Ինքնակենսագրություն, Լ., Երկրային. Լ., «Ինքնակենսագրություն», 2015.
10. Ինքնակենսագրություն, Ա. Ա. Երկրային է լուսնային, Լ., «Օմիդյան», 2014.
11. Օմիդյան Թորոնտոյի լուսնային. Երկր. Երկր. Լ. Է. Լուսնային է Ա. Ա. Լավաթյան, Լ., 2000.
12. Օմիդյան Ա. Ի., Ինքնակենսագրություն, Լ., «Երկր», 2015.
13. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (փոփոխություններով), Ե., 2016:
14. Ներսեսյան Կ. Ս., Իրավունքի և պետության տեսության, (Բուհական դասագիրք), Ե., «Նաիրի», 2001:
15. Խրոստանյան Կ. Ս., Պետության և իրավունքի տեսություն, Ե., «Գրչ», 1997:
16. Մեղրյան Լ. Ն., Աշխատանքային իրավունք, Ե., «Տնտեսագետ», 2016:
17. Գրիգորյան Ս., Գրիգորյան Գ., Իրավագիտություն, Ե., 2014:

ԹԵՄԱ 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Չարց 1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը

Սահմանադրական իրավունքը համապատասխան համակարգի առաջատար ճյուղ է, որին հատուկ են իրավունքի համընդհանուր հատկանիշները: Վերջիններս այն իրավական նորմերն են, որոնք սահմանում են պետության հասարակական, տնտեսական, քաղաքական կարգը, նպատակ են հետապնդում պաշտպանելու մարդու իրավունքներն ու ազատությունները: Սահմանադրական նորմերը մարդկանց վարքագծի համապարտադիր կանոններ են, որոնց պահպանումն ապահովվում է պետական հարկադրանքի կիրառմամբ: Դրանք բնութագրվում են ներքին միասնությամբ և պայմանավորված են հասարակական հարաբերությունների առանձնահատկություններով: Հետևաբար՝ սահմանադրական իրավունքի հասկացության բացահայտումն անհնար է առանց այն հասարակական հարաբերությունների ոլորտների բացահայտման, որոնց կարգավորմանը միտված են սահմանադրական իրավանորմերը:

Հասարակական հարաբերությունների այն խմբերը, որոնք արտացոլում են պետության հասարակական, տնտեսական, պետական և քաղաքական իշխանության արմատական հիմքերը և հանդես են գալիս որպես մեկ միասնական համակարգ, կարգավորվում են սահմանադրական իրավական նորմերով, բնութագրվում են որպես իրավունքի այս ճյուղի կարգավորման առարկա: Նշված հարաբերությունների համակցությունը հնարավորություն է ընձեռում խոսելու հասարակության և նրա պետական-քաղաքական իշխանության՝ որպես պետության և հասարակության կառավարման միասնական համակարգի մասին:

Պետության, հասարակական, տնտեսական, սոցիալական, հոգևոր և քաղաքական կյանքն արտացոլող ոլորտներում ձևավորվող

հասարակական հարաբերությունները բազմաշերտ են, որոնց շրջանակների հստակեցման նպատակով անհրաժեշտ է դրանք առանձնացնել և համակարգել ըստ խմբերի:

Առաջին խմբում հարկ է դասակարգել այն հասարակական հարաբերությունները, որոնք անմիջականորեն վերաբերում են պետությանը և քաղաքական իշխանության կազմակերպմանը: Դրանք սկզբունքորեն ուղղված են հասարակության, նրա սոցիալական շերտերի և պետական իշխանության փոխհարաբերություններին, որոնք արտացոլում են պետության էությունը, պետական իշխանության պատկանելության և իրականացման ձևերն ու մեթոդները:

Երկրորդ խումբ հարաբերությունները ձևավորվում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների, դրանց ազատ իրականացման երաշխիքներով ապահովման ոլորտում: Խոսքը վերաբերում է մարդու և քաղաքացու՝ սահմանադրության մեջ երաշխավորված ազատությունների, իրավունքների և պարտականությունների գործնական իրացմանը, իրավահավասարությանը, ինչպես նաև քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման հիմքերին:

Սահմանադրական իրավունքի կողմից կարգավորվող հարաբերությունների մի զգալի մասը կապված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների կազմավորման, գործունեության, իրավասության և լիազորությունների շրջանակների սահմանման հետ, որոնց ելակետային դրույթներն ամրագրված են ՀՀ գործող սահմանադրությունում:

Սահմանադրական իրավունքը կարգավորում է հասարակական կյանքի բարդ ոլորտները, ինչի արդյունքում իրավունքի համակարգում ձեռք է բերում առաջատար տեղ: Այն հռչակում է այնպիսի դրույթներ, որոնք իրավունքի այլ ճյուղերի համար ելակետային են, մասնավորապես՝ հասարակության և պետության կառուցվածքի հիմնարար սկզբունքները, հասարակական կառավարման ընդհանուր հիմունքները՝ անկախ նրանից, թե հասարակության կյանքի որ կողմին են դրանք վերաբերում: Ուստի դժվար չէ կռահել, որ սահմանադրական իրավունքը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտների իրավական կարգավորման կողմնորոշիչն է:

Սահմանադրական իրավունքի՝ որպես առաջատար ճյուղի դերը պայմանավորված է նաև նրանով, որ ըստ սահմանադրական նորմերի է տեղի ունենում **իրավաստեղծման գործընթացը, հետևաբար՝** իրավական ակտերի, դրանք ընդունող մարմինների տեսակների, այդ ակտերի իրավաբանական ուժի սահմանումը: ՀՀ գործող սահմանադրության մեջ ամրագրված են գործադիր իշխանության մարմինների համակարգը, իրավասությունների և լիազորությունների

րի շրջանակը՝ դրանով իսկ կանխորոշելով վարչական իրավունքի հիմնական սկզբունքները: Նույնկերպ ամրագրված են սեփականության տարբեր ձևերը, սեփականատիրոջ իրավունքները, տնտեսավարման սկզբունքները՝ այդպիսով սահմանելով քաղաքացիական իրավունքի ելակետային դրույթները, ՀՀ բյուջեն և բյուջետային համակարգի հիմունքները՝ կանխորոշելով **Ֆինանսական իրավունքի հիմունքները** և այլն:

Իրավական համակարգերում սահմանադրական իրավունքի կենտրոնական տեղը պետք է ընկալել այն իմաստով, որ վերջինս չի միավորում իրավունքի բոլոր ճյուղերը, այլ միայն սահմանում այս կամ այն ճյուղի կարևորագույն սկզբունքները, նախատեսում ճյուղային իրավական նորմերի ընդունման և փոփոխման կարգը:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարելի է ընդգծել, որ ՀՀ սահմանադրական իրավունքն իրավունքի առաջատար ճյուղ է, նորմերի համակցություն, որն ամրագրում է պետության հասարակական, տնտեսական, սոցիալ-մշակութային և հոգևոր կյանքը, քաղաքացիների և պետության փոխհարաբերությունները, պետական իշխանության կազմակերպման, իշխանության պատկանելության, ինչպես նաև քաղաքական իշխանությանը և պետության կառավարմանը ժողովրդի և քաղաքացիների մասնակցության կարգը:

Սահմանադրական իրավունքը Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում քաղաքացիական հաշտության և համաձայնության համար: Այն լուրջ խնդիր ունի քաղաքական տարբեր ուժերի կողմից հանուն իշխանության մղվող պայքարը քաղաքակիրթ վարքագծի շրջանակներում պարփակելու իմաստով: Այդ իսկ պատճառով դժվար է գերազնահատել սահմանադրական իրավունքի դերը, քանի որ մեր հասարակության կյանքում դեռևս լիարժեք կերպով չեն արմատավորվել քաղաքական մշակույթի և բարոյականության հանրաճանաչ նորմերը, անբավարար են գործում հասարակական կարծիքի ձևավորման և բացահայտման կառուցակարգերը:

Հարց 2. Սահմանադրական իրավունքի կարգավորման առարկան և մեթոդը

Իրավունքի ճյուղի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ամբողջությունը տվյալ ճյուղի կարգավորման առարկան է:

Սահմանադրական իրավունքի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունները բնութագրվում են որոշակի առանձնահատկություններով:

Առաջին՝ սահմանադրական իրավունքը կարգավորում է **հասարակական կեցության ոլորտներում ձևավորվող քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր և այլ հարաբերություններ**: Իրավունքի մյուս ճյուղերը կարգավորվում են հասարակական հարաբերությունների որոշակի ոլորտներ (օրինակ՝ քաղաքացիական իրավունքի ոլորտներն են գույքային և ոչ գույքային հարաբերությունները):

Երկրորդ՝ սահմանադրական իրավունքի նորմերը կարգավորում են ոչ թե բոլոր հասարակական հարաբերությունները, այլ **հիմնականները**, այլ խոսքով, միայն այն հասարակական հարաբերությունները, որոնք կանխորոշում են համապատասխան ոլորտի մնացած բոլոր հարաբերությունների բովանդակությունը: Լրիվ ծավալով դրանց կարգավորումն իրականացնում են իրավունքի այլ ճյուղերը: Այսպես՝ **տնտեսական** ոլորտում սահմանադրական իրավունքի առարկան են միայն այն հարաբերությունները, որոնք բնութագրում են տնտեսության հիմնական սկզբունքները, սեփականության ձևերը: Տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորումը գործնականում տեղի է ունենում քաղաքացիական, ձեռնարկատիրական, ֆինանսական և իրավունքի այլ ճյուղերի միջոցով:

Երրորդ՝ սահմանադրական իրավունքի առարկան կարող է ընդգրկել **հասարակական հարաբերությունների ամբողջ համալիրը**: Ըստ էության, դրանք այն հարաբերություններն են, որոնք կապված են պետության կառուցվածքի, պետական իշխանության, հասարակության քաղաքական համակարգի կազմակերպման հետ և նպաստում են մյուս հասարակական հարաբերությունների ձևավորմանը:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ սահմանադրական իրավունքի **առարկան** ընդգրկում է **այն հարաբերությունները, որոնք հասարակության կյանքի ոլորտներից յուրաքանչյուրում ունեն հիմնարար նշանակություն**:

Սահմանադրական իրավունքն այլ ճյուղերից սահմանազատվում է ըստ **իրավական կարգավորման մեթոդի**, որը դրսևորվում է հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության եղանակների և հնարքների ամբողջությամբ:

Հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման գերակայող ձևը **պարտավորեցման մեթոդն** է:

Սահմանադրական իրավունքում հաճախ կիրառվում են նաև **արգելող նորմեր** (օրինակ՝ բնակարանը կարող է խուզարկվել մի-

այն դատարանի որոշմամբ, օրենքով սահմանված դեպքում և կարգով), ինչպես նաև **թույլտվության մեթոդը**, որը գերակայում է հատկապես մարդու և քաղաքացու կարգավիճակն ամրագրելիս: Ինչ վեաբերում է հասարակական հարաբերությունների կարգավորման սահմանադրաիրավական մեթոդին, ապա այն մեծապես հենվում է պետական **իշխանության հրամայական սկզբունքների վրա**: Դա բացատրվում է այն հասարակական հարաբերությունների բնույթով, որոնք ենթակա են սահմանադրական իրավունքի նորմերի ներգործությանը:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** սահմանադրական իրավունքի հասկացությունը, առաջատար իրավունքի ճյուղի հիմնավորումները:
- 2. Կարողանալ** իրավունքի մյուս ճյուղերից սահմանագատել սահմանադրական իրավունքն ըստ կարգավորման առարկայի և մեթոդի:
- 3. Տիրապետել** սահմանադրական իրավունքի ճյուղի ժամանակակից հայեցակարգային դրույթներին:

ԹԵՄԱ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարց 1. Սահմանադրության հասկացությունը և առանձնահատկությունները

Սահմանադրությունը, որպես իրավաքաղաքական ակտ, ժողովրդավարական պետությունների իրավունքի համակարգում հատուկ տեղ է զբաղեցնում և իրավական մյուս ակտերից տարբերվում է որոշակի առանձնահատկություններով: **Սահմանադրությունն այնպիսի նորմատիվ իրավական ակտ է, որը պետության օրենսդրության բոլոր ճյուղերի, նորմերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ և կոչված է կարգավորելու, քաղաքացու և հասարակության, ինչպես նաև քաղաքացու և պետության միջև ծագող հարաբերությունները:**

Հետևաբար՝ սահմանադրությունը նորմատիվ իրավական ակտ է և իրավական մյուս ակտերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

Այսօր ժողովրդավարական պետությունները գործում են ըստ **իշխանությունների բաժանման սկզբունքի**: Այսինքն՝ միասնական պետական իշխանությունն իրականացվում է երեք ուղղությամբ՝ **օրենսդիր, գործադիր և դատական**:

Օրենսդիր իշխանությունն իրականացվում է խորհրդարանների, գործադիրը՝ կառավարությունների և կառավարման մյուս մարմինների, իսկ դատականը՝ արդարադատության մարմինների միջոցով:

Պետական մարմինների գործունեությունը վերաբերում է իրավական ակտերի, խորհրդարանինը՝ **օրենքների, որոշումների** և այլ ակտերի, կառավարությանը՝ **որոշումների**, իսկ արդարադատության մարմիններինը՝ **դատավճիռների, վճիռների և որոշումների** ընդունմանը:

Ինչպես վերը նշեցինք, սահմանադրությունը, որպես իրավական ակտ, մյուս բոլոր իրավական ակտերից տարբերվում է մի շարք առանձնահատկություններով:

Առաջին առանձնահատկությունն այն է, որ սահմանադրությունը, ի տարբերություն մյուս իրավական ակտերի, **ընդունվում է ժողովրդի կողմից կամ նրա անունից** (հոդված 202, 1-ին մաս), և դրանում փոփոխություններ են կատարվում միայն հանրաքվեով, ինչպես նաև սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված այլ կարգով:

Հաջորդ առանձնահատկությամբ արտացոլվում է սահմանադրության **հիմնարար բնույթը**: Ժողովրդավարական պետություններում ժողովուրդն իշխանության միակ աղբյուրն է: Պետական իշ-

խանութիւնը ժողովրդի կանքի արտահայտման բարձրագույն ձևն է, հետևաբար՝ միայն ժողովրդի իշխանութիւնն է հիմնարար բնութիւնը, որի բովանդակութիւնը ներառում է նաև նրա իրավունքը՝ ընդունելու սահմանադրութիւն և դրանում ամրագրելու հասարակութեան և պետութեան կառուցվածքի՝ իր համար ընդունելի սկզբունքներ ու հիմքեր:

Սահմանադրութեան հաջորդ առանձնահատկութիւնը դրա **կարգավորման յուրահատուկ առարկան** է: Ի տարբերութիւն մյուս իրավական ակտերի, որոնց նպատակը որևէ բնագավառի կամ որոշակի հասարակական հարաբերութիւնների կարգավորումն է, սահմանադրութիւնն ունի կարգավորման **համապարփակ բնույթ**: Այն ընդգրկում է հասարակութեան կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլն:

Ուշագրավ է նաև սահմանադրութեան **իրավաբանական բնութիւնը**, որը դրսևորվում է դրա **բարձրագույն իրավաբանական ուժի մեջ**: Այս դրույթն ամրագրված է Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան 6-րդ հոդվածում, որտեղ ասված է. «Սահմանադրութիւնն ունի բարձրագույն իրավաբանական ուժ»: Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

Այլ խոսքով, սահմանադրութեան բարձրագույն իրավաբանական ուժ անելով պետք է հասկանալ, որ յուրաքանչյուր իրավական ակտ **պետք է համապատասխանի սահմանադրութեանը**, չպետք է հակասի դրա նորմերին և դուրս գա դրա հասցեագրումներից:

Պետական իշխանութեան **բոլոր մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողութիւնները պետք է համապատասխանեն սահմանադրութեանը**: Այս պահանջն ամրագրված է ՀՀ սահմանադրութեան 6-րդ հոդվածում, որտեղ ասվում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողութիւններ, որոնց համար լիազորված են սահմանադրութեամբ կամ օրենքներով:

Սահմանադրութեան բարձրագույն իրավաբանական ուժի արտահայտութիւնն է այն, որ իրավական ակտերն ընդունվում են **սահմանադրութեամբ նախատեսված մարմինների կողմից և սահմանադրութեամբ նախատեսված կարգով**: Այս առանձնահատկութեան ուժով սահմանադրութիւնը հանդես է գալիս որպես միասնական իրավունքի հիմնական աղբյուր, որի հիմքի վրա կառուցվում է պետութեան օրենսդրութեան համակարգը:

Իրավական մյուս ակտերի նկատմամբ սահմանադրութեան գերակայութիւնը թելադրված է նաև **ազգային իրավական համա-**

կարգի ամբողջականության և ներդաշնակ կիրառության անհրաժեշտությամբ: Պատահական չէ, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում ՀՀ իրավական համակարգը ներկայացնում են.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, 2) Հայաստանի Հանրապետության օրենքները, 3) Սահմանադրական դատարանի որոշումները, 4) ԱԺ որոշումները, 5) հանրապետության մախազահի հրամանագրերն ու կարգադրությունները, 6) կառավարության որոշումները, 7) վարչապետի որոշումները, 8) ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումները, կենտրոնական բանկի մախազահի որոշումներն ու կարգադրությունները, 9) ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, 10) կարգավորող հանձնաժողովների որոշումները, 11) մախարարների հրամանները, 12) մարզպետների (Երևանի քաղաքապետի) որոշումները և կարգադրությունները, 13) տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները և այլն¹:

ՀՀ իրավական համակարգի յուրաքանչյուր աստիճանի վրա գտնվող ակտ իր իրավաբանական ուժով ստորադասվում է վերին աստիճանի վրա գտնվող ակտին և չպետք է հակասի սահմանադրությանը:

ՀՀ սահմանադրությունն արտացոլում է նաև միջազգային իրավական նորմերի միջև գոյություն ունեցող կապը: Պետությունների ազգային իրավունքի բաղկացուցիչներ են նրանց կողմից վավերացված միջազգային իրավական ակտերի նորմերը: Որպես առանձնահատկություն՝ նկատենք, որ ՀՀ հիմնական օրենքի և միջազգային իրավական ակտերի միջև փոխհարաբերությունները կառուցվում են ոչ ամբողջովին այն սկզբունքներով, որոնք առկա են հիմնական օրենքի և ազգային օրենսդրության միջև: Այս մասին է վկայում գործող սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասը, որտեղ ասված է, որ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** սահմանադրության՝ որպես հիմնական օրենքի հասկացությունը, դրա տեղը և դերը նորմատիվ իրավական ակտերի համակարգում, ինչպես նաև սահմանադրության տեսակները:
- 2. Կարողանալ** լուսաբանել հիմնական օրենքի իրավական առանձնահատկությունները:
- 3. Տիրապետել** սահմանադրության՝ որպես իրավաքաղաքական ակտի արդիական ուսմունքներին:

¹ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 15, 2002) 8-23-րդ հոդվածներ:

ԹԵՄԱ 3. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Չարց 1. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը

Մարդու՝ որպես քաղաքացու և անհատի դերը հասարակության և պետության մեջ պայմանավորված է նրա հասարակական դիրքով, այսինքն՝ թե ինչ տեղ է զբաղեցնում նա արտադրատնտեսական գործունեության, նյութական բարիքների ստեղծման և բաշխման, կառավարման, ինչպես նաև կյանքի այլ ոլորտներում: Պետությունն իրավունքի միջոցով սահմանում է քաղաքացիների փաստացի վիճակը՝ ըստ նրանց իրավական դրության և կարգավիճակի: Այլ խոսքով, **անձի իրավական վիճակը նրա փաստացի վիճակն է տվյալ հասարակության և պետության մեջ, որը սահմանվում և կարգավորվում է իրավական նորմերով:**

Քաղաքացու իրավական վիճակը հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում սահմանվում է ըստ իրավունքի որոշակի ճյուղերի նորմերի: Այս առումով, առանձնահատուկ դեր ունեն նաև **սահմանադրաիրավական նորմերը**, որոնք սահմանում են քաղաքացու իրավական վիճակի **հիմունքները:**

Քաղաքացու իրավական վիճակը, առաջին հերթին, դրսևորվում է որպես **պետության և անձի փոխհարաբերությունների համակարգ՝** արտացոլելով նրանց միջև առկա կապերի բնույթը: Այդ կապերի շնորհիվ բացահայտվում են քաղաքացու՝ որևէ պետության պատկանելությունը քաղաքացիության ուժով կամ որպես **օտարերկրացի** կամ **քաղաքացիություն չունեցող անձ**՝ տվյալ պետության տարածքում ապրելու իրավունքը, որի վրա տարածվում է այդ պետության իրավատնօրինությունը:

Քաղաքացիությունը, որպես անձի իրավական վիճակի բաղադրիչ, արտացոլում է վերջինիս և պետության միջև կապը, այսինքն՝ պետությունը **միայն իր քաղաքացուն է վերապահում իրավունքներ, ազատություններ և պարտականություններ**, ստանձնում նրա պաշտպանությունը, որտեղ էլ որ նա գտնվի:

Քաղաքացու իրավական վիճակի հիմունքների առանցքը նրան՝ պետության կողմից վերապահված **հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականություններն** են, որոնք անօտարելի են և բնութագրում են պետության և անհատի միջև գոյություն ունեցող կապերի ու հարաբերությունների ամենածավալուն և ամենաձևական մասը: Պատահական չէ, որ ժողովրդավար պետության սահմանադրական իրավունքի համակարգում հատուկ տեղ է

գբաղեցնում **մարդու և քաղաքացու իրավական վիճակը սահմանող ինստիտուտը**: Այն իր ամրագրումն է ստացել ՀՀ գործող սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասում ասվում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Սահմանադրական այս ինստիտուտի նորմերը գործնականում արտացոլվում են ընթացիկ օրենսդրության մեջ, որտեղ ըստ անենայնի մեկնաբանվում են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական նորմերի բովանդակությունը և դրանց իրացման կարգը:

Սահմանադրությունը, միաժամանակ, արձանագրում է անձի կարգավիճակի այնպիսի ելակետային սկզբունքներ, ինչպիսիք են.

- ա) **իրավունքների, ազատությունների և պարտականությունների համընդհանրությունը,**
- բ) **մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և պարտականությունների հավասարությունը,**
- գ) **տղամարդու և կնոջ իրավունքների և ազատությունների հավասարության և դրանց իրացման հավասար հնարավորությունները,**
- դ) **օրենքով հավասար պաշտպանությունը,**
- ե) **իրավունքների և ազատությունների անօտարելիությունը:**

Հարց 2. Սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունն ու բովանդակությունը

Մարդու՝ որպես քաղաքացու սահմանադրական իրավունքները, ազատությունները և պարտականությունները նրա իրավական կարգավիճակի առանցքն են:

Ազատությունը մարդու բնական վիճակն է, որը պետության կողմից ճանաչվելուց և իրավական նորմերում ամրագրվելուց հետո դառնում է նրա անձնական իրավունքների մի մասը: Ազատությունն արտացոլում է անձի **ինքնուրույնության ոլորտները**, պաշտպանում նրան բոլոր տեսակի միջամտություններից: Մարդու միտքը, խիղճը, հավատքը ազատության ոլորտներ են: Օրենքներում ամրագրվելուց հետո ազատությունը ձեռք է բերում որոշակի սահմաններ: Ազատության իրացման դեպքում քաղաքացին պետության կողմից վերաբերմունքի չի սպասում, իրականացնում է սահմանադրու-

թյամբ իրեն վերապահված խղճի ազատությունը, որի պարագայում անձի և պետության միջև որևէ փոխադարձ պարտավորվածություն չկա:

Ինչ վերաբերում է քաղաքացու սահմանադրական իրավունքին, ապա վերջինս նույնպես վարքագծի թույլատրելի չափ է, որն ապահովում է պետությունը: Դա նշանակում է, որ անձին հնարավորություն է տրվում ընտրելու թույլատրելի վարքագծի դրսևորման որևէ տարբերակ և պետությունից պահանջելու աջակցություն:

Անդրադառնալով սահմանադրական պարտականություններին՝ նկատենք, որ վերջիններս անձին վերապահված պարտադիր, անհրաժեշտ վարքագծի չափն են: Իրավաբանական պարտականությունների բնորոշ առանձնահատկությունը դրանց վարչահրամայական բնույթն է, որի ուժով կողմերից մեկը պահանջում է, որ մյուս կողմը կատարի իր վրա դրված պարտականությունը: Սահմանադրական պարտականությունների չկատարման դեպքում կիրառվում է պետական հարկադրանք:

Սահմանադրական իրավունքները և ազատությունները մարդուն վերապահված բոլոր իրավունքներն ու ազատությունները չեն: Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների զգալի մասը կարգավորում են իրավունքի այլ ճյուղեր, որոնք իրենց բովանդակությամբ չեն համարվում հիմնական, ուստի և սահմանադրական ամրագրում չեն ստանում:

Սահմանադրական ամրագրում ստացած իրավունքներն ու ազատությունները, որոնք առավել կենսական նշանակություն ունեն անձի, հասարակության և պետության համար, կոչվում են **հիմնական**:

Քաղաքացիների համար էական նշանակություն ունեն նրանց **արժանապատվության հարգումը** երաշխավորող իրավունքներն ու ազատությունները: Յուրաքանչյուր անձ անհատականություն է՝ իրեն հատուկ ներաշխարհով, մտածելակերպով, հոգեբանությամբ, որոնք անմիջականորեն շոշափում են նրա արժանապատվությունը, ուստի կարիք ունի պաշտպանելու դրանք կողմնակի միջամտությունից: Այս իմաստով, պետության կողմից մարդուն տրված հնարավորությունները սահմանադրության մեջ արձանագրված են որպես **անձնական իրավունքներ և ազատություններ**, որոնք նրա հիմնական իրավունքների և ազատությունների անբաժանելի մասն են:

Վերլուծությունների ընդհանրացման հիման վրա կարելի է ասել, որ **սահմանադրական հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները մարդու և քաղաքացու կարգավիճակի բաղադրիչներ են, որոնք մարդուն տրվում են ի**

ծնե, անօտարելի են և գործնական կիրառման ընթացքում ապահովվում են պետական հարկադրանքի ուժով:

ՀՀ գործող սահմանադրությունն օտարերկրացիների իրավական վիճակի մասին առանձին նորմեր չի սահմանում: Հոդվածների մի մասը, որ վերաբերում է անձի քաղաքացիական իրավունքներին, որևէ տարբերություն չի դնում օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիների միջև: Այդուհանդերձ, սահմանադրական այն իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, որոնք հանրապետության քաղաքացիները ձեռք են բերում քաղաքացիության ուժով, վերապահված են միայն նրանց: Սահմանադրությունը տարբերում է օտարերկրացիների իրավունքներն ու պարտականությունները ՀՀ քաղաքացու իրավունքներից ու պարտականություններից այն առումով, որ քաղաքացին ունի նաև մարդու համար սահմանված բոլոր իրավունքները, իսկ **օտարերկրացիները չունեն քաղաքացու համար նախատեսված իրավունքները:**

Օտարերկրացի է համարվում ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը, որն ունի այլ պետության քաղաքացիություն կամ չունի որևէ պետության քաղաքացիություն: Նա օգտվում է միջազգային իրավունքի նորմերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքներից ու ազատություններից:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակը կարգավորվում է կացության կարգավիճակի սահմանմամբ (ժամանակավոր, մշտական և հատուկ)՝ ըստ որի էլ նրանք տարբերվում են մեկը մյուսից:

Հարց 3. Անձնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների սահմանադրաիրավական կարգավորումը

Մարդու և քաղաքացու իրավական վիճակի սահմանադրաիրավական կարգավորումներն ըստ ՀՀ սահմանադրությամբ ամրագրված անձնական իրավունքների և պարտականությունների կառուցվածքի կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- ա) անձնական իրավունքներ և ազատություններ,
- բ) քաղաքական իրավունքներ և ազատություններ,
- գ) տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ և ազատություններ:

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների ցանկը սպառիչ չէ: Իրավական կարգավորման առանձ-

նահատկություններն ընդգծելու նպատակով յուրաքանչյուր խմբից առանձնացված են քաղաքացիների՝ գործնական կյանքում առավել դրսևորվող իրավունքների, պարտականությունների, ազատությունների իրավական սահմանները:

Անձնական իրավունքների համակարգում **արժանապատվության իրավունքն** առանցքային դեր ունի, որի պաշտպանությունը պետության առաջնահերթ խնդիրներից մեկն է: Առավել ևս, գործող սահմանադրության 14-րդ հոդվածը հռչակում է. «Մարդու արժանապատվությունն անխախտելի է»: Հետևաբար՝ մարդու արժանապատվությունը, որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

Անձնական իրավունքների համակարգում առանձնանում է նաև **կյանքի իրավունքը**. յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, և ոչ ոք չի կարող մարդուն կամայականորեն զրկել կյանքից:

Ազատության և անձեռնմխելիության իրավունքը մարդու կարևորագույն բնական իրավունքներից է, որը նա ձեռք է բերում ծննդյան պահից:

Ազատ գործելու իրավունքի սահմանումը տեղ է գտել սահմանադրությունում, որի համաձայն՝ մարդն ազատ է անել այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Ազատության իրավունքի հետ սերտորեն կապված է **անձեռնմխելիության իրավունքը**, որը տարածվում է մարդու կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության վրա: Ոչ ոք իրավունք չունի ուժի սպառնալիքով հարկադրելու որևէ մեկին կատարել այս կամ այն գործողությունը: Պետությունը պարտավոր է պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունն ամեն տեսակի ոտնձգություններից, ում կողմից էլ, որ դրանք կատարվեն:

Գործնականում մշտական ուշադրության կենտրոնում է քաղաքացիների **բնակարանի անձեռնմխելիության իրավունքը**: Բնակարանը քաղաքացու մշտական կեցության ոլորտն է, որը հնարավորություն է ընձեռում ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ, կողմնակի միջամտությունից զերծ ապահովելու ազատ հանգիստ, կամ այլոց հետ համատեղ կեցություն:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի իրականացմամբ երաշխավորվում է մարդու անձնական անվտանգությունը: Դա, ըստ էության, մարդու մասնավոր կյանքի իրավունքի մի մասն է, հետևաբար՝ անձնական ազատության և արժանապատվության անբաժան տարրը:

Միայն օրենքով սահմանված հատուկ դեպքերում, որպես բացառություն, հանցագործության բացահայտման համար թույլատրվում է բնակվողների կամքին հակառակ մուտք գործել բնակարան: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ:

ՀՀ սահմանադրության մեջ ամրագրված անձնական ազատությունների համակարգում առանձնացվում է **մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը**, որը վերաբերում է կրոնը կամ համոզմունքները փոխելու և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզելու, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությանը:

Խղճի ազատությունը, ըստ էության, սեփական կամքին համաձայն՝ **բանական** վարվելու հնարավորություն և ազատություն է: Խղճի մտոք վարվելը միշտ էլ համարվել է մարդկային բանականության դրսևորման բարձրագույն ձևը:

Խղճի ազատությունը այլոց հայացքների նկատմամբ հանդուրժողականություն դրսևորելն է:

Կրոնի ազատություն ասելով հասկացվում է **աշխարհայացքի** ազատության իրավունքը, որը, սակայն, չի կարելի դասել մարդու բացարձակ իրավունքների շարքին, որովհետև յուրաքանչյուր անհատ յուրովի է պատկերացնում կյանքի իմաստը:

Ինչ վերաբերում է քաղաքացու **մտքի և կարծիքի արտահայտման ազատության իրավունքին**, ապա պետք է ասել, որ մտածելու ընդունակությունը մարդու անբաժան հատկությունն է, նրա գործողությունների հիմքը: Շրջակա միջավայրը, իրերը, առարկաները, իրադարձությունները մարդն ընկալում է մտովի և մտովի գնահատում դրանք ու ձևավորում իր վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Միտքն ազատ է: Բնականաբար, մարդը չի կարող անտարբեր մնալ շրջապատող աշխարհում տեղի ունեցող երևույթների նկատմամբ, չարձագանքել իր շուրջը տեղի ունեցող իրադարձություններին, չկիսվել իր մտորումների ու տազնապների շուրջ մտերիմների հետ: Այդ պահանջմունքն իրականացվում է խոսքի միջոցով: Այստեղ է, որ մարդուն անհրաժեշտ է կարծիքի արտահայտման ազատություն:

Կարծիք արտահայտելու ազատությունը ենթադրում է մտքեր, տեսակետներ, գնահատականներ, տեղեկություններ փնտրելու, ստանալու և այլ անձանց փոխանցելու իրավունք: Այն կարող է իրացվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր կամ արվեստի ստեղծագործության տեսքով:

Կարծիքի արտահայտման ազատության իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետա-

կան և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվական որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Այլ խոսքով, ցանկացած հարցի կապակցությամբ մարդը կարող է ազատորեն արտահայտել սեփական կարծիքն ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր եղանակներով:

Հայաստանի Հանրապետության գործող սահմանադրությամբ սպառիչ կերպով սահմանված է մարդու և քաղաքացու քաղաքական իրավունքների և ազատությունների շրջանակը: Սահմանադրությունը քաղաքացիներին իրավունք է վերապահում միավորվելու:

Քաղաքացիների միավորումը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց խումբ է, որը հետապնդում է տնտեսական, գաղափարական, քաղաքական, մշակութային համընդհանուր նպատակներ, հնարավորություն է տալիս միավորվելու և **կոլեկտիվ ձևով իրականացնելու** որոշակի խնդիրներ ու շահեր:

Միավորումների տեսակ են հասարակական կազմակերպությունները, որոնց գործունեությունը կարգավորվում է ՀՀ սահմանադրությամբ:

Սահմանադրությունում ասվում է, որ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:

Հասարակական կազմակերպության տեսակ են **արհմիությունները**, որոնց գործունեությունը կարգավորվում է «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ սահմանադրությամբ քաղաքացիներին վերապահված քաղաքական իրավունքների և ազատությունների համակարգի տարր է կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը:

Քաղաքական կուսակցությունը հասարակական միավորման տեսակ է, որի նպատակն է նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Քաղաքական կուսակցություններում միավորվելու իրավունք է վերապահվում նաև ՀՀ քաղաքացիներին: ՀՀ քաղաքացին կարող է լինել միայն մեկ կուսակցության անդամ: Պատճառն այն է, որ քաղաքական կուսակցություններն իրավունք ունեն մասնակցելու պետական իշխանության իրականացմանը ներկայացուցչական մարմիններում՝ իրենց պատգամավորների միջոցով: Կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի իրականացման կարգը նախատեսված է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ սահմանադրությունը քաղաքացու՝ քաղաքական կուսակցու-

թյուն ստեղծելու իրավունքի որոշ սահմանափակումներ է նախատեսում հատկապես կուսակցություններին անդամագրվելու հարցում: Կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքները, օրենքով սահմանված կարգով, կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի անդամների համար:

ՀՀ սահմանադրությունը քաղաքացու քաղաքական ազատությունների շարքում ամրագրում է **խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը**: Հավաքներ կարող են անցկացվել բռնություն չպարունակող՝ բացառապես խաղաղ հանդիպումների և գործողությունների նպատակով: Որպես կանոն, հավաքները, հանրահավաքներն ու ցույցերը խախտում են հասարակական խաղաղ կյանքի բնականոն ընթացքը՝ պետական մարմինների ու շաղկությունը հրավիրելով իրենց արժարժած հիմնահարցերի վրա: Հանրահավաքների մասնակիցներն իրավունք չունեն իրենց անօրինական գործողություններով վնաս պատճառելու այլ անձանց կամ պետության ունեցվածքին:

Հավաքների ազատության հիմնական բովանդակությունն այդ միջոցառումներին մասնակցելու կամ չմասնակցելու իրավունքն է: Ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում:

Իրավական պետության և ժողովրդավարական հասարակության ստեղծան նախապայմաններից մեկը քաղաքացուն պետության կառավարմանը մասնակցելու իրավունքի վերապահումն է, որը գործող սահմանադրությամբ արտացոլված է քաղաքացու ընտրական իրավունքի իրականացման և հանրաքվեին մասնակցելու իրավունքով:

Պետության կառավարման մեջ ժողովրդի կամքը պետք է լինի իշխանությունների գործունեության հիմքում և արտահայտվի պարբերական ու իրական ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարաբեք ընթացակարգերով:

ՀՀ սահմանադրությունում ամրագրված է. «Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունք»:

Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ այդ իրավունքը պատկանում է միայն ՀՀ քաղաքացիներին: Պետության կա-

ռավարմանը քաղաքացու մասնակցությունն ապահովվում է մի շարք իրավունքների միջոցով, որոնք նախատեսված են սահմանադրության այլ հոդվածներով:

Ընտրելն և ընտրվելը քաղաքացու ամենակարևոր քաղաքական իրավունքներն են, որոնց իրականացմամբ նա մասնակից է դառնում պետության ներկայացուցչական մարմինների՝ Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը: Քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքի իրականացման կարգն ու պայմանները սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքով:

ՀՀ սահմանադրությամբ, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների համատեքստում, իրավական կարգավորման մեծ տեսակարար կշռով առանձնանում են քաղաքացու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու ազատությունները: Տնտեսական իրավունքների հիմքում սեփականությունն է: Սեփականությունն այն է, ինչը պատկանում է մարդուն անհատապես կամ այլ անձանց հետ համատեղ, որը նրանք կարող են ազատորեն տնօրինել:

Սեփականությունը հանդես է գալիս ամենատարբեր ձևերով՝ շարժական և անշարժ, անձնական և մասնավոր, անհատական և խմբակային, կորպորատիվ, պետական, հասարակական, գույքի ստեղծմամբ կամ ձեռքբերմամբ:

Հանրապետության գործող սահմանադրությունը չի թվարկում թույլատրվող սեփականության ձևերը, սակայն դրանում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Սահմանադրությունը երաշխավորում է, որ ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, այն էլ՝ դատական կարգով: Իսկ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

ՀՀ քաղաքացու՝ սահմանադրությամբ ամրագրված տնտեսական իրավունքների շարքում սեփականության իրավունքի ձեռքբերման օրինական աղբյուրներ են աշխատանքի ազատ ընտրությունը և աշխատանքային հավաքները: Սահմանադրության 57-րդ հոդվածում արձանագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

Աշխատանքի ազատ ընտրություն նշանակում է, որ յուրաքան-

չյուր ոք ազատորեն ընտրում է իր մասնագիտությունը և զբաղմունքի տեսակը: Մարդն իրավունք ունի, իր ընդունակություններին և մասնագիտական որակին համապատասխան, կատարելու այս կամ այն աշխատանքը:

Աշխատանքի ազատությունը **բացառում է հարկադիր աշխատանքը**: Ոչ ոք իրավունք չունի հարկադրանքի, սպառնալիքի, պատժի և այլ ձևերով ստիպելու մարդուն՝ իր կամքին հակառակ պայմաններում կատարելու աշխատանք:

Մարդու և քաղաքացու աշխատանքի ազատ ընտրության իրավունքներն իրացվում են սահմանադրորեն ամրագրված տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության գործընթացներում:

Ձեռնարկատիրական գործունեությունը ուղրտ է, որի կազմակերպման և իրականացման հարցում պետությունը որևէ մասնակցություն չունի: Սակայն, մարդու ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելը չի կարող դուրս մնալ պետության հսկողությունից, ուստի և այդ իրավունքը գործնականում ծագում է իրավաբանական անձ կազմավորելու կամ քաղաքացու՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից:

Սահմանադրության նշված հողվածում ամրագրված է, որ շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումն ու անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:

Ինչ վերաբերում է **ձեռնարկատիրական գործունեության ազատության** գաղափարին, ապա վերջինս բնութագրվում է որպես տնտեսական գործունեություն, որն ուղղված է շահույթի ստացմանը:

Գործող սահմանադրության հիմնական սոցիալական իրավունքների համակարգում ամրագրված են նաև **կրթության, սոցիալական ապահովության, առողջության պահպանության իրավունքները**: Մարդիկ, տարբեր հանգամանքների բերումով (տարիք, առողջական վիճակ և այլն), չեն կարողանում ապահովել իրենց գոյությունը: Միայնակ կանայք, հաշմանդամները, բազմանդամ ընտանիքները պարբերաբար հայտնվում են կարիքի մեջ: Անաշխատունակ անձինք խնամքի կարիք են զգում:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը (հողված 83) յուրաքանչյուր մարդու ընձեռում է ժերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ սոցիալական ապահովության իրավունք:

Հանրապետությունում ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք մանրամասնորեն կարգավորում են հիշատակված յուրաքանչյուր

դեպքում կենսաթոշակների նշանակման կարգը:

Ինչ վերաբերում է քաղաքացու **առողջության պահպանման իրավունքին**, ապա դա նույնպես ամրագրված է սահմանադրության մեջ:

Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայության ցանկը և մատուցման կարգը:

Բնակչության առողջության պահպանման համար պետությունն իրականացնում է **սանիտարահամաճարակային միջոցառումներ**: Պետական առողջապահական հիմնարկները պարբերաբար ստուգում են բնակչության առողջական վիճակը կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում: Որոշ հիվանդությունների կանխարգելման նպատակով կատարվում են երեխաների պարտադիր պատվաստումներ, սննդամթերքի նկատմամբ իրականացվում է ամենօրյա վերահսկողություն:

Սահմանադրությամբ ամրագրված է **կրթության իրավունքը**, որը կարելի է բնութագրել որպես հասարակության տնտեսական, հոգևոր և սոցիալական առաջընթացի հիմնական միջոց: Կրթությունը յուրաքանչյուր մարդու զարգացման, դաստիարակության և բարեկեցության պայման է: Ժամանակակից պետությունները խոշոր միջոցներ են ներդնում կրթության և դաստիարակության ուղղությամբ: Անառարկելի է այն փաստը, որ կրթված, դաստիարակված մարդն է ընդունակ կատարելու գիտական հայտնագործություն, ստեղծելու արվեստի և գրականության մեծարժեք գործեր:

Կրթության իրավունքը մարդու սոցիալական հիմնական իրավունքներից է: ՀՀ սահմանադրությունը, ամրագրելով կրթության իրավունքը, սահմանում է վերջինիս կազմակերպման և իրականացման կարգը: Միաժամանակ, ընդգծվում է, որ պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է: Օրենքը հստակեցնում է, որ յուրաքանչյուր ոք սահմանված դեպքերում և կարգով ունի մրցույթային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

Այլ խոսքով, կրթության իրավունքը որոշակի գիտելիքներ ստանալու ճանապարհով ժամանակակից հասարակության բնականոն կենսագործունեության ապահովումն է:

Յարց 4. Մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները

Քաղաքացու իրավական վիճակը ոչ միայն իրավունքների ու ազատությունների, այլև նրա պարտականությունների համակարգն է: ՀՀ սահմանադրության 2-րդ գլխում թեև անդրադարձ չկա որևէ որոշակի պարտականության սահմանադրաիրավական կարգավորմանը, այնուամենայնիվ 12-րդ, 14-րդ, 36-րդ հոդվածներում և 60-րդ հոդվածի 8-րդ կետում ամրագրված են հիմնական պարտականությունները:

Բնական իրավունքների հայեցակարգի իմաստն այն է, որ, հիմնվելով պետության վրա, մարդիկ **իրենց բնական ազատությունների մի մասից հրաժարվում են՝ հոգուտ պետության և պարտավորվում են ենթարկվել իրենց ստեղծած պետական իշխանությանը:** Այդ ճանապարհով պետության և անհատի միջև ստեղծվում են յուրօրինակ հարաբերություններ, որոնց դեպքում վերջինս պետական իշխանության նկատմամբ ձեռք է բերում բնական իրավունքների և ազատությունների, որոնց համապատասխան պետությունը պարտավորվում է ճանաչել և պաշտպանել դրանք: Միաժամանակ, որպեսզի պետությունը կարողանա պաշտպանել հասարակության անդամների ազատությունը, անվտանգությունը և լուծել սոցիալական խնդիրներ, պետք է օժտված լինի հարկադրանք կիրառելու իրավունքով, որն ապահովվում է համապատասխան օրենքների ընդունմամբ, իսկ հասարակության անդամները պարտավորվում են պահպանել դրանք:

Ժամանակակից աշխարհում մարդը պետության հանդեպ չունի այլ պարտականություն, քան պահպանել սահմանադրությունը և օրենքները: Քանի որ մարդու իրավունքներն ու ազատություններն ունեն բնական ծագում, կախված չեն օրենսդրի կամքից, ապա, որպես կանոն, պարտականությունները սահմանում է պետությունը՝ հիմք ընդունելով տվյալ պահին հասարակության պահանջունքները: Այս նկատառումներով, գործող սահմանադրության 14-րդ հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել ՀՀ պաշտպանությանը:

Քաղաքացու սահմանադրական պարտականությունները, ինչպես վերն ասվեց, սահմանադրական որոշակի թվարկումներ չունեն, այլ առնչվում են նրա գործունեության տարբեր ոլորտներին: Կան պարտականություններ, որոնք վերաբերում են միայն պետության քաղաքացիությանը, շրջակա միջավայրի պահպանությանը: Կան պարտականություններ, որոնք վերագրվում են պետության տարածքում ապրող բոլոր անձանց: Այսպես՝ սահմանադրության

60-րդ հոդվածի 8-րդ կետում նշվում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան՝ սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Որպես առանձնահատկություն՝ նկատենք, որ սահմանադրական պարտավորությունները կարող են կարգավորվել նաև իրավունքի այլ ճյուղերի նորմերով, ինչպես նաև հասարակական կամ քաղաքական կազմակերպությունների կանոնադրություններով:

Որպես հետևություն՝ նշենք, որ սահմանադրական իրավունքով ամրագրվում են ոչ թե մարդու և քաղաքացու պարտականություններն ընդհանրապես, այլ նրանց **հիմնական պարտականությունները**, որոնք ունեն համընդհանուր բնույթ, կապված չեն անձի որոշակի իրավական վիճակի հետ և ամրագրվում են սահմանադրական մակարդակով:

Սահմանադրական հիմնական իրավունքների և ազատությունների վերլուծությունների հիման վրա ընդհանրացնելով քաղաքացիներին վերապահված իրավունքները՝ դժվար չէ որոշակի հետևությունների միջոցով հանգել այն եզրակացությանը, որ թեև քաղաքացու սահմանադրական պարտականությունները համակարգված չեն, այնուամենայնիվ դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

Սահմանադրական պարտականությունները միտված են.

- 1) սահմանադրության և օրենքների պահպանմանը,
- 2) այլոց իրավունքների և արժանապատվության հարգմանը,
- 3) հայրենիքի պաշտպանությանը,
- 4) պատմության, մշակույթի, բնության և շրջակա միջավայրի պահպանությանը,
- 5) երեխաների և անաշխատունակ ծնողների նկատմամբ հոգածությանը, ինչպես նաև պետության տնտեսական հիմքերի ամրապնդմանը:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

1. **Իմանալ** անձի իրավական կարգավիճակի հասկացությունը, սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակությունը:
2. **Կարողանալ** լուսաբանել սահմանադրական իրավունքների, ազատությունների ու պարտականությունների համակարգը, դասակարգման հիմքերը և դրանց իրավական կարգավորման առանձնահատկությունները:
3. **Տիրապետել** սահմանադրական պարտականությունների հասկացությանը և սահմանադրական ամրապնդումների առանձնահատկություններին:

ԹԵՄԱ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Հարց 1. Քաղաքացիության հասկացությունը

Իրավաբանորեն, քաղաքացիությունն անձի պետությանը պատկանելության քաղաքաիրավական կապն է: Քաղաքացիության իրավական հիմքը պետության կողմից անձի ճանաչումն է, որի վրա տարածվում է տվյալ պետության ինքնիշխանությունը՝ անկախ քաղաքացու բնակության վայրից: Այլ խոսքով, քաղաքացու՝ պետությանը պատկանելության կապի իրավական հետևանքների համար էական չէ, թե նա բնակվում է պետության տարածքում, թե գտնվում դրա պետական սահմանից դուրս՝ այլ երկրում:

Քաղաքացիությունը մարդկանց համակցությունն է, որ բնակվում է պետության տարածքում: Այս հատկանիշի ուժով՝ պետության տարածքում բնակվողները հանդես են գալիս որպես բնակչություն, որն արտացոլում է պետության ժողովրդագրական, այլ ոչ թե քաղաքաիրավական պատկերը: Նույն կարգով, իրավաբանորեն, քաղաքացիությունը պետության տարածքում բնակվող քաղաքացիների հանրությունն է, քանի որ պետության իշխանությունը հատկապես տարածվում է նաև օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց վրա, որոնք տվյալ պահին բնակվում կամ գտնվում են պետության տարածքում:

Պետության տարածքում մշտապես կամ ժամանակավոր բնակվող բոլոր քաղաքացիները չեն, որ օժտված են տվյալ պետության կողմից սահմանված հիմնական իրավունքներով և պարտականություններով:

Հետևաբար՝ կարելի է ասել, որ պետության քաղաքացին այն անձն է, որ բնակվում է տվյալ տարածքում, օժտված է որոշակի իրավունքներով և պարտականություններով, որի վրա տարածվում է պետության ինքնիշխանությունը: Քաղաքացիությանը ներկայացվում են հատուկ պահանջներ, որոնք արտացոլում են պետության և քաղաքացու միջև ձևավորված հասարակական կեցության բոլոր կապերը, որոնց հանրագումարն էլ հենց պետության քաղաքացիության բովանդակությունն է:

Պետության և քաղաքացու կապվածության և փոխհարաբերությունների դրսևորման իրավական հիմքում ոչ թե քաղաքացու փաստական վիճակն է, այլ իրավական այն կապը, որով պետությունը պատմականորեն ձևավորված իր տարածքի քաղաքացիների համար օրենսդրությամբ սահմանում է իրավական կապեր, իրականացնում է նրանց շահերի պաշտպանությունն ինչպես երկրի

ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

Ներկայում ԶՅ քաղաքացիության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է սահմանադրության 47-րդ հոդվածում ամրագրված՝ քաղաքացիության հիմնարար սկզբունքներին համապատասխան: Ըստ այդմ՝ սահմանվում են քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերը և կարգը, ԶՅ քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, երեխաների քաղաքացիության ձեռքբերման, երկքաղաքացիության ճանաչման, ինչպես նաև ԶՅ քաղաքացիության դադարեցման կարգերը:

ԶՅ քաղաքացիությունը կարգավորող սահմանադրական սկզբունքները սպառիչ կերպով վերլուծվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում:

ԶՅ քաղաքացիությունը կարգավորող իրավական ակտերի բովանդակության վերլուծությունների հիման վրա քաղաքացիությունը կարելի է սահմանել որպես պետության հետ անձի կայուն քաղաքաիրավական կապ, որի ուժով քաղաքացու վրա տարածվում է պետության ինքնիշխանությունը, օրենքով սահմանված կարգով պետության և քաղաքացիների համար առաջանում են փոխադարձ իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն:

ԶՅ սահմանադրության 47-րդ հոդվածը, ըստ էության, բովանդակում է այն էական առանձնահատկությունները, որոնք բնութագրում են քաղաքացիության առավել կարևոր գծերը:

Հանրապետության քաղաքացիության մասին օրենսդրությունն արտացոլում է.

- 1) պետության և քաղաքացու կապի իրավական բնույթը,
- 2) պետության կողմից անձին ճանաչելը,
- 3) պետության և անձի միջև իրավական կապի կայունությունը,
- 4) փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության առաջացումը:

ԶՅ քաղաքացիության մասին օրենսդրությունն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք վերաբերում են ինչպես ԶՅ քաղաքացիության ձեռքբերման, այնպես էլ դադարեցման կարգին: ԶՅ սահմանադրության նույն՝ 47-րդ հոդվածում նշվում է, որ ազգությանը հայերը ԶՅ-ում բնակություն հաստատելու պահից ունեն ԶՅ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք, որն իրականացվում է պարզեցված կարգով:

Քաղաքացիության մասին գործող օրենքը սահմանում է քաղաքացիության դադարման հատուկ կարգ. քաղաքացին միակողմանի չի կարող դադարեցնել քաղաքացիությունը, հրաժարվել ԶՅ քաղաքացիությունից կամ այլ պետության քաղաքացիություն ընդունել:

ՀՀ քաղաքացու անուսնությունն օտարերացու հետ քաղաքացիության փոփոխման չի հանգեցնում: Նույն օրենքն արգելում է նաև պետությանը միակողմանիորեն, ապօրինաբար (հոդված 23) դադարեցնել անձի՝ ՀՀ քաղաքացիությունը կամ նրան հանձնել այլ պետության (հոդված 5): Նկատենք, որ օրենքի խստագույն պահանջներից մեկն էլ այն է, որ հանրապետության ոչ մի պետական մարմին իրավասու չէ չընդունելու արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն, եթե նա ցանկանում է վերադառնալ հայրենիք:

Չարդ 2. ՀՀ քաղաքացիության սկզբունքները

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիության հետ կապված խնդիրները կարգավորվում են ըստ մի շարք սկզբունքների, որոնց մի մասն ընդունված է համարել **ընդհանուր**, քանի որ կիրառվում են բոլոր պետությունների կողմից, իսկ մյուս մասը՝ **մասնավոր**, քանի որ դրանք կիրառում են առանձին պետություններ:

Միջազգային փորձում **ընդհանուր սկզբունքներն** են «արյան իրավունքը» և «հողի իրավունքը»:

Ըստ **արյան իրավունքի** սկզբունքի՝ տվյալ պետության քաղաքացիներից ծնված երեխան համարվում է այդ պետության քաղաքացի:

Հողի իրավունքի սկզբունքի համաձայն՝ պետությունը քաղաքացիություն է շնորհում բոլոր այն անձանց, որոնք ծնվել են իր տարածքում՝ անկախ ծնողների քաղաքացիությունից:

Նշված սկզբունքների ընտրությունը պայմանավորված է ժողովրդագրական բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությամբ: Սովորաբար, այն պետությունները, որոնք շահագրգռված են իրենց բնակչության թվաքանակի աճով, առաջնորդվում են հողի իրավունքի սկզբունքով (օրինակ՝ Մեքսիկա, Արգենտինա և այլն):

Այն պետությունները, որտեղ երկրի կենսամակարդակը ցածր է, հասարակական-քաղաքական անբարենպաստ իրավիճակ է տիրում, կիրառվում է արյան իրավունքի սկզբունքը:

ՀՀ քաղաքացիության մասին օրենսդրությամբ ամրագրվում են մի շարք սկզբունքներ, որոնք պայմանավորում են քաղաքացիության հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները:

Առաջին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն **իրավահավասար** են: Ըստ սահմանադրության (հոդված 14.1)՝ ան-

կախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, նրանք ունեն հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները: Դա նշանակում է, որ օրենսդրությունը հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանց համար իրավական որևէ հիմքով տարբերություն չի նախատեսում:

ՀՀ քաղաքացիության կարգավորման իրավական առանձնահատկություններն էական բնույթի են, և ըստ բովանդակության դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- ա) քաղաքացիների իրավունակություն,
- բ) քաղաքացիությանը հատուկ կամավորության և բոլորի համար բաց լինելու սկզբունք,
- գ) ՀՀ քաղաքացին չի կարող զրկվել իր քաղաքացիությունից,
- դ) քաղաքացիությունը դադարեցվում է անձին քաղաքացիությունից զրկելով,
- ե) երկքաղաքացիության ճանաչում:

Երկքաղաքացիության ճանաչման դեպքում պետությունը պարտավոր է իր քաղաքացիությունն ընդունած այլ պետության քաղաքացիներին տրամադրել այն բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, որոնք ունեն իր քաղաքացիները: Այսինքն՝ երկքաղաքացին իրավունք ունի բնակվելու քաղաքացիության պետություններում, ըստ պետությունների միջև կնքված պայմանագրերի՝ կատարելու զինծառայություն, մուծելու հարկեր և տուրքեր:

Ֆարց 3. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման իրավական հիմքերը

ՀՀ քաղաքացիությունը կարգավորող իրավական ակտերում հստակեցված են ինչպես քաղաքացիության ձեռքբերման, այնպես էլ դադարեցման իրավական հիմքերը: ՀՀ քաղաքացիություն ձեռք է բերվում. 1) քաղաքացիության ճանաչման, 2) ծննդի, 3) քաղաքացիություն ստանալու, 4) քաղաքացիությունը վերականգնելու, 5) քաղաքացիության խմբային ձեռքբերման, 6) ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, 7) և օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Պատմական իրադարձությունների բերումով, ՀՀ քաղաքացիության մասին գործող օրենսդրությունը ձևավորվեց՝ դեռևս խորհրդային տարիներից ՀՀ տարածքում մշտապես բնակվող այլազգի քա-

ղաքացիներին ՀՀ քաղաքացի ճանաչելով: Օրենքն ամրագրեց, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացի են համարվում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող՝ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները:

Գործնականում, ՀՀ քաղաքացիության մասին օրենսդրության մեջ առանձնանում է **ծնունդով քաղաքացիության ձեռքբերման սկզբունքը**, որը կապված չէ անձի ցանկության հետ և բխում է քաղաքացիության ձեռքբերման արյան իրավունքի սկզբունքից՝ հիմնված ծնողների քաղաքացիության վրա:

ՀՀ սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ ՀՀ քաղաքացիներից ծնված երեխան ՀՀ քաղաքացի է:

Ըստ քաղաքացիության մասին ՀՀ օրենքի՝ եթե երեխայի ծնվելու պահին ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ անհայտ կամ քաղաքացիություն չունեցող անձ, երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Եթե ծնողներն ունեն տարբեր երկրների քաղաքացիություն, եթե նրանցից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, ապա երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Դրա բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե ծնվել է Հայաստանի Հանրապետությունում:

Քաղաքացիության մասին ՀՀ գործող օրենսդրությունը սահմանում է ՀՀ քաղաքացիության դադարեցման հիմքերը: Քաղաքացիության դադարեցումը, ըստ էության, պետության և քաղաքացու միջև իրավական կապի կորուստ է, որն ըստ տվյալ օրենքի 23-րդ հոդվածի՝ հնարավոր է հետևյալ հիմքերով. ա) ՀՀ քաղաքացիությունը փոխելու հետևանքով, բ) ՀՀ քաղաքացիությունից հարկադրաբար զրկվելով, գ) ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա, դ) օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիությունը փոխելը կատարվում է քաղաքացիությունից դուրս գալու և այլ պետության քաղաքացիություն ընդունելու միջոցով:

Քաղաքացիությունից դուրս գալը կատարվում է միայն քաղաքացու ցանկությամբ:

Ինչ վերաբերում է այլ պետության քաղաքացիության ձեռքբերմանը, ապա դա կախված չէ միայն անձի ցանկությունից: Տարբեր երկրներում քաղաքացիության ձեռքբերման և դադարման սկզբունքները տարբեր են: Պետությունը, ելնելով իր շահերից և հաշվի առնելով նաև որոշ այլ հանգամանքներ, կարող է որոշակի սահմանափակումներ մտցնել այդ հարցում:

ՀՀ քաղաքացիության մասին գործող օրենքը սահմանում է այն

հիմքերը, որոնք խոչընդոտում են քաղաքացիության դադարեցումը: Այդպիսի հիմքեր են անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը, դատարանի՝ ուժի մեջ մտած և կատարման ենթակա օրինական դատավճռի և վճռի առկայությունը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խնդիրները և այլն:

Գործող օրենսդրությամբ քաղաքացիության դադարեցումը կատարվում է նաև **քաղաքացիությունից զրկելու** միջոցով, որն անհատական բնույթ ունի և պետության կողմից կիրառվող սանկցիա է հակաօրինական գործողություն կատարած անձի նկատմամբ:

Քաղաքացիության մասին ՀՀ օրենքը սահմանում է երեխաների՝ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման, այն կորցնելու, որդեգրման, խնամակալության, հոգաբարձության և այլ հիմքեր:

Օրենքը կարգավորում է **համապատասխան տարիքի հասած երեխաների կարծիքը հաշվի առնելու հանգամանքը քաղաքացիության ընտրության ժամանակ**: Այստեղ ուղղակիորեն ամրագրված է, որ ծնողների քաղաքացիությունը փոխվելու դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում է օրենքով սահմանված կարգով՝ երեխաների համաձայնության առկայության դեպքում:

Օրենքի կարևոր խնդիրներից է երեխայի քաղաքացիության կարգավորման ժամանակ նրա **ապաքաղաքացիության բացառումը**: Բոլոր այն դեպքերում, երբ ծնողների (որդեգրողների, խնամակալների և հոգաբարձուների) փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում երեխան կարող է հայտնվել ապաքաղաքացիության կարգավիճակում, ապա օրենքի կողմից նա ճանաչվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Երեխայի քաղաքացիության որոշման հարցում ծնողների, որդեգրողների, խնամակալների և հոգաբարձուների միջև ծագած վեճերը, ելնելով երեխայի շահերից, լուծվում են դատական կարգով:

ՀՀ քաղաքացիության իրավական ինստիտուտի հետ է առնչվում **քաղաքական ապաստանի իրավունքի** տրամադրման հարցը: Քաղաքական ապաստանի իրավունքն ունի միջազգային իրավական ճանաչում: Դրա տրամադրման կարգը և դրանից բխող իրավական հետևանքները կարգավորվում են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական ակտերով:

Քաղաքական ապաստանի տրամադրման հիմքը «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն» է, որի 14-րդ հոդվածում նշվում է՝ յուրաքանչյուր ոք հետապնդվելիս իրավունք ունի ապաստան որոնելու այլ երկրներում և օգտվելու տրամադրված ապաստանից: Անդրադառնալով քաղաքական ապաստանի հարցին՝ ՀՀ սահմանադրության 54-րդ հոդվածը ներկայացնում է՝ քաղաքական

հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ՀՀ-ում քաղաքական ապաստան հայցելու իրավունք ունի:

Տրամաբանորեն, ապաստանի իրավունք չի կարող տրամադրվել այն անձանց, որոնք հետապնդվում են ոչ քաղաքական բնույթի հանցագործությունների կամ արարքների կատարման համար:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** ՀՀ քաղաքացիության հասկացությունը:
- 2. Կարողանալ** լուսաբանել ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման հիմքերը:
- 3. Տիրապետել** քաղաքացիության՝ որպես քաղաքացու սահմանադրական կարգավիճակի բովանդակությանը, սահմանադրական երաշխիքներին, ինչպես նաև երկքաղաքացիության սահմանման հիմքերին:

ԹԵՄԱ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հարց 1. Ընտրական համակարգի հասկացությունը

Պետական մարմինների տեղը և դերը քաղաքական համակարգում նշանակալից է:

Պետական մարմինների մի մասը ձևավորվում է ընտրության միջոցով, որը մեկնաբանվում է որպես համապատասխան մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու գործընթաց: Այդ ճանապարհով են կազմավորվում բարձրագույն ներկայացուցչական և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև ընտրվում պետության ղեկավարը՝ որոշակի ժամկետով:

Սահմանադրությամբ և ընտրական օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիներն իրացնում են իրենց քաղաքական իրավունքներից մեկը՝ ընտրելով իրենց ներկայացուցիչներին որևէ ընտրովի մարմնում և օժտելով նրանց ժողովրդաիշխանության իրականացման լիազորություններով:

Պատահական չէ, որ իրավագիտության մեջ սահմանազատվում են ընտրովի և ընտրված մարմինների կողմից ձևավորված պետական մարմիններ, որոնք իրենց կարգավիճակով ստորադաս են ժողովրդի կողմից հանրաքվեով կամ այլ եղանակներով ստեղծված մարմիններին:

Ընտրական օրենսդրությունը սահմանում է **«ընտրական իրավունք»** և **«ընտրական համակարգ»** հասկացությունները:

Ընտրական իրավունքը քաղաքացուն ընտրելու կամ ընտրվելու միջոցով տրված հնարավորությունն է՝ մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը: Ընտրելու իրավունքն ընդունված է համարել ակտիվ գործընթաց, իսկ ընտրվելունը՝ պասիվ: Այլ խոսքով, ակտիվ ընտրական իրավունքն անվանում են ձայնի իրավունք: Պասիվ ընտրական իրավունքը ենթադրում է ընտրություններում թեկնածություն առաջադրելու իրավունք:

Հետևաբար՝ «ընտրական իրավունք» հասկացությունն ընդգրկում է ինչպես ընտրելու, այնպես էլ ընտրվելու իրավունքները:

Ընտրական իրավունքի ինստիտուտն այնպիսի իրավական նորմերի համակարգ է՝ ըստ որի կարգավորում են ընտրովի մարմինների կազմավորման վերաբերյալ հասարակական հարաբերությունները:

Այն անձը, որին սահմանադրությամբ (օրենքով) վերապահված է ընտրելու (ձայնի) իրավունք, կոչվում է **ընտրող**: Տվյալ երկրի կամ

տարածքային միավորի ընտրողների ամբողջությունն անվանվում է **ընտրակազմ** (ընտրախավ, ընտրական կորպուս):

Այսպիսով՝ ընտրական իրավունքը սահմանադրաիրավական նորմերի ամբողջությունն է, սահմանադրական իրավունքի առաջատար ինստիտուտներից մեկը և կարգավորում է այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք առաջանում են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում:

Ընտրական իրավունքի անբաժան մասն **ընտրական համակարգն** է, այսինքն՝ այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են ընտրությունների կապակցությամբ:

ՀՀ-ում ընտրությունների կազմակերպման կարգը սահմանվում է սահմանադրությամբ և ՀՀ ընտրական օրենսգրքով, որոնց ամբողջությունն էլ հենց ընտրական իրավունքն է:

Հետևաբար՝ **ընտրական համակարգը** պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգն է, նորմատիվ իրավական այն ակտերի ամբողջությունը, որոնք բովանդակում են ընտրության կազմակերպման և անցկացման վերաբերյալ նորմեր:

Ընտրական համակարգը թե՛ անցյալում և թե՛ այսօր իրականացվում է մեծամասնական և համամասնական ընտրական համակարգերի միջոցով: Ընտրական համակարգը, ըստ էության, պատգամավորական մանդատները թեկնածուների միջև բաշխելու միջոց է: Մեծամասնական համակարգը կիրառվում է առավելապես միամանդատ ընտրատարածքներում: Էությունն այն է, որ տվյալ ընտրատարածքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է սահմանված ձայների մեծամասնությունը:

Ինչ վերաբերում է համամասնական ընտրական համակարգին, ապա այն կիրառվում է միայն պատգամավորների ընտրության ժամանակ, և անհրաժեշտ է, որ մասնակիցները ներկայացվեն ըստ **կուսակցական ցուցակների**: Այս համակարգի դեպքում պատգամավորական մանդատներ ստանալու համար յուրաքանչյուր կուսակցություն, որպես կանոն, պետք է հավաքի ընտրական օրենսդրությամբ սահմանված որոշակի թվով ձայներ՝ **քվոտաներ**, որոնցից կախված է համապատասխան կուսակցության պատգամավորական տեղերի թիվը:

Համամասնական ընտրական համակարգը նախընտրելի է՝ առավել ժողովրդավարական, քանի որ համեմատաբար ճիշտ է արտացոլում հասարակական կարծիքը:

Յարդ 2. Ընտրական իրավունքի սկզբունքները

ՀՀ սահմանադրությամբ (հոդված 7) և ընտրական օրենսդրությամբ ամրագրված ընտրական իրավունքը և ընտրական համակարգը ՀՀ քաղաքացիներին անմիջականորեն իրավունք են վերապահում կամավոր հիմունքներով մասնակցելու ընտրություններին՝ ընդհանուր, հավասար, ուղղակի սկզբունքներով՝ գաղտնի քվեարկությամբ:

Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը երաշխավորում է, որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, քաղաքական հայացքներից, գույքային և այլ դրույթունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

ՀՀ Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցում են 18 տարին լրացած քաղաքացիները:

Ըստ գործող ընտրական օրենսդրության՝ նախատեսվում են որոշակի պայմաններ ընտրվելու իրավունքի բնագավառում: Այսպես՝ ՀՀ սահմանադրության 124-րդ հոդվածի 2 կետի համաձայն՝ ՀՀ նախագահ կարող են ընտրվել 40, Ազգային ժողովի պատգամավոր՝ 25 տարին լրացած անձինք, 48-րդ հոդվածի համաձայն՝ տեղական կառավարման մարմիններում ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն 18 տարին լրացածները:

Ընտրական օրենսդրությունը սահմանում է **որոշ ցենզեր**, որոնք հիմնականում առնչվում են քաղաքացիության, համապատասխան տարածքում բնակվելու ժամկետին, ինչպես նաև ընտրական գրավին: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրվելու համար պահանջվում է ոչ պակաս, քան վերջին 6 տարվա ՀՀ քաղաքացիության, հանրապետությունում վերջին 6 տարվա մշտական բնակության ժամկետ, ինչպես նաև հայերենի իմացություն (հոդված 124): ՀՀ սահմանադրության 48-րդ հոդվածում որոշակի ցենզ է սահմանված ԱԺ պատգամավորի համար. կարող է ընտրվել վերջին չորս տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում ՀՀ-ում մշտական բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Սահմանադրությամբ ամրագրված են նաև այն դեպքերը, երբ քաղաքացին չի կարող մասնակցել ընտրություններին: Մասնավորապես՝ ըստ սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասի, ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ

կատարած ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Գործող ընտրական օրենսդրությամբ որոշակի մարմիններում աշխատելու հանգամանքն առանձին դեպքերում արգելք է հանդիսանում ներկայացուցչական մարմիններում թեկնածու գրանցվելու և տեղական ինքնակառավարման մարմիններում որպես թեկնածու առաջադրվելու համար: Օրինակ՝ Ազգային ժողովի **պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել Սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, ՀՀ ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության, հարկային, մաքսային մարմինների, դատախազության աշխատակիցները, զինծառայողները:** Նշված անձինք կարող են պատգամավորության թեկնածու գրանցվել միայն իրենց լիազորությունները ժամանակավորապես դադարեցնելու դեպքում:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել միայն Սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, ոստիկանության, ազգային անվտանգության պաշտպանության մարմինների և դատախազության աշխատակիցները:

Հավասար ընտրական իրավունքի սկզբունքի էությունն այն է, որ ընտրության ժամանակ ընտրողն ունի մեկ ձայն, և բոլոր ընտրողներն այդ ընտրությանը մասնակցում են հավասար հիմունքներով:

Ընտրության ժամանակ մեկ ձայնի իրավունք ապահովվում է նրանով, որ ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիներն ընդգրկվում են ընտրողների միայն մեկ ցուցակում, և ոչ մի ընտրող մյուսի նկատմամբ որևէ առավելություն չունի, և այդ նպատակով ստեղծվում են նաև հնարավորինս հավասար՝ ընտրողների քանակով ընտրական տեղամասեր:

Ուղղակի ընտրական իրավունքի ուղղակիության սկզբունքի էությունն այն է, որ հանրապետության ընտրովի մարմիններն ընտրվում են **անմիջականորեն ընտրողների կողմից՝** քվեարկության միջոցով: Այս առումով, նշված ընտրովի մարմիններն անմիջականորեն ժողովրդի ներկայացուցչական մարմիններն են:

ՀՀ ընտրական օրենսդրությունը բացառում է լիազորված, այսինքն՝ ոչ անմիջական, անուղղակի ընտրական իրավունքը: **Անուղղակի ընտրական իրավունքը,** ի տարբերություն ուղղակիի, կարող է իրականացվել անուղղակի և բազմաստիճան կարգով: Այս դեպքում ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներն ընտրում են **ընտրիչներ**, իսկ վերջիններս էլ՝ պատգամավորներ կամ այլ անձանց: **Բազմաստիճան ընտրական իրավունքի** ժամանակ ստորադաս ներկայացուցչական մարմինները ներկայացուցիչներ են

ընտրում վերադաս ներկայացուցչական մարմինների համար:

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է գաղտնի քվեարկության սկզբունքը, ինչը ենթադրում է, որ պետք է բացառվի քվեարկողների կանքի ազատ արտահայտման նկատմամբ որևէ բռնություն, **վերահսկողություն**: Պետական մարմիններն ապահովում են ընտրողների քվեարկության գաղտնիության սկզբունքը, որի խախտումն առաջ է բերում սահմանված պատասխանատվություն:

Ընտրություններն իրականացվում են հրապարակայնության սկզբունքի հիման վրա: Օրենքով սահմանված կարգով ընտրական հանձնաժողովները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը վերաբերող որոշումները հրապարակում են պաշտոնական մամուլում: Ընտրողները տեղեկացվում են ընտրական հանձնաժողովների կազմի, աշխատաժամերի, ընտրական տեղամասերի, ընտրողների ցուցակների, թեկնածուների առաջադրման ու գրանցման, քվեարկության օրվա, ընտրության ընթացքի և դրա արդյունքների ամփոփման մասին:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** ՀՀ ընտրական համակարգը, ընտրական իրավունքի և ընտրական համակարգի սկզբունքային տարբերությունները:
- 2. Կարողանալ** վերլուծել ընտրական իրավունքի սկզբունքների համակարգն ըստ դրանց առանձնահատկությունների:
- 3. Տիրապետել** ՀՀ ընտրական իրավունքի և համակարգի առանձնահատկություններին՝ համեմատելով այլ պետությունների հետ:

ԹԵՄԱ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Հարց 1. Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները

Ժողովրդավար պետությունների սահմանադրությունները օրինաստեղծ գործառնությունը վերապահում են ընտրովի բարձրակարգ ներկայացուցչական մարմիններին: Տարբեր երկրներում այդ մարմիններն ունեն տարբեր անվանումներ (Դաշնային ժողով, Կոնգրես, Գերագույն խորհուրդ, Ազգային ժողով) և այլն:

Ներկայացուցչական մարմինների միակ գործառնությունը օրինաստեղծ գործունեությունը չէ: Հետևաբար՝ միջազգային փորձում հավաքական իմաստով օգտագործվում է «պառլամենտ» (խորհրդարան) հասկացությունը:

Այսօր իշխանությունների տարանջատման պայմաններում պառլամենտը, որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, առաջինն է, որի իրավասության մեջ, օրենքներ ընդունելուց բացի, մտնում են պետության ներքին և արտաքին քաղաքականության հիմքերի որոշումը, ելակետային ծրագրերի մշակումը և ընդունումը, բյուջեի հաստատումը և այլն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, ամրագրելով Ազգային ժողովի կազմակերպման կարգը, գործունեության սկզբունքները և իրավասությունը, ընդգծում է վերջինիս **խորհրդարանական և ներկայացուցչական** բնույթը:

Ընտրովի օրինաստեղծ մարմնի առկայությունը վկայում է մեր պետության պառլամենտի և **պառլամենտարիզմի** մասին: Աշխարհում պառլամենտարիզմի ելությունը, որպես կանոն, տարանջատումն է, ներկայացուցչությունը, օրինականությունը և օրինաստեղծ գործունեությունը:

Ներկայում պետությունների պառլամենտարիզմի բովանդակության դրսևորման հարցում առանձնակի կարևորվում է **ներկայացուցչությունը**: Ժողովրդի ազատ կամքի արտահայտմամբ ձևավորված խորհրդարանը կարող է ձեռք բերել իրական ժողովրդավարական և օրինական ներկայացուցչական մարմնի բնույթ: Այն կարող է հանդես գալ որպես ինքնիշխանության կրող և համարվել պառլամենտական ժողովրդավարության վրա հիմնված պետության ձև:

Հայաստանի Հանրապետության գործող սահմանադրությունը հագեցած է մի շարք նորմերով, որոնք ընդգծում են Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթը: Պետական մարմինների **ներկա-**

յացուցչական բնույթը պայմանավորված է ժողովրդի կողմից ընտրությունների միջոցով համապատասխան մանդատ ստանալով և ընտրողների կամքն ու շահերը ներկայացնելով:

Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին ընտրում է բնակչությունը, ինչը պառլամենտարիզմի կարևորագույն տարրերից մեկն է: Ընտրությամբ ձևավորված ներկայացուցչական մարմնի պատգամավորները պետական և հասարակական կյանքի առաջնային խնդիրները լուծելիս իրականացնում են իրենց ընտրողների կամքն ու շահերը:

ՀՀ սահմանադրությունը, ամրագրելով պառլամենտական համակարգի առանձնահատկությունները, վկայում է, որ օրենսդիր մարմինը, ըստ էության, մասնակցում է կառավարության ձևավորմանը: Ավելին, ընդգծենք, որ սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է պառլամենտական կառավարման այն էական հատկանիշներից մեկը՝ ըստ որի ԱԺ-ն վերահսկողություն է իրականացնում գործադիր մարմնի նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և կատարում սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Նույն սահմանադրական նորմում ամրագրված է, որ Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանություն:

Ուստի կարելի է ասել, որ ՀՀ-ում օրինաստեղծ գործունեությամբ կարող է զբաղվել միայն Ազգային ժողովը, քանի որ նշված նորմում օրենսդրական գործառնություն իրականացնող այլ սուբյեկտներ թվարկված չեն:

Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեությանն անուղղակիորեն առնչվում են ՀՀ նախագահը, կառավարությունը և Սահմանադրական դատարանը:

ՀՀ սահմանադրությունը հանրապետության նախագահին իրավունք է վերապահում ընդունելու հրամանագրեր և կարգադրություններ, ինչպես նաև, ըստ սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասի, սահմանված կարգով համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնելու առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմնին:

Սահմանադրության 129-րդ հոդվածի պահանջով օրենքները ստորագրում և հրապարակում է հանրապետության նախագահը՝ քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան սահմանադրության հետ օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Երբ հանրապետության նախագահը չի կատարում սահմանված պահանջները, ապա ԱԺ նախագահը հնգօրյա ժամկետում իրավունք ունի ստորագրելու և հրապարակելու օրենքը:

Կառավարությունը օրենսդրական նախաձեռնության իրավունք-

քի իրականացմամբ առնչվում է Աժ օրենսդրական գործունեությանը: Կառավարությունն ինքն է սահմանում իր կողմից ներկայացված օրենքների նախագծերի քննարկման կարգը և հաջորդականությունը, կարող է պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով: Կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը (հոդված 157):

Ինչպես վերը նշվեց, ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության վրա էական ազդեցություն ունի **Սահմանադրական դատարանը**, որի խնդիրներից է նաև օրենքների սահմանադրականության որոշումը: Ազգային ժողովի ընդունած օրենքները, որոնք ստորագրել և հրապարակել է նախագահը, կարող են սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել ոչ սահմանադրական, այսինքն՝ իրենց ուժը կորցրած (հոդված 170, մաս 3):

Օրենսդիր իշխանության իրականացման իրավասությունը վերապահված է Ազգային ժողովին, որի ուժով հասարակական կյանքի ռազմավարական նշանակության բոլոր ոլորտները կարգավորվում են բացառապես օրենքներով:

Չարց 2. Ազգային ժողովի կազմակերպման կարգը, կառուցվածքը, գործունեության սկզբունքները

Սահմանադրական գործող սկզբունքների հիման վրա ՀՀ Ազգային ժողովի ձևավորման կարգը մանրամասն իրավական կարգավորման է ենթարկվում սահմանադրության 4-րդ գլխում ամրագրված իրավական նորմերով, ինչպես նաև ընտրական օրենսգրքով:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կազմված է առնվազն 131 պատգամավորից: Աժ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

Գործող սահմանադրության 88-րդ հոդվածում սպառիչ կերպով ամրագրված է ՀՀ Աժ կարգավիճակը, սահմանելով, որ վերջինս ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, որն ունի օրենսդիր իշխանություն, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջե, կատարում սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Ազգային ժողովը, առաջին հերթին, պետական իշխանության օրենսդիր մարմին է, որը կոչված է իրականացնելու հանրապետու-

թյան օրենսդիր իշխանությունը: Այն ընդունում է օրենքներ և այլ օրենսդրական ակտեր, որոնցով կարգավորվում են երկրի հասարակական և պետական կյանքի առավել կարևոր ոլորտները: Գործող ընտրական օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում Ազգային ժողովն ամբողջությամբ ձևավորելու կուսակցական հիմքով: Կուսակցությունները և կուսակցությունների դաշինքներն իրավունք ունեն համամասնական ընտրակարգով առաջադրելու Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուներ: Այսպիսի իրավունքով օժտված են բոլոր կուսակցությունները՝ անկախ խորհրդարանում պատգամավորական տեղեր ունենալու հանգամանքից:

Առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո, որի ընթացքում Ազգային ժողովը ձեռնամուխ է լինում **իր մարմինների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ձևավորմանը:**

Ազգային ժողովի մարմիններ են **ԱԺ նախագահը, նրա տեղակալները, պատգամավորները և հանձնաժողովները:** Կազմավորվում են նաև խմբակցություններ և կարող են ստեղծվել պատգամավորական խմբեր:

ՀՀ Ազգային ժողովն ունի միապալատ կառուցվածք, որի աշխատանքները կազմակերպում է առաջին նստաշրջանում ընտրված **նախագահը:**

Պառլամենտների կամ դրանց պալատների նախագահների լիազորությունների ժամկետները տարբեր են: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և դրա նախագահի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

ԱԺ նախագահի թեկնածություն են առաջադրում այն կուսակցությունները, որոնք պառլամենտում ունեն համեմատաբար մեծ թվով պատգամավորներ:

Սահմանադրության 104-րդ հոդվածում ամրագրված է ԱԺ նախագահի և նրա երեք տեղակալի ընտրության կարգը: Ըստ այդմ՝ նախագահի տեղակալներից մեկն ընտրվում է որևէ ընդդիմադիր խմբակցությունից: ԱԺ նախագահը և նրա տեղակալներն ընտրվում և հետ են կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: ԱԺ-ն ձևավորում է ԱԺ խորհուրդ, որը կազմված է ԱԺ նախագահից, նրա տեղակալներից, խմբակցությունների մեկական ներկայացուցչից և մշտական հանձնաժողովների նախագահներից: ԱԺ խորհուրդը հաստատում է հեթանոսական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը, ինչպես նաև կատարում ԱԺ կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

ՀՀ սահմանադրությունը ԱԺ կազմակերպական կառուցվածքում սահմանում է կուսակցությունների կամ կուսակցությունների դա-

շինքների պատգամավորների թվից խմբակցություններ ձևավորելու իրավունքը: Կուսակցական խմբակցությունների ձևավորման, կարգավիճակի և գործունեության կարգը սահմանված է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում: Սահմանադրության 105-րդ հոդվածն արձանագրում է, որ խմբակցությունները նպաստում են Աժ քաղաքացիական կամքի ձևավորմանը:

Պատգամավորն օրենսդիր իշխանության կոլեգիալ (խորհրդակցական) մարմնի անդամ է, որը ժողովրդի կողմից լիազորված է խորհրդարանում իրականացնելու օրենսդիր իշխանություն:

ՀՀ սահմանադրության 94-րդ հոդվածը սահմանում է, որ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով: Գործող սահմանադրության համաձայն՝ նա չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտականից, մանկավարժականից և ստեղծագործականից (հոդված 95):

Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակը բնութագրվում է ըստ նրա լիազորությունների ծագման և դադարման իրավական հիմքերի:

Սահմանադրության 68-րդ հոդվածում (4-րդ մաս) ասվում է. «Նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրը»:

Անդրադառնալով Աժ պատգամավորական լիազորությունների սկսման պահին՝ նկատենք, որ իրավական ակտերում այդ մասին (ժամկետի) ընդգծում չկա:

Ազգային ժողովի պատգամավորների ընտրության ժամկետը կարող է տարբեր լինել: Հետևաբար՝ Ազգային ժողովի պատգամավորների լիազորությունները պետք է սկսվեն նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների հետ մեկտեղ: Որպես իրավական հիմք՝ կարելի է վկայակոչել ՀՀ սահմանադրության 102-րդ հոդվածը, որի համաձայն՝ Ազգային ժողովի նիստն իրավագոր է, եթե նիստի սկզբում գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

Աժ պատգամավորի լիազորությունների դադարեցման հիմքերը պարզորոշ ամրագրված են սահմանադրության 98-րդ հոդվածում: Մասնավորապես՝ Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, ՀՀ քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրան ազատագրկման դա-

տապարտելու վերաբերյալ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:

Պատգամավորի լիազորությունների դադարման արարողակարգը մանրամասն սահմանված է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:

Պատգամավորի կարգավիճակի և գործունեության իրավական պատկերը օրենսդրությամբ նրան վերապահված իրավունքների և պարտականությունների համակարգն է:

Պատգամավորի կարգավիճակի առանցքը սահմանադրության 109-րդ հոդվածով նրան վերապահված օրենսդրական նախաձեռնության իրավունքն է: Պատգամավորը ցանկացած ժամանակ կարող է հետ կանչել իր ներկայացրած օրենքի նախագիծը: Որպես կանոն, օրենքի նախագիծ ներկայացնելիս նա պարտավորված է հիմնավորել դրա ընդունման անհրաժեշտությունը, մասնակցել հանձնաժողովներում այդ առնչությամբ կազմակերպվող քննարկումներին:

Պատգամավորի կարգավիճակը բնութագրվում է նաև կառավարությանը հարցադրումներ կատարելու իրավունքով: Աժ կանոնակարգ օրենքը սահմանում է, որ հերթական նստաշրջանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա վերջին նիստում վարչապետը և կառավարության անդամները ներկայանում են Ազգային ժողով և պատասխանում պատգամավորների հարցերին, որոնք կարող են տրվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր:

Ըստ կանոնակարգի՝ **գրավոր հարցը** պատգամավորը հանձնում է Ազգային ժողովի աշխատակազմ, որը պարտավոր է նույն օրը դա ուղարկել կառավարություն: Վարչապետը կամ նրա հանձնարարությամբ՝ համապատասխան նախարարը հարցը ստանալուց հետո **երկշաբթյա ժամկետում** պարտավոր է Ազգային ժողովի նիստում պատասխանել պատգամավորի հարցին:

Սահմանադրությունը (հոդված 100) Աժ պատգամավորին իրավունք է վերապահում պահանջելու իրավիդել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ, որը գումարում է Աժ նախագահը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով:

Պատգամավորն Ազգային ժողովում և համապատասխան հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ ունի վճռական ձայնի իրավունք:

Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը սահմանում է նաև պատգամավորի պարտականությունները: Ըստ այդմ՝ նա պարտավոր է

մասնակցել Ազգային ժողովի նիստերին, հանձնաժողովի աշխատանքներին, որի անդամն է ինքը, իսկ պարտականությունը չկատարելու դեպքում, կանոնակարգով նախատեսված կարգով, կարող է զրկվել պատգամավորական մանդատից:

Պատգամավորը պարտավոր է պահպանել համապատասխան էթիկայի կանոնները, մշտական կապի մեջ լինել իր ընտրատարածքի բնակչության հետ:

Աժ պատգամավորի կարգավիճակի անբաժանելի մասը նրա **անձեռնմխելիությունն** է, որը տարածվում է բնակարանի, անձնական և ծառայողական տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների վրա:

Անձեռնմխելիությունը սահմանադրությամբ ամրագրված պաշտպանական միջոցներ են, որոնք նպատակ ունեն պատգամավորի շահերն ու իրավունքները պաշտպանել պետական և մասնավոր անձանց ապօրինի ոտնձգություններից:

Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասում ասվում է, որ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Աժ համաձայնությամբ, առանց դրա նա չի կարող զրկվել ազատությունից՝ բացառությամբ այն դեպքի, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

Ազգային ժողովի մարմինների համակարգում իրենց կարգավիճակով առանձնանում են հանձնաժողովները, որոնք օժանդակ մարմիններ են՝ կազմված պատգամավորներից և աջակցում են խորհրդարանի լիազորությունների կատարմանը:

Հանձնաժողովների տեսակները մի շարք պետություններում այսօր համապատասխանում են նրանց նախարարությունների համակարգին: Նախարարությունների գործունեությունը վերահսկում են համապատասխան հանձնաժողովները:

ՀՀ սահմանադրության 106-րդ հոդվածը սահմանում է, որ Աժ օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Աժ եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծվել են մշտական հանձնաժողովներ: Այնուհետև ասվում է, որ ՀՀ Աժ-ում պետք է ստեղծվեն 12 մշտական հանձնաժողովներ: Աժ կանոնակարգ օրենքում ամրագրված են մշտական հանձնաժողովների անունները, որոնց թվին են դասվում ֆինանսավարկայինը և բյուջետայինը, տնտեսականը, սոցիալականը, առողջապահությանը և այլն:

Նշված հիմնախնդիրները ՀՀ Աժ տնօրինման առարկան են, որոնք իրացվում են սահմանադրությամբ վերջինիս վերապահված իրավասության շրջանակում: Թեպետ գործող սահմանադրությամբ

որոշակիացված չեն ԱԺ իրավասության հիմնահարցերը, այնուամենայնիվ դրանց մեծ մասը բաժին է ընկնում օրենսդրության, ֆինանսների, պետական բյուջեի, երկրի պաշտպանության, արտաքին հարաբերությունների և այլ ոլորտներին:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

1. **Իմանալ** ՀՀ Ազգային ժողովի տեղը և դերը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում:
2. **Կարողանալ** բնութագրել ԱԺ կարգավիճակը և գործառույթները՝ ըստ գործող սահմանադրության: Լուսաբանել ԱԺ կազմակերպման կարգը, կառուցվածքը և գործունեության սկզբունքները:
3. **Տիրապետել** խորհրդարանական կառավարման մարմինների համակարգում ԱԺ լիազորություններին:

ԹԵՄԱ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐԸ

Հարց 1. Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգավիճակը

Ժամանակակից պառլամենտական (խորհրդարանական) կառավարման պայմաններում պետության նախագահի կարգավիճակը և երկրի կյանքում նրա ունեցած փաստացի դերը պայմանավորված են տվյալ երկրի քաղաքական իրավիճակով և պատմական ավանդույթներով:

Պետության ղեկավարի սահմանադրաիրավական կարգավիճակը իշխանության մարմինների համակարգում պայմանավորված է օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների հետ ունեցած նրա փոխհարաբերությունների բնույթով: Ժողովրդավարական պետությունում, որպես կանոն, նախագահի իրավասությունն առնչվում է իշխանության երեք ոլորտի: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում, որտեղ պետության ղեկավարն ընդգրկված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններում, այնուամենայնիվ, հենվում է գործադիր իշխանության վրա:

Հայաստանի Հանրապետության նախագահի կարգավիճակը սահմանված է սահմանադրության 5-րդ գլխում, որի 123-րդ հոդվածում ասվում է, որ վերջինս պետության գլուխն է, հետևում է սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

ՀՀ սահմանադրությունը, ամրագրելով նախագահի՝ որպես պետության գլխի կարգավիճակը, որոշակիացում է դրա հետ կապված հիմնական գործառնությունները: ՀՀ նախագահը իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով, հետևում է սահմանադրության պահպանմանը, պարտավորված է և անձնական պատասխանատվություն է կրում վերջինիս դրույթների անխափան իրագործման համար:

Խորհրդարանական կառավարման ձևին բնորոշ են պետության գլխի և կառավարության փոխհարաբերություններն արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում: Արտաքին քաղաքականությունը ձևավորվում է սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, հետևաբար՝ նախագահի գործունեությունն այդ բնագավառում չի կարող հակասել դրան:

ՀՀ սահմանադրությամբ նախատեսվում է նաև, որ հանրապետության նախագահը, որպես պետության գլուխ, իրավունք ունի ուղերձով դիմելու Ազգային ժողովին: Այդ ուղերձը, որպես կանոն,

հասցեագրված է լինում ժողովրդին և վերաբերում է երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններին: Նախագահի ուղեբժները պետական մարմիններին, պատգամավորներին, կուսակցություններին և մյուս հասարակական կազմավորումներին կողմնորոշիչ նշանակություն ունեն վերջիններիս գործունեության ձևերի ու մեթոդների ընտրության հարցում:

ՀՀ նախագահի կարգավիճակը դրսևորվում է ոչ միայն երկրի ներսում, այլև միջազգային հարաբերություններում, որտեղ նա իրացնում է իրեն վերապահված իրավունքները, որոնք ունեն սահմանադրական անրագրումներ:

Հանրապետության նախագահի կարգավիճակը և պետական մարմինների համակարգում գրաված տեղը պայմանավորված են վերջիններիս պաշտոնների զբաղեցման կարգով, իրավասությունների և լիազորությունների շրջանակով:

ՀՀ սահմանադրության 125-րդ հոդվածում ասվում է՝ հանրապետության նախագահին ընտրում է Ազգային ժողովը՝ յոթ տարի ժամկետով:

Սահմանադրությամբ արձանագրվել են նաև այն պահանջները, որոնց պետք է համապատասխանի նախագահի թեկնածուն:

Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը: Ինչ վերաբերում է արտահերթ ընտրությամբ ընտրված նախագահին, ապա նա պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո՝ տասներորդ օրը: Սահմանադրության 142-րդ հոդվածի համաձայն՝ նախագահն իր հրաժարականը ներկայացնում է ԱԺ-ին, որն ընդունված է համարվում հրապարակելու պահից:

Ինչ վերաբերում է հանրապետության նախագահի լիազորությունների դադարեցման հիմքերին, ապա սահմանադրության 141-143-րդ հոդվածներում հանգամանորեն թվարկված են պաշտոնակության, լիազորությունների կատարման անհնարինության հիմքերը: Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, ծանր հանցագործության կամ սահմանադրության կոպիտ խախտման համար: Պաշտոնանկությունը տեղի է ունենում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա, պատգամավորների ընդհանուր ձայների թվի առնվազն երկու երրորդով:

Գոյություն ունեն նախագահի լիազորությունների դադարեցման այլ հիմքեր ևս (ծանր հիվանդություն, լիազորությունների կատարման անհաղթահարելի խոչընդոտների առկայություն և այլն), որոնց դեպքում, ըստ սահմանադրության, պետության գլխի լիազորությունների կատարման իրավունքը վերապահվում է Ազգային ժողովի նախագահին:

Հայաստանի Հանրապետության նախագահի կարգավիճակը

պայմանավորված է սահմանադրությամբ նրան վերապահված իրավասության ծավալով:

ՀՀ նախագահը, որպես պետության գլուխ, ունի լայն լիազորություններ արտաքին հարաբերությունների ոլորտում: Սահմանադրության 132-րդ հոդվածում մանրամասնորեն թվարկված է այդ լիազորությունների շրջանակը, մասնավորապես՝ կառավարության առաջարկությամբ կնքել միջազգային պայմանագրեր, վարչապետի առաջարկությամբ՝ նշանակել և հետ կանչել օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին, իրականացնել այլ լիազորություններ, ինչպես նաև ՀՀ վարչապետի առաջարկությամբ զինված ուժերի բնագավառում նշանակել և ազատել բարձրագույն հրամանատարական կազմի անդամներին, լուծել ՀՀ քաղաքացիություն շնորհելու և այն դադարեցնելու, դատապարտյալներին ներում շնորհելու հարցեր, շնորհել պատվավոր կոչումներ և բարձրագույն դասային աստիճաններ (133-138-րդ հոդվածներ):

ՀՀ նախագահը սահմանադրական լիազորությունները կյանքի է կոչում այնպիսի իրավական ակտերի ընդունմամբ, ինչպիսիք են հրամանագիրը և կարգադրությունը: Նախագահի հրամանագիրն ունի նորմատիվ իրավական բնույթ: Ինչ վերաբերում է կարգադրությանը, ապա դա անհատական բնույթի իրավական ակտ է:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները:
- 2. Կարողանալ** ՀՀ նախագահի՝ որպես պետության գլխի լիազորությունների շրջանակում լուսաբանել նրա փոխհարաբերությունները ՀՀ ԱԺ-ի և ՀՀ վարչապետի հետ, ներկայացնել գործող սահմանադրության պահանջները:
- 3. Տիրապետել** նախագահական և խորհրդարանական կառավարման համակարգերում նախագահի դերի առանձնահատկություններին՝ հիմնվելով ժամանակակից պետությունների փորձի վրա:

ԹԵՄԱ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարց 1. ՀՀ կառավարության տեղը պետական մարմինների համակարգում

Պետական մարմինների համակարգում կառավարությունն ընդունված է բնութագրել որպես պետության գործադիր ու կարգադրիչ գործունեությունը ղեկավարող ընդհանուր իրավասության խորհրդակցական (կոլեգիալ) մարմին: Ժամանակակից պետություններում կառավարությունների անվանումները (նախարարների խորհուրդ, կառավարություն և այլն) կապված են դրանց քաղաքական անցյալի հետ:

ՀՀ գործող սահմանադրությամբ հանրապետությունում ամրագրվել է կառավարման խորհրդարանական (պառլամենտական) ձևը: Դա նշանակում է, որ խորհրդարանը, որպես բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմին, ինքն է ձևավորում կառավարությունը և վերահսկում դրա գործունեությունը: Սահմանադրության 6-րդ գլխում ամրագրված հիմնադրույթները բացահայտում են ՀՀ կառավարության տեղն ու դերն ինչպես պետական իշխանության միասնական, այնպես էլ գործադիր մարմինների համակարգում:

ՀՀ կառավարությունը, որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, ըստ համապատասխան ծրագրի, մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը:

ՀՀ սահմանադրությունը նորոպի է բացահայտում կառավարման կարգավիճակը. կառավարությունն իրեն վերապահված հարցերը լուծում է ինքնուրույն, գործադիր ու կարգադրիչ գործառույթներն իրականացնում է հանրապետության տարածքում, ապահովում է մարմինների տարբեր օղակների փոխհամաձայնեցված գործունեությունը:

Ամենօրյա աշխատանքի ընթացքում ՀՀ կառավարությունը հետևում է հանրապետության օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների կատարմանը, կազմակերպում է այդ ակտերի կենսագործումը գործադիր իշխանության համակարգի մյուս մարմինների կողմից:

Կառավարությունը գործադիր իշխանության խնդիրները լուծում է **կարգադրիչ գործունեությամբ՝** ընդունելով համապատասխան իրավական ակտեր:

Կառավարությունը գործադիր իշխանության համակարգի մարմինների միջոցով ղեկավարում է ՀՀ տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական ոլորտների աշխատանքը:

Յարց 2. ՀՀ կառավարության ձևավորման, վարչապետի ընտրության և նշանակման սահմանադրաիրավական հիմքերը

ՀՀ կառավարությունը, որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, տարբերվում է պետական իշխանության մյուս մարմիններից իր կազմավորման առանձնահատուկ կարգով: Կառավարության կազմավորման և հրաժարականի հետ կապված գործընթացներն ամրագրված են սահմանադրությամբ: Գործող սահմանադրության 150-րդ հոդվածից հետևում է, որ կառավարության կազմավորումն սկսվում է վարչապետի նշանակումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Իր նշանակումից հետո վարչապետը հնգօրյա ժամկետում ՀՀ նախագահին առաջարկում է փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին: Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում կա՛ն նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կա՛ն դիմում է Սահմանադրական դատարան: Դատարանում հարցը չլուծվելու դեպքում փոխվարչապետները կան նախարարները նշանակված են համարվում իրավունքի ուժով:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչապետի ընտրության և նշանակման իրավական կարգավորմանը, ապա սահմանադրության 149-րդ հոդվածում հանգամանորեն թվարկված են նշված կարգի հիմքերը, ինչպես նաև նրա հրաժարականի, պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ խնդրի լուծման իրավական ճանապարհները:

Անդրադառնալով ՀՀ կառավարության լիազորությունների սահմանադրաիրավական սահմանումներին՝ նկատենք, որ այս առումով որոշակի համակարգումներ չկան. դրանք դրսևորում են հասարակական կյանքի առանձին ոլորտներում վարչապետին վերապահված կառավարման լիազորությունների իրացմամբ: Կառավարության գործելակերպի, ժողովրդավարության էության դրսևորման առանցքը վերջինիս ծրագիրն է, որը, ըստ սահմանադրության 151-րդ հոդվածի, կազմավորումից հետո քսանօրյա ժամկետում վարչապետը պետք է ներկայացնի ԱԺ-ին: Կառավարության ծրագրին հավանություն չտալու դեպքում ԱԺ-ն պետք է արձակվի իրավունքի ուժով:

Գործող սահմանադրությունը ՀՀ կառավարության իրավասության գերակա ոլորտներ է համարում տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը, ՀՀ զինված ուժերի գործունեությունը, պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանումը և անվտանգության ապահովումը: Կառավարության գործունեության իրավասության լայնածավալ ոլորտ է տարածքային քաղաքականությունը, որը նա իրագործում է մարզպետների միջոցով, որոնց նշանակում և ազատում է:

ՀՀ կառավարության տնտեսական գործունեության արդյունքները, ըստ սահմանադրական կարգի, յուրաքանչյուր տարի ներկայացվում է ԱԺ-ում՝ համապատասխան գեկույցով:

ՀՀ պետական կառավարման մարմինների համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հանրապետության վարչապետը, որը կառավարության խնդիրները լուծում է սահմանադրությանը, օրենքներին, նախագահի հրամանագրերին ու կարգադրություններին, կառավարության որոշումներին համապատասխան: Սահմանադրությամբ անրագրված է, որ վարչապետը կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում կառավարության գործունեությունը և համակարգում կառավարության անդամների աշխատանքը: Նա գլխավորում է Անվտանգության խորհուրդը: Փոխվարչապետներից որևէ մեկը, վարչապետի սահմանած կարգով, փոխարինում է նրան բացակայության ժամանակ:

Սահմանադրությամբ հստակեցված է նաև ՀՀ վարչապետի աշխատանքային գործունեությունը: Նա, որպես կանոն, հրավիրում և վարում է կառավարության նիստերը, ստորագրում է կառավարության որոշումները (հոդված 152, 153):

Ինչ վերաբերում է կառավարության մյուս անդամների՝ փոխվարչապետների, նախարարների աշխատանքի կազմակերպմանը, ապա սահմանադրությամբ կանոնակարգված են հիմնական ուղղությունները: Այսպես՝ փոխվարչապետները, վարչապետի հանձնարարությամբ, իրականացնում են կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգումը, իսկ կառավարության անդամ յուրաքանչյուր նախարար ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը: Կառավարության անդամներն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** ՀՀ կառավարության դերը և նշանակությունը պետական իշխանության համակարգում: Լուսաբանել ՀՀ կառավարության կարգավիճակի առանձնահատկություններն ըստ գործող սահմանադրության:
- 2. Կարողանալ** վերլուծել ՀՀ կառավարության գործունեության սահմանադրաիրավական կարգավիճակը, ՀՀ վարչապետի ընտրության կարգը, անվտանգության իրավական կարգավորման առանձնահատկությունները, ՀՀ վարչապետի լիազորությունների շրջանակը:
- 3. Տիրապետել** ՀՀ խորհրդարանական կառավարման առանձնահատկություններին: Բնութագրել ՀՀ վարչապետի և պետական մյուս մարմինների փոխհարաբերությունների իրավական կարգավորման գործընթացը:

ԹԵՄԱ 9. ԴԱՏԱՎԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՅԻՄՔԵՐԸ

Չարդ 1. Դատական իշխանության սահմանադրաիրավական հիմքերը

Իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքի կենսագործման արդյունքում պետական իշխանության անկախ և ինքնուրույն ճյուղերից մեկը դատական իշխանությունն է, որի կրող սուբյեկտը հատուկ կարգավիճակ ունեցող դատարաններն են:

Դատական իշխանությունն իր գործառույթների հատկանիշներով համարվում է պետական իշխանություն, օժտված է վերջինիս բնորոշ բոլոր հատկանիշներով: Դատական իշխանությունն իր առարկայական նշանակությամբ պետության գործունեության որոշակի ձև է, որը գործնականում հանդես է գալիս որպես արդարադատության համակարգ:

Այլ խոսքով, դատականը պետական իշխանության ինքնուրույն և անկախ ճյուղ է, որը կոչված է դատարանների միջոցով լուծելու իրավական բնույթի սոցիալական հակասություններ՝ արդյունքում իրականացնելով արդարադատություն:

ՀՀ սահմանադրությունը, դատական օրենքները սահմանում են դատական իշխանությունն ապահովող բազմաթիվ այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են դատական իշխանության ինքնուրույնությունը, առանձնացվածությունը, օրենսդրականությունը, դրա իրականացման դատավարական (վարութային) կարգը:

ՀՀ դատական իշխանության մարմինների համակարգը ներառում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել նաև մասնագիտացված դատարաններ: Դատական իշխանության մարմինների համակարգում է նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

Դատարանը, որպես դատական իշխանության մարմին, կոչված է ապահովելու քաղաքացիների իրավունքների ու ազատությունների համակողմանի պաշտպանությունը, ինչպես նաև լուծելու օրենսդիր և գործադիր իշխանությունների մարմինների միջև ծագող հակասությունները: Դատական իշխանությունը նպաստում է սահմանադրական կարգի, ժողովրդավարության, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, որով և ընդգծվում է վերջինիս կարևորությունը իշխանության ճյուղերի համակարգում:

Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի խնդիրներին և լիազորություններին, ապա, ըստ սահմանադրության 167-րդ հոդվածի, վերջինս իրականացնում է սահմանադրական արդարադատություն, որի մասին մանրամասնորեն խոսվում է սահմանադրու-

թյան 168-րդ հոդվածում:

Սահմանադրական դատարանն իր վարույթում քննվող գործերի վերաբերյալ ընդունում է որոշումներ և եզրակացություններ: Դատական իշխանության կողմը դատավորն է, որի կարգավիճակը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ, դատական, քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով:

ՀՀ դատական օրենսգիրքը, ընդհանրացնելով «դատավոր» եզրույթը, ընդգծում է, որ դատավոր են համարվում Վճռաբեկ դատարանի նախագահը, պալատների նախագահները և դատավորները, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավորի կամ դատարանի նախագահի պաշտոնում օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

Որպես կանոն, յուրաքանչյուր դատավոր օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ (ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 4):

Դատավորների համար սահմանադրությունը և դատական օրենսգիրքը սահմանում են միասնական կարգավիճակ, որը ամրագրված է ՀՀ սահմանադրության 164-րդ հոդվածում: Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Գործող դատական օրենսդրությունը որոշակի սահմանակալություններ է արձանագրում դատավորների համար: Այսպես՝ դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ:

Սահմանադրությամբ կարգավորված է դատավորների անձեռնմխելիության իրավունքը (հոդված 164):

Գործող սահմանադրությամբ (հոդված 173) ՀՀ դատական համակարգում իր կարգավիճակի առանձնահատկություններով ընդգծվում է Բարձրագույն դատական խորհուրդը: Վերջինս անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Սահմանադրության 174-րդ և 175-րդ հոդվածներում տրված են նաև Բարձրագույն դատական խորհրդի կազմը, ձևավորման և գործունեության սկզբունքները, իրավասությունը, լիազորությունների շրջանակները:

Օրինականության և իրավակարգի, հասարակության, պետության շահերի պաշտպանության խնդիրների լուծման մի մասը բաժին է ընկնում ՀՀ դատախազությանը:

Դատախազության գործունեությունը հիմնված է ՀՀ սահմանա-

դրության և «Դատախազության մասին» ՀՀ օրենքում ամրագրված սկզբունքների վրա, որոնք բնութագրում են վերջինիս տեղը և դերը պետական մարմինների համակարգում:

Դատախազության օրինականությունն ամրապնդելու, օրենքների կատարումն ապահովելու, օրինախախտումների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու և վերացնելու ուղղությամբ ՀՀ սահմանադրության 176-րդ հոդվածը օժտված է մի շարք լիազորություններով: Դատախազությունը օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

1) հարուցում է քրեական հետապնդում, 2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, 3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը, 4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները, 5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

ՀՀ դատախազության մարմինների գործունեության հիմքում օրինականության, հրապարակայնության, ժողովրդավարության, անկախության և համակարգի միասնականության սկզբունքներն են: ՀՀ դատախազության միասնական համակարգը, որը ստեղծված է միասնականության ու կենտրոնացվածության, ՀՀ վարչատարածքային բաժանման հիման վրա, ղեկավարում է գլխավոր դատախազը:

ՀՀ դատախազությունը կազմված է գլխավոր դատախազից, Երևան քաղաքի դատախազությունից, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններից, համայնքային, մարզային դատախազություններից, կենտրոնական զինվորական դատախազությունից, ինչպես նաև կայազորների զինվորական դատախազություններից («Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, 8):

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

- 1. Իմանալ** դատական իշխանության հասկացությունը, համակարգը, գործառույթները:
- 2. Կարողանալ** դատական իշխանությունը սահմանազատել իրավապահ մյուս մարմիններից: Նկարագրել ՀՀ դատախազության խնդիրները, սահմանադրական կարգավիճակը, դատախազության համակարգը:
- 3. Տիրապետել** դատարանների կողմից արդարադատության իրականացման հիմնախնդիրներին, ՀՀ դատախազության սահմանադրական կարգավիճակին և լիազորություններին, Բարձրագույն դատական խորհրդի խնդիրներին և կարգավիճակին:

ԹԵՄԱ 10. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Յարց 1. Տեղական ինքնակառավարման իրավունք

Տեղական ինքնակառավարման իրավունքի հասկացությունն առաջին անգամ սահմանվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրասիական խարտիայի 3-րդ հոդվածում, որտեղ տեղական ինքնակառավարումն ամրագրված է որպես տեղական ինքնակառավարման մարմինների հանրային գործունեության կարևոր մաս՝ ելնելով տեղական բնակչության շահերից, ինչպես նաև օրենքի շրջանակներում և սեփական պատասխանատվությամբ՝ կարգավորելու ու կառավարելու իրավունք և իրական ունակություն:

Տեղական ինքնակառավարումը ժողովրդավարական ցանկացած հասարակարգի հիմքերից է, որը պետք է ճանաչվի երկրի սահմանադրությամբ:

ՀՀ սահմանադրությունը, Հայաստանը հռչակելով որպես ժողովրդավարական պետություն, ամրագրում է ժողովրդավարության այն կարևորագույն հիմունքները, որոնք, առաջին հերթին, արտացոլված են տեղական ինքնակառավարման մեջ: Տեղական ինքնակառավարումը, որպես սահմանադրական կարգի հիմքերից մեկը, իշխանության կազմակերպման և իրականացման հիմնարար սկզբունքներից է:

ՀՀ սահմանադրությունը ճանաչում է տեղական ինքնակառավարման իրավունքը և հռչակում, որ դա տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակչության շահերից ելնելով, սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Սահմանադրությունն ամրագրում է, որ տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքում (հոդված 179), որ դա մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է, որը հանդես է գալիս որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

ՀՀ սահմանադրությունը և տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությունը վկայում են, որ տեղական ինքնակառավարման մարմիններն ընդգրկված չեն պետական իշխանության մարմինների համակարգում: Համայնքային մարմինները գործում են այնպիսի սկզբունքներով, ինչպիսիք են ինքնուրույնությունը, օրինականությունը, իրապարակայնությունը, նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանությունը լիազորություններին, պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բնակչության առաջ:

Սահմանադրությամբ ամրագրվում է, որ տեղական ինքնակառավարումն իր լիազորությունների սահմաններում ինքնուրույն է, որի շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու են համայնքի բնակչության առջև:

Տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման կարգը, իրավասությունները, լիազորությունների ոլորտները սահմանված են ինչպես ՀՀ սահմանադրությամբ, այնպես էլ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ:

Համայնքային խնդիրները լուծելու նպատակով ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման կարգը: Տեղական ինքնակառավարման մարմիններ են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ընտրությունների կարգը սահմանված է ընտրական օրենսգրքով:

Ինչպես ՀՀ սահմանադրությամբ, այնպես էլ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ ամրագրված են նաև համայնքի խնդիրները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են. ա) համայնքի պարտադիր և բ) կամավոր խնդիրներ, ինչպես նաև՝ գ) պետության կողմից պատվիրակված խնդիրների լուծման լիազորություններ:

Պետական մարմինների որոշ լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով այդ խնդիրների լուծումը կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

Համայնքի ավագանին իր լիազորություններն իրականացնում է ըստ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի: Ինչ վերաբերում է համայնքի ղեկավարին, ապա նա կատարում է համայնքի ավագանու որոշումները և պատասխանատու է նրա առաջ:

Ըստ ՀՀ սահմանադրության՝ համայնքի բնակչությունը իրավունք ունի մասնակցելու համայնքի գործերի կառավարմանը և տեղական նշանակության հարցերի լուծմանը՝ հանրաքվեով:

Համայնքը, որպես իրավաբանական անձ, ունի հող, գույք, որոնց նկատմամբ հանդես է գալիս սեփականատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներով: Համայնքի տարածքում գտնվող հողը, բացի պետությանը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող հողերից, համայնքի սեփականությունն է, որի տնօրինման իրավունքը վերապահված է ավագանուն:

Համայնքն ունի բյուջե, որը համայնքի ղեկավարը ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը: ՀՀ սահմանադրու-

թյամբ համայնքի ավագանուն իրավունք է վերապահված սահմանելու տեղական հարկեր և տուրքեր, ինչպես նաև համայնքի մատուցած ծառայությունների դիմաց բյուջե մուտքագրվող վճարներ:

Պետության պատվիրակած լիազորությունները համայնքը կատարում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Համայնքային մարմինների ընդունած իրավական ակտերի պահանջների կատարումը պարտադիր է համայնքի տարածքում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, որն ապահովվում է պետական հարկադրանքի ուժով:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

1. **Իմանալ** տեղական ինքնակառավարման (համայնքների) դերը և նշանակությունը ՀՀ կառավարման համակարգում, ինքնակառավարման մարմինների կազմակերպման կարգը, գործունեության սկզբունքները:
2. **Կարողանալ** տեղական ինքնակառավարումը տարբերել պետական կառավարումից: Բացահայտել տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած, սեփական նախաձեռնությամբ իրագործվող գործառույթների իրավական կարգավորումը, վերջիններիս կողմից ընդունվող իրավական ակտերի առանձնահատկությունները:
3. **Տիրապետել** տեղական ինքնակառավարման կազմակերպմանը՝ որպես պետության ժողովրդավարության իրականացման ձև, ինչպես նաև Երևանի՝ որպես տեղական ինքնակառավարման ձևի օրենսդրական առանձնահատկություններին:

Գրականության ցանկ

1. Безруков А. В., Конституционное право России. Учебное пособие. М., «Юстицинформ», 2015.
2. Карпов А. В., Конституционное право России. М., «Омега-Л», 2017.
3. Арбузкин А. М., Конституционное право зарубежных стран. М., «Огни», 2017.
4. Козлова Е. И., Конституционное право России. Учебник /Е. И. Козлова, О. Е. Кутафин. М., «Проспект», 2015.
5. Колюшин Е. И., Конституционное (государственное) право России. М., Издательство МГУ, 2016.
6. Нудненко Л. А., Конституционное право России. (комплект из 2 книг) М., «Юрайт», 2016.
7. Корнеева Н. В., Конституционное право России. М., Питер, 2017.
8. Глушенко П. П., Конституционное право России. М., Питер, 2017.
9. Енгибарян Р. В., Конституционное право /Р. В. Енгибарян, Э. В. Тадевосян. М., «Юристъ», 2017.
10. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն (փոփոխություններով), Ե., 2016:
11. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, դասազիբ բուհերի համար, Ե., «Տիգրան Մեծ», 2008:

ԹԵՄԱ 1. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂ

Հարց 1. Վարչական իրավունքի հասկացությունը, ընդհանուր բնութագիրը

Վարչական իրավունքը, որպես հանրային իրավունքի ճյուղ, կարգավորում է պետական կառավարման բնագավառում ծագած հասարակական հարաբերությունները: Վարչական իրավունքի կարգավորման առարկան այն հասարակական հարաբերություններն են, որոնք առաջանում, փոփոխվում և դադարում են գործադիր իշխանության համակարգի կազմակերպման և գործունեության ընթացքում և արտահայտում են պետության շահերը:

Վարչական իրավունքի նշանակությունն ու դերն արտահայտվում են գործադիր իշխանության համակարգի գործունեության մեջ: Դրա նորմերն իրացվում են սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով գործադիր իշխանության սուբյեկտներին վերապահված գործառնությունների, խնդիրների ու լիազորությունների իրականացմամբ: Իրավագիտության մեջ շատ հաճախ վարչական իրավունքը համարում են կառավարման իրավունք:

Պետական կառավարումը գործնականում իրականացվում է վարչական իրավունքին հատուկ իրավաբանական ձևերով: Վարչական իրավունքը, գործադիր իշխանության ոլորտում հիմնվելով պետության և քաղաքացիների շահերի պաշտպանության սկզբունքի վրա, կառավարչական հարաբերություններին տալիս է հանրային-իրավական բնույթ:

Գործադիր իշխանության ոլորտում ծագած բազմաշերտ և տարաբնույթ հարաբերությունների կարգավորումը իրավունք է վերապահում ասելու, որ վարչական իրավունքն իրավունքի հիմնարար, կարևորագույն ճյուղերից է և առաջատար տեղ է գրավում հասա-

րակական հարաբերությունների կարգավորման ասպարեզում:

Վարչական իրավունքի կարգավորման առարկան ճիշտ ըմբռնելու և հանրային իրավունքի այլ ճյուղերի կարգավորման առարկաներից տարբերելու համար թվարկենք դրա կարևոր կարգավորիչ նորմերը.

ա) քաղաքացիների, նրանց միավորումների և հանրային տարբեր բնույթի այլ միավորումների մասնակցությամբ այնպիսի հասարակական հարաբերությունների կարգավորում, որոնց առաջացումն անմիջականորեն կապված է պետական կառավարչական գործունեության հետ,

բ) գործադիր իշխանության ոլորտում՝ քաղաքացիների անհատական ու խմբային շահերի ապահովման, ինչպես նաև տնտեսական, սոցիալ-մշակութային և վարչաքաղաքական գործընթացների կարգավորում,

գ) պետական կառավարման ոլորտում՝ գործադիր իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից իրենց խնդիրներն ու գործառնություններն իրականացնելիս ծագող հասարակական հարաբերությունների կարգավորում, որտեղ կառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք հանդես են գալիս որպես գործադիր-կարգադրիչ բնույթի լիազորություններով օժտված սուբյեկտներ,

դ) այնպիսի հասարակական հարաբերությունների կարգավորում, որտեղ կողմերից մեկը պետական իշխանության լիազորություններով օժտված կառավարման մարմին է,

ե) տեղական ինքնակառավարման գործադիր մարմինների և պետական կառավարման մարմինների փոխգործակցության կապակցությամբ առաջացող հարաբերությունների կարգավորում (օրինակ՝ բուլոր այն դեպքերում, երբ տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակվում է իրականացնել պետական իշխանության մարմինների որոշակի լիազորություններ (ՀՀ սահմանադրություն, 182-րդ հոդվածի երկրորդ մաս):

Նշված կառավարչական հարաբերություններին առավել լայն մասնակցություն ունեն քաղաքացիները: Գործադիր իշխանության մարմինները և դրանց պաշտոնատար անձինք մեծածավալ գործունեություն են իրականացնում պետական կառավարման բնագավառում քաղաքացիների իրավունքների, ազատությունների ու պարտականությունների կատարման և նրանց շահերի պաշտպանության ուղղությամբ:

Որպես իրավունքի ճյուղերի սահմանազատման չափանիշ՝ իրավագիտության ոլորտում էական դեր է հատկացվում կարգավորման

մեթոդին:

Իրավունքի բոլոր ճյուղերն իբրև իրավական կարգավորման մեթոդ օգտագործում են **կարգադրության, արգելքի և թույլտվության** եղանակները: Իրավաբանական այս հնարքների ամբողջությունը հասարակական հարաբերությունների նկատմամբ իրավաճորմների ներգործության միջոցների համակարգն է:

Իրավունքի համակարգի ճյուղերի կարգավորման մեթոդների ուսումնասիրությունները և համեմատությունները ցույց են տալիս, որ դրանց միջև կան էական տարբերություններ, որոնք անհնար է անտեսել: Այսպես՝ համեմատելով վարչական և քաղաքացիական իրավունքների կարգավորման մեթոդները, դժվար չէ նկատել դրանց բովանդակային տարբերությունները: Վարչական իրավունքի մեթոդը կիրառվում է բացառապես կառավարչական հարաբերությունների կարգավորման նպատակով, միայն պետական կառավարման մարմինների կողմից գործադիր իշխանության պարտադիր կիրառմամբ: Ընդ որում, կառավարչական ոլորտում ծագած հարաբերությունների մասնակիցներից մեկը հանդես է գալիս որպես կառավարման մարմին, հետևաբար՝ այս հարաբերություններում բացառվում է կողմերի իրավահավասարությունը: Մինչդեռ քաղաքացիական իրավունքը, որպես մասնավոր իրավունքի ճյուղ, կարգավորում է գույքային, ինչպես նաև ոչ գույքային հարաբերությունները, սահմանում է կողմերի իրավաբանական հավասարությունը՝ ամրագրելով նրանց կամքի ազատ արտահայտումը:

Վարչական իրավունքի կարգավորման մեթոդի մյուս առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի մեթոդների, այստեղ կառավարչական հասարակական հարաբերությունների կողմերի վարքագծի վրա ներգործությունն իրականացվում է ոչ թե դատական կարգով, այլ արտադատական: Գործնականում վարչական իրավունքն իբրև վարչաիրավական կարգավորման մեթոդներ օգտագործում է կարգադրագրերը և արգելքները: Թույլտվության մեթոդը սակավ կիրառություն ունի:

Ամփոփելով կարելի է ասել, որ **վարչական իրավունքը իրավական նորմերի ամբողջություն է, որ կարգավորում է գործադիր իշխանության իրացման գործընթացում ծագող կառավարչական բնույթի հասարակական հարաբերությունները:**

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

1. **Իմանալ** վարչական իրավունքի կարգավորման առարկան և մեթոդը, դրա տեղն իրավունքի համակարգում:
2. **Կարողանալ** վարչական իրավունքը տարբերել իրավունքի մյուս ճյուղերից՝ ըստ հասարակական հարաբերությունները կարգավորող վարչիրավական նորմերի և հարաբերությունների:
3. **Տիրապետել** կառավարման ոլորտի իրավական կարգավորման, գործադիր-կարգադրիչ գործունեության և վարչական պատասխանատվության սահմանման հիմնական առանձնահատկություններին:

ԹԵՄԱ 2. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Չարց 1. Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակի հիմունքները

Ֆիզիկական անձինք վարչական իրավունքի սուբյեկտներ են, որոնց թվին են դասվում ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

ՀՀ օրենսդրությամբ վարչական իրավունքի առաջնային սուբյեկտ են հանդիսանում ոչ թե պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, այլ քաղաքացիները: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ պետությունը կարող է հզոր լինել, իսկ պետական կառավարումը՝ արդյունավետ միայն այն դեպքում, երբ քաղաքացիները վստահում են պետությանը, որտեղ իրենց շահերը գերակա են: Պետությունը կառավարման ոլորտում ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, անկախ կացության կարգավիճակից, մշտապես պետության ուշադրության կենտրոնում են: ՀՀ օրենսդրությանը համապատասխան գործող իրավական ակտերում ամրագրված՝ ՀՀ քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները վերապահվում են նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց: Քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, ըստ վարչական իրավունքի, դրսևորվում են որպես **բացարձակ և հարաբերական**:

Բացարձակ են այն իրավունքները, որոնցից անձն օգտվում է սուկ իր հայեցողությամբ:

Հարաբերական են այնպիսի իրավունքները, որոնց իրացումը պայմանավորված է պետական կառավարման համապատասխան մարմնի ակտով:

Քաղաքացու վարչաիրավական կարգավիճակի բովանդակությունը կազմող իրավունքներն ու պարտականությունները գործնականում ծագում են սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքներից ու պարտականություններից՝ ձևակերպվելով առանձին օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Նկատենք, որ ՀՀ սահմանադրության մեջ ամրագրված՝ մարդու և քաղաքացու կարգավիճակի վերաբերյալ դրույթների մի մասն ունի **համընդհանուր վարչաիրավական բնույթ**: Ինչ վերաբերում է քաղաքացու

կարգավիճակն արտացոլող վարչաիրավական բնույթի իրավունք-ներին ու պարտականություններին, ապա այդ մասին սահմանադրության 51-րդ հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

Բացի ՀՀ սահմանադրությունից, մարդու և քաղաքացու վարչաիրավական կարգավիճակի վերաբերյալ նորմեր են պարունակում մի շարք իրավական ակտեր (օրինակ՝ հավաքների ազատության, սեփականության, շրջակա միջավայրի վերաբերյալ և այլն):

Ընդհանրացնելով քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակի բնութագիրը՝ կարող ենք ասել, որ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներն ու պարտականությունները նաև ներառում են պատասխանատվության գիտակցություն՝ ըստ որի ապահովվում է նրանց մասնակցությունը պետական կառավարման գործընթացներին:

Չարգ 2. Պետական կառավարման (գործադիր իշխանության) մարմնի հասկացությունը, համակարգը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում առաջին անգամ օգտագործվում է «վարչական մարմիններ» հասկացությունը: Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ իրավական այլ ակտերով: Վերոնշյալ օրենքում անդրադարձ է կատարվում վարչարարության և վարչական մարմինների մեկնաբանությանը:

Օրենքում ամրագրված է, որ հանրապետության վարչական մարմիններ են հանդիսանում.

- 1) գործադիր իշխանության հանրապետական մարմինները, որոնց թվին են դասվում նախարարությունները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները և հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները,
- 2) տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետները,
- 3) տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը, ինչպես նաև վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները, որոնք հիշատակված օրենքի իմաստով համարվում են վարչական մարմիններ: Սրանց թվին են դասվում հանրային ծառայու-

թյունները կարգավորող հանձնաժողովը, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը և այլ մարմիններ:

ՀՀ գործադիր իշխանության գործունեությունը կարգավորող օրենսդրությունը չի հստակեցնում «գործադիր իշխանություն» և «պետական կառավարում» հասկացությունները: Դրանք լայն իմաստով մեկնաբանվում են որպես «վարչական իշխանություն», որն իրականացնում է ոչ միայն օրենքի դրույթները, այլև գործադիր մարմինների ցուցումները:

Պետական կառավարման մարմինների անվանումը, կարգավիճակը և գործառույթները, ի տարբերություն օրենսդիր և դատական իշխանության մարմինների, ՀՀ սահմանադրությամբ անորոշ է սահմանված: Խոսքն այն մասին է, որ ամբողջական չեն բնութագրվում գործադիր իշխանության համակարգի և օգտագործվող՝ «գործադիր իշխանության մարմին», «պետական կառավարման մարմին», «պետական կառավարման այլ մարմիններ» հասկացությունները (ՀՀ սահմանադրություն, հոդված 146):

ՀՀ պետական կառավարման (գործադիր իշխանության) մարմինների համակարգը պայմանավորված է հանրապետության պետական կառուցվածքով՝ ըստ որի պետական կառավարման (գործադիր իշխանության) մարմինների միասնական համակարգն ընդգրկում է՝ գործադիր իշխանության հանրապետական և տարածքային պետական կառավարման մարմինները: Գործադիր իշխանության հանրապետական մարմինների ակտերը պարտադիր են տարածքային պետական կառավարման մարմինների համար:

Անդրադառնալով պետական կառավարման (գործադիր իշխանության) մարմիններին և դրանց տեսակներին՝ հարկ է նշել, որ կառավարության քաղաքականությունն առանձին ոլորտներում մշակում և իրականացնում են հանրապետական կառավարման մարմինները, որոնք ղեկավարում են իրենց համակարգի պետական և այլ մարմինների գործունեությունը և պատասխանատու են դրա համար:

Գործող սահմանադրությամբ թեպետ սահմանված չէ, թե որ մարմիններն են համարվում կառավարման, այնուամենայնիվ սահմանադրական նորմերը հուշում են, որ այդպիսին է կառավարման մարմինների այն համակարգը (սահմանադրության 6-րդ գլուխ), որը պետական իշխանությունների տարանջատման կառուցվածքում գործում է օրենսդիր և դատական իշխանության մարմիններին զուգահեռ և իրականացնում է գործադիր գործառույթներ:

Որպես կանոն, պետական կառավարման մարմիններն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են օրենսդրությամբ

սահմանված կարգով, օժտված են օպերատիվ ինքնուրույնությամբ, օրենսդրությամբ սահմանված՝ տնտեսության և սոցիալ-մշակութային համապատասխան ոլորտներում իրականացնում են գործադիր իշխանության խնդիրներ ու գործառույթներ:

Պետական կառավարման մարմիններն օժտված են պետաիշխանական լիազորություններով: Հանդես գալով որպես ենթաօրենսդրական մարմիններ՝ կառավարման մարմինները, ի կատարումն օրենքների, ընդունում են ենթաօրենսդրական իրավական ակտեր, լիազորված են կիրառելու վարչական հարկադրանքի միջոցներ և ապահովելու դրանց կատարումը:

Վերլուծությունների հիման վրա, հիմք ընդունելով վարչաիրավական գրականության մեջ պետական կառավարման մարմիններին տրվող բնութագրերը, վերջիններիս կարելի է ներկայացնել որպես պետական իշխանության ճյուղեր, քաղաքական հիմնարկ, որը ստեղծվում է գործադիր իշխանության գործառույթներին մասնակցելու համար և այդ նպատակով օժտված է պետական-իշխանական բնույթի լիազորություններով:

Այսօր գործադիր իշխանության մարմիններն իրականացնում են հատուկ տեսակի պետական գործունեություն, որը կրում է գործադիր և կարգադրիչ բնույթ: Կառավարման մարմիններն անմիջականորեն կատարում են ՀՀ Ազգային ժողովի ընդունած իրավական ակտերը:

Հարց 3. Պետական կառավարման մարմինների տեսակները, դասակարգումը

ՀՀ սահմանադրությունն ամրագրում է պետական կառավարման մարմինների համակարգը: Այսպես՝ մայր օրենքի 159-րդ հոդվածում ասվում է, որ պետական կառավարման մարմիններ են նախարարությունները, ինչպես նաև կառավարությունը, վարչապետը և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանված են օրենքով:

Գիտական վերլուծություններում պետական կառավարման մարմիններից յուրաքանչյուրը, սահմանադրությամբ և իրավական ակտերով վերապահված առանձնահատկությունների ուժով, ենթարկվում է որոշակի տեսակային դասակարգման: Դրա համար հիմք են հանդիսանում այնպիսի հիմնարար չափանիշներ, ինչպիսիք են պետության կառուցվածքը, այդ մարմինների կազմավորման ձևերը, իրավասության բնույթը, դրանց կողմից հարցերը լուծելու կարգը:

Ելնելով ՀՀ պետական կառուցվածքից՝ պետական կառավարման մարմինների միասնական համակարգում առանձնանում են.

ա) Կառավարությունը, որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, որի կարգավիճակը, կազմավորման դերը, գործառույթները, կառուցվածքը, լիազորություններն ամրագրված են ՀՀ սահմանադրության 6-րդ գլխում:

բ) Հանրապետական կառավարման մարմիններ են նախարարությունները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը և այլ մարմիններ, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են հանրապետության ամբողջ տարածքում և պատասխանատվություն են կրում նշված բնագավառի գործերի համար:

Նկատենք, որ, ըստ սահմանադրական կարգի, երկրի կառավարությունն անվանվում է գործադիր իշխանության բարձրագույն մարմին՝ հաշվի առնելով դրա հստակ կարգավիճակը, յուրահատուկ փոխհարաբերությունները իշխանության մյուս ճյուղերի մարմինների հետ և ղեկավար դերն ու տեղը գործադիր իշխանության մարմինների համակարգում:

Գործնականում նախարարություններն ու զերատեսչությունները կոչվում են գործադիր իշխանության կենտրոնական մարմիններ:

Պետական կառավարման (գործադիր իշխանության) մարմինները դասակարգվում են ըստ կազմակերպարավական ձևերի: Ըստ այդ հատկանիշի՝ տարբերակվում են.

- 1) կառավարությունը,
- 2) նախարարությունները,
- 3) պետական կոմիտեները,
- 4) պետական ծառայությունները,
- 5) գլխավոր վարչություններն ու վարչությունները,
- 6) ՀՀ ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ և այլն:

Իրավակազմակերպական ձևը պայմանավորված է այն իրավական հիմքերի առանձնահատկություններով՝ ըստ որոնց ձևավորվում է տվյալ կառավարման մարմինը: Կազմավորման համար հիմք են հանդիսանում ընթացիկ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը:

Պետական կառավարման մարմինների դասակարգման հաջորդ չափանիշը տվյալ մարմնի իրավասության բնույթն է:

Իրավասության բնույթով գործադիր իշխանության մարմինները բաժանվում են ըստ ընդհանուր, ճյուղային, միջճյուղային և ներճյուղային մարմինների:

Ընդհանուր իրավասության մարմիններ են կառավարությունը, մարզպետները, որոնք ղեկավարում են իրենց ենթակա տարածքում բոլոր ճյուղերը, համակարգում են դրանց գործունեությունը, ապահովում սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումը և պատասխանատվություն են կրում կառավարման կազմակերպման

որակի համար:

Ճյուղային իրավասության մարմիններն իրենց գործառույթներն իրականացնում են ենթակա ճյուղերի նկատմամբ (օրինակ՝ կրթության և գիտության, գյուղատնտեսության նախարարությունները):

Միջճյուղային իրավասության պետական կառավարման մարմիններն իրենց հանձնարարված գործունեության ոլորտում իրականացնում են ընդհանուր մասնագիտացված գործառույթներ (օրինակ՝ ֆինանսների, ուժային բոլոր նախարարությունները):

Շատ հաճախ գիտության ոլորտում ճյուղային և միջճյուղային իրավասության մարմիններն անվանվում են **հատուկ իրավասության մարմիններ**, որոնք իրականացնում են ճյուղային, միջճյուղային կամ խառը գործառույթային կառավարում (օրինակ՝ ՀՀ առողջապահության նախարարությունը ղեկավարում է իրեն ենթակա առողջապահական մարմինների և հիմնարկների գործունեությունը, միաժամանակ, միջճյուղային կառավարում է իրականացնում մյուս նախարարությունների և գերատեսչությունների նկատմամբ):

Գործում են նաև **ներճյուղային իրավասության մարմիններ**, որոնք տվյալ բնագավառի շրջանակներում ղեկավարում են իրենց հանձնարարված աշխատանքը (օրինակ՝ ազգային անվտանգության, ոստիկանության, պաշտպանության ոլորտների ծառայությունները):

Պետական կառավարման մարմինների տեսակների դասակարգման մեջ առանձնացվում է կառավարման մարմինը՝ ըստ առկա հարցերը լուծելու կարգի: Պետական կառավարման մարմիններում հարցերը լուծվում են կոլեգիալ (խորհրդակցական) և միանձնյա կառավարման սկզբունքներով:

Կառավարման մարմնի խորհրդակցական կառուցվածքը ենթադրում է, որ այն ղեկավարում է անձանց խումբ: Կոլեգիալ կառավարման մարմինը իրեն վերապահված բոլոր հարցերի կապակցությամբ ընդունում է որոշումներ: Օրինակ՝ ՀՀ կոլեգիալ մարմին է համարվում կառավարությունը, որը որոշումներ է ընդունում կառավարության անդամների միջոցով:

Պետական կառավարման միանձնյա ղեկավարման մարմնում առկա հարցերը լուծելիս վճռական դեր է խաղում տվյալ մարմնի ղեկավարը, որը համապատասխան ոլորտի կառավարմանը վերաբերող բոլոր հարցերի քննարկումը և լուծումը կազմակերպում է միանձնյա ղեկավարման սկզբունքով:

Անդրադառնալով պետական կառավարման (գործադիր իշխանության) մարմինների համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների տեղին և դերին, խնդիրներին ու լիազորություններին, հիմնախնդիրների սահմանադրաիրավական կարգավորում-

ներին, հարկ է նշել, որ վերջիններս չեն համարվում կառավարման պետական համակարգի կառուցվածքային ստորաբաժանում:

Համայնքի բնակիչներն անմիջականորեն կան ընտրովի մարմինների համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում: Ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հանրային իշխանություն: Տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմիններն իրենց գործունեության ոլորտներում, օրենքի հիման վրա, սերտորեն փոխգործակցում են: Տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն իրենց բնորոշ լիազորություններ և մասնակցում են հասարակական հարաբերությունների կարգավորմանը:

Տեղական ինքնակառավարումը միասնական իշխանության համակարգ է, որի տարրերից է համայնքային հանրային իշխանությունը: Համայնքային կազմավորումը հիմնական լիազորություններով օժտված է օրենսդիր իշխանության մարմնի կողմից, իսկ պահպանման հիմնական միջոցները ստանում է պետական բյուջեից: Պետական կառավարման հանրապետական մարմինները և դրանց տարածքային ծառայություններն ու կառուցվածքային մյուս ստորաբաժանումները տարբեր հարցերով համագործակցում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ: ՀՀ սահմանադրության 182-րդ հոդվածում ամրագրված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են պատվիրակված կարգով իրականացնել պետական իշխանության մարմինների լիազորությունները:

Պատվիրակված լիազորությունների իրականացման կապակցությամբ համայնքային մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը պետք է համապատասխանեն տվյալ պետական մարմնի իրավական ակտերին:

Ինքնաստուգման հարցեր և հանձնարարություններ

1. **Իմանալ** իրավունքի սուբյեկտների հասկացությունը, պետական ապարատում նրանց գրաված տեղը:
2. **Կարողանալ** դասակարգել վարչական իրավունքի սուբյեկտները, ֆիզիկական անձանց վարչաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները: Լուսաբանել պետական կառավարման և գործադիր իշխանության մարմինների տեսակները՝ ըստ տարածքային, իրավասության և գործունեության այլ չափանիշների:
3. **Տիրապետել** պետական կառավարման ոլորտում գործադիր իշխանության իրացման սահմանադրական կարգավորման խորհրդարանական առանձնահատկություններին, գործադիր-կարգադիր չ գործունեության իրավական ձևերին:

Գրականության ցանկ

1. Агапов А. Б., Административное право: учебник, 9-е изд., перераб. и доп. М., "Юрайт", 2016.
2. Административное право: учебник. 2-е изд., перераб. и доп./ Отв. ред. Л. Л. Попов. М., "Проспект", 2015.
3. Административное-процессуальное право России. Учебник /А. Б. Зеленцов, П.И. Кононов, А И. Стахов, М., "Юрайт", 2016.
4. "Кодекс Российской Федерации об административных правонарушениях" от 30.12.2001 N 195-ФЗ (ред. от 14.12.2015) (Электронный ресурс).
5. Конин Н. М., Административное право: учебник. /Н. М. Конин, Е. И. Маторина, М., "Юрайт", 2015.
6. Кононов П. И., Административное право России, учебник. /П. И. Кононов, М., "Юрайт", 2014.
7. Копытов Ю. А., Административное право, учебник, 2-е изд., перераб. и доп., М., "Юрайт", 2015.
8. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն (փոփոխություններով), Ե., 2016:
9. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ, 2012:
10. «Վարչական խախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, Ե., 2017:

ԹԵՄԱ 1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Չարց 1. Աշխատանքային իրավունքի առարկան և մեթոդը

Աշխատանքային իրավունքը, որպես ՀՀ իրավունքի համակարգի ինքնուրույն ճյուղ, ունի կարգավորման յուրահատուկ ոլորտ՝ հասարակական աշխատանքը: Ցանկացած հասարակական օգտակար աշխատանքի նշանակությունն էական է, քանի որ մարդու ողջ կենսագործունեությունը հիմնվում է աշխատանքով ստեղծված արդյունքի վրա: Խոշոր հայտնագործությունները, գիտատեխնիկական առաջընթացը և քաղաքակրթությունը բազմաթիվ սերունդների աշխատանքի արդյունք են: Հասարակության զարգացման ողջ գործընթացը պայմանավորված է աշխատանքով և դրա պատշաճ կազմակերպմամբ. որքան հաջողված, տեխնիկապես հագեցած, արտադրողական է աշխատանքը, այնքան բարեկեցիկ է հասարակությունը: Առանց աշխատանքի անհնար է պատկերացնել մարդկային կյանքը:

Աշխատանքային իրավունքը կարգավորում է վարձու աշխատանքի կազմակերպման և իրականացման ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունները, որոնք էլ հենց աշխատանքային իրավունքի առարկայի հիմնական տարրն են:

Աշխատանքային իրավունքի առարկան կազմող հասարակական հարաբերությունների համակարգում գլխավոր տեղը պատկանում է աշխատանքային հարաբերություններին. դրանք առաջանում են և՛ նյութական ու հոգևոր բարիքների ստեղծման ընթացքում, և՛ ծառայությունների ու սպասարկման ոլորտում: Այս հարաբերությունների հիմնական բովանդակությունն ու օբյեկտը աշխատանքն է, այսինքն՝ մարդու մտավոր և ֆիզիկական ունակությունների իրացման հետ կապված նպատակաուղղված գործունեություն:

նը (կենդանի աշխատանքի կազմակերպումն ու իրականացումը)՝ միտված նյութական և հոգևոր բարիքների ձեռքբերմանը:

Աշխատանքային իրավունքի առարկայի կազմում, բուն աշխատանքային հարաբերություններից բացի, առանձին տեղ ունեն դրանց հետ սերտորեն կապված (դրանց նախորդող, ուղեկցող և դրանցից բխող) աշխատանքի տեղավորման, աշխատողների որակավորման բարձրացման, աշխատանքային վեճերի քննության և այլ հարաբերությունները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածում նշվում է. «Աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններ են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ»:

Աշխատանքային հարաբերությունները, որպես աշխատանքային իրավունքի առարկա, ունեն հետևյալ հատկանիշները.

- 1) Դրանց առաջացման հիմքը աշխատանքային պայմանագիրն է (նաև գործատուի անհատական իրավական ակտը):
- 2) Դրանք ընթանում են ներքին աշխատանքային կարգուկանոնի և աշխատողի՝ դրանց ենթարկվելու պայմաններում:
- 3) Աշխատողն ընդգրկվում է աշխատանքային կոլեկտիվում, ընդ որում, դա միջնորդավորվում է յուրահատուկ իրավաբանական փաստով (աշխատանքային պայմանագիր, պաշտոնում նշանակման կամ ընտրության ակտ):
- 4) Դրանց բովանդակությունը ենթադրում է աշխատողի կողմից որոշակի տեսակի աշխատանքի կատարում՝ ըստ իր մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:
- 5) Դրանք ձևավորվում են հատուցման սկզբունքով. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածը պահանջում է աշխատանքային պայմանագրում նշել աշխատավարձի չափը (կամ այն որոշելու ձևը):
- 6) Դրանք ունեն տևական բնույթ. աշխատողի կողմից ինչ-որ աշխատանքային գործառույթ, խնդիր կամ պարտականություն կատարելուց հետո աշխատանքային հարաբերությունները չեն ավարտվում, աշխատողը պարտավորվում է կատարել որոշակի տեսակի շարունակական աշխատանք: Միաժամանակ

մանակ, այդ հարաբերությունները չեն դադարում աշխատանքային օրվա ավարտով, տոն և հանգստի օրերին, արձակուրդի ժամանակ, քանի որ աշխատանքից աշխատողի բացակայելու փաստն ինքնին չի ենթադրում աշխատող-գործատու իրավական կապի խզում:

7) Դրանց բնորոշ է դադարեցման կողմերի ազատ նախաձեռնությունը:

Աշխատանքային հարաբերությունների՝ որպես աշխատանքային իրավունքի առարկայի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ միայն վարձու աշխատանքի վրա հիմնված հարաբերությունները, որոնցում ֆիզիկական անձը ներգրավվում է որոշակի աշխատանքային գործառույթ իրականացնելու նպատակով՝ ենթարկվելով սահմանված աշխատանքային կարգուկանոնին:

Աշխատանքային իրավահարաբերությունները բարդ են, քանի որ դրանցում մշտապես առկա են համալիր իրավունքներ, դրանց համապատասխան պարտավորություններ՝ անմիջականորեն կապված կենդանի աշխատանքի գործադրման հետ:

Աշխատանքային իրավահարաբերություններն ունեն անձնական բնույթ, որն արտահայտվում է որոշակի աշխատողի իրավունքների և պարտականությունների (իրավահարաբերության) բովանդակությամբ: Միաժամանակ, աշխատանքի անցնող անձը հնարավորություն ունի ընտրելու իր մասնագիտությանը և կարողություններին համապատասխան աշխատանք, գործատուն էլ իրավունք ունի ստուգելու աշխատանքի անցնողի անհատական (անձնական) որոշակի հատկանիշներն ու ունակությունները: Աշխատանքային իրավահարաբերություններին բնորոշ անձնական հատկանիշը ենթադրում է որոշակի անձի (մասնագետի, կադրի) համար որոշակի աշխատանքային իրավունքների և պարտականությունների սահմանում ու դրանց իրականացում անձամբ աշխատողի կողմից:

Աշխատանքային իրավունքն ունի կարգավորման յուրահատուկ մեթոդ: Եթե իրավունքի կարգավորման առարկան կոնկրետ հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորվում են իրավական նորմերով, ապա իրավական կարգավորման մեթոդն այդ առարկան կազմող հարաբերությունների վրա իրավունքի ներգործության ձևն է՝ կարգավորման իրականացման եղանակը: Յետևաբար՝ իրավական կարգավորման մեթոդը պայմանավորված է կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթով, մասնավորապես՝

- 1) իրավահարաբերության մասնակիցների կարգավիճակով (կողմերի հավասարության և ենթակայության հատկանիշների համակցում),

- 2) իրավահարաբերության ծագման, փոփոխման և դադարման կարգով (պայմանագրային),
- 3) իրավունքի և պարտականությունների սահմանմամբ (հարաբերությունների կենտրոնացված, կարգավորման տեղային (լոկալ), ինչպես նաև պայմանագրային և իմպերատիվ (հրամայական) եղանակների համակցում),
- 4) սահմանված իրավունքների և պարտականությունների ապահովման միջոցներով (աշխատանքային իրավանորմերի սանկցիաները հատուկ են միայն աշխատանքային իրավունքին. այլ ոլորտներում դրանց կիրառությունն անընդունելի է):

Ինչպես նկատում ենք, աշխատանքային իրավունքի մեթոդին բնորոշ են այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են աշխատանքային հարաբերությունների կենտրոնացված և լոկալ (տեղային), ինչպես նաև պայմանագրային ու հրամայական կարգավորման եղանակների զուգակցումը, աշխատանքային իրավունքի ու պարտականությունների ապահովման առանձնահատուկ ձևը: Այսպիսով՝ աշխատանքային իրավունքի մեթոդին ներհատուկ է աշխատանքային և դրա հետ սերտորեն կապված հարաբերությունների կարգավորման դիսպոզիտիվ և իմպերատիվ ներգործության տարրերի զուգորդումը՝ աշխատողի (աշխատավորական կոլեկտիվի) մասնակցությամբ:

Ֆարց 2. Աշխատանքային իրավունքի սկզբունքները և գործառույթները

Աշխատանքային իրավունքի սկզբունքները գործող օրենսդրությամբ ամրագրված այն հիմնարար, ելակետային, ղեկավար դրույթներն են, որոնք արտահայտում են աշխատանքի շուկայի ու վարձու աշխատանքի կազմակերպման պետական կարգավորման քաղաքականությունը:

Իրավագիտության մեջ ընդունված է իրավական սկզբունքները բաժանել 3 խմբի՝ հիմնական կամ ընդհանուր (իրավունքի բոլոր ճյուղերի հիմքում գործող), միջճյուղային (իրավունքի մի քանի ճյուղերին բնորոշ) և ճյուղային (իրավունքի տվյալ ճյուղին բնորոշ):

Աշխատանքային իրավունքի ճյուղային սկզբունքներն արտահայտում են աշխատանքային իրավանորմերի ընդհանուր բովանդակային հատկանիշը, կոնկրետանուն և դրսևորվում են առանձին ինստիտուտներում ու նորմերում՝ ըստ նպատակային ուղղվածության և բովանդակության: Այս առումով, ՀՀ աշխատանքային իրավունքի սկզբունքները կարելի է բաժանել 4 հիմնական խմբերի.

- 1) պետության քաղաքականությունն աշխատաշուկայի և արդյունավետ զբաղվածության իրավական կարգավորման ոլորտում արտահայտող,
- 2) աշխատանքային պայմանների սահմանման գերակա դրույթները բովանդակող,
- 3) վարձու աշխատանքի կիրառման իրավական կարգավորումը սահմանող,
- 4) աշխատողների առողջության պահպանման և իրավունքների պաշտպանության ոլորտում իրավական քաղաքականության գլխավոր ուղղություններն արտացոլող:

Աշխատանքային իրավունքի հիմնական սկզբունքներն ամրագրված են ՀՀ սահմանադրությամբ և իրավունքի այդ ոլորտի կարևորագույն օրենսդրական ակտերով: ՀՀ սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության, յուրաքանչյուր աշխատող՝ արժանապատիվ և անվտանգ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի ու հանգստի, ամենամյա վճարովի արձակուրդի, իր տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով՝ գործադուլի, իսկ աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում՝ պաշտպանության իրավունք: Բացի այդ, արգելվում է մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելը, պարտադիր կամ հարկադիր աշխատանքը (հոդված 57, 58, 82):

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն ամրագրել է 10 կարևորագույն սկզբունքներ, որոնցում, բացի վերը նշված սահմանադրական սկզբունքներից, տեղ են գտել նաև հետևյալները.

- 1) աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարություն,
- 2) աշխատողների իրավունքների և հնարավորությունների հավասարություն,
- 3) աշխատանքային հարաբերությունների կայունություն,
- 4) կոլեկտիվ բանակցությունների ազատություն,
- 5) կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրի կողմերի պատասխանատվություն՝ ըստ իրենց պարտականությունների (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդված):

Իրավունքի ամեն մի ճյուղ որոշակի դեր և գործառույթներ ունի: Աշխատանքային իրավունքի հիմնական դերը կարգավորիչ և պաշտպանական է. աշխատանքի գործընթացի համար սահմանվում են այնպիսի կանոններ, որոնք համապատասխանում են աշխատանքի (արտադրության) խնդիրներին, պաշտպանում են աշխատողի աշխատանքը և ապահովում նրա աշխատանքի իրավունքի երաշխիքները:

Աշխատանքային իրավունքը կոչված է նպաստելու աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, կարգապահության ամրապնդմանը, աշխատանքի պայմանների և աշխատողների կենսապայմանների բարելավմանը:

Աշխատանքային իրավունքի գործառույթներն աշխատանքային իրավանորմների՝ մարդու վարքագծի (կամք, գիտակցություն) ներգործության հիմնական ուղղություններն են աշխատանքի ընթացքում:

Առանձնացնենք դրանցից առավել կարևորները՝ սոցիալական, պաշտպանական, տնտեսական (արտադրական) և դաստիարակչական:

Աշխատանքային իրավունքի սոցիալական գործառույթը դրսեվորվում է զբաղվածության ապահովման, աշխատանքի և սահմանադրական այլ աշխատանքային իրավունքների իրականացման ու երաշխիքների, աշխատանքի պաշտպանության ու անվտանգության ապահովման, աշխատաժամանակի սահմանափակման, աշխատավարձի ու հատուցումների սահմանման մեջ:

Աշխատանքային իրավունքի պաշտպանական գործառույթը ենթադրում է պատշաճ պայմանների ապահովում, աշխատանքային օրենսդրության նկատմամբ հսկողություն, կոլեկտիվ և անհատական վեճերի լուծման կարգ, աշխատողի խախտված իրավունքների վերականգնում: Հարկ է նկատել, որ այս սկզբունքը գործում է աշխատանքի իրավական կարգավորման բոլոր փուլերում (աշխատանքային իրավունքի նորմի ստեղծումից մինչև աշխատողի խախտված իրավունքի վերականգնում) և արտացոլված է աշխատանքային իրավունքի գրեթե բոլոր ինստիտուտների նորմերում:

Աշխատանքային իրավունքի տնտեսական (արտադրական) գործառույթն ուղղված է արտադրության արդյունավետության մակարդակի, արտադրանքի որակի բարձրացմանը, աշխատանքային ռեսուրսների (աշխատուժի) նպատակային օգտագործմանը, աշխատանքային կարգապահության ապահովմանը:

Աշխատանքային իրավունքի դաստիարակչական գործառույթը դրսևորվում է աշխատանքային կարգապահություն սահմանող իրավանորմներում՝ լավագույն աշխատանքի խրախուսման և աշխատանքային կարգապահության խախտման դեպքում՝ տույժերի, ինչպես նաև գործատուի կամ աշխատողի կողմից գույքային վնաս պատճառելու հետևանքով առաջացած նյութական պատասխանատվության կիրառմամբ:

Յարց 3. Աշխատանքային իրավունքի համակարգը և աղբյուրները

Աշխատանքային իրավունքի համակարգն իրավական կարգավորման առավել համասեռ առարկայի դասակարգված և որոշակի հաջորդականությամբ դասավորված աշխատանքային իրավանորմների խմբերի (իրավական ինստիտուտ, ենթաինստիտուտ) համակցությունն է: Աշխատանքային և դրա հետ սերտորեն կապված հարաբերությունները կարգավորող իրավանորմների էական ծավալը պահանջում է դրանց այնպիսի համակարգում, որը կհետազննի այդ նորմերի մեկնաբանումն ու կիրառումը:

Աշխատանքային իրավունքի համակարգն ըստ կառուցվածքի բաժանվում է երկու մասի՝ ընդհանուր և հատուկ: Առաջինն ընդգրկում է այն նորմերը (նորմ-դեֆինիցիա¹, նորմ-սկզբունք, նորմ-երաշխիք, նորմ-խնդիր և այլն), որոնք կարգավորում են աշխատանքի կազմակերպման և իրականացման ընդհանուր խնդիրները և սահմանում աշխատանքային իրավունքի առարկան, սկզբունքները, աղբյուրները, սուբյեկտները և նրանց կարգավիճակը, ձևավորում իրավական կարգավորման մեթոդը: Հատուկ մասի նորմերը կոնկրետացնում են ընդհանուր մասի դրույթները, կարգավորում աշխատանքային և դրանից բխող հարաբերությունների առանձին տեսակները (և դրանց տարրերը)՝ ձևավորելով իրավական ինստիտուտներ (իրավաբանական հատկանիշներով և բովանդակությամբ փոխկապակցված, այսինքն՝ համասեռ հարաբերություններ կարգավորող նորմերի խմբեր) և ենթաինստիտուտներ:

Աշխատանքային իրավունքի ճանաչված մասնագետ Վ. Ս. Լեբեդևը սահմանազատում է նաև աշխատանքային իրավունքի առանձնահատուկ (специальный) մաս՝ դրանում ներառելով տնտեսության առանձին ոլորտների աշխատանքի առանձնահատկությունները կարգավորող իրավական ինստիտուտները²:

Աշխատանքային իրավունքի համակարգը ընդգրկում է հետևյալ ինստիտուտները.

- 1) կոլեկտիվ պայմանագիր,
- 2) աշխատանքային պայմանագիր,
- 3) աշխատաժամանակ,
- 4) հանգստի ժամանակ,
- 5) աշխատանքի նորմավորում և վարձատրություն,
- 6) երաշխիքներ և փոխհատուցումներ,

¹ Լատ. (definitio)՝ երևույթի էական հատկանիշներով հասկացություն, հասկացության տրամաբանական բնորոշում:

² Лебедев В.М., Трудовое право: проблемы общей части, Минск, 1998, с. 41.

- 7) աշխատանքային կարգապահություն,
- 8) նյութական պատասխանատվություն,
- 9) աշխատանքի պաշտպանություն և աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողություն,
- 10) աշխատանքային վեճեր:

Այսպիսով՝ աշխատանքային իրավունքի համակարգն աշխատանքային իրավանորմերի գիտականորեն հիմնավորված դասակարգումն է ըստ կարգավորման առարկայական հատկանիշի:

Աշխատանքային իրավունքի համակարգը պետք է տարբերակել աշխատանքային օրենսդրության համակարգից: Աշխատանքային օրենսդրության համակարգը ներառում է նորմատիվ իրավական ակտեր, դրանց պրեամբուլաները (ներածական մաս), հոդվածներ, եզրափակիչ դրույթներ: Հետևաբար՝ աշխատանքային իրավունքի համակարգն արտահայտվում է աշխատանքային օրենսդրության մեջ, իսկ աշխատանքային օրենսդրությունը հանդես է գալիս որպես աշխատանքային իրավունքի աղբյուր:

Աշխատանքային իրավունքի աղբյուրներն աշխատանքային իրավանորմերի ամրագրման և արտահայտման ձևերն են: Այլ կերպ ասած, դրանք աշխատանքային իրավունքի առարկան կազմող աշխատանքային և այլ հասարակական հարաբերությունների կարգավորմանը կոչված՝ պետության իրավասու մարմինների (օրենսդիր, գործադիր) իրավաստեղծ գործունեության արդյունք են, այսինքն՝ նորմատիվ բովանդակությամբ ակտեր:

Աշխատանքային իրավունքի աղբյուրները հիմնականում դասակարգվում են ըստ իրավաբանական ուժի հատկանիշի, ինչպես նաև ըստ գործողության ոլորտի (ժամանակի մեջ, տարածքի վրա և ըստ անձանց շրջանակի): Աշխատանքային իրավանորմեր պարունակող իրավական ակտերը (օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր) տարածվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ծագած աշխատանքային հարաբերությունների վրա: Դրանց դրույթները ենթակա են կատարման բոլոր գործատուների (քաղաքացի, կազմակերպություն) համար՝ անկախ նրանց կազմակերպչիրավական ու սեփականության ձևից: Այդ ակտերի գործողությունը տարածվում է մինչ դրանց ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն տվյալ ակտերով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում: Հետադարձ ուժ չի կարող տրվել գործատուների կամ աշխատողների իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող, այսինքն՝ նրանց իրավական վիճակը վատթարացնող օրենքներին և այլ իրավական ակտերին:

Ըստ իրավաբանական ուժի հատկանիշի՝ աշխատանքային իրավունքի աղբյուրները բաժանվում են.

- ա) օրենքների, որոնք ունեն առավել մեծ իրավաբանական ուժ,
- բ) այլ իրավական ակտերի, որոնք բխում են օրենքներից և ընդունվում են ի կատարումն այդ օրենքների:

ՀՀ օրենքների մեջ ամենակարևոր տեղը պատկանում է երկրի հիմնական օրենքին՝ սահմանադրությանը, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ (հոդված 5) և ընթացիկ աշխատանքային օրենսդրության իրավաբանական հիմքն է: ՀՀ սահմանադրությամբ ամրագրված են մարդու և քաղաքացու իրավունքները, այդ թվում՝ աշխատանքի երաշխավորված վարձատրության, անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի, արհեստակցական միություններին անդամակցելու իրավունքները, աշխատանքի ընտրության ազատությունը, հարկադիր աշխատանքի արգելումը:

Աշխատանքային իրավունքի մյուս կարևոր աղբյուրը ՀՀ աշխատանքային օրենսգիրքն է, որը, որպես կողիֆիկացված (իրավունքի որևէ բնագավառ համակարգող միասնական օրենսդրական ակտ) օրենք, կարգավորում է աշխատանքային իրավունքի առարկայի կազմի մեջ մտնող հասարակական հարաբերությունների ողջ համալիրը:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (ընդունվել է 2004 թ., ուժի մեջ մտել՝ 2005 թ.) բաղկացած է 3 բաժնից (ընդհանուր դրույթներ, կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունները և անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորող իրավանորմներ), 24 գլխից, որոնք բովանդակում են 247 հոդված: Ընդհանուր դրույթները վերաբերում են աշխատանքային օրենսդրությանը, աշխատանքային հարաբերություններին, ներկայացուցչությանը և ժամկետներին, աշխատանքային իրավունքների պաշտպանությանը, կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունները կարգավորող իրավանորմները՝ սոցիալական գործընկերությանը, կոլեկտիվ աշխատանքային պայմանագրին և կոլեկտիվ վեճերի կարգավորմանը, իսկ անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորող իրավանորմները՝ աշխատանքային պայմանագրին, աշխատողի անձնական տվյալների պաշտպանությանը, աշխատաժամանակին, հանգստի ժամանակին, աշխատավարձին, երաշխիքներին ու հատուցումներին, աշխատանքային կարգապահությանը, նյութական պատասխանատվությանը, աշխատանքի պաշտպանությանը և աշխատանքային վեճերին:

Աշխատանքային իրավունքի աղբյուրներ են նաև աշխատանքային հարաբերություններ կարգավորող այլ օրենքներ, ինչպես նաև ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ Կառավարության որոշումները,

գերատեսչական, ինչպես նաև լոկալ (կոլեկտիվ պայմանագիր) իրավական ակտերը:

Կոլեկտիվ պայմանագիրը աշխատողների և գործատուի միջև կնքված և սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորող յուրահատուկ իրավական ակտ է, ուստի հանդիսանում է տվյալ կազմակերպության վարձու աշխատողների և գործատուի հարաբերությունների կարգավորիչ, յուրօրինակ աշխատանքային կոդեքս (codex¹), որի դրույթները նպատակաուղղվում են աշխատանքային պայմանների ինքնուրույն համակարգերի կազմակերպմանն ու աշխատանքի պատշաճ իրականացմանը՝ անկախ կազմակերպության սեփականության ձևից, կազմակերպաիրավական եղանակից, գերատեսչական ենթակայությունից, աշխատողների թվաքանակից:

Կոլեկտիվ պայմանագիրը, որպես նորմատիվ իրավական ակտ, աշխատանքային իրավունքի աղբյուրների համակարգում զբաղեցնում է առանձնահատուկ տեղ. նրա՝ գործող օրենսդրությունից բխող դրույթներն ու պայմանները պարտադիր են տվյալ կազմակերպության բոլոր աշխատողների և գործատուի համար:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- յուրացնել աշխատանքային իրավունքի առարկան և գործառույթները,
- տարանջատել բուն աշխատանքային և աշխատանքի կազմակերպման հարաբերությունները, դրանց առանձնահատկությունները,
- հասկանալ աշխատանքային հարաբերությունների բարդ (համալիր իրավունքների և դրանց համապատասխան պարտականությունների) բնույթը:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է աշխատանքային իրավունքը, ո՞րն է դրա նշանակությունը ՀՀ իրավունքի համակարգում:
- Ի՞նչ դեր է իրականացնում աշխատանքային իրավունքը պետության տնտեսական գործունեության մեջ:
- Որո՞նք են աշխատանքային իրավահարաբերությունների առանձնահատկությունները:

¹ Լատ.՝ գիրք, համակարգված միասնական իրավական ակտ, նորմերի ու կանոնների համախումբ:

ԹԵՄԱ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

Չարց 1. Աշխատանքային իրավունքի սուբյեկտի հասկացությունը

Իրավաբանական գրականության մեջ «սուբյեկտ» հասկացությունը ենթադրում է հասարակական հարաբերության այնպիսի մասնակիցներ, որոնք գործող օրենքով ճանաչվում են սուբյեկտիվ իրավունքների և համապատասխան պարտականությունների կրողներ:

Աշխատանքային իրավունքի սուբյեկտներ են աշխատանքային իրավանորմերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ աշխատունակ քաղաքացիները (աշխատողներ), կազմակերպությունները (գործատուներ), աշխատանքային կոլեկտիվները, արհեստակցական միությունները և աշխատողների շահերը ներկայացնող այլ մարմիններ: Աշխատանքային իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակի բովանդակությունը ներառում է հետևյալ տարրերը.

- 1) աշխատանքային իրավունք և սուբյեկտի գործունակություն (իրավասուբյեկտություն),
- 2) օրենսդրորեն ամրապնդված իրավունքներ և պարտականություններ,
- 3) այդ իրավունքների (պարտականությունների) երաշխիքներ,
- 4) սուբյեկտի պարտականությունների պատշաճ կատարման պատասխանատվություն:

Աշխատանքային իրավասուբյեկտությունը, որպես յուրահատուկ և կարևոր հատկանիշ, ցույց է տալիս, որ օրենքով սահմանված պայմանների (որոշակի տարիք՝ քաղաքացու համար, զույքային և գործառնական ինքնուրույնություն՝ կազմակերպության համար, կազմակերպչական նախադրյալ՝ աշխատողների կոլեկտիվի համար) առկայությամբ միայն քաղաքացին, կազմակերպությունը, աշխատողների կոլեկտիվը կարող են լինել աշխատանքի ոլորտի կոնկրետ իրավահարաբերության սուբյեկտ: Բացի դրանից, աշխատանքային իրավասուբյեկտությունը ենթադրում է (նշանակում է) քաղաքացու, կազմակերպության, աշխատողների կոլեկտիվի ունակություն՝ իրենց գործողություններով ձեռք բերելու սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ: Վերջիններս էլ հենց կազմում են աշխատանքային իրավունքի սուբյեկտի կարգավիճակի միջուկը: Սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների բնույթով պայմանավորված՝ տարբերվում է իրավական կարգավիճակի երկու տեսակ՝ ընդհանուր ու հատուկ, որոնցից առաջինն իրա-

վունքներ և պարտականություններ է նախատեսում բոլոր սուբյեկտների համար, իսկ երկրորդն ընդհանուր իրավական կարգավիճակի դրսևորումն է սուբյեկտների ներտեսակային առանձնահատկությունների համապատասխանությամբ: Այլ խոսքով՝ աշխատողի աշխատանքային-իրավական հատուկ կարգավիճակի բովանդակությունը, որ ներառում է այս կամ այն մասնագիտության, մասնագիտացման, պաշտոնի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, սահմանվում է համապատասխան նորմատիվ ակտերով:

Չարք 2. Քաղաքացին (աշխատողը) որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ

Քաղաքացիներն աշխատանքային իրավունքի կարևոր (մեծաթիվ) սուբյեկտներ են, քանի որ աշխատանքի ոլորտում հենց իրենք են իրացնում իրենց աշխատանքն ու մասնագիտական ունակությունները, ձեռնարկատիրական, ստեղծագործական, արտադրողական ու կազմակերպչական հմտությունները: Օրենսդրությունը քաղաքացուն աշխատանքային իրավունքի սուբյեկտ է համարում ոչ թե աշխատանքի փաստացի կատարման, այլ աշխատանքի (որպես իրավական կատեգորիայի) ունակության (աշխատանքային իրավունակության) դրսևորման պահից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիների աշխատանքային իրավունակությունը և գործունակությունը. «Աշխատանքային իրավունքներ և պարտականություններ կրելու ունակությունը (աշխատանքային իրավունակություն) և իր գործողություններով աշխատանքային իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար աշխատանքային պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (աշխատանքային գործունակություն) լրիվ ծավալով ծագում է տասնվեց տարեկան դառնալու պահից»: Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողի կարգավիճակը նախատեսող նորմ-դեֆինիցիայի (հոդված 17), այսինքն՝ հասկացության տրամաբանական սահմանումն այսպիսին է. «Աշխատողը սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի: Աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող 14-16 տարե-

կան անձինք: 14-16 տարեկանները կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում»:

Ինչպես երևում է այս դրույթներից, գործող օրենսդրությամբ աշխատանքային իրավունակությունը սահմանվում է քաղաքացու 16 տարին լրանալու (համակարգված և նորմավորված շարունակական աշխատանքի կատարման ունակություն ձեռք բերելու) պահից:

Քաղաքացու աշխատանքային իրավունակությունը, տարիքի չափանիշից բացի, բնութագրվում է նաև նրա առողջական վիճակով (դատարանի կողմից անգործունակ ճանաչված քաղաքացին չի կարող լինել աշխատանքային իրավունքի սուբյեկտ, հաշմանդամ քաղաքացին կարող է լինել մասնակի աշխատունակ) և կամային հատկանիշով (պետական ծառայության անցնելու, օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և այլն) :

Ինքնին ենթադրվում է, որ, ի տարբերություն վարձու աշխատողի, ձեռնարկատեր-գործատուի տարիքին ներկայացվող պահանջն ավելի խիստ (մեծ) պետք է լինի: ՀՀ աշխատանքային գործող օրենսդրությունը չի կարգավորում քաղաքացի-գործատուի նվազագույն տարիքի խնդիրը: Մեր կարծիքով, օրենսդրական այդ բացը ճիշտ կլինի լրացնել՝ ընդունելի համարելով քաղաքացու չափահաս դառնալու, այսինքն՝ լրիվ գործունակության տարիքը և այն չընկալելով որպես հակասություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածով նախատեսվող՝ էմանսիպացիա (անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը) սահմանող դրույթին, քանի որ այդ հոդվածում նշվում է «ձեռնարկատիրական գործունեություն» ընդհանրական հասկացությունը, մինչդեռ խոսքը ձեռնակատեր-գործատուի մասին է:

Ֆարց 3. Կազմակերպությունը (գործատուն) որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ

Կազմակերպությունները (իրավաբանական անձինք) աշխատանքային իրավունքում որպես սուբյեկտ հանդես են գալիս գործատուի դերում՝ աշխատանքային, կառավարման, առանձին դեպքերում՝ նաև ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված: Նշված գործունեության, ինչպես նաև քաղաքացիներին աշխատանք առաջարկելու, կազմակերպելու և վարձատրելու համար կազմակերպությունները պետք է օժտված լինեն աշխատանքային իրավունակությամբ, որի բովանդակությունը պայմանավորվում է հիմնադիր փաստաթղթերով սահմանված խնդիրներով ու նպատակներով:

Կազմակերպություններն օժտված են համալիր իրավասուբյեկտությամբ: Նրանք հանդես են գալիս և՛ քաղաքացիական, և՛ վարչական, և՛ այլ իրավահարաբերություններում, միաժամանակ, որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ, ունեն աշխատանքային իրավունակություն, քանի որ նրանց գործունեության բովանդակությունը աշխատանքի կազմակերպումն ու իրականացումն է:

Կազմակերպությունները հիմնադրվում են սեփականության տարբեր ձևերի հիման վրա, ստեղծման (պետական գրանցման) պահից ձեռք են բերում աշխատանքային իրավունակություն ու գործունակություն (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 16-րդ հոդված), այսինքն՝ իրավասուբյեկտություն և հանդես են գալիս որպես գործատու: Իրավասուբյեկտությունը սահմանվում է երկու չափանիշով՝ գործառնական և գույքային: Գործառնական չափանիշը կազմակերպությանը բնութագրում է որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտի՝ կադրերի ընտրության, տեղավորման, նրանց աշխատանքի և դրա իրականացմանն անհրաժեշտ պայմանների ապահովման հնարավորությամբ, իսկ գույքայինը՝ աշխատողներին վարձատրելու կազմակերպության հնարավորությունն է (աշխատավարձի ֆոնդ):

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը չի սահմանում «կազմակերպություն-գործատու» բնորոշումը, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքում առկա է միայն «գործատու» հասկացությունը: Այսպես՝ «Գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը:

Գործատուն կարող է լինել աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից և տեսակից, և ֆիզիկական անձը» (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդված):

Նշված հոդվածի մեկնաբանությամբ՝ «գործատու-կազմակերպություն» հասկացությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. «Գործատու կազմակերպությունն ինքնուրույն տնտեսավարող այն սուբյեկտն է, որը օրենքով սահմանված կարգով ստեղծվում է աշխատողներին հավաքագրելու, արտադրանք թողարկելու, աշխատանք կատարելու և ծառայություններ մատուցելու՝ հանրային պահանջարկների ապահովման նպատակով»:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- գաղափար կազմել աշխատանքային իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակի բովանդակության տարրերի մասին,
- տարբերակել գործատուի, աշխատողի և աշխատողների կոլեկտիվի՝ որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտների կարգավիճակի առանձնահատկությունները:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է աշխատանքային իրավասուբյեկտությունը:
- Ի՞նչ դեր ունեն իրավունքը և պարտականությունը գործատուի և աշխատողի՝ որպես աշխատանքային հարաբերությունների կողմերի համար:
- Որո՞նք են գործատուի և աշխատողի ներկայացուցիչների լիազորությունները:

ԹԵՄԱ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Չարց 1. Աշխատանքային պայմանագրի հասկացությունը

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածում առկա է աշխատանքային պայմանագրի հետևյալ բնորոշումը. «Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել ՀՀ օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ»:

Օրենսդրական ցանկացած բնորոշում աշխատանքային պայմանագրի բովանդակությունն ու դերը ներկայացնում է առավել սեղմ ու ընդհանրական՝ պաշտոնական (officialis)¹, գիտական (doctrina)² մեկնաբանությունները վերապահելով իրավասու այլ սուբյեկտների:

Աշխատանքային իրավունքի գիտությունն աշխատանքային պայմանագիրը քննության է առնում տարբեր տեսանկյուններից:

Մեր շարադրանքում առավել կարևորում ենք աշխատանքային պայմանագրի հասկացության պարզաբանումը հետևյալ 3 առումով.

- 1) աշխատանքային պայմանագիրը որպես աշխատանքի իրավունքի իրականացման ձև,
- 2) աշխատանքային պայմանագիրը որպես աշխատանքային հարաբերությունների ծագման և իրականացման հիմք,
- 3) աշխատանքային պայմանագիրը որպես իրավական ինստիտուտ, որը ներառում է մարդու՝ աշխատանքի ընդունման, փոխադրման ու ազատման գործընթացները կարգավորող իրավանորմերը:

Աշխատանքի շուկան հիմնականում ձևավորվում է փոխադարձ կամքի դրսևորման հիմքի վրա. այստեղ ապագա աշխատողը փնտրում է ձեռնտու աշխատանք, իսկ գործատուն ունի այդպիսի աշխատանք առաջարկելու հնարավորություն: Աշխատանքի սահ-

¹ Լատ.՝ կառավարական, պաշտոնական, ծառայողական:

² Լատ.՝ գիտական տեսություն, ուսմունք:

մանադրական իրավունքը մարդը կարող է իրականացնել տարբեր ձևերով՝ կնքելով աշխատանքային պայմանագիր, անցնելով պետական ծառայության, անդամագրվելով ընկերությունների, ընկերակցությունների ու միությունների, ինչպես նաև անհատական աշխատանքային գործունեությամբ:

Աշխատանքի իրավունքի իրականացումը մի դեպքում՝ կախված է այլ անձի (գործատուի) կամքից, երկրորդ դեպքում՝ պահանջում է ևս մեկ իրավաբանական փաստ (պաշտոնի նշանակում, մրցույթով ընտրություն), իսկ երրորդ դեպքում՝ ամբողջությամբ պայմանավորված է մարդու ցանկությամբ: Այսուհանդերձ, կարելի է ընդգծել, որ մարդու աշխատանքի իրավունքի իրացման գլխավոր ձևը աշխատանքային պայմանագիրն է, քանի որ դա առավելապես համապատասխանում է վարձու աշխատանքի վրա հիմնված շուկայական աշխատանքային հարաբերություններին:

Աշխատանքային պայմանագիրը, որպես աշխատանքային հարաբերությունների ծագման և ժամանակի մեջ դրանց գոյության հիմք, յուրահատուկ կարգավորիչ դեր է կատարում՝ կոնկրետացնելով և՛ աշխատանքի անցնողի, և՛ գործատուի իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ, հենց աշխատանքային պայմանագրով է աշխատողն ընդգրկվում կոլեկտիվի կազմում, և դրա գործողությամբ են նրա վրա տարածվում աշխատանքային օրենսդրության և տվյալ կազմակերպության ներքին իրավական ակտերի դրույթները: Աշխատանքային պայմանագիրը, բացի կարգավորիչից, ունի նաև սոցիալական, արտադրական-տնտեսական և իրավական գործառույթներ:

Այսպես՝ սոցիալական նշանակությունն արտահայտվում է աշխատանքի ազատության և զբաղվածության ապահովման իրացմամբ, արտադրական-տնտեսականը՝ աշխատուժի և աշխատանքային միջոցների ներգրավմամբ, բաշխմամբ, ինչպես նաև արդյունավետ օգտագործմամբ (գործատուն շուկայական տնտեսության պայմաններում աշխատանքային պայմանագիր է կնքում իրեն անհրաժեշտ, իր նախընտրած աշխատողների հետ):

Ինչ վերաբերում է իրավական նշանակությանը, ապա պետք է նշել, որ աշխատանքային պայմանագիրն աշխատանքային հարաբերությունների ծագման ու գոյության, հետևաբար՝ աշխատողի և գործատուի իրավական կապի հիմքն է: Աշխատանքային պայմանագրի կնքմամբ կողմերը ձեռք են բերում իրավունքներ և պարտականություններ, այսինքն՝ պայմանագիրը դառնում է աշխատողի (նաև գործատուի) նկատմամբ աշխատանքային օրենսդրության պահանջների կիրառման հիմք:

Թեպետ «աշխատանքային պայմանագիր» և «աշխատանքային հարաբերություններ» հասկացությունները փոխկապակցված են, սակայն դրանք պետք է տարբերակել. առաջինը համաձայնություն է, իսկ երկրորդը՝ այդ համաձայնությունն առաջացնող՝ աշխատողի և գործատուի կամավոր բնույթի իրավաբանական կապ:

Աշխատանքային պայմանագիրը Մ. Սնդեհսկին համարում է «անձնական բնույթի պայմանագիր», քանի որ աշխատողն աշխատանքի ընդհանուր շուկայում անձամբ է կատարում իր աշխատանքը, և դա չի կարող իրականացնել այլ անձի միջոցով:

Աշխատանքային պայմանագրի օրենսդրական բնորոշմանն անդրադառնալու ևս մեկ նպատակով, այն է՝ տարբերակել այդ պայմանագիրը քաղաքացիաիրավական այն պայմանագրերից, որոնց կատարումը նույնպես պայմանավորված է աշխատանքային գործունեությամբ: Այս տարբերակումն ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ միայն աշխատանքային պայմանագրով սահմանված և աշխատանքի անցած բանվորի կամ ծառայողի կատարած աշխատանքն է գործատուն գրանցում որպես աշխատանքային ստաժ, ինչպես նաև առաջացնում ամենամյա վճարովի արձակուրդի և այլ երաշխիքների իրավունք: Այս իմաստով, աշխատանքային պայմանագրի բնորոշման հիմնական կառուցվածքային տարրը պայմանագրի կողմերի մատնանշումն է, որից էլ բխում է մյուս տարրը՝ այդ կողմերի պարտականությունների շրջանակի (ցանկի) սահմանումը:

Բանվորի կամ ծառայողի՝ աշխատանքային պայմանագրով ստանձնած առանձնահատուկ պարտականությունն աշխատանքի՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման, պաշտոնի կատարումն է՝ պայմանավորված աշխատանքային ներքին կարգուկանոնով: Սա աշխատանքային պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագրերից սահմանազատելու կարևոր չափանիշ է: Խոսքը վերաբերում է հատկապես կապալի, հանձնարարության, հեղինակային և գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերին, որոնք, ըստ էության, որոշակի աշխատանքային համաձայնություններ են՝ կատարելու աշխատանքային հանձնարարություն, պատվեր կամ խնդիր:

Քաղաքացիաիրավական պայմանագրերից հատկապես կապալի պայմանագիրն ավելի շատ նմանություններ ունի աշխատանքային պայմանագրին, ուստի փորձենք ներկայացնել, թե ինչով են դրանք առանձնանում:

¹ Смоленский М., Трудовое право РФ, М., 2012, с. 132.

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700-րդ հոդվածի՝ «Կապալի պայմանագրով մի կողմը՝ կապալառու, պարտավորվում է մյուս կողմի՝ պատվիրատուի առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք (պատրաստել կամ մշակել գույք, ստեղծել նյութական նոր բարիք) և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար»:

Հանձնատելով կապալի և աշխատանքային պայմանագրերի օրենսդրական բնորոշումներն ու բովանդակության էական պայմանները՝ կարելի է նկատել հետևյալը.

1) Աշխատողի՝ աշխատանքային պայմանագրից բխող պարտականություններն ունեն խիստ անձնական բնույթ (աշխատողն աշխատանքը կատարում է անձամբ), ուստի դա չի վերահանձնարարվում այլ անձի: Մինչդեռ կապալառուն պատվիրված աշխատանքը կարող է կատարել անձամբ կամ այլ անձի միջոցով (մասնակցությամբ)՝ կնքելով ենթակապալի պայմանագիր:

2) Աշխատողն աշխատանքային պայմանագրով պարտավորվում է կատարել որոշակի աշխատանքային գործառույթ, այսինքն՝ տվյալ մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի աշխատանքի բոլոր տեսակները, ընդ որում, շարունակական (անգամ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում)՝ դառնալով տվյալ աշխատողների կոլեկտիվի անդամը: Կապալառուի աշխատանքն ավարտվում է՝ պատվերը կատարելով, իսկ պարտականությունը դադարում է՝ աշխատանքի արդյունքը հանձնելով:

3) Աշխատողի աշխատանքային գործառույթի կատարման պայմանը ներառում է նաև գործատուի ներքին կարգուկանոնին ենթարկվելու պարտականությունը: Բացի այդ, աշխատողն իր աշխատանքային պարտականությունները (կենդանի աշխատանքը) իրականացնում է սահմանված աշխատատեղում և գործատուի հսկողությամբ, մինչդեռ կապալառուն պատվերը կատարում է ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում (տանը, արհեստանոցում) և առանց հսկողության:

4) Աշխատողը, որպես կանոն (բացի տնայնագործությունից), իր աշխատանքային գործառույթներն իրականացնում է գործատուի աշխատանքային միջոցներով (ըստ պայմանագրի՝ նաև սեփական հումքով և նյութերով):

5) Աշխատողի աշխատանքային պարտականությունը (պայմանագրի առարկան) կարող է լինել և՛ աշխատանքային գործընթացը, և՛ դրա առարկայացված արդյունքը, մինչդեռ կապալի աշխատանք

քը ենթադրում է առարկայացված արդյունք (նոր կամ վերանշակված գույք), որը պետք է փոխանցվի պատվիրատուին:

6) Աշխատողն իր պարտականությունները (աշխատանքը) կատարում է գործատուի սահմանած նորմերով (կանոններով), կարգով ու եղանակներով, իսկ կապալառուն ինքնուրույն է որոշում պատվիրատուի առաջադրանքը կատարելու եղանակները: Բացի այդ, գործատուն պարտավոր է կազմակերպել աշխատողի աշխատանքի կատարումը, ապահովել նրան անհրաժեշտ (այդ թվում՝ անվտանգ աշխատանքի) բոլոր պայմաններով:

7) Աշխատանքային օրենսդրությունը սահմանում է երաշխավորված վարձատրություն (աշխատողը վարձատրվում է փաստացի կատարած աշխատանքին համապատասխան), մինչդեռ քաղաքացիական օրենսդրությունը կապալառուին պարտավորեցնում է սեփական ռիսկով առաջադրանքի կատարում, որը ենթադրում է, որ աշխատանքի բացասական արդյունքի դեպքում կապալառուն ոչ միայն չի վարձատրվում պատվիրատուի կողմից, այլև ինքն է գույքային պատասխանատվություն կրում նրա առջև:

8) Աշխատանքային պայմանագիրն աշխատողի համար առաջացնում է սոցիալ-իրավական այլ իրավունքներ, այսինքն՝ աշխատանքային ստաժ, աշխատանքային կենսաթոշակի, նպաստի ու այլ վճարումների երաշխիք: Կապալառուն այդ իրավունքներից չի օգտվում:

Ֆարց 2. Աշխատանքային պայմանագրի բովանդակությունը և կնքման կարգը

Աշխատանքային օրենսդրությամբ և կոլեկտիվ պայմանագրերով սահմանված աշխատանքի պայմանները ենթակա չեն աշխատանքային պայմանագրի կողմերի մշակմանն ու համաձայնեցմանը: Սակայն գործատուի՝ այդ պայմաններն ապահովելու կոնկրետ պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով: Շուկայական տնտեսավարման պայմաններում աշխատանքային պայմանագրի բովանդակությունը կազմող պայմանները սահմանվում են դրա կողմերի փոխհամաձայնությամբ: Այդ պայմանների տարատեսակությունն ու դերը հաշվի առնելով՝ աշխատանքային իրավունքի գիտությունը դրանք դասակարգում է երկու խմբում՝ պարտադիր կամ էական պայմաններ, առանց որոնց աշխատանքային պայմանագիրը չի կարող կնքված համարվել, և լրացուցիչ պայմաններ, որոնք պայմանագրում ընդգրկվում են կողմերի հայեցողությամբ և ըստ անհրաժեշտության:

Աշխատանքային պայմանագիրը պետք է տարբերակել աշխատանքի ընդունման իրավական ակտից: Բանվորին կամ ծառայողին աշխատանքի ընդունելը ձևակերպվում է աշխատանքի ընդունման անհատական իրավական ակտով (իրաման, կարգադրություն): Վերջինս, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը պետք է բովանդակեն.

- անհատական ակտն ընդունելու և աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,
- աշխատողի և կազմակերպության (գործատուի, այդ թվում՝ ֆիզիկական անձի) իրավաբանական տվյալները,
- կառուցվածքային ստորաբաժանումը կամ աշխատատեղը,
- աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- աշխատանքային գործառույթը (պաշտոնը),
- աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը, ինչպես նաև հավելավճարները, հավելումները, լրավճարները,
- անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը,
- փորձաշրջանի տևողությունը և պայմանները՝ դա սահմանելու դեպքում,
- աշխատաժամանակի ռեժիմը (աշխատաժամանակի նորմալ կամ կրճատ տևողություն, ոչ լրիվ աշխատաժամանակ),
- ամենամյա արձակուրդի տեսակը (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և տևողությունը,
- իրավական ակտը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը:

Աշխատանքային պայմանագրի լրացուցիչ պայմաններ կարող են լինել աշխատանքի ընդունման փորձաշրջանը, կազմակերպության գաղտնիք համարվող տեղեկատվության չիրապարակումը, երկրորդ մասնագիտության ձեռքբերումը, բնակտարածքով ապահովումը, աշխատավարձի կանխավճարային վարձատրությունը, տրանսպորտային փոխադրման և սոցիալ-տնտեսական աջակցության այլ միջոցներով ապահովումը, սոցիալական ապահովագրությունը, գործատուի գործուղմամբ (հաշվին) սովորել-ավարտելուց հետո սահմանված տևողությամբ աշխատանքային պարտականությունների (պայմանագրի) կատարումը և այլն: Աշխատանքային պարտականությունների հետ կապված՝ հարկ է ընդգծել մի կարևոր հանգամանք. եթե աշխատողի համար աշխատանքային պայմանագրով սահմանվում են աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված պայմանների համեմատությամբ վատթար պայմաններ, ապա դրանք համարվում են անվավեր:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-93-րդ հոդվածները սահմանում են աշխատանքային պայմանագրի կնքման կարգը, ձևը, նախադրյալները, անհրաժեշտ փաստաթղթերը և այլ պահանջներ: Աշխատանքային պայմանագիրը կնքվում է աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ 2 օրինակից, բայց մեկ միասնական փաստաթուղթ կազմելու և կողմերի ստորագրությամբ վավերացնելու միջոցով: Աշխատանքային պայմանագիր կնքելու համար գործատուն աշխատանքի անցնողից պահանջում է անձը հաստատող և վերջին զբաղմունքի մասին փաստաթղթեր: Բացի այդ, գործատուն իրավունք ունի պահանջելու կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե տվյալ աշխատանքի համար պարտադիր է կրթական ու մասնագիտական պատրաստվածությունը, փաստաթուղթ (սանիտարական գրքույկ) առողջական վիճակի մասին, եթե տվյալ աշխատանքի կատարման համար պարտադիր է բժշկական զննությունը կամ եթե աշխատանքի է ընդունվում անչափահասը: 14-16 տարեկաններին աշխատանքի ընդունելիս պահանջվում է նաև նրանց օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությունը:

Աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ օրենսդիրը սահմանում է ևս երկու կարևոր դրույթներ. գործատուին արգելվում է պահանջել այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով, իսկ աշխատողին իրավունք է վերապահվում սեփական նախաձեռնությամբ ներկայացնելու նախկին աշխատավայրում իրեն բնութագրող, ինչպես նաև իր մասնագիտական պատրաստվածության և որակավորման մասին վկայող փաստաթղթեր:

Աշխատանքային պայմանագրի կնքման նախադրյալների հետ կապված՝ նշենք նաև, որ օրենսդիրը գործատուին պարտավորեցնում է աշխատանքի ընդունվողին աշխատանքի անցնելուց առաջ պատշաճ կերպով ծանոթացնել աշխատանքային պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին, ներքին կարգապահական կանոններին և նրա աշխատանքը կարգավորող այլ իրավական ակտերի:

Գործատուն իրավունք ունի թափուր աշխատատեղերը համալրելու առանց մրցույթի կամ իր կազմակերպած մրցույթով կամ էլ օգտվել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների ծառայություններից: Ինչպես որոշակի պաշտոնների, այնպես էլ հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանքների համար գործատուն սահմանում է որակավորման քննություններ: Գործատուն, նաև աշխատանքի անցնողը, փոխադարձ համաձայնությամբ, կարող են սահմանել աշխատանքի ընդունման փորձաշրջան՝ 3 ամսից ոչ ավելի (ՀՀ օրենսդրությամբ

սահմանված դեպքերում՝ 6 ամիս)¹ ժամկետով, որի ընթացքում աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են օրենքով, մյուս իրավական ակտերով և կոլեկտիվ ու աշխատանքային պայմանագրերով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածը փորձաշրջանի կիրառումն արգելում է, եթե աշխատանքի են ընդունվում անչափահասները, ընտրովի պաշտոն զբաղեցնողները, պաշտոնի նշանակման համար որակավորման քննություններ հանձնողները և գործատուների փոխադարձ համաձայնությամբ այլ աշխատանքի փոխադրվողները:

Մեր կարծիքով՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը նշված ցանկում պետք է ներառեր նաև կազմակերպության ներսում այլ աշխատանքի փոխադրվողին, քանի որ, ըստ օրենքի, փորձաշրջան սահմանվում է աշխատանքի ընդունվողի համար:

Հավելենք, որ մի շարք երկրների, այդ թվում՝ ՌԴ աշխատանքային օրենսդրությամբ աշխատանքի ընդունման փորձաշրջան չի սահմանվում նաև հղի, մինչև 1,5 տարեկան երեխա ունեցող կանանց և մինչև 2 ամիս ժամկետով աշխատանքային պայմանագրով աշխատանքի անցնողի նկատմամբ:

¹ Ծանոթություն: Քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (հոդված 91) միայն նախատեսում է. «...փորձաշրջանի մասին պայմանները պետք է սահմանվեն աշխատանքային պայմանագրով» և նշում փորձաշրջանի չկիրառման հիմքերը, ուստի հարկ ենք համարում անդրադառնալ ՌԴ աշխատանքային օրենսդրությամբ քննարկվող խնդրին վերաբերող պարզաբանումներին: Առաջին հերթին, ընդգծենք, որ, ըստ ՌԴ աշխատանքային օրենսդրության, փորձաշրջանի մասին պայմանը պետք է սահմանվի և՛ աշխատանքային պայմանագրով, և՛ աշխատանքի ընդունման իրավական ակտով: Ավելին, եթե այդ ակտով փորձաշրջանի կանխապայմանը մատնանշվել է որպես աշխատանքային պայմանագրի դադարեցման լրացուցիչ հիմք, սակայն գործատուն չի ապահովել այդ մասին աշխատանքի ընդունվողին ստորագրությամբ ծանոթացնելու պարտականությունը, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է առանց փորձաշրջանի կնքված: Փորձաշրջանն առկա չէ նաև այն դեպքում, երբ աշխատանքի ընդունման իրավական ակտով փորձաշրջանը սահմանվել է, բայց այն չի սահմանվել աշխատանքային պայմանագրով: Վերջինիս հետ կապված՝ ՌԴ աշխատանքային օրենսդրությունն ունի ևս մեկ կարևոր պարզաբանում. եթե աշխատողը փաստացի անցել է աշխատանքի առանց աշխատանքային պայմանագրի ձևակերպման, ապա փորձաշրջանի կիրառման մասին պայմանը առկա կարող է համարվել միայն այն դեպքում, երբ փորձաշրջանի վերաբերյալ մինչ աշխատանքի անցնելը գործատուն ու աշխատանքի անցնողը կնքել են առանձին գրավոր համաձայնություն: Բացի դրանից, փորձաշրջանի պայմանը պայմանավորվում է անվավեր, եթե դա կիրառվել է այն անձանց նկատմամբ, որոնք ենթակա չեն փորձաշրջանի, այսինքն՝ օրենքի պահանջների խախտմամբ (Комментарий КЗОТ, М., 1998, с. 40, О. Смирнов, Трудовое право, М., 2008, с. 205, М. Смоленский, Трудовое право РФ, 2017, с. 145, Л. Гейхман, Трудовое право, М., 2012, с. 192-193):

Յարդ 3. Աշխատանքային պայմանագրի տեսակները

Աշխատանքային օրենսդրությունը նախատեսում է աշխատանքային պայմանագրերի որոշակի հատկանիշներ, որոնք այդ պայմանագրերի առանձին տեսակների դասակարգման հիմքն են: Այդպիսի հատկանիշներ են պայմանագրի ժամկետը, հատուկ բովանդակությունը (կապված պաշտոնի, մասնագիտության, պետական ծառայության հետ), կնքման կարգը: Ժամկետի հատկանիշով դասակարգվող աշխատանքային պայմանագրերը 2 տեսակի են՝ անորոշ ժամկետով և որոշակի ժամկետով: Առաջին դեպքում աշխատանքային պայմանագրում պայմանագրի գործողության ժամկետը նշված չէ, հետևաբար՝ դա ենթադրում է որևէ ժամկետով չսահմանափակվող մշտական աշխատանք: Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքվում է, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը և կատարման պայմանները, ուստի նշվում է միայն պայմանագրի գործողության ժամկետը՝ սահմանելով կա՛մ որոշակի ժամանակահատված, կա՛մ օրացուցային ժամկետ, կա՛մ նախատեսվող աշխատանքի ավարտը*:

Ժամկետային աշխատանքային պայմանագիրն ունի ևս մի առանձնահատկություն. գործատուին հնարավորություն է տալիս դադարեցնելու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները պայմանագրի ժամկետի ավարտի հիման վրա՝ առանց այլ լրացուցիչ պատճառի: Բացի այդ, որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրը գործատուին ձեռնտու է ոչ միայն այն լուծելու հեշտ տարբերակի, այլև արձակման նպաստ վճարելու պարտականությունից ազատ լինելու առումով:

Օրենսդիրը, հիմք ընդունելով որոշակի աշխատանքների բնույթի և կատարման պայմանների առանձնահատկությունները, այդ աշխատանքների իրականացման համար սահմանում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերի կնքում (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդված): Այդպիսի պայմանագիր կնքվում է.

- 1) ընտրովի պաշտոնում աշխատողի հետ՝ ընտրված ժամանակահատվածով,
- 2) համատեղությամբ աշխատանք կատարողի հետ,

* Կարծում ենք՝ աշխատողի շահերի պաշտպանությունը կարևորող առավել ճիշտ սկզբունք է կիրառում ՌԴ աշխատանքային օրենսդրությունը՝ գործատուին պարտավորեցնելով աշխատանքային պայմանագիրը որոշակի ժամկետով կնքելիս դրանում նշել հիմնավորումը: Ավելին, վերջինիս բացակայության պարագայում պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

- 3) սեզոնային աշխատանքներ կատարողի հետ,
- 4) ժամանակավոր (մինչև 2 ամիս ժամկետով) աշխատանքներ կատարողի հետ,
- 5) ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինողի հետ,
- 6) օտարերկրացու հետ՝ աշխատանքի թույլտվության կամ նրա կացության իրավունքի ժամկետով,
- 7) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող և 63 տարին լրացած կամ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող և 65 տարին լրացած անձանց հետ գործատուի կողմից առաջարկվող պաշտոնում կամ աշխատանքում՝ անձի մասնագիտական ունակությունների գնահատման հիման վրա:

Ընտրովի պաշտոնների ցանկը և ընտրությունների անցկացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և տվյալ կազմակերպության կանոնադրությամբ: Որպես կանոն, ընտրովի պաշտոններով աշխատանքների համար սահմանվում է մինչև 5 տարի ժամկետ, առանձին դեպքերում (մարդու իրավունքների պաշտպան, կենտրոնական բանկի նախագահ)՝ 6 տարի:

Համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, միևնույն կամ այլ գործատուի մոտ, աշխատանքային պայմանագրի հիման վրա, աշխատողի կատարած աշխատանքն է. ընդ որում, աշխատանքի համատեղությամբ կատարման փաստը նշվում է պայմանագրում: Համատեղությամբ աշխատանքը, հիմնական աշխատանքից բացի, ենթադրում է մեկ այլ կանոնավոր, ոչ միանվագ, առանձին վարձատրությամբ աշխատանք, որի կատարման նպատակով կնքվում է երկրորդ աշխատանքային պայմանագիրը: Համատեղությամբ աշխատանքի կիրառումն ունի երկու գործնական պատճառներ. երբ համատեղությամբ կատարվելիք աշխատանքի համար չի պահանջվում լրիվ աշխատանքային օրվա (հերթափոխի) ծանրաբեռնվածություն, և երբ ազատ աշխատատեղում կամ թափուր պաշտոնում չկա հնարավորություն ընդունելու այլ աշխատանքով չզբաղված, համապատասխան որակավորմամբ կամ մասնագիտությամբ աշխատողի: Համատեղությունը կարող է լինել ներքին (նույն գործատուի մոտ) և արտաքին (այլ գործատուի մոտ), սակայն երկու դեպքում էլ համատեղությամբ կատարվող աշխատանքի տևողությունը օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը: Համատեղությամբ աշխատանքային պայմանագիր կնքելու համար գործող աշխատանքային օրենսդրությամբ չի պահանջվում ոչ մի թույլտվություն հիմնական գործատուից: Համատեղությունը կարող է սահմանափակվել գործատուի՝ արհեստակցական մարմնի հետ համաձայնեցված ներքին իրավական ակ-

տով՝ վնասակար, ծանր և հոգեմյարդային լարում պահանջող աշխատանքային ռեժիմով աշխատող բանվորների ու ծառայողների նկատմամբ:

Համատեղությամբ աշխատանքը, ըստ էության, սահմանափակվում է նաև երկու պաշտոն զբաղեցնելու՝ օրենքով սահմանված արգելքով: Համատեղությամբ աշխատանքը պետք է տարբերակել լրացուցիչ աշխատանքից: Վերջինս հիմնական աշխատանքի մասնագիտությամբ կամ պաշտոնի աշխատանքի կատարումն է՝ աշխատողի հիմնական աշխատանքից դուրս (ավելի)՝ գործատուի հետ կայացված համաձայնության հիման վրա, որի կապակցությամբ աշխատանքային պայմանագրում կատարվում է լրացում:

Սեզոնային աշխատանքային պայմանագիրը, բնակլիմայական պայմանների պատճառով, կնքվում է ոչ թե ամբողջ տարին, այլ ութ ամիսը չգերազանցող որոշակի ժամանակահատվածում (սեզոնում) աշխատանք կատարելու համար: Սեզոնային աշխատանքի (ցանկը սահմանված է ՀՀ կառավարության կողմից) ընդունվողին գործատուն պետք է նախագուշացնի այդ մասին պայմանագիր կնքելիս, հակառակ դեպքում՝ պայմանագիրը կհամարվի կնքված անորոշ ժամկետով: Գործատուն պարտավոր է աշխատանքի ընդունման անհատական իրավական ակտում (իրաման, կարգադրություն) նշել, որ աշխատողն ընդունված է սեզոնային աշխատանքի:

Որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրերի շարքում բավական մեծ կիրառություն ունեն **մինչև երկու ամիս ժամկետով** կնքվող (օրենսդրական բնորոշմամբ՝* «ժամանակավոր աշխատանքային պայմանագիր») և ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերը: Պետք է նշել, որ մինչև 2 ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրի գործնական կիրառությունը պայմանավորված է այդ պայմանագրով որոշվող աշխատանքի ոչ մշտական (ոչ տևական) բնույթով: Մինչև երկու ամիս ժամկետով կնքվող պայմանագրում պետք է նշվի պայմանագրի գործողության ստույգ ժամկետը: Այս պայմանագրով չի կիրառվում աշխատանքի ընդունման փորձաշրջան: Ժամանակավորապես բա-

* ՀՀ աշխատանքային օրենսգրքի 101-րդ հոդվածը վերնագրված է «ժամանակավոր աշխատանքային պայմանագիր» և բնորոշված «մինչև 2 ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիր»: Մեր կարծիքով՝ միայն երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրը ժամանակավոր անվանելը ճիշտ չէ, քանի որ ժամանակավոր աշխատանքային պայմանագիր է նաև ժամանակավորապես բացակայողին փոխարինողի հետ կնքվող պայմանագիրը, որը կարող է կնքվել նաև երկու ամիս ժամկետով: Նույնը կարելի է ասել օտարերկրացու կամ համատեղությամբ աշխատանք կատարողի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի վերաբերյալ:

ցակայող աշխատողին *փոխարինողի հետ* կնքվող աշխատանքային պամանագիրը ենթադրում է բացակայող աշխատողի (երկարատև գործուղման մեջ գտնվողի, մինչև 3 տարեկան երեխայի խնամքով զբաղված կնոջ և այլն) աշխատատեղի (պաշտոնի) պահպանում և փոխարինողի հետ աշխատանքային պայմանագրի կնքում՝ բացակայող աշխատողի ժամանակավորապես բացակայելու ժամկետով:

Չարց 4. Աշխատանքային պայմանագրի կատարումը: Աշխատանքի պայմանների փոփոխումը

Գործատուն իր պարտականությունները կատարում է անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով, իսկ աշխատողը՝ անձամբ (նա միայն գործատուի թույլտվությամբ կարող է գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող այլ անձի հանձնարարել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը):

Գործատուն իրավունք ունի աշխատողից պահանջելու կատարել աշխատանքային պայմանագրով որոշված աշխատանք՝ նախատեսված պայմաններով:

Աշխատանքային պայմանագրի պայմանների (այդ թվում՝ այլ աշխատանքի փոխադրման) փոփոխությունը, որպես կանոն, թույլատրվում է պայմանագրի կողմերի գրավոր համաձայնությամբ:

Արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքում, երբ անհնար է դրանց պահպանումը, թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները՝ գործատուի կողմից աշխատողին գրավոր ծանուցելով (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մաս):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածը էական պայման է համարում.

- ա) աշխատողին նույն գործատուի մոտ այլ վայր աշխատանքի փոխադրումը, նաև այլ գործատուի մոտ աշխատանքի փոխադրումը (աշխատողը չի կարող փոխադրվել այնպիսի աշխատանքի, որ առողջության առումով նրան հակացուցված է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությամբ),
- բ) աշխատանքի վարձատրության չափը,
- գ) արտոնությունները,

- դ) աշխատանքի ռեժիմը,
- ե) ոչ լրիվ աշխատաժամանակ սահմանելը կամ վերացնելը,
- զ) տարակարգերը և պաշտոնների անվանումները:

Աշխատանքային պայմանագրի էական պայմանների մեջ չեն կարող մտցվել այնպիսի փոփոխություններ, որոնք կվատթարացնեն աշխատողի վիճակը կոլեկտիվ պայմանագրով սահմանված պայմանների համեմատությամբ:

Եթե աշխատանքի նախկին էական պայմանները չեն կարող պահպանվել, իսկ աշխատողը համաձայն չէ աշխատանքը շարունակելու նոր պայմաններում, ապա աշխատանքային պայմանագիրը լուծվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված՝ «աշխատանքի էական պայմանները փոփոխվելու» հիմքով:

Աշխատանքային պայմանագրի՝ առանց կողմերի համաձայնության փոփոխելու արգելքը վերաբերում է բոլոր տեսակի պայմանագրերին, բացի արտակարգ բնույթ կրող հանգամանքների առկայության և արտադրական անհրաժեշտության դեպքերի:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 106-րդ հոդվածը նախատեսում է աշխատանքի պայմանների ժամանակավոր փոփոխություն հատուկ դեպքերում. «Գործատուն իրավունք ունի աշխատողին մինչև մեկ ամիս ժամկետով նույն աշխատավայրում փոխադրելու աշխատանքային պայմանագրով չնախատեսված այլ աշխատանքի, ինչպես նաև փոփոխելու աշխատանքային պայմանագրով սահմանված՝ աշխատողի պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումը՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման նպատակով:

Արգելվում է աշխատողին փոխադրել նրա առողջական վիճակին հակացուցված աշխատանքի»:

Այլ աշխատանքի փոխադրում է համարվում նաև ժամանակավոր փոխարինումը, այսինքն՝ ժամանակավոր բացակայող աշխատողի պաշտոնական պարտականությունների կատարումը: Աշխատանքային օրենսդրությունը դա դասում է արտադրական անհրաժեշտության դեպքերի շարքը: Իսկ եթե աշխատողին, առանց իր պարտականությունների կատարումից ազատելու, հանձնարարվում է ժամանակավոր աշխատողի պարտականությունների կատարում, ապա առաջանում է մասնագիտությունների ժամանակավոր համատեղում:

Աշխատանքի ժամանակավոր փոխադրման մեկ այլ հիմք է նախատեսում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 107-րդ հոդվածը: Խոսքը ոչ աշխատողի մեղքով պարապուրդի մասին է, որի ժամանակ գործատուն իրավունք ունի աշխատողին, նրա գրավոր համաձայնությամբ, փոխադրելու ցանկացած այլ աշխատանքի՝ հաշվի առնելով վերջինիս մասնագիտությունը, որակավորումը և առողջական վիճակը: Իր համաձայնությամբ, աշխատողը կարող է փոխադրվել այլ աշխատանքի՝ նաև առանց հաշվի առնելու մասնագիտությունը և որակավորումը:

Այլ աշխատանքի ժամանակավոր փոխադրման պարտավորությունը գործատուն իրականացնում է որպես մայրության պաշտպանության երաշխիք (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 258-րդ հոդված)՝ հղի և մինչև 1 տարեկան երեխա խնամող կանանց ավելի թեթև աշխատանքի փոխադրելով:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- բացատրել աշխատանքային պայմանագրի պաշտոնական (officialis) և գիտական (doctrina) մեկնաբանությունները,
- գնահատել աշխատանքային պայմանագիրը որպես՝
 - ա) իրավական ինստիտուտ,
 - բ) մարդու աշխատանքի կազմակերպման իրավական ձև,
 - գ) աշխատանքային հարաբերությունների հիմք,
- իմանալ աշխատանքային պայմանագրի պարտադիր (էական) պայմաններն ու կնքման կարգը, ինչպես նաև այդ պայմանագրի տեսակների առանձնահատկություններն ու իրավական հետևանքները,
- հասկանալ աշխատանքային պայմանագրի կատարմանը ներկայացվող օրենսդրական պահանջները,
- տարբերակել աշխատանքային օրենսդրությամբ կարգավորվող աշխատանքային պայմանագիրը և քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող աշխատանքների կատարման պայմանագրերը:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է աշխատանքային պայմանագիրը:
- Ինչո՞վ է տարբերվում աշխատանքային պայմանագիրն այլ աշխատանքների կատարման քաղաքացիաիրավական պայմանագրերից:
- Որո՞նք են աշխատանքային պայմանագրի տեսակները:

ԹԵՄԱ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Չարց 1. Աշխատանքային պայմանագրի դադարման հիմքերը

ՀՀ աշխատանքային օրենսդրության, նաև աշխատանքային իրավունքի գիտության մեջ, աշխատանքային պայմանագրային հարաբերությունների դադարման հետ կապված, օգտագործվում են տարբեր եզրույթներ: Աշխատանքային պայմանագրում **«դադարեցում»** հասկացությունն ունի լայն իմաստ և ցույց է տալիս աշխատանքային հարաբերությունների ավարտը կամ դադարումն աշխատանքային օրենսդրությամբ սահմանված բոլոր հիմքերով, այսինքն՝ պայմանագրի կողմերի փոխհամաձայնությամբ, աշխատանքային պայմանագրի կողմ չհանդիսացող իրավասու մարմինների նախաձեռնությամբ, աշխատողի (նաև ֆիզիկական անձ գործատուի) մահվան փաստով: Ինչ վերաբերում է **«լուծում»** եզրույթին, ապա դա նշանակում է աշխատանքային հարաբերությունների դադարում աշխատանքային պայմանագրի կողմերից մեկի նախաձեռնությամբ (կամքի դրսևորման փաստի հիման վրա), ինչպես նաև իրավասու մարմնի պահանջով: Աշխատանքից **«ազատում»** եզրույթը կիրառվում է տվյալ աշխատող(ներ)ի նկատմամբ (նշվելով հրամանում կամ աշխատանքային գրքույկում): Ռուս գիտնական Վ. Գեյխմանը կարծում է՝ «աշխատանքից ազատումն ունի անձնական բնույթ և կիրառվում է տվյալ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելիս»¹:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը սահմանում է նաև **«աշխատողին աշխատանքի չթույլատրելու»** հասկացությունը, որ տարբերվում է վերը նշված երեք եզրույթներից, քանի որ ժամանակավոր է և կիրառվում է օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում: Բացի այդ, աշխատանքի չթույլատրելը ոչ թե հանգեցնում է աշխատանքային իրավահարաբերությունների դադարեցմանը, այլ ընդհատմանը: Ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ գտնվող աշխատողին գործատուն չի թույլատրում կատարել աշխատանք, իսկ աշխատանքի չթույլատրելու ժամանակահատվածը լրանալուց հետո աշխատողը վերադառնում է նախկին աշխատանքին (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 108-րդ հոդված):

Աշխատանքային պայմանագրի դադարեցման հիմքերը (14 պայման) նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածով. դրանք են.

¹ Гейхман В., Трудовое право, М., 2017, с. 218.

- 1) պայմանագրի կողմերի համաձայնությունը,
- 2) պայմանագրի գործողության ժամկետի լրանալը,
- 3) աշխատողի նախաձեռնությունը,
- 4) գործատուի նախաձեռնությունը,
- 5) աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելը,
- 6) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը՝ ըստ որի աշխատողը ենթարկվել է տվյալ աշխատանքը շարունակելու հնարավորությունը բացառող պատասխանատվության,
- 7) օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատողի զրկվելը որոշակի աշխատանքների իրավունքից,
- 8) մինչև 16 տարեկան աշխատողի օրինական ներկայացուցչի կողմից անչափահասի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու պահանջը,
- 9) աշխատանքի էական պայմանների փոփոխությունը,
- 10) ֆիզիկական անձ գործատուի մահը,
- 11) աշխատողի մահը,
- 12) աշխատանքի ընդունվելիս աշխատողի ներկայացրած կրթության, որակավորման կամ առողջության վերաբերյալ տեղեկությունների կեղծ լինելը,
- 12¹) աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի բացասական արդյունքները,
- 13) աշխատանքի ընդունվելիս որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքից զրկված լինելու փաստը աշխատողի կողմից թաքցնելը:

Մատնանշված հիմքերից բացի, որոշակի կատեգորիայի բանվորների և ծառայողների հետ կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է դադարեցվել օրենսդրությամբ նախատեսված այլ պատճառներով, որոնք, որպես պայմանագրի դադարեցման լրացուցիչ հիմքեր, պայմանավորված են նրանց աշխատանքի առանձնահատկություններով, իրավունքի այլ ոլորտի իրավանորմերով կարգավորվելու փաստով, ինչպես նաև օբյեկտիվ հանգամանքների ի հայտ գալով:

Աշխատանքային պայմանագրի դադարեցման այդպիսի լրացուցիչ հիմքեր են.

- 1) աշխատողին անգործունակ ճանաչելը բժշկական եզրակացության հիման վրա,
- 2) աշխատանքային պարտականության կամ ռեժիմի մեկ խախտումը ենթակայության կարգով պատասխանատվություն կրող աշխատողի կողմից (օրինակ՝ քաղաքացիական ծառա-

յողի՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելը կամ նրա կողմից, օրենքով սահմանված կարգով, իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը, կամ ծառայողական շենք-շինությունների հակահրդեհային պաշտպանության կանոնների խախտումը՝ դրանց անվտանգության համար պատասխանատու աշխատողի կողմից),

- 3) աշխատանքի շարունակումը բացառող արտակարգ հանգամանքների (ֆորս-մաժորի) ի հայտ գալը,
- 4) նրցությունով պաշտոն զբաղեցրած անձին տվյալ կազմակերպության ներքին իրավական ակտով կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված կարգով անհամապատասխան ճանաչելը զբաղեցրած պաշտոնին,
- 5) պաշտոնում չընտրվելը,
- 6) աշխատանքում վերականգնելու մասին դատարանի որոշումը վերացնելը,
- 7) գիտական, ինժեներատեխնիկական, տեխնոլոգիական, գիտահետազոտական, հետախուզական, նախագծային կազմակերպությունների ատեստավորման ենթակա մաս-նագետների, ինչպես նաև դեկավար պաշտոնատար անձանց ատեստավորման բացասական արդյունքները,
- 8) աշխատանքի բերումով որոշակի գաղտնիքի տեղյակ լինելու իրավունքի վերացումը,
- 9) համատեղությամբ աշխատողի պաշտոնում (զբաղեցրած աշխատանքում) համատեղությամբ աշխատող չհամարվող (հիմնական) աշխատողի աշխատանքի ընդունելը,
- 10) տվյալ պաշտոնի զբաղեցման համար նախատեսված սահմանային տարիքի հասնելու փաստը,
- 11) օրենսդրությամբ կամ տվյալ կազմակերպության ներքին իրավական ակտով սահմանված աշխատանքի ընդունման կարգի կամ պայմանների խախտմամբ աշխատանքի ընդունելը (օրինակ՝ անչափահասին գիշերային, ծանր, վնասակար աշխատանքի ընդունելու փաստը):

Աշխատանքային պայմանագրի դադարեցման լրացուցիչ հիմքերին բնորոշ է 2 առանձնահատկություն.

- 1) դրանք տարածվում են որոշակի կատեգորիայի բանվոր-ծառայողների նկատմամբ,
- 2) դրանք կիրառվում են որոշակի պայմանների, այսինքն՝ այնպիսի փաստերի առկայության դեպքում, որոնք բնորոշ չեն աշխատանքային պայմանագրերի դադարեցման ընդհանուր հիմքերին:

Աշխատանքային պայմանագրի՝ վերը նշված 14 հիմքերի պարզաբանման համար կատարենք որոշակի դասակարգում: Պայմա-

նագրի դադարեցման նախաձեռնության հանգամանքից ելնելով՝ քննարկվող հիմքերը կարելի է դասակարգել 4 խմբում.

- ա) պայմանագրի կողմերի համատեղ նախաձեռնությամբ (նկատի ունենք կողմերի համաձայնությունը և պայմանագրի գործողության ժամկետի լրանալը),
- բ) աշխատողի նախաձեռնությամբ,
- գ) գործատուի նախաձեռնությամբ,
- դ) պայմանագրի կողմ չհանդիսացող իրավասու մարմինների նախաձեռնությամբ:

Հակիրճ անդրադառնանք ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված՝ աշխատանքային պայմանագրի լուծման այն հիմքերին (1-5 և 9), որոնց կապակցությամբ օրենսդիրը սահմանում է հատուկ պայմաններ:

Կողմերի համաձայնությունը

Աշխատանքային պայմանագրի կողմերի համաձայնությունն այդ պայմանագրի լուծման ինքնուրույն հիմք է, քանի որ պահանջում է այդ կողմերի ցանկությունը և փոխադարձ համաձայնությունը աշխատանքային հարաբերությունների դադարեցման վերաբերյալ: Հենց դրանով էլ քննարկվող հիմքը տարբերվում է աշխատանքային պայմանագիրը գործատուի և աշխատողի նախաձեռնությամբ լուծելու հիմքերից:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն առանձին նորմով (110-րդ հոդված) սահմանում է կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու կարգը. մի կողմը գրավոր ձևով առաջարկում է մյուսին լուծել պայմանագիրը, վերջինս, համաձայնության դեպքում, 7 օրվա ընթացքում ծանուցում է առաջարկող կողմին, որից հետո նրանց միջև կնքվում է գրավոր համաձայնություն, որտեղ նշվում են պայմանագրի լուծման ժամկետը և այլ պայմաններ, այդ թվում՝ հատուցումները: Կողմերի համաձայնության հիմքով կարող է դադարել ինչպես անորոշ, այնպես էլ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը:

Պայմանագրի գործողության ժամկետի լրանալը

Գործատուն, նաև աշխատողն իրավունք ունեն լուծելու որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ դրա գործողության ժամկետը լրանալու հիմքով, բացառությամբ այն դեպքի, երբ այդ ժամկետը լրացել է, բայց աշխատանքային հարաբերությունները փաստացի շարունակվել են, և կողմերից ոչ մեկը չի պահանջել դրանց դադարեցումը (նշենք, որ այդ դեպքում որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով):

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (111-րդ հոդված) այս հիմքով աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կապակցությամբ

կողմերի համար սահմանում է առնվազն 10 օր առաջ գրավոր ծանուցելու պայման, բայց եթե աշխատողը չի ծանուցում գործատուին և պայմանագրի վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը չի ներկայանում աշխատանքի, պայմանագիրը համարվում է լուծված, ուստի գործատուն պարտավոր է կատարել վերջնահաշվարկ՝ աշխատողի պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող հինգ օրերի ընթացքում: ՌԴ աշխատանքային օրենսգիրքը, քննարկվող հիմքով աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու հետ կապված, առանձին նորմով (261-րդ հոդված) սահմանում է կարևոր մի դրույթ. «Եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանում է աշխատող կնոջ հղիության ժամանակահատվածում, ապա գործատուն պարտավոր է նրա դիմումի և բժշկական փաստաթղթի հիման վրա երկարացնել աշխատանքային պայմանագրի ժամկետը մինչև հղիության ժամանակահատվածի ավարտը»:

Աշխատողի նախաձեռնությունը

Աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման կարգը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, որի համաձայն՝ աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ առնվազն երեսուն օր առաջ գրավոր ծանուցելով գործատուին¹: Այդ ծանուցման նպատակն է՝ գործատուին հնարավորություն տալ կարգավորելու փոխարինող աշխատողի խնդիրը: Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու պատճառը պայմանավորված է աշխատանքը շարունակելու անհնարինությամբ (օրինակ՝ ուսումնական հաստատություն ընդունվելու, բնակության այլ վայր մեկնելու, կենսաթոշակի անցնելու դեպքերում), գործատուն լուծում է աշխատանքային պայմանագիրն ըստ աշխատողի դիմումում նշված ժամկետի:

Աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցմամբ գործատուին նախազգուշացնելն ունի որոշակի իրավաբանական նշանակություն, քանի որ ծանուցման ժամանակահատվածի ընթացքում պայմանագրի կողմերից և ոչ մեկն իրավունք չունի միակողմանիորեն դադարեցնելու այն: Աշխատողին գործատուի կողմից աշխատանքից վաղաժամկետ ազատելու դեպքում աշխատողը ենթակա է վերականգնման իր նախկին աշխատատեղում, իսկ աշխատողի կողմից մինչ ծա-

¹ Ծանուցման ժամկետը հաշվարկվում է դիմումի ներկայացմանը հաջորդող աշխատանքային օրվանից:

նուցման ժամկետի լրանալը աշխատանքը թողնելը համարվում է գործալքություն, ուստի գործատուն նրան աշխատանքից ազատում է այլ հիմքով՝ որպես աշխատանքային պարտականություններն առանց հարգելի պատճառների չկատարողի: Աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ, այսինքն՝ մինչև ծանուցման ժամկետի լրանալը կարող է դադարեցվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունն աշխատողին իրավունք է վերապահում և՛ անորոշ, և՛ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը մինչ դրա ժամկետի լրանալը դադարեցնելու՝ գործատուին այդ մասին առնվազն հինգ օր առաջ գրավոր ծանուցելով, եթե պայմանագրի լուծման պատճառներն են:

- 1) աշխատողի աշխատանքը խոչընդոտող հիվանդությունը կամ աշխատանքային խեղումը,
- 2) գործատուի կողմից աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելը,
- 3) գործատուի կողմից օրենքը կամ կոլեկտիվ պայմանագիրը (հետևաբար՝ նաև աշխատողի իրավունքները) խախտելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածն աշխատողին իրավունք է վերապահում աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու, սակայն ոչ ուշ, քան այն ներկայացնելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո նա կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ: Գործակալնում գործատուն նման համաձայնություն տալ չի կարող, եթե այդ աշխատողի փոխարեն արդեն իսկ հրավիրել է մեկ այլ աշխատողի:

Հավելենք ևս մեկ կարևոր դրույթ. եթե աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցագրի ժամկետի ավարտով աշխատանքային պայմանագիրը չի լուծվում, և աշխատողն էլ չի պնդում դա, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է գործողության մեջ, այսինքն՝ շարունակվող:

Գործատուի նախաձեռնությունը

Գործող ՀՀ աշխատանքային օրենսդրությունը մարդու աշխատանքի, դրա տեղի ու տեսակի ընտրության իրավունքի պաշտպանության նպատակով սահմանում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու որոշակի և սահմանափակ թվով (11) հիմքեր¹: Ընդ որում, այդ հիմքերը տարածվում են

¹ Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու 11 օրենսդրական հիմքերին կանդիդատներն հաջորդ (առանձին) հարցի շարադրանքում:

բոլոր աշխատողների վրա՝ անկախ կազմակերպության սեփականության և կազմակերպաիրավական ձևից, աշխատանքային գործունեության կամ զբաղմունքի բնույթից ու տեսակից:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերը կապված են կա՛մ աշխատողի անձնական որակների (ցածր որակավորում, անպարտաճանաչություն, վատառողջություն և այլն), կա՛մ արտադրատնտեսական բնույթի պատճառների (աշխատողների թվաքանակի կրճատում, կազակերպության լուծարում, արտադրության ծավալների նվազեցում և այլն) հետ:

Աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելը

Ինչպես նշվել է, աշխատանքային պայմանագիրը լուծելու նախաձեռնության իրավունք ունեն նաև պայմանագրի կողմ չհանդիսացող իրավասու նարմինները և պաշտոնատար անձինք:

Աշխատողին զորակոչելու՝ զինվորական նարմնի որոշումը պարտադիր է գործատուի համար: Գործատուն համապատասխան ծանուցագրում նշված ժամկետից ոչ ուշ, քան երեք օր առաջ աշխատողի ծառայության ամբողջ ժամանակահատվածով դադարեցնում է աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքային պայմանագրի դադարեցման այս հիմքը զինվորական ծառայության մեկնած աշխատողի համար սահմանում է մեկ արտոնություն: Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի՝ պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, նա կարող է դիմել գործատուին աշխատանքային հարաբերությունները վերականգնելու և նոր աշխատանքային պայմանագիր կնքելու համար, և գործատուն պարտավոր է երեք օրվա ընթացքում կնքել նոր աշխատանքային պայմանագիր՝ նախորդ պայմանագրի պայմաններից ոչ նվազ բարենպաստ պայմաններով:

Աշխատանքի էական պայմանների փոփոխությունը

Այս հիմքով աշխատանքային պայմանագիրը դադարում է, եթե աշխատանքի նախկին պայմանները չեն կարող պահպանվել, իսկ աշխատողը համաձայն չէ աշխատանքը շարունակելու նոր պայմաններում: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածը սահմանում է աշխատանքի էական պայմանները փոփոխելու հիմքերը (արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխություն), ինչպես նաև «աշխատանքի էական պայմանների» ցանկը:

Չարք 2. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերն ու պայմանները

Չարք է ընդգծել, որ աշխատանքային պայմանագրերի լուծման առնչությամբ առաջացող աշխատանքային վեճերի գերակշիռ մասը վերաբերում է գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը դադարեցնելու հիմքին:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու 11 հիմքերը նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածով, ընդ որում, խոսքը վերաբերում է և՛ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրին, և՛ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրին՝ նախքան դրա ժամկետը լրանալը:

Այդ հիմքերն են.

1) Կազմակերպության լուծարումը, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարումը, պետական գրանցումը ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելը: Կազմակերպության մասնաճյուղի, ներկայացուցչության կամ կառուցվածքային այլ ստորաբաժանման գործունեության դադարեցման դեպքում դրա աշխատողների աշխատանքային պայմանագրերի դադարեցումն իրականացվում է կազմակերպության լուծարման համար սահմանված կանոններով: Չարք է իմանալ նաև, որ կազմակերպության միաձուլման, միացման, բաժանման կամ անջատման դեպքերում աշխատանքային հարաբերություններն աշխատողի համաձայնությամբ շարունակվում են: Այդ դեպքում գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել միայն հաստիքների և աշխատողների թվաքանակի կրճատման պարագայում:

2) Արտադրական ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի, և (կամ) հաստիքների կրճատման¹ դեպքերը:

¹ Քանի որ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման նպատակը կազմակերպությունն առավել որակյալ կադրերով ապահովելն է, գործատուն աշխատանքում թողնելու նախապատվությունը պետք է վերապահի առավել բարձր արտադրողականություն և որակավորում ունեցող աշխատողին, իսկ հավասար արտադրողականության և որակավորման դեպքում՝ երկու և ավելի խնամարկյալ ունեցող աշխատողին, ընտանիքի միակ կերակրողը հանդիսացող աշխատողին, տվյալ կազմակերպությունում տևական անընդմեջ աշխատանքի ստաժ ունեցող աշխատողին, տվյալ կազմակերպությունում արտադրական խնդում, մասնագիտական հիվանդություն ձեռք բերած աշխատողին, աշխատանքը և

3) Աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին չհամապատասխանելը՝ մասնագիտական ունակությունների անբավարարության (ցածր որակավորման) և առողջական վիճակի կայուն բնույթ կրող վատթարացման պատճառներով, որոնք խոչընդոտում են՝ շարունակելու աշխատանքը, կատարելու աշխատանքային պարտականությունները):

4) Աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելը:

Այս հիմքով աշխատանքային պայմանագիրը կարող է դադարեցվել, եթե՝

ա) նախկին աշխատողը վերականգնվել է դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից,

բ) նախկին աշխատողը զորակոչվել է զինվորական ծառայության, որի ավարտից հետո 1 ամսվա ընթացքում վերադարձել է իր նախկին աշխատանքին,

գ) նախկին աշխատողն ապօրինի է դատապարտվել և արդարացման դատավճիռն ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում դիմել է իր աշխատանքում վերականգնվելու պահանջով:

5) Աշխատողի կողմից իր պարտականություններն առանց հարգելի պատճառների պարբերաբար չկատարելը:

Այս հիմքը ենթադրում է աշխատողի կողմից աշխատանքային կարգապահության պարբերաբար խախտման փաստի առկայություն: Հետևաբար՝ աշխատանքային կարգապահության մեկ

ուսուցումը (բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում համատեղող աշխատողին, պատերազմի հաշմանդամ և հայրենիքի պաշտպանության համար զոհվածի ընտանիքի անդամ աշխատողին, գյուտարար աշխատողին):

Հավելենք, որ ՀՀ գործող աշխատանքային օրենսգիրքը (ի տարբերություն նախորդի) չի նախատեսում նշված կարգն ու արտոնությունները, իսկ նման օրենսդրական բացը ոչ միայն դժվարացնում է գործատուի աշխատանքը, այլև աշխատողի (բացառությամբ՝ քաղաքացիական ծառայողի) իրավունքների խախտման ու աշխատանքային վեճերի, զործնականում դրանց ոչ միատեսակ լուծման պատճառ դառնում: Նշենք, որ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ քաղաքացիական ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողին»:

¹ Մասնագիտական ունակությունների համապատասխանությունը զնահատում է գործատուն, իսկ առողջական վիճակինը՝ բժշկասոցիալական փորձաքննական եզրակացության իրավունք ունեցող կազմակերպությունը (համձնաժողովը):

խախտման փաստը, անկախ դրա վտանգավորությունից (բնույթից), քննարկվող հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունք չի առաջացնում: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի ուղղակի ցուցումն է. «...եթե աշխատողը մինչև տվյալ խախտումն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ», այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է կարգապահական խախտման համար տույժ ունեցող և նորից խախտում կատարած աշխատողին: Քննարկվող հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք չի կարող լինել այն կարգապահական տույժը, որի մասին աշխատողը ժամանակին տեղեկացված չի եղել, և հայտարարվում է աշխատողին աշխատանքից հենց ազատելու ժամանակ:

Հավելենք, որ աշխատողի կողմից իր պարտականություններն առանց հարգելի պատճառների պարբերաբար չկատարելու հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

6) Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը:

Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի՝ գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե.

- ա) աշխատողը, որն իրականացնում է ուսումնադաստիարակչական գործառույթ (ուսուցիչ, դասախոս, արտադրական ուսուցման վարպետ, մանկական հիմնարկի դաստիարակ), թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք,
- բ) աշխատողը հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիք կամ դրա մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը,
- գ) գործատուն կրել է գույքային վնաս աշխատողի՝ դրամական կամ ապրանքային արժեքները սպասարկելիս կատարած արարքների հետևանքով:

Գործատուն այս հիմքով կարող է աշխատանքից ազատել այն անձին, որը զբաղված է դրամական և ապրանքային արժեքների սպասարկմամբ, այսինքն՝ իրականացնում է այդ արժեքների ընդունման, պահպանության, առաքման և բաշխման գործառույթներ: Որպես կանոն, այդ աշխատողները կրում են լրիվ ծավալով նյութական պատասխանատվություն, սակայն առանձին դեպքերում դրամական և ապրանքային արժեքներ անմիջականորեն սպասարկող աշխատողները լրիվ նյութական պատասխանատու անձինք չեն, նրանց հետ (օրինակ՝ վաճառողների) կնքված չէ լիակատար նյու-

թական պատասխանատվության մասին պայմանագիր, ուստի աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար նշանակություն չունի այն հանգամանքը, թե տվյալ աշխատողի վրա ինչ չափով (սահմաններում) կարող է դրվել աշխատանքային պարտականությունները կատարելիս կազմակերպությանը (գործատուին) հասցրած վնասների նյութական պատասխանատվությունը: Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով կարող է լուծվել նաև այն աշխատողների աշխատանքային պայմանագրերը, որոնց աշխատանքային գործառույթներում դրամական և ապրանքային արժեքների սպասարկումը ներառված է որպես լրացուցիչ պարտավորություն, և նրանց կողմից խախտումները կատարվել են՝ այդ արժեքների սպասարկման հետ կապված (օրինակ՝ տաքսի ծառայության այն վարորդը, որն առանց հաշվիչը միացնելու (շահադիտական նպատակով) կատարել է ուղևորափոխադրում): Քննարկվող հիմքով աշխատանքային պայմանագրերը չեն կարող լուծվել հաշվապահի, ապրանքագետի, հսկիչի, ապրանքների դրոշմակնիքներ դնողի և այլ աշխատողների հետ, քանի որ նրանց գործունեությունը պայմանավորված չէ դրամական և ապրանքային արժեքների սպասարկմամբ:

Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար պետք է հիմնավորվի աշխատողի մեղավոր գործողության կատարման փաստը: Ընդ որում, վստահությունը կորցնելու հիմք է ծառայում և՛ աշխատողի կողմից իր աշխատանքային պարտականություններին անփույթ վերաբերվելը (օրինակ՝ դրամական միջոցի վճարումն առանց ձևակերպման), և՛ նրա կատարած չարաշահումը (մանր յուրացումը): Աշխատողի կողմից պարտականությունը մեղավորությամբ չկատարելը կարող է վստահությունը կորցնելու հիմք լինել և՛ այն դեպքում, երբ դա կրում է պարբերական բնույթ, և՛ մեկ անգամ կատարվելու դեպքում:

7) Աշխատողի երկարատև անաշխատունակությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածը աշխատողի երկարատև անաշխատունակություն է համարում ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր բացակայությունը հիվանդության պատճառով: Որոշակի հիվանդությունների դեպքում, որոնց ցանկը սահմանված է այլ նորմատիվ իրավական ակտերով, պաշտոնը և աշխատատեղը պահպանվում են ավելի երկար ժամանակ, այսինքն՝ մինչև աշխատողի աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի սահմանումը (օրինակ՝ տուբերկուլոզ, մասնագիտա-

կան հիվանդություններ, աշխատանքային խեղճան հետ կապված հիվանդություն): Աշխատողի երկարատև անաշխատունակություն սահմանող ժամկետի մեջ չի հաշվարկվում հղիության և ծննդաբերության արձակուրդը:

8) Աշխատողի՝ ալկոհոլի, թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ազդեցությամբ աշխատավայրում գտնվելը:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (113-րդ հոդվածի 8-րդ կետ) այս հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու գործատուի իրավունքը մատնանշելուց զատ, այլ բան (մեկնաբանություն, պահանջ, կիրառման պայմաններ) չի նախատեսում: Հիմք ընդունելով աշխատանքային պայմանագրի լուծման մյուս սկզբունքային դրույթները՝ պարզաբանեմք մի քանի կարևոր խնդիրներ: Մեր կարծիքով՝ «աշխատավայր» եզրույթը պետք է հասկանալ լայն իմաստով, այսինքն՝ աշխատողի ոչ սթափ վիճակում գտնվելը ոչ միայն նրա աշխատանքի կատարման տեղում, այլև կազմակերպության ողջ տարածքում, ինչպես նաև մեկ այլ վայրում, որտեղ նա պետք է կատարեր գործատուի հանձնարարությունը (իր աշխատանքային գործառույթը): Բացի այդ, աշխատողի կողմից ոչ սթափ վիճակում աշխատատեղում գտնվելու հիմքով աշխատանքից նրան ազատելու համար որևէ նշանակություն չպետք է ունենա այն հանգամանքը, թե նա այդ վիճակում հայտնվել է աշխատանքային օրվա սկզբին, կեսին, թե ավարտին: Քննարկվող հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար կարևոր չէ, որ ոչ սթափ վիճակում աշխատավայրում գտնված աշխատողի նկատմամբ գործատուն կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 108-րդ հոդվածով սահմանված՝ աշխատանքի չթույլատրելու գործողությունը: Կարևոր չէ նաև այն հանգամանքը, թե նախկինում այդ աշխատողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ¹, թե ոչ:

9) Անհարգելի պատճառով ողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի աշխատանքի չներկայանալը:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու այս հիմքը ևս ՀՀ աշխատանքային օրենսգրքում (113-րդ հոդվածի 9-րդ կետ), մատնանշումից զատ, չունի որևէ մեկնաբանություն, սակայն օրենսդրի կողմից «անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու» հանգամանքն ընդգծելը հիմք է տալիս ենթադրելու, որ գործ ունենք գործալքության հետ, քանի որ կազմակերպության ներքին կարգուկանոնը սահմանող՝ գործատուի

¹ Առնվազն երկու չմարված կամ չհանված կարգապահական տույժի փաստը օրենսդիրը պարտադիր է համարում միայն աշխատողի կողմից պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու համար:

իրավական ակտով և կոլեկտիվ պայմանագրով գործալքություն է համարվում աշխատանքային ողջ օրը (հերթափոխը) լքելը՝ աշխատանքի չներկայանալն անհարգելի պատճառով: Գործալքություն են համարվում նաև ինքնական (առանց գործատուի թույլտվության) արձակուրդ մեկնելը, որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետից շուտ աշխատանքը թողնելը, աշխատողի համար հանգստյան օր հանդիսացող, սակայն գործատուի օրինական հրամանով աշխատանքային հայտարարված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը, ինչպես նաև անհարգելի պատճառով այն աշխատողի աշխատանքի չներկայանալը, որն օրենքով սահմանված կանոնների պահպանմամբ գործատուի կողմից փոխադրվել է մեկ այլ աշխատանքի:

Հավելենք, որ անհարգելի պատճառով ողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատանքի չներկայանալու հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս կարևոր չէ, թե այդ աշխատողի նկատմամբ գործատուն կիրառել է կարգապահական տույժ, թե ոչ:

10) Պարտադիր բուժզննությունից աշխատողի հրաժարվելը կամ խուսափելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու այս հիմքը նախատեսված չէր մինչև 24.06.10 թ. (գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի լրացումներ): Նշենք նաև, որ պարտադիր բուժզննության ենթակա աշխատողների կատեգորիաները սահմանվում են գործադիր իշխանության իրավասու մարմինների իրավական ակտերով՝ հաշվի առնելով և՛ կատարվելիք աշխատանքի բնույթն ու ոլորտը, և՛ աշխատող անձի կարգավիճակը:

11) Տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի 63, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի 65 տարին լրանալը, եթե համապատասխան հիմքը սահմանված է աշխատանքային պայմանագրով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 11-րդ կետը աշխատողի կենսաթոշակի տարիքը լրանալու հիմքով գործատուին իրավունք է տալիս իր նախաձեռնությամբ լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ այդ պայմանագրով: Վերջին վերապահումը թույլ է տալիս նկատել, որ գործատուն կենսաթոշակի տարիքը լրացած աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները շարունակելու կարգը և հիմքերը պետք է նախատեսի իր ներքին կանոնակարգը սահմանող իրավական ակտով կամ կոլեկտիվ պայմանագրով:

Չարք 3. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը և լուծելու արգելքը

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածով նախատեսված ներքոհիշյալ երեք դեպքում գործատուն կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը, եթե առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկվել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է դրանից: Այդ դեպքերն են.

- 1) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխում և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատում,
- 2) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին անհամապատասխանություն,
- 3) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնում:

Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման), ինչպես նաև արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքերում աշխատանքային պայմանագիրը նշված հիմքերով լուծելիս գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Աշխատանքային պայմանագրի՝ գործատուի նախաձեռնությամբ լուծելու մասին ծանուցման այլ ժամկետներ են սահմանված հետևյալ 4 դեպքում.

- 1) աշխատանքի էական պայմանները փոփոխելու,
- 2) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու,
- 3) աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու,
- 4) աշխատողի երկարատև անաշխատունակության (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում

աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով):

Նախատեսված այս հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է գրավոր ծանուցել իր մոտ մինչև 1 տարի աշխատողին՝ ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝ 49 օր առաջ, 15 տարուց ավելի աշխատողին՝ 60 օր առաջ: Կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով կարող են սահմանվել նախատեսված ծանուցման ժամկետների համեմատությամբ ավելի երկար ժամկետներ:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու նսսին ծանուցման մեջ պետք է նշվի աշխատանքից ազատելու հիմքը և պատճառը, տարին, ամիսը և ամսաթիվը, աշխատողին այլ աշխատանք առաջարկելու դեպքում՝ պաշտոնը և աշխատավարձը կամ այլ աշխատանքի հնարավորության բացակայությունը:

Անդրադառնալով գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքի խնդրին: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է.

- 1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ այն դեպքի, որ աշխատողն անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին 12 ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր (եթե օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չէ ավելի երկար ժամանակ),
- 2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում,
- 3) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը,
- 4) մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ՝ կազմակերպության լուծարման, աշխատանքին չհամապատասխանելու, պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու, անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու, հարբած կամ արբեցած ներկայանալու, վստահությունը կորցնելու, պարտադիր բուժզննությունից հրաժարվելու դեպքերի:

Յարց 4. Արձակման նպաստը և աշխատողի հետ վերջնահաշվարկի կարգը

Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման դեպքում), արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման, ինչպես նաև աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատունն աշխատողին վճարում է արձակման նպաստ նրա մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով, իսկ աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու, երկարատև հիվանդության հետևանքով աշխատանքի չներկայանալու, կենսաթոշակային տարիքը լրանալու, աշխատանքի էական պայմանները փոփոխվելու և պարտադիր ժամկետային զինծառայության գորակոչվելու հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում, հաշվի առնելով տվյալ կազմակերպությունում աշխատողի անընդմեջ աշխատանքային ստաժը, գործատունն աշխատողին վճարում է արձակման նպաստ.

- 1) մինչև մեկ տարի աշխատելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով,
- 2) մեկից մինչև հինգ տարի աշխատելու դեպքում՝ 25 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով,
- 3) հինգից մինչև տասը տարի աշխատելու դեպքում՝ 30 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով,
- 4) տասից մինչև տասնհինգ տարի աշխատելու դեպքում՝ 35 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով,
- 5) տասնհինգ տարի և ավելի աշխատելու դեպքում՝ 44 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով:

Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կարող է նախատեսվել արձակման նպաստի վճարում ավելի երկար ժամանակահատվածով:

Անդրադառնալով աշխատողի հետ վերջնահաշվարկի խնդրին:

Աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում գործատունն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ:

Եթե աշխատողը նույն գործատուի մոտ փոխադրվում (տեղափոխվում) է այլ աշխատանքի, գործատուն աշխատողի հետ վերջնահաշվարկ չի կատարում:

Գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ, ապա՝ աշխատողի պահանջ ներկայացնելու օրվանից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում վերջնահաշվարկ կատարելու պարտականությունը փոխանցվում է ժառանգությունն ընդունողներին, իսկ ժառանգների բացակայության կամ ժառանգների կողմից ժառանգությունն ընդունելուց հրաժարվելու դեպքում՝ այն անձին կամ մարմնին, որն ընդունում է այդ գույքը՝ դրա արժեքի սահմաններում:

Աշխատողի ցանկությանը գործատուն պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք աշխատանքային գործառույթների (պարտականությունների), աշխատավարձի, վճարված հարկերի և աշխատանքի գնահատականի վերաբերյալ:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- տարանջատել «աշխատանքային պայմանագրի լուծում» և «աշխատանքային պայմանագրի դադարեցում» հասկացությունները, ինչպես նաև «աշխատանքից ազատում» և «աշխատողին աշխատանքի չթույլատրել» եզրույթները,
- պարզաբանել աշխատանքային պայմանագրի դադարման հիմքերը,
- տեղեկանալ աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու օրենսդրական արգելքներին և սահմանափակումներին:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ հիմքերով կարող է դադարեցվել աշխատանքային պայմանագիրը:
- Որո՞նք են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքներն ու սահմանափակումները:
- Ի՞նչ պարտականություններ ունի գործատուն աշխատանքային պայմանագիրը լուծելիս:

ԹԵՄԱ 5. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Չարց 1. Աշխատաժամանակի հասկացությունը

Աշխատաժամանակը ժամանակի այն հատվածն է (որոշակի օրեր, ժամեր), որի ընթացքում աշխատողը պարտավոր է կատարել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը սահմանված վայրում՝ օրենքին, կոլեկտիվ պայմանագրին և կազմակերպության ներքին կարգուկանոնին համապատասխան:

Աշխատաժամանակում ներառվում է ոչ միայն աշխատանքի փաստացի կատարման ժամանակահատվածը, այլև աշխատանքային օրենսդրությամբ դրան հավասարեցված այլ ժամանակահատվածներ, որոնց ընթացքում բուն աշխատանքի կատարման փաստն առկա չէ: Աշխատանքի փաստացի կատարման ժամանակ է համարվում ժամանակի այն տևողությունը (հատվածը, մասը), որի ընթացքում աշխատողը, ըստ ժամանակացույցի կամ օրենքով սահմանված դեպքերում՝ դրանից դուրս (հանգստյան օր, արտաժամ), փաստացի կատարում է հանձնարարված աշխատանքը և այլ աշխատանքային պարտականություններ:

ՀՀ աշխատանքային օրենսդրության 138-րդ հոդվածի համաձայն՝ աշխատաժամանակահատվածում ներառվում են.

- 1) փաստացի աշխատած ժամանակահատվածը, հերթապահությունը աշխատավայրում կամ տանը,
- 2) գործուղման ժամանակահատվածը,
- 3) աշխատավայրը, աշխատանքային գործիքները և պաշտպանության միջոցները կարգի բերելուն կամ նախապատրաստելուն անհրաժեշտ ժամանակահատվածը,
- 4) օրենքով, կոլեկտիվ պայմանագրով կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով աշխատաժամանակում ընդգրկվող ընդմիջումները (լրացուցիչ և հատուկ),
- 5) պարտադիր բժշկական զննության ժամանակահատվածը,
- 6) աշխատավայրում կամ ուսումնական հաստատություններում որակավորման բարձրացման անհրաժեշտ ժամանակահատվածը,
- 7) աշխատողին աշխատանքի չթույլատրելու (ոչ սթափ վիճակի պատճառով) ժամանակահատվածը, եթե նրան թույլատրվում է մնալ աշխատավայրում՝ պահպանելով սահմանված կարգը,
- 8) պարապուրդի ժամանակահատվածը,
- 9) օրենքով, կոլեկտիվ պայմանագրով կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված այլ ժամանակահատվածներ:

Այդպիսիք են նորարարական առաջարկության ներդրման աշխատանքներին մասնակցության ժամանակահատվածը, կազմակերպության լուծարման և հաստիքների կրճատման դեպքում՝ նոր աշխատանք փնտրելու համար աշխատողին տրամադրվող ազատ ժամանակի տևողությունը, աշխատանքի պաշտպանության և աշխատողի անվտանգության ապահովման նպատակով՝ աշխատանքն իրավասու անձի կողմից ժամանակավորապես դադարեցնելու ժամանակահատվածը և այլն:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 138-րդ հոդվածը նախատեսում է նաև աշխատաժամանակում չներառվող, բայց աշխատանքային ստաժի մեջ հաշվարկվող հետևյալ ժամանակահատվածները.

- 1) գործատուի (նրա ներկայացուցչի) համաձայնությամբ աշխատանքի չներկայանալու,
- 2) պետական, հասարակական կամ քաղաքացիական պարտականությունների կատարման, զինհաշվառման պարտականություններ կատարելու, զորակոչային տեղամասերին կցագրվելու, վարժական հավաքներին մասնակցելու և ժամկետային զինվորական ծառայության,
- 3) ժամանակավոր անաշխատունակության,
- 4) հանգստի կամ սնվելու համար ընդմիջումները, ամենօրյա (միջհերթափոխային), ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը, ոչ աշխատանքային և հիշատակի՝ օրենքով սահմանված օրերը, արձակուրդը,
- 5) օրենքով, կոլեկտիվ պայմանագրով կամ ներքին իրավական ակտերով սահմանված այլ ժամանակահատվածներ:

Աշխատաժամանակի իրավական կարգավորումը կոչված է ապահովելու հանգստի և աշխատանքի պատշաճ պայմաններ ու անվտանգություն, աշխատող անձի համակողմանի զարգացում ու աշխատանքային հնտությունների կատարելագործում, տվյալ տնտեսությանն անհրաժեշտ աշխատաժամանակի ճիշտ ու օրինական օգտագործում: Այս նպատակներով աշխատաժամանակի իրավական կարգավորման գործում առավել մեծ տեղ է տրվում լուկալ (ներքին իրավական ակտերի, կոլեկտիվ պայմանագրերի) նորմերին և աշխատանքային պայմանագրերին: Կենտրոնացված կարգով (օրենսդրությամբ), մասնավորապես, կարգավորվում են աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, դրա բաշխման կարգը, տնտեսության որոշակի ճյուղերի (առողջապահություն, կապ, տրանսպորտ և այլն) աշխատաժամանակի առանձնահատկությունները:

Ֆարց 2. Աշխատաժամանակի տևողությունը

Աշխատողների (բանվոր, ծառայող) աշխատաժամանակի տևողությունը նորմավորվում (չափակարգվում) է օրենսդրությամբ, որը չի կարող փոփոխվել կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով կամ գործատուի կարգադրությամբ:

Գործող ՀՀ աշխատանքային օրենսդրությունը սահմանում է նորմալ, կրճատ և ոչ լրիվ աշխատաժամանակի տևողություն: Նորմալ տևողությունը վերաբերում է թե՛ հիմնական (մշտական), թե՛ ժամանակավոր ու սեզոնային աշխատողներին:

Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող գերազանցել շաբաթական 40, օրական՝ 8 ժամը, իսկ արտաժամյա աշխատանքի ներառմամբ՝ շաբաթական՝ 48 և օրական՝ 12 ժամը:

Ամենօրյա աշխատաժամանակի 12 ժամը չգերազանցող տևողություն է սահմանվում նաև համատեղությամբ աշխատողների համար՝ այդ տևողության մեջ ներառելով հանգստի և սնվելու համար ընդմիջումները:

Աշխատանքային օրենսդրությունը շաբաթվա ընթացքում 48 ժամը չգերազանցող աշխատաժամանակի տևողություն է սահմանում առանձին կատեգորիայի աշխատողների համար (անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող բուժաշխատողներ, էներգիայի, գազի, ջրի մատակարարման և կապի ու վթարների հետևանքների վերացման մասնագիտացված ծառայությունների աշխատողներ, մանկական, դաստիարակչական կազմակերպությունների աշխատողներ և այլն): Այս աշխատողների աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 140-րդ հոդվածը աշխատաժամանակի կրճատ տևողություն է սահմանում՝

- 1) մինչև 7 տարեկանների համար՝ օրական 2, շաբաթական 4 ժամից ոչ ավելի,
- 2) 7-14 տարեկանների համար՝ օրական 3, շաբաթական 6 ժամից ոչ ավելի,
- 3) 12-14 տարեկանների համար՝ օրական 4, շաբաթական 12 ժամից ոչ ավելի,
- 4) 14-16 տարեկան աշխատողների համար՝ շաբաթական 24 ժամ,
- 5) 16-18 տարեկան աշխատողների համար՝ շաբաթական 36 ժամ,
- 6) այն աշխատողների համար, որոնց աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը

տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված՝ առողջության համար անվտանգ մակարդակի, շաբաթական՝ ոչ ավելի, քան 36 ժամ,

- 7) գիշերային ժամանակ (ժամը 22-ից մինչև 6-ը), ինչպես նաև մտավոր և հուզական գերլարված բնույթ կրող աշխատանքում (վերջինիս կարգը և պայմանները սահմանվում են օրենքով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով) ներգրավված աշխատողների համար: ՀՀ աշխատանքային գործող օրենսգիրքը, ի տարբերություն նախորդի (որը գիշերային աշխատաժամանակի տևողությունը կրճատում էր 1 ժամով), չի սահմանում գիշերային աշխատաժամանակի կրճատման կոնկրետ տևողություն: Գործնականում կիրառվում է 1 ժամով կրճատելու կարգը:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը սահմանում է նաև աշխատանքի տևողությունը ոչ աշխատանքային (տոն, հիշատակի) օրերի նախօրյակին մեկ ժամով կրճատելու կարգ, որը, սակայն, չի տարածվում կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատողների նկատմամբ (հոդված 147):

Աշխատաժամանակի կրճատ տևողությունը սահմանվում է՝ հաշվի առնելով.

- ա) աշխատողի ֆիզիկական (ֆիզիոլոգիական) առանձնահատկությունները (տարիք, առողջական վիճակ),
- բ) աշխատանքի պայմանները (վտանգավոր, վնասակար),
- գ) աշխատանքային գործունեության առանձնահատկությունները (հուզական լարվածություն, բարձր ինտելեկտուալ ակտիվություն) կամ աշխատանքի բնույթը (հոգեմյարդային լարում պահանջող):

Աշխատաժամանակի կրճատ տևողությունը պետք է տարբերել ոչ լրիվ աշխատաժամանակից: Այսպես.

ա) կրճատ աշխատաժամանակը որոշակի կատեգորիայի աշխատողների համար (ըստ աշխատանքային պայմանների և տարիքի) օրենքով սահմանված աշխատանքի ամբողջական տևողությունն է, իսկ ոչ լրիվ աշխատաժամանակը՝ օրենքով սահմանված աշխատաժամանակի որոշակի մասը (համապատասխան վարձատրությանը),

* Գիշերային աշխատանքում չի թույլատրվում ներգրավել անչափահասներին և այն անձանց, որոնց դա արգելված է բժշկական եզրակացությամբ: Հղի կանայք և մինչև 3 տարեկան երեխա խնամող աշխատողները գիշերային աշխատանքում կարող են ներգրավվել իրենց համաձայնությամբ՝ նախնական բուժօգնությունից և բժշկական եզրակացություն ներկայացնելուց հետո:

բ) կրճատ աշխատաժամանակը և դրա տևողությունն ու կիրառման շրջանակը (աշխատողների կատեգորիաները) սահմանում է օրենքը, իսկ ոչ լրիվ աշխատաժամանակը նախատեսվում է աշխատանքային պայմանագրի կողմերի համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ,

գ) կրճատ աշխատաժամանակը սահմանվում է աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ և պայմանագրի ողջ գործողության համար (բացի անչափահասի 18 տարին լրանալը), մինչդեռ ոչ լրիվ աշխատաժամանակը կարող է նախատեսվել և՛ աշխատանքի ընդունելու, և՛ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ժամանակ,

դ) աշխատաժամանակի կրճատումը ենթադրում է աշխատանքային օրվա՝ սահմանված տևողության նվազեցում, իսկ ոչ լրիվ աշխատաժամանակ, կողմերի համաձայնությամբ, կարող է սահմանվել՝ շաբաթվա աշխատանքային օրը (հերթափոխը) կամ աշխատանքային օրերը կրճատելու միջոցով կամ երկուսը միաժամանակ կիրառելով: Միաժամանակ, աշխատանքային օրվա ընթացքում ոչ լրիվ աշխատաժամանակը կարող է բաժանվել մասերի:

Ոչ լրիվ աշխատաժամանակի պայմանով պայմանագիր կնքելիս դա որպես էական պայման մատնանշվում է աշխատանքային պայմանագրում և աշխատանքի ընդունման մասին իրավական ակտում:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 141-րդ հոդվածի՝ ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է.

- 1) աշխատողի և գործատուի համաձայնությամբ,
- 2) աշխատողի պահանջով՝ կապված նրա առողջական վիճակի հետ, բժշկական եզրակացության հիման վրա,
- 3) հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով,
- 4) հաշմանդամի պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա,
- 5) ընտանիքի հիվանդ անդամի խնամքն իրականացնող աշխատողի պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա, սակայն ոչ ավելի, քան 6 ամիս ժամանակով և յուրաքանչյուր օրվա համար ոչ ավելի, քան օրվա սահմանված աշխատաժամանակի կեսը:

Հավելենք, որ, ըստ էության, ոչ լրիվ աշխատաժամանակ է սահմանվում նաև համատեղությամբ աշխատանքի համար:

Որպես ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատողի աշխատանքային իրավունքների պաշտպանության երաշխիք՝ ՀՀ աշխատանքային

քային օրենսգրքի 141-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է. «Ամենամյա արձակուրդի տևողությունը սահմանելու, աշխատանքային ստաժը հաշվարկելու, ավելի բարձր պաշտոնի նշանակվելու, որակավորումը բարձրացնելու, ինչպես նաև աշխատողի աշխատանքային այլ իրավունքներ իրականացնելու ժամանակ ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններում կատարված աշխատանքը հիմք չէ սահմանափակումներ կիրառելու համար»: Այլ խոսքով, ոչ լրիվ աշխատաժամանակի պայմանով աշխատողներն ունեն նույն հավասար աշխատանքային իրավունքները, ինչ նորմալ և կրճատ աշխատաժամանակով աշխատողները: Խոսքը վերաբերում է ամենամյա և ուսումնական լրիվ արձակուրդի, ընդհանուր հիմունքներով հավելյալ վարձատրության, տոն և հանգստյան օրերի, աշխատանքային գործունեության տևողության որպես ընդհանուր հիմունքներով աշխատանքային ստաժի իրավունքներին:

Աշխատաժամանակի տևողության խնդրի ամբողջական պարզաբանման նպատակով անդրադառնանք նաև «չնորմավորված աշխատանքային օր» հասկացությանը, որը, ի տարբերություն նախորդ աշխատանքային օրենսգրքի, ՀՀ աշխատանքային գործող օրենսգրքում չի գտել առանձին տեղ և սահմանում: Այն հիշատակվում է արտաժամյա աշխատանքին վերաբերող 144-րդ հոդվածում. «ղեկավար պաշտոնատար անձանց՝ սահմանված աշխատաժամանակը գերազանցող աշխատանք» ձևակերպմամբ: Վերջինս հնարավորություն է տալիս նկատելու, որ չնորմավորված աշխատանքային օրը որոշակի կատեգորիայի աշխատողների (պաշտոնների ցանկը սահմանվում է կազմակերպության ներքին կարգապահական կանոններով) համար օրենքով սահմանված ոչ հիմնական, հատուկ պայմաններով աշխատանքն է (արտաժամ չհամարվող), որը նրանք առանձին օրերին կատարում են սեփական մախաձեռնությամբ կամ գործատուի հանձնարարությամբ՝ արտադրական անհրաժեշտությունից ելնելով: Չնորմավորված աշխատանքային օրով աշխատող անձի աշխատանքի ծավալը և աշխատանքային պարտականությունների շրջանակը պետք է նախատեսվեն աշխատանքային պայմանագրով և պաշտոնական հրահանգներով: Չնորմավորված աշխատանքային օրով աշխատողների վրա տարածվում են աշխատաժամանակի հաշվարկի կարգը, աշխատաժամանակի՝ սահմանված սկիզբն ու ավարտը, հանգստի և սնվելու ընդմիջումները: Այդ անձինք նույնպես աշխատանքից ազատ են ամենշաբաթյա հանգստյան, ինչպես նաև տոնական ու հիշատակի օրերին:

Չնորմավորված աշխատանքային օրով աշխատողների համար օրենսդրությամբ սահմանվող փոխհատուցումը լրացուցիչ վճարովի արձակուրդն է (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդված):

Չարք 3. Արտաժամյա աշխատանք

Արտաժամյա աշխատանքը, ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդվածի, օրենքով սահմանված նորմալ և կրճատ աշխատաժամանակից ավելի տևողությամբ աշխատանքն է: Արտաժամյա աշխատանքի բնորոշման համար կարևոր նշանակություն ունի «աշխատաժամանակի տևողության սահմանում» եզրույթի ճիշտ մեկնաբանումը՝ այն ընկալելով որպես օրենքով և դրա հիման վրա ընդունված՝ կազմակերպության կանոնակարգերով ու ժամանակացույցով որոշված աշխատաժամանակի տևողություն: Աշխատաժամանակի սահմանված տևողությունից դուրս (ավելի) արված աշխատանքը արտաժամ է համարվում, եթե կատարվել է գործատուի կարգադրությամբ՝ անկախ այն բանից, թե դա մտնում է տվյալ աշխատողի աշխատանքային պարտականությունների մեջ, թե նա կատարել է իրեն հանձնարարված մեկ այլ աշխատանք:

Հիմք ընդունելով արտաժամյա աշխատանքի օրենսդրական բնորոշումը՝ հարկ է նշել, որ արտաժամյա աշխատանք չի կարող համարվել.

- 1) չնորմավորված աշխատանքային օրով աշխատող ղեկավար պաշտոնատար անձանց՝ սահմանված աշխատաժամանակը գերազանցող աշխատանքը,
- 2) համատեղությամբ, այսինքն՝ հիմնական աշխատանքային ժամանակից դուրս միևնույն կամ այլ գործատուի մոտ աշխատողի կատարած աշխատանքը,
- 3) ոչ լրիվ աշխատաժամանակի պայմանով կնքված աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատաժամանակից դուրս աշխատողի կատարած աշխատանքը, եթե այն չի գերազանցում աշխատանքային օրվա (հերթափոխի) ժամանակահատվածը:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը սահմանում է արտաժամյա աշխատանքի սահմանափակումները և կիրառման բացառիկ հիմքերը:

Արտաժամյա աշխատանքի չեն ներգրավվում՝

- 1) մինչև 18 տարեկան աշխատողները,
- 2) առանց արտադրությունից կտրվելու՝ հանրակրթական և մասնագիտական դպրոցներում սովորող աշխատողները՝ դասերի օրերին,
- 3) առողջության համար վտանգավոր և (կամ) վնասակար գործոնների ազդեցության պայմաններում աշխատողները:

Իրենց համաձայնությամբ արտաժամյա աշխատանքի կարող են ներգրավվել հղի կանայք և մինչև 1 տարեկան երեխա խնամող

աշխատողները, իսկ հաշմանդամները արտաժամյա աշխատանքի ներգրավվում են, եթե բժշկական եզրակացությամբ դա արգելված չէ նրանց:

Արտաժամյա աշխատանքը թույլատրվում է հետևյալ բացառիկ դեպքերում, եթե.

1) կատարվում է պետության պաշտպանության, ինչպես նաև տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթի այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման համար անհրաժեշտ աշխատանք,

2) անհրաժեշտ է ավարտել այն աշխատանքը, որ պատահական կամ չնախատեսված խոչընդոտների պատճառով չի կարող ավարտվել նորմալ աշխատաժամանակի ընթացքում, և եթե սկսված աշխատանքի դադարեցումը կարող է առաջացնել նյութերի փչացում, ոչնչացում կամ սարքավորումների անսարքություն,

3) իրականացվում են այնպիսի մեխանիզմների և սարքավորումների նորոգման կամ վերանորոգման աշխատանքներ, որոնց անսարքության հետևանքով ընդհատվել է զգալի թվով աշխատողների աշխատանքը,

4) աշխատանքի չի ներկայացել հերթափոխային աշխատողը, ինչը կարող է հանգեցնել աշխատանքի անընդհատության խաթարման, կատարվում են բեռնման կամ բեռնաթափման և դրանց հետ կապված այլ աշխատանքներ՝ առաքման և նշանակման կետերում բեռների կուտակումը և տրանսպորտային միջոցների պարապորդը կանխելու կամ վերացնելու, կազմակերպության պահեստներն ազատելու համար,

5) առկա է զործատուի պայմանագրային պարտավորությունների անհապաղ կատարման անհրաժեշտություն:

Արտաժամյա աշխատանքը տարվա ընթացքում չպետք է գերազանցի 180 ժամը¹, իսկ իրար հաջորդող 2 օրերի ընթացքում՝ 4 ժամը:

Գործատուն պարտավոր է յուրաքանչյուր աշխատողի արտաժամյա աշխատաժամանակը ստույգ հաշվառել աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում:

Արտաժամյա աշխատանքի համար օրենսդրությունը նախատեսում է վարձատրություն՝ բարձրացված չափերով (ժամային դրույքաչափից բացի հավելում՝ այդ դրույքաչափի 50%-ից ոչ պակաս):

¹ Եթե աշխատողը փաստացի կատարել է 180 ժամը գերազանցող արտաժամյա աշխատանք, ապա դա ամբողջությամբ վարձատրվում է արտաժամի համար սահմանված կարգով:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- տարբերակել փաստացի աշխատաժամանակը և օրենսդրությամբ դրան հավասարեցված (աշխատաժամանակ համարվող) ժամանակահատվածները,
- տարբերել նորմալ, կրճատ, ոչ լրիվ աշխատաժամանակներն ու արտաժամյա աշխատանքը,
- գիտենալ աշխատանքային իրավահարաբերությունների առանձնահատկությունները:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է աշխատաժամանակը, ի՞նչ կառուցվածք ունի այն:
- Որո՞նք են աշխատաժամանակի տեսակները:
- Ո՞ր աշխատանքն է համարվում արտաժամ, որո՞նք են դրա կիրառման հիմքերն ու առանձնահատկությունները:

ԹԵՄԱ 6. ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հարց 1. Հանգստի ժամանակի հասկացությունը և տեսակները

Աշխատաժամանակի կարգավորումը աշխատող անձի հանգստի սահմանադրական իրավունքի իրավաբանական երաշխիքներից մեկն է, ուստի աշխատաժամանակը կարգավորող իրավանորմերն անխզելիորեն կապված են հանգստի ժամանակը կարգավորող իրավանորմերի հետ՝ կազմելով աշխատանքային իրավունքի միասնական ինստիտուտ: Հանգստի ժամանակի տևողությունը կարող է սահմանվել թե՛ անմիջականորեն՝ ըստ հանգստի տեսակների և դրանց տևողության, թե՛ անուղղակիորեն՝ ըստ աշխատաժամանակի տևողության և տվյալ շաբաթվա որոշակի ժամանակահատվածների (օրինակ՝ հերթափոխ, ժամ) սահմաններում բաշխմամբ:

Հանգստի ժամանակն աշխատանքային պայմանագրով նախատեսված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում աշխատողը, օրենքին, կազմակերպության կոլեկտիվ պայմանագրին և ներքին աշխատանքային կանոններին (ժամանակացույցին) համապատասխան, պետք է լինի աշխատանքից ազատ: Այդ ժամանակը նա իր հայեցողությամբ օգտագործում է ոչ միայն իր ազատ ժամանցի ու հանգստանալու, այլև աշխատունակությունը վերականգնելու նպատակով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 151-րդ հոդվածով նախատեսված հանգստի ժամանակի տեսակներն են.

- 1) հանգստանալու և սնվելու համար ընդմիջումը,
- 2) աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում հանգստանալու համար լրացուցիչ և հատուկ ընդմիջումները,
- 3) աշխատանքային օրերի (հերթափոխների) միջև ընկած անընդմեջ հանգիստը (ամենօրյա կամ միջհերթափոխային),
- 4) ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը (հանգստյան օրեր),
- 5) ամենամյա հանգիստը (ոչ աշխատանքային՝ տոնական ու հիշատակի օրեր, արձակուրդ):

Աշխատողին հանգստանալու և սնվելու համար տրամադրվում է ընդմիջում 2 ժամից ոչ ավելի և կես ժամից ոչ պակաս տևողությամբ, որը չի ներառվում աշխատաժամանակում, ուստի չի վճարվում: Աշխատողն այն օգտագործում է սեփական հայեցողությամբ: Նրան թույլատրվում է ընդմիջման ժամանակահատվածում բացակայել աշխատավայրից: Հանգստանալու և սնվելու համար ընդմիջումը պետք է տրամադրվի աշխատանքային օրվա (հերթափոխի)

կեսից հետո, սակայն ոչ ուշ, քան աշխատանքը սկսելուց 4 ժամ հետո: Հանգստի և սնվելու համար ընդմիջման սկիզբը և ավարտը սահմանվում են կազմակերպության ներքին կարգապահական կանոններով, աշխատանքի ժամանակացույցով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով: Այն աշխատանքներում, որոնց արտադրական պայմաններն ու բնույթը հնարավորություն չեն ընձեռում տրամադրելու հանգստի և սնվելու համար ընդմիջում, գործատուն պարտավոր է պայմաններ ապահովել աշխատանքի ընթացքում աշխատողի սնվելու համար:

ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, այս ընդմիջումից բացի, սահմանվում են հատուկ և լրացուցիչ ընդմիջումներ՝ հաշվի առնելով.

- աշխատանքի վտանգավոր, վնասակար պայմանները,
- տարիքը. մինչև 18 տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տևողությունը գերազանցում է 4 ժամը, տրվում է լրացուցիչ կես ժամ ընդմիջում,
- մայրության պաշտպանության երաշխիքը. կրծքով կերակրող կնոջը, մինչև երեխայի 1,5 տարին լրանալը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, երեխային կերակրելու համար յուրաքանչյուր 3 ժամը մեկ տրամադրվում են լրացուցիչ ընդմիջումներ կես ժամից ոչ պակաս տևողությամբ:

Որոշակի կատեգորիայի աշխատողների համար աշխատանքային օրենսդրությունը նախատեսում է հատուկ ընդմիջումներ, որոնք տրամադրվում են, եթե աշխատանքը կատարվում է օդի՝ պլյուս 40 աստիճանից բարձր և մինուս 10 աստիճանից ցածր ջերմաստիճանային պայմաններում, ինչպես նաև ծանր ֆիզիկական կամ մտավոր և հուզական գերլարված բնույթ կրող կամ առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ պայմաններում:

Լրացուցիչ և հատուկ ընդմիջումները ներառվում են աշխատաժամանակում, հետևաբար՝ հիմք են միջին աշխատավարձի չափով վճարման:

Լրացուցիչ և հատուկ ընդմիջումների քանակն ու տևողությունը, հանգստանալու տեղը որոշվում են կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, իսկ դրանց տրամադրման կարգը՝ նաև կազմակերպության ներքին կարգապահական կանոններով և աշխատանքի ժամանակացույցով:

Հանգստի երրորդ տեսակի՝ աշխատանքային օրերի (հերթափոխների) միջև ամենօրյա անընդմեջ հանգստի կապակցությամբ նշենք, որ օրենսդիրը կարևորում է դրա տևողությունը, այն է՝ 11

ժամից ոչ պակաս, իսկ 14-16 տարեկան աշխատողների համար՝ 14 և 16-18 տարեկան աշխատողների համար՝ 12 ժամից ոչ պակաս:

Ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածով՝ ըստ որի ընդհանուր հանգստյան օրը կիրակի է, իսկ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ նաև շաբաթը: Մինչև 18 տարեկան աշխատողներին շաբաթվա ընթացքում որպես հանգիստ տրվում է ոչ պակաս, քան 2 աշխատանքային օր:

Այն կազմակերպություններում, որտեղ ընդհանուր հանգստյան օրն անհնար է դադարեցնել աշխատանքը՝ պայմանավորված բնակչությանը սպասարկելու անհրաժեշտությամբ, հանգստյան օր է սահմանում գործատուն, իսկ արտադրատեխնիկական պայմաններով պայմանավորված աշխատանքը դադարեցնելու անհնարինության դեպքում և չընդհատվող աշխատանքային ռեժիմով աշխատող կազմակերպություններում հանգստյան օրերը տրամադրվում են շաբաթվա այլ օրերին՝ աշխատանքի ժամանակացույցով յուրաքանչյուր խմբի աշխատանքների համար սահմանված հերթակառուցությամբ:

Ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը չպետք է պակաս լինի 35 ժամից (աշխատանքի ժամանակացույցով աշխատողների հանգստյան օրերը պետք է հաջորդեն միմյանց):

ՀՀ-ում ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերը, սահմանվում են օրենքով (եկեղեցական կամ ավանդական տոնական և հիշատակի այլ օրերը համարվում են աշխատանքային):

Հանգստի ժամանակի տեսակների մեջ հատուկ տեղ ունի արձակուրդը, որի իրավունքը ձեռք բերելու համար աշխատողը պետք է գտնվի աշխատանքային հարաբերությունների մեջ. այդ իրավունքը կախված է աշխատանքի ոլորտից, զբաղվածության աստիճանից, աշխատավարձից, պաշտոնից կամ աշխատանքային պայմանագրով որոշված գործառույթից և աշխատանքային պայմաններից, սակայն վերջիններս կարևոր դեր ունեն արձակուրդի տրամադրման կարգը, տևողությունը և վճարումը իրականացնելիս:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը նախատեսում է ամենամյա և նպատակային արձակուրդի տեսակներ: Ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատվածն է, որը տրամադրվում է աշխատողին հանգստի և աշխատունակության վերականգնման համար՝ աշխատատեղի (պաշտոնի) պահպանմամբ: Ամենամյա վճարովի արձակուրդները լինում են նվազագույն, երկարացված և լրացուցիչ:

Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ

վեցօրյակի դեպքում՝ 24*։ Գործատուն իրավունք ունի ներքին իրավական ակտով սահմանելու ավելի երկար տևողությամբ արձակուրդ* (այս կարգը չի տարածվում պետական և համայնքային բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի վրա)։

Ամենամյա երկարացված արձակուրդ տրամադրվում է մտավոր և հուզական գերլարվածություն և մասնագիտական ռիսկ պարունակող աշխատանք կատարողներին (ցանկը սահմանում է ՀՀ Կառավարությունը), ընդ որում, հնգօրյակով աշխատողներին՝ մինչև 25, վեցօրյակով աշխատողներին՝ մինչև 30 աշխատանքային օր տևողությամբ, իսկ առանձին դեպքերում (օրենքով սահմանված), համապատասխանաբար՝ 35 և 42 աշխատանքային օրեր։

Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի՝ ամենամյա լրացուցիչ արձակուրդ կարող է տրամադրվել.

- 1) աշխատանքի վնասակար և վտանգավոր պայմաններում աշխատողներին,
- 2) չնորմավորված աշխատանքային օրով աշխատողներին,
- 3) հատուկ բնույթի աշխատանքներում ընդգրկված աշխատողներին։

Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, ինչպես նաև այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանվում են ՀՀ Կառավարության կողմից։ Լրացուցիչ արձակուրդի տրամադրումը միտված է մի քանի խնդիրների լուծմանը. մի դեպքում՝ դա ունի աշխատողի առողջության համար բնակլիմայական, արտադրական գործոնների անբարենպաստ ազդեցության և չնորմավորված աշխատանքի փոխհատուցման, մյուս դեպքում՝ ոլորտի կամ կազմակերպության աշխատողի երկարամյա աշխատանքը խրախուսելու նպատակ։

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը սահմանում է նպատակային արձակուրդի 5 տեսակ.

- 1) հղիության և ծննդաբերության,
- 2) մինչև 3 տարեկան երեխայի խնամքի,
- 3) ուսումնական,
- 4) պետական և հասարակական պարտականությունների կատարման,

* Նվազագույն արձակուրդի ամենակարճ տևողությունը (20 օր) սահմանված է Կանադայի աշխատանքային օրենսդրությամբ։

* Ֆրանսիայում 1 ամիս անընդմեջ աշխատողը ձեռք է բերում 2,5 օրվա վճարովի հավելյալ արձակուրդ։

5) չվճարվող*:

Աշխատող կանանց լրիվ աշխատավարձի վճարմամբ տրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր, բարդ ծննդաբերության դեպքում՝ 155 օր, իսկ միաժամանակ մեկից ավելի երեխաների ծնունդի դեպքում՝ 180 օր տևողությամբ: Նորածին որդեգրած կամ խնամակալ նշանակված աշխատողին այս արձակուրդը տրվում է որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը:

Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդը տրամադրվում է խնամողի (մոր, հոր, պապի, տատի, խորթ մոր, խորթ հոր կամ այլ հարազատի, խնամակալի) ցանկությամբ, ընդ որում, ամբողջությամբ կամ մաս առ մաս:

Ուսումնական արձակուրդը տրվում է և՛ բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական հաստատությունում սովորող, և՛ ուսումնական հաստատություն ընդունվելու նպատակով քննություններին նախապատրաստվող աշխատողներին (յուրաքանչյուր քննության համար՝ 3 աշխատանքային օր): Սովորող աշխատողներին ուսումնական արձակուրդ տրվում է քննության համար՝ 3, ստուգարքի համար՝ 2, ավարտական քննությունների համար՝ 6, ավարտական աշխատանքի կամ թեզի համար՝ 30 աշխատանքային օր, իսկ լաբորատոր աշխատանքների համար՝ ուսումնական պլանով սահմանված աշխատանքային օրերի քանակով: Ուսումնական արձակուրդի մեջ չի հաշվարկվում ուսումնական հաստատություն մեկնելու և վերադառնալու ժամանակը:

Պետական ու հասարակական պարտականությունների կատարման համար աշխատողը (աշխատատեղի և միջին աշխատավարձի պահպանմամբ) ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից՝

- ընտրական իրավունքն իրականացնելիս,
- դատավարության մասնակցի կարգավիճակով այդ մարմինների կանչով ներկայանալիս և որպես աշխատողների ներկայացուցիչ՝ դատական նիստերին մասնակցելիս,
- դոնորի պարտականություն կատարելիս:

Չվճարվող արձակուրդի տրամադրման, նաև դրա տևողությունը սահմանելու իրավունքը, որպես կանոն, վերապահվում է գործատուին: Միաժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահ-

* Ֆրանսիայում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ ունեցող աշխատողին մինչև 1 տարի ժամկետով տրվում է չվճարվող արձակուրդ՝ սեփական կազմակերպություն ստեղծելու նպատակով, որի ավարտից հետո աշխատողը վերականգնվում է իր նախկին աշխատատեղում կամ անցնում է այլ համարժեք աշխատանքի:

մանվում են աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդ տրամադրելու հետևյալ պարտադիր հիմքերը.

- 1) հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ անուսնուն. այդ արձակուրդի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել երկու ամիսը,
- 2) հաշմանդամ կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին՝ բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քանի 30 օր տարվա ընթացքում,
- 3) աշխատողի անուսնության դեպքում՝ 3 աշխատանքային օր,
- 4) ընտանիքի մահացած անդամի թաղման հետ կապված՝ ոչ պակաս 3 օրից:

Կոլեկտիվ պայմանագրով կարող են սահմանվել չվճարվող արձակուրդի այլ հիմքեր:

Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ: Քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան երեսուր օր:

Ֆարց 2. Ամենամյա արձակուրդի տրամադրման կարգը և վճարումը

Ամենամյա արձակուրդը աշխատողի ցանկությամբ կարող է տրամադրվել մասերով: Արձակուրդի մասերից մեկի տևողությունը չի կարող պակաս լինել 10 աշխատանքային օրից՝ հնգօրյակով աշխատողների և 12 աշխատանքային օրից՝ վեցօրյակով աշխատողների համար:

Ամենամյա լրացուցիչ արձակուրդը միացվում է ամենամյա նվազագույն արձակուրդին և կարող է տրամադրվել դրա հետ կամ առանձին:

Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ տարում:

Աշխատանքի առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է տվյալ կազմակերպությունում ան-

ընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո, բացառությամբ՝ համատեղությամբ աշխատողների: Երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է աշխատանքային տարվա ցանկացած ժամանակ՝ ամենամյա արձակուրդի տրամադրման հերթականությանը համապատասխան, որը սահմանվում է կոլեկտիվ պայմանագրով: ԴՅ աշխատանքային օրենսդրությունը թույլատրում է մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ տրամադրել կանանց՝ հղիության ու ծննդաբերության արձակուրդից առաջ կամ հետո: Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրով կարող են նաախատեսվել այլ դեպքեր:

Անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության իրավունքը աշխատանքային օրենսդրությունը վերապահում է՝

- 1) մինչև տասնութ տարեկան աշխատողներին,
- 2) հղի կանանց,
- 3) մինչև 14 տարեկան երեխա խնամող աշխատողին:

Ամենամյա արձակուրդը հղի կնոջ ամուսնուն, վերջինիս ցանկությամբ, տրամադրվում է կնոջ հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում:

Արտոնություն է սահմանված նաև.

1) Ուսումնական հաստատությունների մանկավարժների համար: Աշխատանքային առաջին տարում ամենամյա արձակուրդը նրանց տրամադրվում է սովորողների և ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ են նրանք սկսել իրենց աշխատանքը:

2) Աշխատանքը և ուսումը համատեղող աշխատողների համար: Նրանց ամենամյա արձակուրդը, իրենց ցանկությամբ, տրամադրվում է քննությունների, ստուգարքների, ավարտական (դիպլոմային) աշխատանքների նախապատրաստման, լաբորատոր աշխատանքների կատարման ժամկետներին համապատասխան:

3) Հիվանդին կամ հաշմանդամին տանը խնամող աշխատողի, ինչպես նաև քրոնիկ հիվանդությամբ տառապող այն աշխատողի համար, որի հիվանդության սրացումը կախված է մթնոլորտային պայմաններից: Բժշկական եզրակացության հիման վրա՝ ամենամյա արձակուրդը նրանց տրամադրվում է իրենց նախընտրած ժամանակ:

Անդրադառնանք ամենամյա արձակուրդից աշխատողին հետ կանչելու խնդրին: Արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ: Աշխատողի համաձայնությունը կամ միջնորդությունը պարտադիր է համարվում նաև ամենամյա

արծակուրդի տեղափոխման համար: Միաժամանակ, ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի, ամենամյա արծակուրդը կարող է տեղափոխվել նաև, եթե աշխատողը.

- 1) գտնվում է ժամանակավոր անաշխատության վիճակում,
- 2) ձեռք է բերել նպատակային արծակուրդի իրավունք,
- 3) մասնակցում է տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման աշխատանքներին՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ կարգով է նա ներգրավվել այդ աշխատանքներում:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն առանձին նորմերով սահմանում է ամենամյա արծակուրդի տեղափոխման, երկարաձգման, ինչպես նաև ամենամյա արծակուրդի չօգտագործված մասը աշխատողին տրամադրելու կարգը (166-168-րդ հոդվածներ): Այսպես՝ եթե վերը նշված երեք պատճառը կամ այլ պատճառներ (որոնց հետևանքով ամենամյա արծակուրդը հնարավոր չէ օգտագործել) առաջացել են մինչև ամենամյա արծակուրդի սկսվելը, ապա, աշխատողի և գործատուի համաձայնությամբ, ամենամյա արծակուրդը տեղափոխվում է այլ ժամանակ, իսկ եթե այդ պատճառներն առաջացել են ամենամյա արծակուրդի ընթացքում, ապա ամենամյա արծակուրդը երկարաձգվում է համապատասխան օրերի քանակով:

Տեղափոխված ամենամյա արծակուրդը, ինչպես նաև դրա չօգտագործված մասը, որպես կանոն, տրամադրվում են նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար աշխատողին չի հատկացվել ամենամյա արծակուրդ: Աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ ամենամյա արծակուրդի չօգտագործված մասը կարող է տեղափոխվել և միացվել հաջորդ տարվա ամենամյա արծակուրդին:

Աշխատանքից ազատվելիս չօգտագործված ամենամյա արծակուրդը, այդ իրավունքը ձեռք բերած աշխատողի ցանկությամբ, տրամադրվում է ազատման տարին, ամիսը, ամսաթիվը տեղափոխելու միջոցով: Այդ դեպքում աշխատանքից ազատման օր է համարվում ամենամյա արծակուրդի ժամկետի ավարտին հաջորդող օրը:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունն այս կարգը բացառում է աշխատանքային օրենսդրության պահանջները խախտած աշխատողների համար, երբ.

- 1) աշխատողը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը,
- 2) աշխատողը զրկվել է որոշակի աշխատանք կատարելու իրավունքից,
- 3) աշխատողը աշխատանքի ընդունվելիս ներկայացրել է կեղծ տեղեկատվություն (փաստաթղթեր), ինչպես նաև թաքցրել է որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքից զրկված լինելու փաստը,
- 4) աշխատողն առանց հարգելի պատճառների պարբերաբար չի կատարել իր (պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով) պարտականությունները,
- 5) գործատուն կորցրել է վստահությունը աշխատողի նկատմամբ (զաղտնիք հրապարակելու, իր աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք կատարելու, դրամական կամ ապրանքային վնաս հասցնելու դեպքերում):

Յակիրճ անդրադառնանք նաև ամենամյա արձակուրդի վճարման կարգին: Ամենամյա արձակուրդի համար գործատուն աշխատողին պետք է վճարի միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է՝ աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելով:

Ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ՝ աշխատողի դիմումում նշված արձակուրդի սկզբին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե աշխատողի համար հաշվարկված աշխատավարձը սահմանված ժամկետում չի վճարվում աշխատողից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը երկարաձգվում է այնքան օրով, որքան օրով երկարաձգվել է աշխատավարձի վճարումը, և երկարաձգված ժամանակի համար վճարումը կատարվում է այնպես, ինչպես ամենամյա արձակուրդի համար:

Ամենամյա արձակուրդից հետ կանչված և աշխատանքում ներգրավված աշխատողին գործատուն վճարում է աշխատավարձ՝ անկախ ամենամյա արձակուրդի վճարումը կատարած լինելու հանգամանքից: Վճարված, սակայն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերը հետագայում օգտագործելու դեպքում այս օրերի համար գործատուն, ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով, վճարում է միջին աշխատավարձ:

Ինչ վերաբերում է չօգտագործված ամենամյա արձակուրդի հատուցմանը, ապա պետք է իմանալ, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքն արգելում է ամենամյա արձակուրդի փոխարինումը

դրամական հատուցմամբ: Եթե աշխատանքային պայմանագրի լուծման հետևանքով աշխատողին չի կարող տրամադրվել ամենամյա արձակուրդ, կամ աշխատողը չի ցանկանում դրա տրամադրումը, ապա նրան վճարվում է դրամական հատուցում:

Ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցում վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- պատկերացում կազմել հանգստի ժամանակի իրավական կարգավորման նշանակության, հանգստի ժամանակի տեսակների մասին
- տարբերակել ամենամյա և նպատակային արձակուրդների տեսակները (ենթատեսակները) և տրամադրման կարգի օրենսդրական պահանջները:

Ստուգիչ հարցեր

- Որպես տնտեսագիտական և իրավական կատեգորիա՝ ի՞նչ է հանգստի ժամանակը:
- Որո՞նք են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հանգստի ժամանակի տեսակները:
- Որո՞նք են ամենամյա արձակուրդի տեսակները, ինչպե՞ս են դրանք տրամադրվում աշխատողին:
- Որո՞նք են նպատակային արձակուրդի տեսակները:

ԹԵՄԱ 7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ: ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Չարց 1. Աշխատանքային կարգապահության հասկացությունը և դրա ապահովման պայմանները

Ցանկացած համատեղ գործունեություն որոշակի փոխհամաձայնեցման և կարգուկանոնի կարիք ունի, հետևաբար՝ առանց կարգապահության չի կարող լինել ոչ կոլեկտիվ, ոչ էլ կազմակերպված աշխատանք: Դա է պատճառը, որ բոլոր աշխատողներին ներկայացվող հիմնական պահանջներից մեկը աշխատանքային կարգապահության պահպանումն է, որը, միաժամանակ, աշխատանքի արդյունավետ կազմակերպման նախադրյալներից է: Աշխատանքային կարգապահությունն ունի հատուկ նշանակություն և նպաստում է.

- 1) աշխատանքի արտադրողականության բարձրացմանը,
- 2) նորարարություններին՝ աշխատանքում,
- 3) դժբախտ դեպքերի կրճատմանը և աշխատողի առողջության պաշտպանությանը:

Յուրաքանչյուր աշխատանքային պայմանագրով սահմանվում է, որ աշխատողն աշխատանքային գործառույթը պետք է իրականացնի՝ ենթարկվելով աշխատանքային ներքին կարգուկանոնին, իսկ գործատուն պետք է ապահովի աշխատանքային անհրաժեշտ պայմաններ և վճարի աշխատողին: Ինչպես նկատում ենք, աշխատանքային կարգապահությունը, որպես իրավական կատեգորիա, բնույթով երկկողմ է, ներկայացնում է ինչպես գործատուի պարտականությունը՝ աշխատողի համար ապահովելու աշխատանքային գործառույթն առավել արդյունավետ իրականացնելու պատշաճ պայմաններ, այնպես էլ աշխատողի պարտավորությունը՝ անշեղորեն պահպանելու օրենքով և դրա հիման վրա գործատուի կողմից սահմանված վարքագծի կանոնները (կարգապահական կանոններ, աշխատանքի անվտանգության պահանջներ, գործատուի գույքի պահպանություն): Այս առումով, աշխատանքային կարգապահություն ասելով հասկանում ենք աշխատանքային պայմանագրի կողմերի (սուբյեկտների) պարտականությունները (աշխատանքային կարգապահություն սուբյեկտիվ իմաստով):

Այսպիսով՝ աշխատանքային կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական

ակտերով սահմանված վարքագծի այն կանոններն են, որոնք պարտադիր են բոլոր աշխատողների համար:

Գործատուի ներքին իրավական ակտերը (կազմակերպության ներքին կարգապահական կանոններ) կանոնակարգում են աշխատողի աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի (օրվա) ռեժիմը, աշխատաժամանակի հաշվառման կարգը, խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ընդմիջումները, ամենամյա արձակուրդները (հիմնական և լրացուցիչ), չվճարվող արձակուրդները:

Աշխատանքային կարգապահության ապահովման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսդրությունը նախատեսում է երկու իրավական մեթոդներ՝ խրախուսանք և հարկադրանք:

Առաջինը պայմանավորվում է աշխատողի և գործատուի տնտեսական շահով՝ աշխատանքի վերջնական արդյունքում, քանի որ գործատուի նպատակն ավելի մեծ շահույթ ստանալն է, իսկ աշխատողին՝ լրացուցիչ վարձատրություն կամ այլ եկամուտ (դիվիդենտ): Հարկադրանքը (կարգապահական տույժ) իրավախախտ աշխատողի նկատմամբ կիրառվող, օրենքով սահմանված նյութական և բարոյական ներազդման միջոց է: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն. «Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը»:

ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ խրախուսանքի միջոցները սահմանվում են ոչ սպառիչ (կազմակերպության ներքին կարգապահական կանոններով և կոլեկտիվ պայմանագրով կարող են սահմանվել այլ տեսակներ), իսկ կարգապահական տույժերը՝ սպառիչ ցանկով:

Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարած աշխատողի նկատմամբ գործատուն որպես խրախուսանքի միջոց կիրառում է.

- 1) գրավոր շնորհակալություն,
- 2) միանվագ դրամական պարգևատրում,
- 3) հուշանվերով պարգևատրում,
- 4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում,
- 5) կարգապահական տույժի հանում:

Գործատուն իրավունք ունի նաև օրենքով նախատեսված դեպքերում և կարգով աշխատողին ներկայացնելու պետական պարգևների:

Աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողի նկատմամբ կիրառվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված հետևյալ կարգապահական տույժերը.

- 1) նկատողություն,
- 2) խիստ նկատողություն,
- 3) աշխատանքային պայմանագրի լուծում, որը կիրառվում է հետևյալ հինգ դեպքերում՝
 - աշխատանքային պարտականություններն առանց հարգելի պատճառների պարբերաբար չկատարելը,
 - աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը,
 - ոչ սթափ վիճակում աշխատանքի վայրում գտնվելը,
 - ողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը,
 - պարտադիր բժշկական զննությունից հրաժարվելը կամ խուսափելը:

Օրենքով չնախատեսված կարգապահական տույժի կիրառումն արգելվում է, իսկ առանձին կատեգորիայի աշխատողների նկատմամբ (օրինակ՝ պետական ծառայողների) օրենքով կարող են սահմանվել նաև կարգապահական այլ տույժեր*։ Կարգապահական տույժերն ըստ կիրառման լինում են երկու տեսակի. ընդհանուր՝ բոլոր աշխատողների համար և հատուկ՝ տնտեսության այն ճյուղերի (երկաթուղային և օդային տրանսպորտ, ատոմակայան, մաքսային գործունեության ոլորտ, պետական ծառայություններ) աշխատողների համար, որտեղ գործում են կարգապահության հատուկ կանոնակարգեր և առանձին դրույթներ:

Կարգապահական տույժերին զուգահեռ, օրենսդիրը նաև համապատասխան երաշխիքներ է սահմանում աշխատողի համար: Դրանք են՝

- 1) կարգապահական պատասխանատվության իրավական հիմքը (կարգապահական զանցանքի փաստը),
- 2) կարգապահական տույժի կիրառման կարգը և ժամկետները,
- 3) կարգապահական տույժը հանելու կարգը,
- 4) կարգապահական տույժը դատական կարգով բողոքարկելու իրավունքը՝ տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում,
- 5) կարգապահական տույժերի՝ օրենսդրի կողմից սպառիչ ցանկով սահմանումը:

* Ֆրանսիայի աշխատանքային օրենսդրությամբ, հիմք ընդունելով աշխատողի անհարգելի բացակայությունը, կրճատվում է ամենամյա վճարովի արձակուրդի տևողությունը:

Կարգապահական տույժ կիրառելիս գործատուն պետք է հաշվի առնի խախտման բնույթը (ծանրությունը) և հետևանքները, աշխատողի մեղքը, խախտումը կատարելու հանգամանքները և աշխատողի կատարած նախկին աշխատանքը: Մինչև տույժի կիրառումը գործատուն պարտավոր է աշխատողից պահանջել գրավոր բացատրություն: Գործատուի սահմանած ժամկետում աշխատողի կողմից առանց հարգելի պատճառների այն չներկայացնելու դեպքում կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար թույլատրվում է կիրառել միայն մեկ կարգապահական տույժ: Կարգապահական տույժը, ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 227-րդ հոդվածի, կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա (չհաշված ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայությունը, գործուղման և արձակուրդի ժամանակահատվածները), կատարման օրվանից՝ վեց ամսվա ընթացքում (կատարման օրվանից մեկ տարվա ժամկետ է սահմանվում, եթե խախտումը հայտնաբերվել է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության գումարային կամ այլ արժեքների ստուգման ընթացքում):

Կարգապահական տույժն ունի նաև գործողության ժամկետ: Այն համարվում է մարված, եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից մեկ տարվա ընթացքում այդ աշխատողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի: Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն է կատարել իր աշխատանքային պարտականությունները:

Չարք 2. Նյութական պատասխանատվություն

Աշխատանքային օրենսդրության սկզբունքները բովանդակող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածը նախատեսում է յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի (ներառյալ անվտանգության ապահովման և հիգիենայի պահանջները բավարարող պայմանները, հանգստի իրավունքը) ապահովում, որը գործատուի հիմնական պարտականություններից մեկն է, սակայն աշխատողն էլ, իր հերթին, պետք է պահպանի սահմանված պահանջները և խնամքով վերաբերվի գործատուի գույքին: Նյութական պատասխանատվությունը և՛ աշխատողի, և՛ գործատուի սեփականության պաշտպանության միջոցնե-

րից մեկն է: Այն դեպքերում, երբ աշխատանքային պամանագրի կողմը (գործատուն կամ աշխատողը) իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով գույքային վնաս է պատճառում մյուս կողմին, առաջանում է նյութական պատասխանատվություն (պատճառված վնասի հատուցման պարտավորություն)¹: Աշխատանքային պայմանագրի կողմի նյութական պատասխանատվության հիմքը նրա հակաօրինական և մեղավոր գործողությամբ կամ անգործությամբ վնաս պատճառելն է պայմանագրի մյուս կողմին: Ինչպես նկատում ենք, նյութական պատասխանատվության կիրառման կարևոր պայմաններից մեկը իրավախախտի և տուժողի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքն է և այդ պարագայում՝ վնասի առաջացման փաստը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ նյութական պատասխանատվություն (գործատուի կամ աշխատողի) առաջանում է հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում.

- 1) Պատճառված վնաս (առկա վնասի փաստ): Աշխատանքային օրենսդրությամբ հատուցման է ենթակա ոչ միայն ուղղակի իրական վնասը, այսինքն՝ գույքի կորուստը, վնասվածքը, նվազումը, դրանց վերականգնման կամ նորը ձեռք բերելու վճարները (ծախսը): Աշխատանքային օրենսդրությունը չի արգելում աշխատողից բռնագանձել նրա ոչ ճիշտ գործողությունների (կամ անգործության, օրինակ՝ գործալքության) հետևանքով գործատուի չստացած եկամուտը:
- 2) Առկա է խախտողի մեղքը:
- 3) Վնասը պատճառվել է անօրինական գործողության հետևանքով:
- 4) Առկա է պատճառական կապ անօրինական գործողության և վնասի առաջացման միջև: Օրենքը բացառում է անձի նյութական պատասխանատվությունը, եթե վնասն առաջացել է արտադրատնտեսական ռիսկի գործոնի, անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ վիճակում գործած գործողությունների հետևանքով:

Աշխատանքային պայմանագրի կողմը նյութական պատասխանատվություն կրում է միայն իր պատճառած վնասի համար: Այլ կերպ ասած, պատասխանատվությունն առաջանում է այն վնասի համար, որն այդ սուբյեկտի գործողության (անգործության) օբյեկտիվ հետևանքն է (արդյունքը):

¹ Վնասից բխող պարտավորությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ հոդված):

5) Խախտում թույլ տված և տուժած կողմերն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ:

6) Վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն առանձին նորմերով սահմանում է նաև գործատուի և աշխատողի նյութական պատասխանատվության առաջացման հիմքերը (դեպքերը): Գործատուն, ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 234-րդ հոդվածի, նյութական պատասխանատվության է ենթակա, եթե.

1) աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից չապահովագրված աշխատողը հիվանդացել է մասնագիտական հիվանդությամբ, ստացել է խեղում կամ մահացել է,

2) վնասն առաջացել է աշխատողի գույքի կորստի, ոչնչացման կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու հետևանքով,

3) թույլ են տրվել աշխատողի կամ այլ անձանց գույքային իրավունքների այլ խախտումներ:

Խոսքը գործատուի կատարած հետևյալ խախտումների մասին է.

ա) աշխատողին աշխատանքից ապօրինի կամ սահմանված կարգի խախտմամբ ազատելը,

բ) աշխատողին անօրինական կարգով այլ աշխատանքի փոխադրելը,

գ) աշխատողի աշխատանքային գրքույկում աշխատանքից ազատման պատճառների ոչ ճիշտ կամ գործող օրենքին ոչ համապատասխան ձևակերպումը, որն աշխատողին խոչընդոտել է նոր աշխատանքի անցնելիս,

դ) աշխատանքից ազատված աշխատողի աշխատանքային գրքույկը ժամանակին նրան չհաճնելը,

ե) աշխատանքից ապօրինի ազատված կամ այլ աշխատանքի փոխադրված նախկին աշխատողին իր աշխատատեղում վերականգնելու դատարանի որոշումը չկատարելը,

զ) աշխատանքի ընդունելուց անօրինական հրաժարումը կամ աշխատանքային պայմանագրի ժամանակին չկնքումը:

Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառված նյութական վնասը, եթե դա առաջացել է՝

1) գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով,

2) նյութերի գերաճախս թույլ տալու հետևանքով,

- 3) աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս այլ անձանց պատճառված վնասը գործատուի կողմից հատուցելուց,
- 4) գործատուին պատկանող գույքը փչացնելու պատճառով կատարված ծախսերից,
- 5) նյութական արժեքների ոչ պատշաճ պահպանության հետևանքով,
- 6) անորակ արտադրանքի թողարկումը կանխելու համար դիտավորյալ կերպով միջոցառումներ չձեռնարկելու, նյութական կամ դրամական արժեքները հափշտակելու հետևանքով:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը սահմանում է նյութական պատասխանատվության երկու տեսակ՝ սահմանափակ և լրիվ (լիակատար): Սահմանափակ նյութական պատասխանատվությունը աշխատողի՝ օրենսդրությամբ սահմանված չափով վնասը հատուցելու պարտականությունն է: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ հոդվածը, որը նախատեսում է աշխատողի նյութական պատասխանատվության սահմանները, աշխատողին պարտավորեցնում է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, բայց ոչ ավելի նրա երեք ամսվա միջին աշխատավարձի չափից, բացառությամբ՝ աշխատողի կողմից լրիվ ծավալով վնասը հատուցելու՝ օրենքով սահմանված դեպքերի: Վերջիններս սպառիչ ցանկով սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդվածում: Վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման, եթե՝

- 1) պատճառվել է դիտավորությամբ,
- 2) պատճառվել է աշխատողի հանցավոր գործունեության հետևանքով (ընդ որում, դա պետք է հաստատված լինի դատական ակտով¹),
- 3) աշխատողի հետ կնքվել է լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր (այդպիսի պայմանագիր (գրավոր) կնքվում է այն չափափաս աշխատողի հետ, ում աշխատանքն անմիջականորեն կապված է նյութական արժեքների պահպանության, ընդունման, դուրսգրման, առուծախի, տեղափոխման կամ օգտագործման հետ), մատնանշելով նյութական այն արժեքները, որոնց համար աշխատողը ստանձնում է լիակատար նյութական պատասխանատվություն,

¹ Լրիվ նյութական պատասխանատվությունը կիրառվում է նաև այն դեպքում, երբ հանցավոր գործողությամբ վնաս պատճառած աշխատողը քրեական պատասխանատվությունից ազատվել է համաներման կամ վաղեմության ժամկետի անցման փաստով:

- 4) պատճառովել է աշխատանքի համար աշխատողին տրված անհրաժեշտ գործիքների, սարքավորումների, հատուկ հագուստի և անհատական ու կոլեկտիվ պաշտպանության այլ միջոցների, ինչպես նաև նյութերի, կիսաֆաբրիկատների կամ արտադրանքի կորստի հետևանքով,
- 5) պատճառովել է այնպիսի եղանակով կամ այնպիսի գույքի, որի դեպքում օրենքով սահմանված է լիակատար գույքային պատասխանատվություն,
- 6) պատճառովել է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցությամբ:

Հավելենք, որ նախկին (մինչև 2005 թ.) ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում էր լրիվ նյութական պատասխանատվության ևս երկու հիմք (դրանք սահմանված են նաև ՌԴ աշխատանքային օրենսգրքով)։

ա) աշխատողի կողմից ոչ աշխատանքային պարտականություններ կատարելիս վնաս պատճառելը,

բ) աշխատողի կողմից միանվագ հաշվային փաստաթղթով ստացած գույքին վնաս պատճառելը:

Ի դեպ, նախկին ՀՀ աշխատանքային օրենսգիրքը նախատեսում էր նաև կոլեկտիվ (բրիգադային) նյութական պատասխանատվություն, որը կիրառվում էր բանվոր-ծառայողների կողմից նրանց հանձնված արժեքների պահպանման, մշակման, վաճառքի, փոխադրման կամ արտադրության մեջ կիրառման հետ կապված աշխատանքի առանձին տեսակները համատեղ կատարելիս գործատուին պատճառված այնպիսի վնասի համար, երբ հնարավոր չէ սահմանազատել յուրաքանչյուր աշխատողի պատճառած վնասի չափը, ուստի նաև նյութական պատասխանատվության մասնաբաժինը:

Ամփոփելով քննարկվող խնդիրը՝ նկատենք, որ գործատուի և աշխատողի նյութական պատասխանատվությունը սահմանող իրավանորմերը նպատակ ունեն ոչ միայն ապահովելու աշխատանքային պայմանագրի մի կողմի պարտականությունների խախտման հետևանքով մյուս կողմին պատճառված վնասների լրիվ կամ մասնակի հատուցումը և կանխումը, այլև նրանց դարձնելու հոգատար, կարգավարժ ու կարգապահ: Միաժամանակ, նշված իրավանորմերը նպաստում են և՛ գործատուի, և՛ աշխատողի պարտականությունների անշեղ կատարմանը, հետևաբար՝ օրինականության ապահովմանն աշխատանքային հարաբերությունների ոլորտում:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- իրազեկ լինել աշխատանքային կարգապահության ապահովմանը միտված կարգապահական տույժերի ու խրախուսանքի միջոցների տեսակներին և գործատուի կողմից դրանց կիրառման կարգին,
- հասկանալ նյութական պատասխանատվության էությունը, տեսակները և կիրառման կարգը:

Ստուգիչ հարցեր

- Որո՞նք են աշխատանքային կարգապահության ապահովման միջոցները:
- Ինչպե՞ս են կիրառվում կարգապահական տույժերը:
- Որո՞նք են նյութական պատասխանատվության կիրառման հիմքերը:
- Որո՞նք են նյութական պատասխանատվության տեսակները:

ԹԵՄԱ 8. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐ

Չարդ 1. Աշխատանքային վեճի հասկացությունը

Աշխատանքային պայմանագրերի կնքման և դրանց գործողության, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների դադարեցման հետ կապված՝ հաճախ տարածայնություններ են առաջանում գործատուի (վարչակազմի) և աշխատողների միջև: Այդ տարածայնություններն ամենից ավելի շատ դրսևորվում են որպես աշխատողի դժգոհություն, նրա կարծիքով՝ գործատուի կողմից իր աշխատանքային իրավունքների և շահերի խախտման պատճառով:

Աշխատանքային վեճը գործատուի (վարչակազմի) և աշխատող(ներ)ի կամ նախկին աշխատող(ներ)ի միջև առկա և անմիջական բանակցություններով չկարգավորված այն տարածայնությունն է, որը վերաբերում է աշխատանքի պայմանների սահմանմանն ու կիրառմանը, կոլեկտիվ պայմանագրի կնքմանը, փոփոխմանը, կատարմանը և սոցիալ-աշխատանքային խնդիրներին:

Աշխատանքային վեճերի լուծման համար օրենքով սահմանված է համապատասխան կարգ՝ դիմումի և հայցի ժամկետներ ու դրանց քննության ընթացակարգեր, որոշումներ կայացնելու ու իրականացնելու կանոններ:

Աշխատանքային վեճի առարկա հանդիսացող աշխատանքի պայմաններ ասելով ընդունված է հասկանալ սոցիալ-իրավական և արտադրական գործոնների այն ամբողջությունը, որի պայմաններում աշխատողն իրականացնում է իր աշխատանքային գործունեությունը: Սոցիալ-իրավական գործոնները վերաբերում են աշխատանքի վարձատրության չափին, աշխատաժամանակի տևողությանը, հանգստին, աշխատողի ու գործատուի համաձայնությամբ, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված մյուս պայմաններին: Արտադրական գործոնները վերաբերում են տեխնիկական, սանիտարական, հիգիենիկ, արտադրակենցաղային և այլ պայմաններին, որոնք սահմանված են օրենքով և այլ իրավական ակտերով ու տեխնիկական կանոնակարգերով:

Աշխատող(ներ)ի և գործատուի (վարչակազմի) միջև ծագած տարածայնության լուծման համար նախատեսվում են որոշակի փուլեր՝ կողմերի անմիջական բանակցություններ (արհեստակցական մարմնի մասնակցությամբ կամ առանց նրա), աշխատանքային վեճի քննարկում ու լուծում հաշտեցման հանձնաժողովում (այդ թվում՝ միջնորդի մասնակցությամբ) ու դատական կարգով (հաշտեցման հանձնաժողովում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում):

Չարք 2. Աշխատանքային վեճերի ծագման պատճառներն ու պայմանները

Աշխատանքային վեճերի ծագման պայմաններն ու պատճառները տարբերակելու նպատակով ընդգծենք, որ պայմաններն այն իրադրությունը և հանգամանքներն են, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են աշխատանքային հարաբերությունների վրա և առաջացնում տարածայնություն աշխատող(ներ)ի և գործատուի (վարչակազմի) միջև, իսկ պատճառներն այն իրավաբանական փաստերն են, որոնք անմիջականորեն (ուղղակի) հանգեցնում են աշխատող(ներ)ի և գործատուի (վարչակազմի) տարածայնության:

Աշխատանքային վեճերի առաջացման պայմանները դառնում են կոնկրետ պատճառ տվյալ աշխատանքային վեճի համար (օրինակ՝ կազմակերպության ղեկավարի՝ աշխատանքային օրենսդրությունը չիմանալու պարագայում որոշում ընդունելը հանգեցնում է տվյալ աշխատողի իրավունքի խախտմանը, ուստի և նրանց միջև աշխատանքային վեճի առաջացմանը): Գործնականում, հաճախ, աշխատանքային վեճերը ծագում են մի քանի պայմանների (պատճառների) զուգակցությամբ, ընդ որում, դրանք կարող են լինել սոցիալական, տնտեսական և իրավաբանական բնույթի: Տնտեսական բնույթի պայմանները հիմնականում վերաբերում են կազմակերպության ֆինանսական սուղ միջոցներին, որոնց պարագայում դժվարանում է աշխատավարձի ժամանակին ու լրիվ վճարումը, աշխատանքի պաշտպանության պատշաճ միջոցներով աշխատողներին ապահովելը և այլն: Աշխատանքային վեճերի տնտեսական բնույթի պատճառներն առաջացնում են լուրջ սոցիալական հետևանքներ: Այսպես՝ միջոցների անբավարարությունը հանգեցնում է աշխատողների թվաքանակի կրճատման կամ կազմակերպության լուծարման, ուստի նաև գործազրկության աճի, իսկ դա էլ՝ աշխատանքից զրկված նախկին աշխատողների դատական հայցերի ու դիմում-բողոքների թվի ավելացման:

Աշխատանքային վեճերի ծագման սոցիալական բնույթի պայմանները հիմնականում վերաբերում են բարձր և ցածր վճարվող աշխատողների եկամուտների մակարդակի էական տարբերությանը, իսկ իրավաբանական պայմանները՝ աշխատողի, նաև գործատուի համար աշխատանքային օրենսդրության դժվար, իրարամերժ, ինչպես նաև ոչ բավարար հասանելի լինելու հանգամանքին, որի հետևանքն աշխատողի՝ իր իրավունքներն ու դրանց պաշտպանության միջոցները վատ իմանալն է, թե՛ աշխատողի, թե՛ գործատուի կողմից աշխատանքային կարգապահությունը չպահպանելը, աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելը և այլն:

Ֆարց 3. Աշխատանքային վեճերի դասակարգումը և բնության ընդհանուր կարգը

Աշխատանքային իրավունքի գիտության մեջ ընդունված է աշխատանքային վեճերը դասակարգել երկու կարևոր հիմքերով (հատկանիշներով)՝ ըստ սուբյեկտների և ըստ բովանդակության: Առաջին դասակարգման հիմքում աշխատանքային վեճի մասնակիցների քանակի և կարգավիճակի հատկանիշն է՝ ըստ որի վեճերը բաժանվում են երկու խմբի՝ անհատական և կոլեկտիվ: Անհատական աշխատանքային վեճերի մասնակիցներն են աշխատողը և գործատուն, իսկ կոլեկտիվ աշխատանքային վեճերինը՝ կազմակերպության աշխատողները կամ աշխատողների խումբը և կազմակերպության (կամ մի քանի կազմակերպությունների) վարչակազմը:

Բովանդակության հատկանիշով ևս աշխատանքային վեճերը դասակարգվում են երկու խմբի՝ աշխատանքի պայմանների սահմանման կապակցությամբ առաջացող աշխատանքային վեճեր և աշխատանքի սահմանված պայմանների կիրառման կապակցությամբ առաջացող աշխատանքային վեճեր:

Աշխատանքային պայմանների սահմանումն այդ պայմանների նախատեսումն է օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով, այդ թվում՝ կազմակերպության ներքին (լոկալ) իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով ու այլ համաձայնագրերով: Աշխատանքի պայմանների նմանատիպ սահմանումն ունի ընդհանուր բնույթ և տարածվում է բոլոր կամ որոշակի կատեգորիայի աշխատողների վրա (օրինակ՝ նվազագույն աշխատավարձի չափի կամ արձակուրդի տևողության սահմանումը): Աշխատանքի անհատական պայմանները սահմանվում են աշխատողի և կազմակերպության (գործատուի) միջև կնքված աշխատանքային պայմանագրով (օրինակ՝ աշխատավարձի կոնկրետ չափը որոշելը):

Աշխատանքի սահմանված պայմանների կիրառումն անհատական աշխատանքային հարաբերություններում աշխատանքի ընդհանուր պայմանների օգտագործումն է՝ ըստ գործատուի հրամանի (կարգադրության): Խոսքը վերաբերում է արտաժամյա աշխատանքի իրականացման կարգին և աշխատողներին այդ աշխատանքում ներգրավելու, արտադրության ծավալների կամ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման պայմաններին, կարգին, երաշխիքներին՝ կրճատումների դեպքում և այլն:

Բննարկվող խնդրի կապակցությամբ ընդգծենք ևս մեկ կարևոր հանգամանք. աշխատանքի ընդհանուր պայմանների օգտագոր-

ծում անհատական աշխատանքային հարաբերությունների կարգավորման համար այլ կարգով (օրինակ՝ աշխատանքային պայմանագրի կողմերի համաձայնությամբ)՝ պետք է հասկանալ ոչ թե աշխատանքի պայմանի կիրառում, այլ աշխատանքի անհատական պայմանների սահմանում օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի հիման վրա (օրինակ՝ ըստ աշխատանքային պայմանագրի՝ աշխատավարձի նվազագույն չափը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված չափից):

Աշխատանքի սահմանված պայմանների կիրառման կապակցությամբ առաջացող աշխատանքային վեճերը (աշխատանքային օրենսդրության նորմը) կրում են հայցային բնույթ, քանի որ օրինական շահի կամ խախտված իրավունքի վերականգնման վեճը քննության է առնվում համապատասխան դիմումի (հայցի) հիման վրա՝ իրավասու մարմնի կողմից, իսկ աշխատանքի պայմանների սահմանման շուրջ ծագած վեճերը ոչ հայցային բնույթի են, քանի որ այստեղ խոսքը ոչ թե օրինական շահի կամ խախտված իրավունքի վերականգնման, այլ նոր իրավունքի սահմանման մասին է:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 264-րդ հոդվածի՝ աշխատանքային վեճերը (գործատուի և աշխատողի միջև առաջացած տարաձայնությունները) ենթակա են դատական քննության ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, իսկ կոլեկտիվ աշխատանքային վեճերը (գործատուի և աշխատողների կոլեկտիվին ներկայացնող արհեստակցական միության միջև կոլեկտիվ պայմանագրի կնքման և կատարման կապակցությամբ առաջացած տարաձայնությունները) լուծվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը սահմանում է նաև աշխատանքային պայմանագրի շուրջ առաջացող վեճերի լուծման համար դատարան դիմելու ժամկետը, այդ վեճերի քննության սկզբունքները (աշխատողի աշխատանքային իրավունքների պաշտպանության ապահովումը, օրենքի առջև կողմերի իրավահավասարությունը, աշխատողի ներկայացուցիչների մասնակցությունը, աշխատանքային վեճեր քննող մարմիններին դիմելու մատչելիությունը, օրինականության ապահովումը վեճը լուծելիս, նյութերի ու ապացույցների օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության ապահովումը, կայացված որոշման իրական կատարման ապահովումը) և աշխատողի խախտված իրավունքի պաշտպանության կարգը: Աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի դադարեցման կամ լուծման հետ համաձայն չլինելու դեպքերում դրանց վերաբերյալ իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից երկու ամսվա ընթաց-

քուն աշխատողն իրավունք ունի դիմելու դատարան: Վիճարկվող իրավական ակտով աշխատողի իրավունքների խախտումների փաստի դատական հաստատման դեպքում աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են՝ աշխատողի օգտին գործատուից գանձելով միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար կամ աշխատավարձի տարբերությունն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանն աշխատողին իր նախկին աշխատանքում չի վերականգնում տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության հիմնավորմամբ և գործատուին պարտավորեցնում է հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում միջին աշխատավարձի չափով՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձը, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով: Այս պարագայում աշխատանքային պայմանագիրը լուծված է համարվում դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- դասակարգել աշխատանքային վեճերն ըստ բովանդակության և ըստ սուբյեկտների,
- գաղափար կազմել աշխատանքային վեճերի քննության և լուծման կարգի, դատական կարգով աշխատանքային վեճերը լուծելու առանձնահատկությունների մասին:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է աշխատանքային վեճը:
- Ինչպե՞ս են դասակարգվում աշխատանքային վեճերը:
- Որո՞նք են աշխատանքային վեճերի լուծման մարմինները:
- Ի՞նչ կարգով են լուծվում աշխատանքային վեճերը:
- Որո՞նք են աշխատանքային վեճի դատական լուծման առանձնահատկությունները:

Գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրություն:
2. ՀՀ աշխատանքային օրենսգիրք:
3. Պետրոսյան Գ., ՀՀ աշխատանքային իրավունք, ԵՊՀ, 2009:
4. Մեիրաբյան Լ., Աշխատանքային իրավունք, Ե., «Տնտեսագետ», 2016:
5. Бекашев Д., Международное трудовое право, 2013.
6. Бондаренко В., Трудовое право, М., 2013.
7. Василевич Г., Трудовое и социальное право, М., 2013.
8. Головина С., Трудовое право, М., 2013.
9. Гейхман В., Трудовое право, М., 2017.
10. Гусов К., Трудовое право, М., 2015.
11. Гусов К. Н., Полетаев Ю., Ответственность в трудовом праве, М., 2016.
12. Головина С., Правовое регулирование труда, М., 2013.
13. Кисилев И., Зарубежное трудовое право, МГУ, 2013.
14. Лушников А., Лушникова М.В., Трудовое право, МГУ, 2013.
15. Огородникова М., Трудовое право, М., 2013.
16. Пластинина Н., Комментарий к основным положениям трудового кодекса РФ, 2013.
17. Смоленский А., Трудовое право, МГУ, 2012.
18. Снигирева И., Рабочее время и время отдыха, М., 2016.
19. Тихомиров А., Трудовые споры, М., 2014.
20. Циндяйкина Е., Цыпкина И., Трудовой договор, 3-е изд., М., 2017.

ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Չարդ 1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը, սկզբունքները (1-ին, 3-րդ հոդվածներ)

Քաղաքացիական իրավունքն (*jus ad rem, jus civile*¹) առաջացել է ապրանքադրամական հարաբերությունների ծագմանն ու կիրառությանը զուգահեռ:

«Քաղաքացիական իրավունք» հասկացությունը պետք է տարբերակել որպես իրավունքի ճյուղ, ուսումնական դասընթաց և գիտություն:

Քաղաքացիական իրավունքն իրավական նորմերի համակցություն է, որը կարգավորում է իրավահավասար սուբյեկտների գույքային, ինչպես նաև գույքայինի հետ կապված կամ չկապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, որոնք էլ հենց կազմում են **քաղաքացիական իրավունքի առարկան** (իրավական կարգավորման ոլորտը): Ընդ որում, այդ առարկան կազմող երկրորդ խումբ հարաբերություններում մեծ տեսակարար կշիռ ունեն գույքայինի հետ անմիջականորեն կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները: Գույքային (ապրանքադրամական) բնույթի հարաբերություններն ընդունված է բաժանել երեք խմբի՝ իրային, պարտավորական և ժառանգման: Դրանք առաջանում են նյութական (տնտեսական) բարիքների ստեղծման, ձեռքբերման, տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև փոխանցման կապակցությամբ: Գույքային հարաբերություններն իրենց հիմքում ունեն հատուցելիության և համարժեքության բնույթ, բացառությամբ՝ նվիրատվության, գույքի անհատույց օգտագործման, կտա-

¹ Jus ad rem, jus civile - լատ.՝ գույքի իրավունք, քաղաքացիական իրավունք:

կի և այլն: Բացի այդ, գույքային հարաբերություններին բնորոշ է դրա սուբյեկտների իրավահավասարությունը, գույքային ինքնուրույնությունը, հետևաբար նաև՝ գույքային առանձնացվածությունը:

Անձնական ոչ գույքային հարաբերություններն առաջանում են ոչ նյութական բարիքների շուրջ՝ կապված սուբյեկտների մասնակցության ու կառավարման իրավասությունների, պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության և մտավոր աշխատանքի արդյունքների ու այլ հոգևոր արժեքների օգտագործման հետ:

Իրավունքի ցանկացած ճյուղում դրա առարկան, մեթոդն ու սկզբունքները փոխկապակցված են:

Հասարակական հարաբերությունների կարգավորման **քաղաքացիաիրավական մեթոդը** գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների կարգավորման համար կիրառվող իրավական միջոցների, ձևերի ու եղանակների ամբողջություն է: Դա դիսպոզիտիվ է՝ պայմանավորված քաղաքացիական իրավունքի առարկայով և այդ իրավունքի սուբյեկտների իրավահավասարությամբ, գույքային ինքնուրույնությամբ, իրավաչափ վարքագծի տարբերակներից ընտրություն կատարելու, սեփական կամքն ազատ դրսևորելու հնարավորությամբ:

Անդրադառնալով **քաղաքացիական իրավունքի սկզբունքներին**, այսինքն՝ այն ելակետային, ղեկավար, կողմնորոշիչ դրույթներին, որոնք հիմք են ընդունվում քաղաքացիական իրավունքի առարկան (գույքային և անձնական ոչ գույքային հարաբերություններ) կարգավորելիս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով¹ (հոդված 3) ամրագրված սկզբունքներն են.

- քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների իրավական հավասարությունը (քաղաքացիական իրավունքներից հավասարապես օգտվելու իրավունք, բոլոր, այդ թվում՝ իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ մյուսների նկատմամբ իրավաբանական արտոնություն չունենալու և սեփականության ու այլ գույքային իրավունքների պաշտպանության գործում հավասար իրավունքներ ունենալու կարգավիճակ),
- կամքի ինքնավարությունը և գույքային ինքնուրույնությունը,
- սեփականության անձեռնմխելիությունը,
- պայմանագրային ազատությունը (քաղաքացիական իրավունքում առանձնացվում է նաև ապրանքների, ծառայություն-

¹ Այսուհետ՝ նաև ՀՀ քաղ. օր.:

- ների և ֆինանսական միջոցների ազատ տեղաբաշխման սկզբունքը),
- մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիությունը,
 - քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտությունը,
 - խախտված իրավունքների վերականգնման ապահովումը, դրանց դատական պաշտպանությունը:

Յարց 2. Քաղաքացիական իրավունքի աղբյուրները (ձևերը) և համակարգը (4-9-րդ հոդվածներ)

Քաղաքացիական իրավունքի աղբյուրները քաղաքացիական իրավական նորմերի ամրագրման և արտահայտման ձևերն են, այսինքն՝ իրավասու մարմինների կողմից նախատեսված կարգով ընդունված օրենքները և ենթաօրենսդրական ակտերը:

ՀՀ իրավունքի, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի աղբյուրների ողջ համակարգն ունի աստիճանակարգային (հիերարխիկ) բնույթ, որի բարձրակետում երկրի հիմնական օրենքն է: ՀՀ սահմանադրությամբ ամրագրված են ձեռնարկատիրական գործունեության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության, սեփականության իրավունքի, դրա տնօրինման, արժանապատվության ու գործարար համբավի և այլ անձնական իրավունքների ու բարիքների՝ օրենքով երաշխավորված պաշտպանության դրույթները: Քաղաքացիական իրավունքի աղբյուրների համակարգում, որպես կողիֆիկացված օրենք, կենտրոնական տեղ ունի ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, իսկ հաջորդիվ գույքային և գույքայինի հետ կապված կամ չկապված անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորող ընթացիկ (սովորական) օրենքներն են:

Ենթաօրենսդրական ակտերից քաղաքացիական իրավունքի աղբյուրների համակարգում տեղ ունեն ՀՀ նախագահի այն հրամանագրերը, կառավարության ու վարչապետի այն որոշումները, նախարարությունների և գործադիր իշխանության այլ մարմինների այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք կարգավորում են գույքային և գույքայինի հետ կապված կամ չկապված անձնական ոչ գույքային հարաբերություններ:

Կարևորվում են նաև քաղաքացիական իրավահարաբերություններին վերաբերող ՀՀ միջազգային պայմանագրերը, ՀՀ քաղ. օր.-ի 7-րդ հոդվածով սահմանված գործարար շրջանառության սովոր-

րույթները (ծեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող, օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից) և դատական նախադեպը (համանման գործով ընդունված դատական ակտը, որն ունենալով պարտադիր կանոնի դեր, ստանում է հետագա կիրառություն):

Քաղաքացիական իրավունքի համակարգն իրավական կարգավորման առավել համասեռ առարկայի դասակարգված և որոշակի հաջորդականությամբ դասավորված քաղաքացիական իրավանորմների խմբերի (իրավունքի ենթաճյուղ, իրավական ինստիտուտ, ենթաինստիտուտ) համակցությունն է: Այլ խոսքով, քաղաքացիական իրավունքի համակարգն այդ ճյուղի ներքին կառուցվածքի և դրա առանձին տարրերի ամրագրման բնույթն ու կարգն է: Այս առումով, քաղաքացիական իրավունքի համակարգը բաղկացած է հինգ խումբ քաղաքացիաիրավական նորմերից, որոնցից առաջինը, որը կոչվում է ընդհանուր դրույթներ, կազմված է առանձին իրավական ինստիտուտներից և ընդհանուր պատկերացում է տալիս քաղաքացիական իրավունքի հասկացության, սկզբունքների, մեթոդի, աղբյուրների, գործառույթների մասին, իսկ մնացած չորսը՝ հետևյալ ենթաճյուղերն են.

- Սեփականության և այլ գույքային իրավունքներ: Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ ակտերով ճանաչված և պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Գույքային (իրային) է այն իրավունքը, որն ապահովում է անձի շահերի բավարարումը՝ նրա տնտեսական տիրապետման ոլորտում գտնվող առարկայի վրա անմիջական ներգործությամբ:
- Պարտավորական իրավունք: Կարգավորում է գույքի փոխանցման կամ ժամանակավոր օգտագործման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, դրամի վճարման կամ նման գործողությունների կատարումից ծեռնպահ մնալու կապակցությամբ առաջացող հարաբերությունները:
- Մտավոր սեփականության իրավունք: Կարգավորում է մտավոր գործունեության արդյունքների և քաղաքացիական շըրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների անհատականացման միջոցների (օբյեկտների) ստեղծման ու օգտագործման կապակցությամբ առաջացող հարաբերությունները:

- ժառանգման իրավունք: Կարգավորում է մահացածի գույքը, գույքային և այլ իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդությանը այլ անձանց՝ ժառանգներին անցնելու կապակցությամբ առաջացող հարաբերությունները:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- գաղափար կազմել քաղաքացիական իրավունքի առարկայի, մեթոդի, սկզբունքների և համակարգի մասին,
- իմանալ քաղաքացիական իրավունքի տեղը ՀՀ իրավական համակարգում:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է իրենից ներկայացնում քաղաքացիական իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ:
- Ի՞նչ դեր ունի քաղաքացիական իրավունքը՝ որպես տնտեսական գործունեության իրավական կարգավորիչ:

**ԹԵՄԱ 2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԻՐԱՎԱՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(132-162-րդ հոդվածներ)**

**Յարդ 1. Քաղաքացիական
իրավահարաբերությունների
հասկացությունը, տարրերը և ծագման
հիմքերը (132-133-րդ հոդվածներ)**

Քաղաքացիական իրավահարաբերությունները քաղաքացիական իրավունքի նորմերով և, որպես կանոն, դիսպոզիտիվ մեթոդով կարգավորվող նյութական և հոգևոր բարիքների կապակցությամբ առաջացող այն հասարակական կամային հարաբերություններն են, որոնց մասնակիցները, ունենալով իրավական ինքնուրույնություն և գույքային առանձնացվածություն, ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և պարտականություններ՝ իրավահավասարության սկզբունքով:

Ինչպես բոլոր, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերություններն ունեն կառուցվածքային երեք տարր՝ սուբյեկտներ¹, օբյեկտներ և բովանդակություն: Քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտներ են ֆիզիկական (քաղաքացի) և իրավաբանական (կազմակերպություն) անձերը, վարչատարածքային կազմավորումը և պետությունը, որոնց սուբյեկտիվ իրավունքները (թույլատրելի վարքագծի չափը, կանոնները) և իրավաբանական պարտականությունները (պարտավոր վարքագծի չափը, կանոնը) կազմում են այդ իրավահարաբերությունների բովանդակությունը: Քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտները նյութական և ոչ նյութական աշխարհի այն առարկաներն ու երևույթներն (բարիքներ) են, որոնց կապակցությամբ սուբյեկտները մտնում են իրավահարաբերությունների մեջ՝ բավարարելով որոշակի պահանջ-մունքներ: ՅՅ քաղ. օր.-ի 132-րդ հոդվածը, սահմանելով քաղաքացիական իրավունքների օբյեկտները, դրանց շարքին է դասում.

1. գույքը՝ ներառյալ գույքային իրավունքները, դրամական միջոցները և արժեթղթերը (սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ, որի ներկայացմամբ իրականացվում կամ փոխանցվում են այդ իրավունքները),
2. աշխատանքները և ծառայությունները,
3. տեղեկատվությունը (ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք),

¹ Պարզաբանումը՝ առանձին հարցով:

4. մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն),
5. ոչ նյութական բարիքները (անձնական իրավունքներ, որոնք անօտարելի են, չունեն տնտեսական բովանդակություն, ունեն անհատականացման հատկանիշներ) :

ՀՀ քաղ. օր.-ի առանձին հոդվածներով նախատեսվում են նշված օբյեկտների տեսակները, որոնցից առանձնացնենք զույքի տեսակներն ըստ անշարժ և շարժական, բաժանելի և անբաժանելի, առանձին և բաղադրատարր, գլխավոր և պատկանելիք, սպառման և արտադրության, ազատ շրջանառության, սահմանափակ շրջանառության և շրջանառությունից հանված, անհատապես որոշված տեսակային հատկանիշների:

Ինչպես և բոլոր, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերությունների հիմքում իրավաբանական փաստն է, այսինքն՝ իրականության այն կոնկրետ կենսական հանգամանքը (դեպք, գործողություն), որի հետ քաղաքացիական օրենքն ըստ հետևանքի պայմանավորում է այդ իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը, դադարումը: Դեպքերն օբյեկտիվ են՝ անկախ մարդու կամքից և գիտակցությունից, իսկ գործողությունները պայմանավորված են մարդու կամքով և գիտակցությամբ: Քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցների գործողությունները լինում են իրավաչափ (իրավական և դատական ակտերի ընդունում, պայմանագրի և գործարքի կնքում, դիմումի ներկայացում) և իրավախախտ (վնաս պատճառելը, անհիմն հարստանալը):

Քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցների իրավունքներն ու պարտականություններն առաջանում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից և պաշտպանվում են օրենքով: Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը դատական, վարչական մարմնի կողմից, նաև անձամբ՝ օրենքով սահմանված պաշտպանության միջոցների, ձևերի և եղանակների կիրառման հնարավորությունն է, որով ապահովվում են քաղաքացիական իրավունքի մասնակիցների իրավունքները և շահերը:

Հարց 2. Քաղաքացիական իրավահարաբերությունների տեսակները (134-162-րդ հոդվածներ)

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ ընդունված է քաղաքացիական իրավահարաբերությունները դասակարգել ըստ բովանդակության, սուբյեկտների իրավունքների ու պարտականու-

թյունների բնույթի, իրավունքի (շահի) իրականացման, պարտավորության կատարման եղանակի (ձևի) և այլ հատկանիշների: Ըստ բովանդակության՝ քաղաքացիական իրավահարաբերությունները բաժանվում են երկու հիմնական խմբերի.

- Գույքային, որից բխող իրավունքները կարող են փոխանցվել այլ անձանց: Բացի այդ, դրանց խախտման դեպքում առաջանում են գույքային սանկցիաներ, ինչպես նաև հայցային վաղեմության ժամկետներ:
- Ոչ գույքային (անձնական), որի սուբյեկտների իրավունքները կապված են անձի հետ և ուրիշի փոխանցվել չեն կարող, իսկ խախտման դեպքում առաջանում են և՛ գույքային սանկցիաներ, և՛ պաշտպանական բնույթի այլ միջոցներ, ընդ որում, առանց հայցային վաղեմության կիրառման:

Ըստ սուբյեկտների իրավունքների և պարտականությունների բնույթի՝ քաղաքացիական իրավահարաբերությունները լինում են.

- Բացարձակ, որի իրավագոր սուբյեկտը մեկն է, և նրա իրավունքին համապատասխանում է անորոշ (բոլոր) անձանց պարտականությունը (հարգելու, չխախտելու):
- Հարաբերական, որի իրավագոր սուբյեկտի իրավունքին համապատասխանում է կոնկրետ անձ(եր)ի պարտականությունը:

Ըստ իրավունքի (շահի) իրականացման՝ քաղաքացիական իրավահարաբերությունները լինում են.

- Իրային (օբյեկտն իրն է), որի մասնակիցներն իրենց իրավունքներն (օրինակ՝ սեփականության օգտագործման, տիրապետման և այլն), իրացնում են անմիջականորեն, առանց այլ անձի թույլտվության:
- Պարտավորական, որի մասնակիցներն իրենց իրավունքները (օրինակ՝ վարձակալության) իրականացնում են ուրիշի մյուս մասնակցի միջոցով:

Ըստ պարտականության կատարման՝ քաղաքացիական իրավահարաբերությունները բաժանվում են երկու խմբի.

- Ակտիվ կամ գործողությամբ (օրինակ՝ գույքի փոխանցում, աշխատանքի կատարում, ծառայության մատուցում, դրամական վճարում):
- Պասիվ կամ գործողության կատարումից ձեռնպահ մնալով (օրինակ՝ վարձակալության առարկան ո՛չ նորոգելը, ո՛չ էլ վնասելը):

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- իմանալ քաղաքացիական իրավահարաբերությունների առանձնահատկությունները և ծագման հիմքերը,
- տարանջատել քաղաքացիական իրավահարաբերությունները:

Ստուգիչ հարցեր

- Որո՞ք են քաղաքացիական իրավահարաբերությունների կառուցվածքային տարրերը:
- Որո՞ք են քաղաքացիական իրավահարաբերությունների տեսակները:

ԹԵՄԱ 3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ (20-131-րդ հոդվածներ)

Չարց 1. Քաղաքացիները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ (20-49-րդ հոդվածներ)

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում պետությունը և համայնքները հավասար հիմունքներով են հանդես գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ: ՀՀ-ի և համայնքների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմեր:

ՀՀ-ի անունից իրենց գործողություններով գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ կարող են ձեռք բերել ու իրականացնել ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Քաղաքացիական հարաբերություններում քաղաքացիները (ֆիզիկական անձինք), որպես սուբյեկտներ, հանդես են գալիս օրենքով նախատեսված իրավասուբյեկտությամբ, որը բովանդակում է երկու տարր՝ իրավունակություն և գործունակություն: Քաղաքացիների իրավունակությունը քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու (հոդված 20), իսկ գործունակությունը՝ իրենց գործողություններով քաղաքացիական իրավունքներ անձամբ ձեռք բերելու և իրականացնելու, իրենց համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու ունակությունն է (հոդված 24):

Քաղաքացու իրավունակությունը ենթադրում է՝ ունենալ գույք, ժառանգել, կտակել դա, զբաղվել ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ գործունեությամբ, ինքնուրույն կամ այլ անձանց հետ ստեղծել իրավաբանական անձ, կնքել օրենքին չհակասող գործարքներ և կրել պարտականություններ, ընտրել բնակության վայր, ունենալ գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների, գյուտերի ու մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքների հեղինակի իրավունք, ինչպես նաև այլ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ:

Քաղաքացու իրավունակությունը ծագում է ծննդի փաստով (դադարում մահով), իսկ գործունակությունը պահանջում է օրենքով

սահմանված տարիքի և հոգեպես առողջ լինելու փաստեր, որոնցով քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է անձի անգործունակության, ինչպես նաև լրիվ, ոչ լրիվ, մասնակի և սահմանափակ գործունակության կարգավիճակը:

Լրիվ գործունակության հիմքում հոգեպես առողջ լինելն ու չափահաս տարիքն է: Վերջինից քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է բացառություն: Խոսքը էմանսիպացիայի (հավասարեցում՝ իրավունքի առումով), այսինքն՝ 16 տարին լրացած անձի՝ պայմանագրային աշխատանքի կամ ձեռնարկատիրությամբ զբաղվելու, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում անուսնանալու իրավունք ունեցող անձի կարգավիճակի (իրավունքի սահմանափակումը վերացնելու) մասին է:

Ոչ լրիվ կամ մասնակի գործունակության հիմքում անձի անչափահասությունն է՝ 14-18 տարեկան լինելու փաստը, չնայած 6-14 տարեկաններին օրենքով թույլատրվում է կատարել կենցաղային գործարքներ:

Քաղաքացու գործունակության սահմանափակումը քաղաքացիական օրենսդրությունը չի պայմանավորում նրա անչափահաս լինելու հանգամանքով, այլ ոգելից խմիչքների և (կամ) թմրամիջոցների չարաշահման ու մոլեխաղերով զբաղվելու և դրանցով ընտանիքը ծանր նյութական վիճակի մեջ դնելու փաստերով: Քաղաքացու գործունակության սահմանափակման, նաև դա վերացնելու իրավունքը վերապահված է միայն դատարանին: Դատարանի այս իրավունքը գործում է նաև անձին անգործունակ ճանաչելու և դա վերացնելու հարցում: Դատարանն անձին անգործունակ է ճանաչում դատաբժշկական այն եզրակացության հիման վրա, որը վկայում է այդ անձի հոգեկան խանգարման և դրա հետևանքով սեփական գործողությունները չհասկանալու մասին:

Գործող ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը 14 տարին չլրացած անձանց համար սահմանում է խնամակալություն, իսկ 14-18 տարեկանների և սահմանափակ գործունակների համար՝ հոգաբարձություն: Միաժամանակ, 14-18 տարեկան անչափահասները, առանց օրինական ներկայացուցչի, իրավունք ունեն տնօրինելու իրենց աշխատավարձը, թոշակը և այլ եկամուտները, ձեռք բերելու և իրացնելու հեղինակային իրավունք, մուծելու ավանդներ և տնօրինելու դրանք, կնքելու մանր գործարքներ (ՀՀ քաղ. օր., հոդված 30):

Չարք 2. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները (50-52-րդ հոդվածներ)

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

Իրավաբանական անձն ունի հետևյալ հատկանիշները.

1. Կազմակերպական միասնություն: Կազմակերպությունն ունի ներքին կառուցվածք, կառավարման մարմիններ (կառուցվածքային աստիճանակարգություն), օժտված է որոշակի իրավունքներով և պարտականություններով՝ ըստ որոնց իրականացնում է իր գործառույթներն ու իրագործում իր նպատակները: Իրավաբանական անձի կազմակերպական միասնությունն ամրագրված է նրա հիմնադրման պայմանագրում և կանոնադրության մեջ: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածի՝ իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանվում են նրա անվանումը (սովորական, պայմանական, ֆիրմային), գտնվելու վայրը (մշտապես գործող մարմնի վայրը), կառավարման կարգը, գործունեության առարկան և տվյալ տեսակի իրավաբանական անձի համար օրենքով նախատեսված այլ տեղեկություններ:

Իրավաբանական անձի անվանումը պարտադիր կերպով պետք է բովանդակի կազմակերպատիրական ձևի (ոչ առևտրայինի դեպքում՝ նաև գործունեության բնույթի) մասին նշում:

2. Գույքային առանձնացվածություն: Իրավաբանական անձի գույքն առանձնացված է նրա հիմնադիրների, անդամների և այլ անձանց գույքից և արտահայտված ինքնուրույն հաշվեկշռում կամ նախահաշվում: Իրավաբանական անձի գույքային պատասխանատվության համար հիմք է հանդիսանում իրավաբանական անձի կազմավորման (ստեղծման) ժամանակ ձևավորված հիմնադիր կապիտալը: Իրավաբանական անձի գույքային առանձնացվածության մասին վկայում է նաև նրա առանձին բանկային հաշվի առկայությունը: Իրավաբանական անձի գույքային առանձնացվածությունը դրսևորվում է նրա սեփականության, օպերատիվ կառավարման կամ տնտեսավարման գույքային իրավունքների մեջ: Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

3. Ինքնուրույն գույքային պատասխանատվություն: Իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանա-

տու է ինքնուրույն և իր գույքով (հիմնադիրների տնօրինման տակ գտնվող գույքային և դրամական միջոցներով):

Իրավաբանական անձի հիմնադիրներն ու անդամները պատասխանատու չեն իրավաբանական անձի պարտավորությունների համար և հակառակը (բացառությամբ այն դեպքի, երբ իրավաբանական անձի պատասխանատվության այլ կանոններ են սահմանված հիմնադիր փաստաթղթերով):

4. Քաղաքացիական շրջանառությունում իր անունից հանդես գալու իրավունք: Իրավաբանական անձը ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում է պարտականություններ և դատարանում, որպես հայցվոր ու պատասխանող, հանդես է գալիս իր անունից: Իրավաբանական անձի հիմնադիրներ կարող են լինել գործունակ, այդ թվում, առանց իրավաբանական անձ ձևավորելու, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված քաղաքացիները: Իրավաբանական անձի հիմնադիր կարող է լինել նաև պետությունը:

Յարգ 3. Իրավաբանական անձի ստեղծումը և դադարումը (53-56-րդ, 63-71-րդ հոդվածներ)

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 53-րդ հոդվածի՝ իրավաբանական անձի հիմնադիրները, ըստ պայմանագրի, որոշում են համատեղ գործունեության, իրենց գույքն իրավաբանական անձին հանձնելու ու նրա կառավարմանն իրենց մասնակցության պայմանները և մշակում կանոնադրություն:

Իրավաբանական անձի ստեղծման համար անհրաժեշտ է.

- ա) որոշել հիմնադիրների կազմը և մշակել հիմնադրման փաստաթղթերը,
- բ) սահմանել հիմնադիրների համատեղ գործունեության, իրավաբանական անձին գույքը հանձնելու կարգը և մասնակցության պայմանները կառավարման գործընթացին,
- գ) հաստատել կանոնադրությունը,
- դ) բանկում բացել հաշիվ,
- ե) գրանցել կազմակերպությունը՝ այդ նպատակով ներկայացնելով հիմնադիր(ներ)ի գրանցման դիմումը, իրավաբանական անձի ստեղծման մասին ժողովի որոշումը, կանոնադրությունը, պետական տուրքի վճարման անդորրագիրը,
- զ) կատարել ներդրումների (ավանդների) վճարում,

ը) տարածքային հարկային մարմնում գրանցել կազմակերպությունը,

թ) ստանալ կնիքի և դրոշմակնիքների կիրառման թույլտվություն՝ դրանք ձեռք բերելով սահմանված կարգով:

Իրավաբանական անձն ստեղծված է համարվում գրանցման պահից: Պետական գրանցման նպատակը հսկողության ապահովումն է (հատկապես՝ լիցենզավորված գործունեության նկատմամբ), հարկային և պետական բյուջեի պարտավորությունների կատարումը, վիճակագրական տեղեկատվության ապահովումը և այդպիսով՝ պետության կարգավորման միջոցառումների իրականացումը, սուբյեկտների իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ պետական մարմինների միջոցով: Հենց պետական գրանցման պահից էլ ծագում են իրավաբանական անձի իրավունակությունը և գործունակությունը, որոնք դադարում են լուծարման ավարտի պահից (հոդված 56, 69):

Իրավաբանական անձի կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը և ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրության՝ օրենքին անհամապատասխանությունը հիմք են գրանցումը մերժելու համար (56-րդ հ.):

Իրավաբանական անձերը ստեղծվում են երկու եղանակով (կարգով)։

1. Տնօրինչական կամ տնօրինման կարգով՝ ըստ իշխանական լիազորություն ունեցող և գույքի սեփականատեր կազմակերպության՝ որպես հիմնադրի որոշման: Այս կարգով ստեղծվում են պետական իրավաբանական անձերը:

2. Հայտանորմատիվ կարգով՝ ըստ պետական գրանցման համար հիմնադիրների դիմում-հայտի: Հայտանորմատիվ կարգով ստեղծվող ձեռնարկատիրական որոշ իրավաբանական անձանց համար (դեղորայք արտադրող, ապահովագրական կազմակերպություններ, բանկեր և այլն) պահանջվում է նաև թույլտվություն (լիցենզիա): Հայտանորմատիվ կարգով ստեղծվում են կոլեկտիվ իրավաբանական անձերը:

Ըստ ՀՀ քաղ. օր.-ի 57-րդ հոդվածի՝ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և պարտականություններ ստանձնում իր մարմինների (միանձնյա և կոլեգիալ (խորհրդակցական), ընտրովի և նշանակովի) միջոցով:

Իրավաբանական անձը, իր գտնվելու վայրից դուրս մշտական գործունեություն իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով, ստեղծում է ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, որոնք չունեն ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակ և գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման

վրա: 33 քաղ. օր.-ի 61-րդ հոդվածի համաձայն՝ ներկայացուցչությունը և մասնաճյուղը իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորբաժանումներն են, ընդ որում, առաջինը ներկայացնում է իրավաբանական անձի շահերն ու դրանց պաշտպանությունը, իսկ երկրորդը՝ նրա բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառնությունը: Իրավաբանական անձը կարող է ստեղծել նաև հիմնարկ, որը նույնպես չունի իրավաբանական անձի կարգավիճակ և գործում է իրավաբանական անձի կանոնադրության հիման վրա: Ըստ 33 քաղ. օր.-ի 62-րդ հոդվածի՝ հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար ստեղծված կազմակերպությունը, որը, իրավաբանական անձի հանձնարարություններին և իրեն անրացված գույքի նշանակությամբ համապատասխան, տիրապետում, օգտագործում և տնօրինում է այդ գույքը:

Քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է իրավաբանական անձանց ոչ միայն ստեղծման, այլև դադարման կարգը և եղանակները: Որպես կանոն, այդ գործընթացները տեղի են ունենում հիմնադիրների կամ կանոնադրությամբ նման իրավասություն ունեցող մարմնի որոշմամբ: Այս ընդհանուր կանոնից սահմանված է բացառություն: Խոսքը վերաբերում է դատարանի կամ պետական այլ իրավասու մարմնի որոշմամբ իրավաբանական անձի դադարեցմանը, որն ընդունված է անվանել հարկադրական: Վերջինիս հիմքերն են.

- ա) օրենքի բազմակի և կոպիտ խախտումները,
- բ) կանոնադրությամբ հակասող գործողությունները,
- գ) գրանցումն անվավեր ճանաչելը,
- դ) սնանկ ճանաչելը:

Իրավաբանական անձի դադարումն իրականացվում է լուծարման կամ վերակազմակերպման ձևերով՝ ըստ հետևյալ փուլերի. մամուլում հայտարարություն՝ պահանջների կարգի և ժամկետների մասին, դիմում՝ գրանցման մարմնին, լուծարման հանձնաժողովի ստեղծում (կառավարչի նշանակում), լուծարման միջանկյալ հաշվեկշռի կազմում, լուծարման գրանցում պետական գրանցամատյանում:

33 քաղ. օր.-ի 70-րդ հոդվածը սահմանում է լուծարվող իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման հաջորդական կարգը, որն է.

1. գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջներ,

2. քաղաքացու կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման ժամկետային վճարումների կապիտալացում,
3. աշխատանքային պայմանագրով աշխատողների արձակման նպաստ, աշխատավարձ և հեղինակային պայմանագրով վարձատրություն,
4. բյուջեի պարտադիր վճարումներով պարտքեր,
5. այլ պահանջներ¹:

Հավելենք, որ յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո, իսկ ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները բավարարվում են այն գույքից, որը մնացել է ժամանակին ներկայացված պահանջները բավարարելուց հետո:

Վերակազմակերպումն իրականացվում է հինգ եղանակով.

1. Միաձուլում, որի դեպքում իրավաբանական անձանցից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականություններն անցնում են նոր առաջացած իրավաբանական անձին՝ փոխանցման ակտին համապատասխան:
2. Միացում, որի դեպքում միացած իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականություններն անցնում են այլ իրավաբանական անձի՝ փոխանցման ակտին համապատասխան:
3. Բաժանում, որի դեպքում իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականություններն անցնում են նոր առաջացած իրավաբանական անձանց՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան:
4. Առանձնացում, որի դեպքում իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնացմամբ վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները նրանցից յուրաքանչյուրին են անցնում՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան:

¹ Այլ երկրների, այդ թվում՝ ՌԴ քաղաքացիական օրենսդրությունը (ՌԴ քաղ. օր.-ի 64 հ.), հիմք ընդունելով միջազգային իրավանորմերով և երկրի հիմնական օրենքով ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքների առաջնայնության սկզբունքը, իրավաբանական անձի լուծարման դեպքում պահանջների բավարարման 1-ին հերթում **իրավացիորեն** նախատեսում է քաղաքացու կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման վճարումների կապիտալացումը, ապա՝ լուծարվող իրավաբանական անձի աշխատողների արձակման նպաստի, աշխատավարձի և հեղինակային պանանագրով վարձատրությունը, որից հետո՝ գրավով ապահովված պարտավորություններով պահանջը, հաջորդ հերթում՝ բյուջեի պարտքի վճարումները, իսկ վերջում՝ այլ պարտատերերի պահանջները:

5. Վերակազմավորում, որի դեպքում կազմակերպահրավական մեկ տեսակի իրավաբանական անձը վերակազմավորվում է այլ տեսակի, որին, ըստ փոխանցման ակտի, անցնում են նրա իրավունքներն ու պարտականությունները:

Կարելի է ասել, որ բաժանումը՝ միաձուլման, առանձնացումը՝ միացման հակառակ երևույթներն է, իսկ վերակազմավորման դեպքում տեղի է ունենում իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևի փոփոխում: Իրավաբանական անձի վերակազմակերպման էությունն այն է, որ ինչ եղանակով էլ այն իրականացվի, կազմակերպվող սուբյեկտի բոլոր իրավունքներն ու պարտականություններն անցնում են մեկ կամ մի քանի այլ տնտեսավարող սուբյեկտների՝ փոխանցման ակտով կամ բաժանիչ հաշվեկշռով, որն էլ ենթադրում է իրավահաջորդություն:

ՀՀ քաղ. օր.-ի 74-րդ հոդվածը սահմանում է տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների վերակազմավորման կարգը: Տնտեսական ընկերությունները և ընկերակցությունները կարող են մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմավորվել այլ տնտեսական ընկերությունների ու ընկերակցությունների: Երբ ընկերակցությունը վերակազմավորվում է որպես ընկերություն, ընկերակցության լիակատար ընկերը, դառնալով ընկերության մասնակից (բաժնետեր), երկու տարվա ընթացքում իր ողջ գույքով սուբսիդիար պատասխանատվություն է կրում ընկերակցությունից ընկերությանն անցած պարտավորությունների համար, ընդ որում, նախկին ընկերոջ կողմից իրեն պատկանող բաժնեմասերի (բաժնետոմսերի) օտարումը նրան չի ազատում նման պատասխանատվությունից:

Ֆարց 4. Իրավաբանական անձի հիմնական տեսակները (70-76-րդ, 117-127-րդ հոդվածներ)

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության՝ իրավաբանական անձանց դասակարգման հիմքում դրանց գործունեության նպատակը կամ բնույթն է (առևտրային, ոչ առևտրային), իսկ իրավաբանական գրականության մեջ՝ նաև այլ հատկանիշներ, այն է.

- ըստ սեփականության ձևի՝ պետական և ոչ պետական (կոլեկտիվ),
- ըստ հիմնադիրների կազմի՝ պետության, իրավաբանական անձանց և քաղաքացիների կողմից ստեղծվող (նաև այդ հիմնադիրների խառը մասնակցությամբ),

- ըստ մասնակիցների իրավունքի բնույթի՝ սեփականության կամ այլ գույքային իրավունքով, պարտավորական իրավունքով, առանց գույքային իրավունքի,
- ըստ հիմնադիր փաստաթղթերի կանոնադրական, պայմանագրային-կանոնադրական:

Անդրադառնալից առևտրային (շահույթ հետապնդող) և ոչ առևտրային (շահույթ չհետապնդող) իրավաբանական անձանց: Ոչ առևտրային իրավաբանական անձերը ստեղծվում են հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների և սպառողական կոոպերատիվների կազմակերպատիվական ձևերով և իրականացնում են մշակութային, գիտական, բարեգործական, կրոնական, սոցիալական, քաղաքական, սպորտային, կրթական և այլ ոչ տնտեսական բնույթի գործունեություն:

Հասարակական և կրոնական կազմակերպություններ են համարվում շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ կարիքների բավարարման նպատակով կամովին միավորված քաղաքացիների միությունները:

Հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրագուտ նպատակներ:

Իրավաբանական անձանց միավորումները (ասոցիացիա, միավորում) երկու և ավելի իրավաբանական անձանց կողմից իրենց շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար ստեղծված ոչ առևտրային կազմակերպություններն են:

Սպառողական կոոպերատիվը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումն է:

Առևտրային իրավաբանական անձերը ստեղծվում են տնտեսական ընկերակցությունների, տնտեսական ընկերությունների և արտադրական կոոպերատիվի (համատեղ տնտեսական գործունեության համար անդամության հիման վրա միավորված քաղաքացիների միություն՝ նրանց անձնական աշխատանքային կամ այլ մասնակցության և փայավճարների միավորմամբ) կազմակերպատիվական ձևերով:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- գաղափար կազմել քաղաքացիական իրավունքի սուբյեկտների մասին,
- իմանալ քաղաքացիների և կազմակերպությունների՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտների կարգավիճակի առանձնահատկությունները,
- տարանջատել իրավաբանական անձերը:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է իրավունակությունը, և ի՞նչ է գործունակությունը:
- Որո՞նք են իրավաբանական անձի պարտադիր հատկանիշները:
- Ինչպե՞ս են ստեղծվում և դադարում իրավաբանական անձերը:

ԹԵՄԱ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (72-116-րդ հոդվածներ)

Չարդ 1. Տնտեսական ընկերակցություններ (77-94-րդ հոդվածներ)

Տնտեսական ընկերակցություններ և ընկերություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների)՝ բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները: Հիմնադիրների (մասնակիցների) ավանդների հաշվին ստեղծված, ինչպես նաև տնտեսական ընկերակցության կամ ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքը նրան է պատկանում սեփականության իրավունքով:

Տնտեսական ընկերակցություններն իրենց հերթին լինում են լիակատար և վստահության վրա հիմնված, իսկ տնտեսական ընկերությունները՝ սահմանափակ պատասխանատվությամբ, բաժնետիրական (փակ, բաց) և լրացուցիչ պատասխանատվությամբ:

Լիակատար ընկերակցություն (ԼԸ), (77-89-րդ հոդվածներ)

Լիակատար է համարվում այն ընկերակցությունը, որի մասնակիցները (լիակատար ընկերներ), կանոնադրությամբ և հիմնադիր պայմանագրին համապատասխան, ընկերակցության անունից զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ և իրենց գույքով պատասխանատվություն են կրում ընկերակցության պարտավորությունների համար (հոդված 77):

Լիակատար ընկերակցության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի կա՛մ բոլոր մասնակիցների, կա՛մ մի քանի մասնակցի անունները (անվանումներ) և «Լիակատար ընկերակցություն» բառերը: Դրա մասնակիցներ կարող են լինել անհատ ձեռնակատերերը և առևտրային կազմակերպությունները (անձը կարող է լինել միայն մեկ լիակատար ընկերակցության մասնակից), որոնց ավանդներ ներդնելու պարտականությունների խախտման պատասխանատվությունը, ներդրված ավանդների կազմն ու կարգը, ինչպես նաև բաժնեհավաք կապիտալի չափը և կազմը, բաժնեմասերի չափը և փոփոխման կարգը սահմանվում են ընկերության կանոնադրությամբ:

Լիակատար ընկերակցության կառավարումն իրականացվում է բոլոր մասնակիցների ընդհանուր համաձայնությամբ (յուրաքանչյուր մասնակից ունի մեկ ձայն և իրավունք ունի գործելու լիակա-

տար ընկերակցության անունից): Ընկերակցության գործերի վարումը կարող է իրականացվել համատեղ կամ հանձնարարվել դրա առանձին մասնակիցների:

Լիակատար ընկերակցությանը բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1. պայմանագրային-կանոնադրական հիմքով ստեղծման կարգը,
2. գույքի միավորումը,
3. անձերի միավորումը (անձնական մասնակցությունը և վստահությունը),
4. մասնակիցների՝ իրենց գույքով ընկերակցության պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվությունը,
5. ընկերակցությունից դուրս եկած մասնակցի՝ դեռևս երկու տարվա պատասխանատվությունը (դուրս գալու տարվա հաշվետվության հաստատումից հետո)՝ մինչ իր դուրս գալը ծագած պարտավորությունների համար,
6. ոչ հիմնադիր մասնակցի՝ մյուս մասնակիցների հետ հավասար պատասխանատվությունը՝ մինչ ընկերակցության մեջ իր մտնելը ծագած պարտավորությունների համար,
7. ընկերակցության լուծարման լրացուցիչ հիմք է միայն մեկ մասնակցի մնալու փաստը (այդ մասնակիցը վեց ամսվա ընթացքում իրավունք ունի ընկերակցությունը վերակազմավորելու տնտեսական ընկերության):

Վստահության վրա հիմնված ընկերակցություն (ՎՎՀՈ) (90-94-րդ հոդվածներ)

Վստահության վրա հիմնված (կոմանդիտ) ընկերակցություն է համարվում այն կազմակերպությունը, որում ընկերակցության անունից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և իրենց գույքով դրա պարտավորությունների համար պատասխանատվություն կրող մասնակիցների (լիակատար ընկերներ) հետ միասին կան մեկ կամ մի քանի մասնակից ավանդատուներ (կոմանդիտիստներ), որոնք իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում են ընկերակցության գործունեության հետ կապված վնասների ռիսկը և չեն մասնակցում ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը (հոդված 90):

Վստահության վրա հիմնված ընկերակցության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի կա՛մ բոլոր լիակատար ընկերների, կա՛մ առնվազն մեկ լիակատար ընկերոջ անունը (անվանումը) և «Վստա-

հույան վրա հիմնված ընկերակցություն» բառերը: Ընդգծենք մեկ կարևոր դրույթ. եթե անվանման մեջ նշվում է ավանդատուի անունը, ապա նա դառնում է լիակատար ընկեր:

Վստահության վրա հիմնված ընկերակցության լիակատար ընկերներ կարող են լինել անհատ ձեռնարկատերը և առևտրային կազմակերպությունը, իսկ ավանդատուներ (կոմանդիտիստ)՝ իրավաբանական անձը և քաղաքացին:

Վստահության վրա հիմնված ընկերակցության կառավարումն իրականացնում են լիակատար ընկերները (ավանդատուներից անկախ), իսկ ավանդատուներն իրավունք չունեն մասնակցելու դրա կառավարմանը, գործերի վարմանը, առանց լիազորագրի հանդես գալու տվյալ ընկերակցության անունից, վիճարկելու դրա կառավարման և գործերի վարման հետ կապված լիակատար ընկերների գործողությունները:

Վստահության վրա հիմնված ընկերակցության կանոնադրությունը պետք է բովանդակի բաժնեհավաք կապիտալի չափի և կազմի, այդ կապիտալում լիակատար ընկերներից յուրաքանչյուրի բաժնեմասի չափի և փոփոխման կարգի, նրանց ներդրած ավանդների կազմի ու կարգի, ավանդատուների ավանդների չափի, ինչպես նաև ավանդներ ներդնելու պարտականությունների խախտման պատասխանատվության պայմանները (ավանդի ներդրումը հաստատվում է ընկերակցության կողմից ավանդատուին տրվող մասնակցության մասին վկայող փաստաթղթով):

Չարք 2. Տնտեսական ընկերություններ (95-116-րդ հոդվածներ)

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) (95-104-րդ հոդվածներ)

Սահմանափակ պատասխանատվությամբ է համարվում մեկ կամ մի քանի անձի հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և նրա գործունեության հետ կապված վնասների ռիսկը կրում են իրենց ներդրած ավանդի արժեքի սահմաններում (հոդված 95): Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի տարբերակող նշանակության անուն (հատուկ, հասարակ կամ այլ) և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» բառերը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցներ կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձերը, որոնց թիվը չպետք է գերազանցի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով սահմանված քանակը, իսկ գերազանցելու դեպքում այն վերակազմավորվում է բաժնետիրական ընկերության կամ լուծարվում է դատական կարգով: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը, անկախ մյուսների համաձայնությունից, ցանկացած ժամանակ իրավունք ունի դուրս գալու ընկերությունից:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությունը պետք է չընդգրկի դրա կանոնադրական կապիտալի չափի, մասնակիցների բաժնենասի, ներդրած ավանդների կազմի և կարգի, ինչպես նաև ավանդներ ներդնելու պարտականությունների խախտման պատասխանատվության, ինչպես նաև կառավարման (մասնակիցների ընդհանուր ժողով), գործադիր մարմինների կազմի ու իրավասության և նրանց որոշումների ընդունման կարգի պայմանները:

Չարկ ենք համարում ընդգծել երկու կարևոր հատկանիշներ, որոնք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները դարձրել են գրավիչ և նպաստել դրանց լայնորեն տարածմանը: Այդ հատկանիշներն են.

1. Ներդրողների սահմանափակ պատասխանատվություն. քանի որ իրավաբանական անձի գույքն առանձնացված է մասնակիցների գույքից, ուստի կազմակերպության պարտավորությունները բաժնետերերինը չեն: Սահմանափակ պատասխանատվությամբ խոշոր ընկերություններն ունեն հարյուրավոր բաժնետերեր, որոնք ռեալ մասնակցություն չունեն դրանց կառավարման գործընթացում, հետևաբար՝ չեն համաձայնի բաժնետոմսեր գնել, եթե ռիսկերը սահմանափակ չլինեն:

2. Կենտրոնացված կառավարում. իրավաբանական անձի ընթացիկ կառավարումն իրականացնում են դրա գործադիր մարմինները, ինչը դրականորեն է ազդում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության վրա, քանի որ կառավարման գործընթացում ներգրավվում են արհեստավարժ մասնագետներ:

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն (ԼՊԸ) (105-րդ հոդված)

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնենասերի: Նման ընկերության մասնակից-

ները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված՝ իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով (հոդված 105):

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության ֆիրմային անվանումը պետք է ներառի տարբերակող նշանակության անուն (հատուկ, հասարակ կամ այլ) և «լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն» բառերը:

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառվում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնները (105 հոդվածի 3-րդ կետ)՝ բացառությամբ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների՝ հիմնադիր պայմանագրով սահմանված լրացուցիչ պատասխանատվությունը:

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությանը բնորոշ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են.

1. պայմանագրային-կանոնադրական հիմքով ստեղծման կարգը,
2. մասնակիցների համապարտ պատասխանատվության սկզբունքը,
3. մասնակիցների՝ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների համար սահմանափակ պատասխանատվության կարգը (պայմանը),
4. մասնակիցների պատասխանատվության, համապարտությամբ հանդերձ, միայն լրացուցիչ լինելու սկզբունքը:

Բաժնետիրական ընկերություն (ԲԸ), (106-116-րդ հոդվածներ)

Բաժնետիրական է համարվում մեկ¹ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի: Բաժնետոմսեր թողարկելու իրավունք ունեն միայն բաժնետիրական ընկերությունները: Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի թողարկելու արտոնյալ բաժնետոմսեր՝ բաժնետիրոջը երաշխավորելով շահութաբաժիններ ստանալ բաժնետոմսերի անվանական արժեքից որոշված տոկոսներով՝ անկախ բաժնետիրական ընկերության տնտեսական գործունեության արդյունքից, բացի այդ, մյուս բաժնետերերի համեմատությամբ, նախապատվության իրավունքով ստանալու բաժնետի-

¹ Բաժնետիրական ընկերությունը կարող է ստեղծել մեկ անձ կամ կազմված լինել մեկ անձից՝ նրա կողմից ընկերության բոլոր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքում:

րական ընկերության լուծարումից հետո մնացած գույքի մասը և իրացնելու արտոնյալ բաժնետոմսերի թողարկման պայմաններով նախատեսված այլ իրավունքներ: Արտոնյալ բաժնետոմսերը դրանց տերերին իրավունք չեն տալիս մասնակցելու բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը (եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ): Արտոնյալ բաժնետոմսերի բաժինը չպետք է գերազանցի բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի քսանհինգ տոկոսը:

Բաժնետիրական ընկերության մասնակիցները (բաժնետերերը) պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը (հոդված 106):

Բաժնետիրական ընկերության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի տարբերակող նշանակության անուն (հատուկ, հասարակ կամ այլ) և «բաց բաժնետիրական ընկերություն» կամ «փակ բաժնետիրական ընկերություն» բառերը:

Բաժնետիրական ընկերության կարգավիճակը և բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլև «Բաժնետիրական ընկերության մասին» ՀՀ օրենքով:

Անդրադառնալով բաժնետիրական ընկերության տեսակների հարցին՝ ընդգծենք, որ դրանք տարբերվում են բաժնետերերի թվաքանակով (կազմով), ինչպես նաև նրանց իրավունքներով:

Բաժնետիրական ընկերությունը համարվում է բաց, եթե նրա մասնակիցներն իրավունք ունեն առանց մյուս բաժնետերերի համաձայնության օտարելու իրենց պատկանող բաժնետոմսերը: Փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Բաց բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի օրենքով և իրավական ակտերով, սահմանված կարգով, անցկացնելու իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն և դրանց ազատ վաճառք: Փակ բաժնետիրական ընկերությունն իրավունք չունի անցկացնելու իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկելու այլ կերպ ձեռք բերել դրանք:

Բաժնետիրական ընկերությանը բնորոշ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են.

1. կանոնադրական հիմքով ստեղծման կարգը,
2. բաժնետերերի ռիսկն՝ ըստ բաժնետոմսերի արժեքի,

3. կապիտալի հավասար մասերի բաժանումն ըստ բաժնետոմսերի:

Բաժնետիրական ընկերության կանոնադրությունը պետք է բովանդակի ընկերության կողմից թողարկվելիք բաժնետոմսերի տեսակների, դրանց անվանական արժեքի ու քանակի, կանոնադրական կապիտալի չափի, բաժնետերերի իրավունքների, ընկերության կառավարման մարմինների կազմի և լիազորությունների (որոշումներ ընդունելու կարգի, ինչպես նաև այդ որոշումները միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ ընդունելու) պայմանները:

Բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ կարող են սահմանվել նեկ բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի թվի, գումարային անվանական արժեքի կամ ձայների առավելագույն թվի սահմանափակումներ:

Առևտրային իրավաբանական անձանց գործունեության հետ կապված՝ վերջին տարիներին նկատվում է միտում, որ ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակով ստեղծված իրավաբանական անձերը հաճախ այլևս հանդես չեն գալիս որպես ինքնուրույն սուբյեկտներ: Ստեղծվում են դուստր կամ կախյալ տնտեսական ընկերություններ, որոնց կանոնադրական կապիտալում ոչ միայն մասնակցություն ունի այլ կազմակերպություն, այլև վերջինս այդ կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով (կամ պայմանագրով) հնարավորություն ունի նման ընկերության որոշումները կանխորոշելու կամ այդ որոշումների վրա ազդելու: Այդ տնտեսական ընկերությունների կարգավիճակը սահմանվում է ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի: Այսպես՝ 75-րդ հոդվածում նշվում է՝ տնտեսական ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության հիման վրա կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան, հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները, տալու ցուցումներ և համապարտ պատասխանատվություն կրելու իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար:

Համաձայն ՀՀ քաղ. օր.-ի 76-րդ հոդվածի՝ տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերակցությունը կամ ընկերությունը ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկվող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը:

Չարք 3. Տնտեսական ընկերակցությունների և տնտեսական ընկերությունների համեմատական բնութագիրը

Անդրադառնալով ընկերակցությունների ու ընկերությունների՝ միմյանցից տարբերակելու խնդրին, ընդգծենք, որ ընկերության համար բավարար է կապիտալով մասնակցությունը (կապիտալով միավորումը), իսկ ընկերակցության լիակատար ընկերներից յուրաքանչյուրը գործունեություն է իրականացնում ընկերակցության անունից: Ընկերակցության լիակատար ընկերների գործունեությունը համարվում է հենց ընկերակցության գործունեություն (ընկերակցությունը կառավարում են լիակատար ընկերները, որոնցից յուրաքանչյուրն ունի մեկ ձայն), ուստի անհրաժեշտություն չի առաջանում ստեղծելու կառավարման գործադիր մարմին, մինչդեռ ընկերության իրավունքներն ու պարտականությունները ձեռք են բերվում դրա համապատասխան մարմինների (ժողով, դիտորդ խորհուրդ և այլն) գործունեության արդյունքում: Բացի այդ, ընկերությունները՝ կանոնադրական, իսկ ընկերակցությունները՝ կանոնադրական-պայմանագրային կազմակերպություններ են: Ընկերակցության անվան (կանոնադրության) մեջ պարտադիր է նշել լիակատար ընկերների անունները, իսկ ընկերությունները կարող են ունենալ հասարակ, հատուկ և (կամ) այլ անվանումներ:

Ընկերակցությունների համար օրենսդրությամբ չի սահմանվում մասնակիցների առավելագույն թվաքանակ: Ի տարբերություն դրանց, ընկերությունները կարող են ստեղծվել մեկ անձով: Ընկերությունների մասնակից (հիմնադիր) կարող է լինել ֆիզիկական և իրավաբանական ամեն մի անձ, իսկ ընկերակցությունների մասնակից (լիակատար ընկերներ)՝ միայն անհատ ձեռնարկատերը և (կամ) առևտրային կազմակերպությունը: Լիակատար ընկերը չի կարող լինել այլ ընկերակցության լիակատար ընկեր: Քաղաքացիական օրենսդրությունն արգելում է միևնույն գույքով այլ հնարավոր պարտավորությունների ապահովումը:

Պարտավորությունների համար ընկերությունում գործում է սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվություն, իսկ ընկերակցության լիակատար ընկերները պատասխանատվություն են կրում իրենց գույքով, ընդ որում, նույնիսկ ոչ հիմնադիր մասնակիցները մյուսների հետ հավասար չափով պատասխանատվություն են կրում մինչև ընկերության մեջ իրենց մտնելը ծագած պարտավորությունների համար: Ինչ վերաբերում է ընկերակցությունից դուրս եկած մասնակիցներին, ապա վերջիններս, մինչև ընկերակցությունից իրենց դուրս գալը ծագած պարտավորությունների համար, մնա-

ցած մասնակիցների հետ միասին, կրում են հավասար պատասխանատվություն՝ իրենց ընկերակցությունից դուրս գալու տարվա հաշվետվության հաստատման օրվանից երկու տարվա ընթացքում (ընկերություններում նման կարգ չի գործում): Բաժնեմասերի օտարունը լիակատար ընկերոջը չի ազատում պատասխանատվությունից:

Ընկերության մասնակիցները ցանկացած ժամանակ, անկախ մյուսների համաձայնությունից, կարող են դուրս գալ ընկերությունից, իսկ ընկերակցության մասնակցի՝ ընկերակցությունից դուրս գալու մասին պետք է հայտարարվի առնվազն վեց ամիս առաջ: Ընկերակցության մասնակցի ընկերակցությունից դուրս գալուց հետո մնացած մասնակիցների բաժնեմասերը բաժնեհավաք կապիտալում ավելանում են համամասնորեն: Ընկերակցության մասնակիցներն իրավունք ունեն մշակելու շահույթի բաշխման տարբեր մոդելներ՝ ըստ իրենց համաձայնագրերի, մինչդեռ ընկերությունում դա բաշխվում է միայն ըստ մասնակիցների մասնակցության չափի:

Ընկերության մասնակիցների փոփոխության դեպքում դրա գործունեությունը շարունակվում է: Մինչդեռ լիակատար ընկերակցությունը լուծարվում է, երբ մնում է մեկ հիմնադիր կամ մասնակից (լիակատար ընկեր), իսկ ՎՎՅԸ-ն լուծարվում է բոլոր ավանդատուների՝ ընկերակցությունից դուրս գալու դեպքում, թեպետ ինչպես ՎՎՅԸ-ը, այնպես էլ ԼԸ-ն ունեն վեց ամսվա ընթացքում վերակազմավորվելու իրավունք:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- սահմանազատել տնտեսական ընկերությունները և ընկերակցությունները,
- բնորոշել տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների տեսակները:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ առանձնահատկություններ ունեն տնտեսական ընկերությունները:
- Ի՞նչ առանձնահատկություններ ունեն տնտեսական ընկերակցությունները:
- Ի՞նչ հատկանիշներով են տարբերվում տնտեսական ընկերությունները տնտեսական ընկերակցություններից:

ԹԵՄԱ 5. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ (289-317-րդ հոդվածներ)

Չարց 1. Գործարքի հասկացությունը, վավերության պայմանները: Անվավեր գործարքներ (289-րդ, 294-325-րդ հոդվածներ)

Գործարքը անձ(եր)ի այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն, փոփոխելուն, դադարեցնելուն: Այս իմաստով, գործարքն իրավաբանական փաստ է, իրավական արդյունքների ձեռքբերմանն ուղղված կամային, իրավաչափ և օրենքով նախատեսված արդյունավետ գործողություն: Օրենքի պահանջին չհամապատասխանող գործարքներն անվավեր են: Գործարքի վավերության համար քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է չորս պարտադիր պայմաններ.

- գործարքի բովանդակության համապատասխանությունը օրենքին,
- գործարքի սուբյեկտի իրավունակությունը և գործունակությունը,
- գործարքի սուբյեկտի կամքի և կամքի դրսևորման միջև համապատասխանությունը,
- գործարքի՝ օրենքով սահմանված ձևի պահպանումը:

Ըստ կնքման ձևի՝ գործարքները լինում են.

ա) բանավոր, կոնկլյուզենտ¹ կամ անխոս իրավական գործողությամբ և լռելյայն (ըստ «լռությունը համաձայնության մշան է» սկզբունքի)²,

բ) գրավոր (հասարակ և նոտարական վավերացմամբ):

Նոտարական վավերացմամբ գործարքները նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ: Միաժամանակ, գործարքի այս ձևը պարտադիր է դառնում, երբ կողմերից մեկը պահանջում է նոտարական վավերացում: ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է նաև գործարքից ծագող իրավունքների պետական գրանցում՝ որպես գույքի նկատմամբ իրային իրավունքների ծագման, փոփոխման ու դադարեցման, նաև սահմանափակումների հիմք: Պետական գրանցման պահանջը չապահովելը գործարքը դարձնում է անվավեր (առոչինչ): Անվավեր գործարքները ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է 303-314-րդ հոդվածներով: Ըստ 303-րդ հոդվածի՝ գործարքն անվավեր է օրենքով սահ-

¹ Concludenter - լատ.՝ կնքել, պայմանագրի կնքման գործողություն:

² Qui tacet-consentire videtur - լատ.՝ «Լռությունը համաձայնության մշան է»:

մանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ՝ նման ճանաչումից (առռչինչ գործարք, որը, կողմերի կամքից անկախ, օրենքի ուժով անվավեր է): ԴՅ քաղ. օր.-ի 306-րդ հոդվածն առռչինչ է համարում կեղծ, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանք առաջացնելու մտադրության կնքված և շինծու, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքները: ԴՅ քաղ. օր.-ի 307-314-րդ հոդվածներով անվավեր են համարվում անգործունակ և սահմանափակ գործունակ ճանաչված անձանց, անչափահասի, իր գործողությունները ղեկավարելու անընդունակ անձի կողմից կնքված, ինչպես նաև այն գործարքները, որոնք կնքվել են էական նշանակություն ունեցող մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի ներքո կամ մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությանը կամ ծանր հանգամանքների բերումով:

Ֆարց 2. Գործարքների տեսակները (290-293-րդ հոդվածներ)

Գործարքները բազմաթիվ են և բազմատեսակ, ուստի դրանք դասակարգվում են ըստ հետևյալ հատկանիշների.

1. Քանակական (կամքի)

- ա) միակողմ, որով արտահայտվում է մեկ կողմի (որը կարող է լինել մեկ կամ մեկից ավելի անձինք) կամքը, ինչը բավարար է օրենքով նախատեսված իրավական հետևանքի առաջացման համար (օրինակ՝ կտակ),
- բ) երկկողմ, որով արտահայտվում է երկու կողմի փոխադարձ կամքը (օրինակ՝ առք ու վաճառք),
- գ) բազմակողմ, որով երկուսից ավելի կողմերի կամքն ուղղված է միասնական նպատակի (օրինակ՝ համատեղ գործունեության պայմանագրի կնքում):

2. Կնքված համարելու պահ

- ա) կոնսենսուալ¹, երբ գործարքի կնքված համարելու համար բավարար է կողմերի համաձայնության փաստը (օրինակ՝ առք ու վաճառք),
- բ) ռեալ², երբ գործարքը կնքված է համարվում, կողմերի համաձայնությունից բացի, որոշակի գործողություն կատա-

¹ Consensus- լատ.՝ համաձայնություն:

² Realis / res / - լատ.՝ 1. իրականացված, գույքային, իրական, 2. իր, գույք:

րելով, հիմնականում գործարքի առարկան հանձնելով (օրինակ՝ փոխառություն):

3. Կողմերի գույքային շահ՝

ա) հատուցելի, որով մի կողմի պարտավոր գործողությունը հանգեցնում է մյուս կողմի մեկ այլ պարտավոր գործողությանը (օրինակ՝ առք ու վաճառք),

բ) անհատույց, որով մի կողմի գործողության համար մյուս կողմը չի կրում պարտավոր գործողություն (օրինակ՝ նվիրատվություն):

4. Գործարքի իրավական հիմքի որոշակիություն՝

ա) կաուզալ¹, երբ գործարքի բովանդակությունից ակնհայտ է դրա նպատակը (օրինակ՝ մատակարարում պետական կարիքների համար),

բ) վերացական, երբ գործարքից պարզ չեն դրա հիմքն ու նպատակը (օրինակ՝ մուրհակի գործարք):

5. Կնքման պայման՝

ա) հետաձգող պայմանով, որի իրականացումն է առաջացնում գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները (օրինակ՝ գույքը վաճառելու պայման է սահմանվել բնակության այլ վայր մեկնելը),

բ) վերացնող պայմանով, որի իրականացումը հանգեցնում է գործարքով առաջացած իրավունքների և պարտականությունների դադարեցմանը (օրինակ՝ ապահովագրական պատահարի վրա չհասնելը):

6. Վստահության գործոն՝ ըստ որի գործարքի առանձին տեսակ է համարվում ֆիդուցիարը², որը հիմնված է անձնական վստահության վրա, և դրա կորուստը կատարումից միակողմ հրաժարվելու հիմք է (օրինակ՝ լիզինգ, հանձնարարություն, ավանդ, վարկ և այլն):

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- յուրացնել գործարքի հասկացությունը և վավերության պայմանները,
- տարբերակել գործարքի տեսակները,
- սովորել գործարքների կնքման կարգը:

Ստուգիչ հարցեր

- Որո՞նք են վավեր գործարքները:
- Որո՞նք են անվավեր գործարքները և դրանց իրավական հետևանքները:

¹ Causa – լատ.՝ հիմք, պատճառ:

² Fiducia – լատ.՝ վստահություն, վստահության վրա հիմնված գործարք:

ԹԵՄԱ 6. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ: ԼԻԱԶՈՐԱԳԻՐ (318-325-րդ հոդվածներ)

Չարց 1. Ներկայացուցչության հասկացությունը և առաջացման հիմքերը (318-320-րդ հոդվածներ)

Քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցները գործնականում, հաճախ, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հնարավորություն չեն ունենում անձամբ հանդես գալու, ուստի քաղաքացիական օրենսդրությունը նրանց շահերի ապահովման համար նախատեսում է այլ անձի միջոցով մասնակցություն, այսինքն՝ ներկայացուցչություն:

Ներկայացուցչությունը օրենքի, վարչական ակտի կամ լիազորագրի վրա հիմնված լիազորությամբ այն գործարքն է, որով մի անձի՝ ներկայացուցչի իրավական գործողությունը երրորդ անձանց հետ մեկ այլ անձի՝ ներկայացվողի անունից և վերջինիս համար առաջացնում, փոփոխում, դադարեցնում է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Ներկայացուցչությունն ունի երկու կողմ. ներքին (ներկայացուցիչ, ներկայացվող) և արտաքին (ներկայացուցիչ, երրորդ անձ):

Ներկայացվող կարող է լինել իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտ, որի անունից կնքվում է գործարք կամ կատարվում է իրավական գործողություն, որի արդյունքը նա պարտավոր է ընդունել: Ներկայացուցիչ կարող է լինել գործունակ քաղաքացին և իրավաբանական անձը (ըստ կանոնադրության): Վերջինս չի կարող լինել քաղաքացու ներկայացուցիչ: Չարկ է նկատել նաև, որ ներկայացուցչի միջոցով չի թույլատրվում կնքել այնպիսի գործարք, որն իր բնույթով անձնական է և կարող է կնքվել միայն անձամբ:

Ներկայացուցիչն իրեն վստահված լիազորությունների շրջանակում հանդես է գալիս երրորդ անձանց հետ հարաբերություններում և իրավունքներ ու պարտականություններ է առաջացնում ներկայացվողի համար: Բացի այդ, ներկայացուցիչը հաշվետու է ներկայացվողի առջև, պարտավոր է նրան հանձնել գործարքով ձեռք բերված ողջ արդյունքը, ինչպես նաև գործարք չկնքել անձամբ իր, ինչպես նաև այն անձի նկատմամբ, որի ներկայացուցիչն է միաժամանակ:

Ներկայացուցիչն իրավունք ունի հրաժարվելու հանձնարարության կատարումից, կատարելու վերալիազորում (եթե դա նախատեսված է լիազորագրով), ներկայացվողին ներկայացնելու ծախսե-

րի հատուցման պահանջ և պահանջել վարձատրություն (եթե հանձնարարությունը վճարովի է):

Ներկայացուցչությունն ունի առաջացման կամավոր և պարտադիր հիմքեր: Կամավորը պայմանագրային բնույթի է և ենթադրում է ներկայացվողի կողմից իր ներկայացուցչի և նրա լիազորությունների որոշում, իսկ պարտադիրը սահմանվում է օրենքի ուղղակի ցուցումով (օրինակ՝ անգործունակ անձի համար) կամ վարչական ակտով (օրինակ՝ խնամակալության մարմնի):

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն առանձին նորմով նախատեսում է առևտրային ներկայացուցչություն: Համաձայն 320-րդ հոդվածի՝ առևտրային ներկայացուցչի ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ձեռնարկատերերի անունից պայմանագրեր կնքելիս նրանց մշտապես և ինքնուրույն ներկայացնող անձն է: Վերջինս, բացի սովորական գործարքներից, իրավասու է գրավոր պայմանագրի կամ լիազորագրի հիման վրա կնքել այնպիսի առևտրային գործարքներ, որոնք այլ անձինք կնքել չեն կարող:

Առևտրային ներկայացուցչությունն ունի երկու տեսակ՝ ուղղակի (ներկայացուցիչը հանդես է գալիս ներկայացվողի անունից) և անուղղակի (ներկայացուցիչը հանդես է գալիս իր անունից, չի հայտնում ներկայացվողի գոյության մասին, հայտարարում է կամ չի հայտարարում ներկայացվողի անունը): Առևտրային ներկայացուցչություն իրականացնող անձը պարտավոր է գործարքներով հայտնի դարձած տեղեկությունները գաղտնի պահել նաև հանձնարարությունը կատարելուց հետո:

Քարտ 2. Լիազորագիր (321-325-րդ հոդվածներ)

Լիազորագիրը ներկայացուցչության իրականացման միակողմ գործարք է, որն արտահայտում է ներկայացվողի կամքը և նրա ներկայացուցչի լիազորությունները:

Լիազորագիրն այն գրավոր լիազորությունն է, որը մեկ անձը տալիս է մեկ այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացուցչության համար:

Լիազորագիրը հասարակ կամ նոտարական վավերացմամբ գրավոր ձևով կնքված ժամկետային փաստաթուղթ է, որի ռեկվիզիտներն¹ են ներկայացվողի և նրա ներկայացուցչի լիազորությունների շրջանակը (վերալիազորման իրավունքը), ներկայացվողի

¹ Requisitum – լատ.՝ անիրաժեշտ, փաստաթղթի պարտադիր պահանջ, վավերապայման:

ստորագրությունը և լիազորագրի տրման ամսաթիվը: Այն լիազորագիրը, որտեղ նշված չեն տրման տարին, ամիսը, ամսաթիվը, առոչինչ է:

Վերալիազորումը լիազորված անձի լիազորությունների փոխանցումն է մեկ այլ անձի՝ նոտարական վավերացմամբ լիազորագիր տալու միջոցով (ժամկետը՝ հիմնական լիազորագրի ժամկետից ոչ պվելի):

ՀՀ-ում լիազորագրի առավելագույն ժամկետը երեք տարի է, իսկ արտասահմանում՝ մինչև լիազորողի կողմից այն վերացնելը: Ժամկետ չնատնանշելու դեպքում լիազորագիրը գործում է մեկ տարի՝ տրման օրվանից:

Լիազորագրերն ունեն նաև տեսակներ և դադարման հիմքեր:

Ըստ լիազորության բնույթի՝ լիազորագրերը լինում են.

- ա) ընդհանուր (գլխավոր), որով ներկայացուցիչը կատարում է տարբեր տեսակի գործողություններ և գործարքներ (օրինակ՝ ավտոմեքենան օգտագործելու և վաճառելու),
- բ) հատուկ, որով ներկայացուցիչը որոշակի ժամանակահատվածում պարբերաբար կատարում է նույն գործողությունը (օրինակ՝ լիազորողի նպաստները ստանալու),
- գ) միանվագ կամ մեկանգամյա, որով ներկայացուցիչը կատարում է մեկ կոնկրետ գործողություն (օրինակ՝ լիազորողի՝ մարտ ամսվա նպաստը ստանալու):

Լիազորագրի դադարման հիմքեր են ժամկետի լրանալը, նախատեսված գործողությունների կատարումը, լիազորված անձի հրաժարումը, լիազորող անձի կողմից լիազորության վերացումը, լիազորված կամ լիազորող իրավաբանական անձի դադարումը, լիազորված կամ լիազորող քաղաքացու մահը, լիազորված կամ լիազորող քաղաքացուն դատարանի կողմից անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող, մահացած ճանաչելը:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- հասկանալ ներկայացուցչության իրավական ինստիտուտի դերը,
- իմանալ ներկայացուցչության ծագման, տեսակների և իրականացման պայմանները:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է ներկայացուցչությունը, որո՞նք են դրա տեսակները:
- Ի՞նչ է լիազորագիրը, որո՞նք են դրա տեսակները:

ԹԵՄԱ 7. ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՍՈՒԹՅՈՒՆ (331-344-րդ հոդվածներ)

Հարց 1. Հայցային վաղեմության հասկացությունը (331-339-րդ հոդվածներ)

Քաղաքացիական իրավունքում ժամկետ է համարվում ժամանակի այն հատվածը (տարի, եռամսյակ, ամիս) կամ պահը (օրինակ՝ ժամ), որի հետ քաղաքացիական օրենքը պայմանավորում է իրավական հետևանքներ: Գործող ժամկետները դասակարգվում են ըստ.

- սահմանման եղանակի (օրենքով և այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ գործարքով և դատարանի որոշմամբ),
- հրահանգման բնույթի (ինպերատիվ և դիսպոզիտիվ),
- սահմանման ձևի (որոշակի և անորոշ (ողջամիտ, ըստ պահանջի պահի),
- նշանակության (ընդհանուր և հատուկ (օրենքի ուղղակի մատնանշմամբ),
- գործողության բնույթի և դերի (քաղաքացիական իրավունքների իրականացման և պաշտպանության, քաղաքացիական պարտականությունների կատարման):

Վերոնշյալ ժամկետներն էլ, իրենց հերթին, լինում են երեք տեսակ՝ երաշխիքային, վնասապահանջի (պրետենզիոն) և հայցային վաղեմության: Վերջինս այդպես է կոչվում, քանի որ պաշտպանության համար հայցողը դատարան կարող է դիմել օրենքով սահմանված ժամանակահատվածում: Ըստ ՀՀ քաղ. օր.-ի 331-րդ հոդվածի՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Խախտված իրավունքի պաշտպանության համար դատարան հայցներ կայացնելու ժամկետ սահմանելն ունի գործնական նշանակություն և քաղաքացիական իրավահարաբերությունների կայունության, պայմանագրային կարգապահության և առկա ապացուցման միջոցների ապահովման ու օգտագործման նպատակ:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է հայցային վաղեմության ժամկետի երկու տեսակ.

- ընդհանուր, որ տարածվում է բոլոր տեսակի իրավահարաբերությունների վրա,
- հատուկ, որ սահմանվում է պահանջների որոշակի տեսակների համար:

Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, իսկ հատուկը դրանից ավելի (օրինակ՝ առոչինչ գործարքն անվավեր ճանաչելու տասը տարվա վաղեմության ժամկետը) կամ պակաս՝

կրճատ (օրինակ՝ փոստային առաքման հետ կապված պահանջի ժամկետը):

Հայցային վաղեմության ժամկետներն ունեն հետևյալ հատկա-
հիշները.

1. Չեն վերացնում հայց ներկայացնելու իրավունքը: Հայցի ըն-
դունումը դատարանի կողմից ժամանակի անցման փաստով
մերժվել չի կարող:
2. Որպես ժամկետի տեսակ՝ որոշակի են, իսկ բնույթով՝ իմպե-
րատիվ:
3. Կիրառվում են հատուկ նախաձեռնությամբ, այսինքն՝ իրա-
վունքը խախտված անձի հայցով:
4. Ընթանում են այն պահից, երբ անձն իմացել է կամ պարտա-
վոր էր և կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
Այդ պահն էլ, ըստ օրենքի, համարվում է հայցային վաղեմու-
թյան ժամկետի սկիզբը:

ՀՀ քաղ. օր.-ի 344-րդ հոդվածը սահմանում է այն պահանջները,
որոնք չունեն հայցային վաղեմության ժամկետ: Դրանք են.

- անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական
բարիքների պաշտպանության պահանջը,
- ավանդների վերադարձման պահանջը,
- քաղաքացու կյանքին և առողջությանը պատճառված վնասի
հատուցման պահանջը,
- սեփականատիրոջ և այլ տիրապետողի իրավունքի խախտու-
մը վերացնելու պահանջը,
- գույքն օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու՝ սեփա-
կանատիրոջ իրավունքները խախտող իրավական ակտն ան-
վավեր ճանաչելու պահանջը:

Հարց 2. Հայցային վաղեմության կասեցումը, ընդհատումը և վերականգնումը (339-344-րդ հոդվածներ)

Հայցային վաղեմությունը ժամանակի ընդհանուր հոսքի՝ օրեն-
քով կարգավորվող և հաշվարկվող մաս է, ուստի այն գործնական
որոշակի հանգամանքների առկայության դեպքում կասեցվում է,
ընդհատվում, նաև վերականգնվում:

ՀՀ քաղ. օրենսգիրքը սպառնիչ ցանկով սահմանում է հայցային
վաղեմության կասեցման և ընդհատման հիմքերը (հոդված 339,
340): Կասեցման հիմքերն են.

- անհաղթահարելի ուժի առկայությունը,

- հայցվորի կամ պատասխանողի գտնվելը ռազմական դրության փոխադրված զինված ուժերի կազմում,
- պարտավորության կատարման մորատորիումը¹ ՀՀ կառավարության կամ ԿԲ-ի կողմից,
- անգործունակ անձի օրինական ներկայացուցիչ չունենալը,
- համապատասխան հարաբերությունը կարգավորող օրենքի կամ իրավական ակտի գործողության կասեցված լինելը:

Այս հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության ժամկետում չի հաշվարկվում անձի խախտված իրավունքի պաշտպանության համար հայց ներկայացնելուն խոչընդոտած, այսինքն՝ կասեցման հիմք դարձած հանգամանքների տևողության ժամանակը, իսկ դրանց վերացման օրվանից ժամկետը շարունակվում է:

Ընդհատման հիմքերն են.

- սահմանված կարգով դատարանին հայց ներկայացնելը,
- պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը կամ ընդունումը վկայող գործողությունների կատարումը:

Այս հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության անցած ժամանակահատվածը հաշվի չի առնվում և ընդհատումից հետո հայցային վաղեմության ընթացքը նորից է սկսվում, այսինքն՝ հաշվի չի առնվում ոչ ընդհատման հիմք դարձած հանգամանքների տևողության ժամանակը, ոչ էլ մինչ այդ անցած ժամանակը:

ՀՀ քաղ. օր.-ի 342-րդ հոդվածը կարգավորում է հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու կարգը և հիմքերը, այսինքն՝ անձի կողմից այդ ժամկետը բաց թողնելու պատճառները (օրինակ՝ հիվանդանոցային բուժման մեջ գտնվելը, անձի անօգնական վիճակը և այլ հանգամանքներ) դատարանի կողմից հարգելի համարելու իրավունքը:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- գաղափար կազմել քաղաքացիական իրավունքում գործող ժամկետների մասին,
- իմանալ հայցային վաղեմության նպատակը քաղաքացիական շրջանառությունում,
- յուրացնել հայցային վաղեմության կասեցման և ընդհատման հիմքերը:

Ստուգիչ հարցեր

- Ժամկետի ի՞նչ տեսակ է հայցային վաղեմությունը:
- Որո՞նք են հայցային վաղեմության ժամկետի տեսակները:
- Ո՞րն է հայցային վաղեմության ժամկետի սկիզբը:
- Ո՞ր պահանջների վրա չի տարածվում հայցային վաղեմությունը:

¹ Moratorius – լատ.՝ տարկետում, հետաձգում, սառեցում:

ԹԵՄԱ 8. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (163-225-րդ, 273-288-րդ հոդվածներ)

Չարց 1. Սեփականության իրավունքի հասկացությունը, ձեռքբերումը և դադարումը (164-188-րդ հոդվածներ)

Սեփականության իրավունքը իրային իրավունքի տեսակ է:

Իրային (գույքային) է այն իրավունքը, որն ապահովում է անձի շահերի բավարարումը նրա տնտեսական տիրապետման ոլորտում գտնվող առարկայի վրա անմիջական ներգործությամբ:

Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված և պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Սեփականության իրավունքը, օբյեկտիվ իմաստով, իրավական նորմերի համակցություն է, որ կարգավորում է գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հարաբերությունները:

Սուբյեկտիվ սեփականության իրավունքը սեփականատիրոջ իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու գույքը՝ իր հայեցողությամբ և իր շահերով, այդ գույքի նկատմամբ իրականացնելով օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող և այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերն ու իրավունքները չխախտող ցանկացած գործողություն, ինչպես նաև վերացնելու իր տնտեսական տիրապետման ոլորտ այլ անձանց միջամտությունը:

Սեփականության իրավունքի սուբյեկտներ են քաղաքացիները, իրավաբանական անձերը, համայնքը և պետությունը, օբյեկտներ՝ իրերը (գույքը):

Սեփականության իրավունքն ունի նաև ձեռքբերման եղանակներ, դադարման հիմքեր և բովանդակություն: Սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակները երկուսն են.

ա) **սկզբնական**, այսինքն՝ առաջին անգամ կամ նախկին սեփականատիրոջից անկախ (օրինակ՝ նոր գույքի ստեղծումը, հանրամատչելի, տիրագուրկ և լքյալ գույքի, գտանքի, գանձի, առանց հսկողության թողնված կենդանիների ձեռքբերումը և այլն):

բ) **ածանցական** կամ նախկին սեփականատիրոջ կամքով (օրինակ՝ պայմանագրով, գույքի մասնավորեցմամբ, միակողմ

գործարքով, այսինքն՝ ինդոսամենտով¹ ու կտակով ձեռքբերումը):

Սեփականության իրավունքի դադարեցման՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանվող հիմքերն են սեփականությունից հրաժարումը, գույքի ոչնչացումը, սեփականատիրոջ կողմից գույքի օտարումը, գույքի՝ ըստ օրենքի պարտադիր օտարումը, հողամասը վերցնելու կապակցությամբ դրա վրա գտնվող անշարժ գույքն օտարելը, անտնտեսվար պահվող մշակութային արժեքները վերցնելը, իրավաբանական անձի լուծարումը կամ վերակազմակերպումը, սեփականատիրոջ պարտավորություններով գույքի վրա բռնագանձում տարածելը, գույքի կոնֆիսկացիան² դատական կամ վարչական ակտով, գույքի ռեկվիզիցիան³:

Չարց 2. Սեփականության իրավունքի բովանդակությունը (163-րդ հոդված)

Սեփականության իրավունքի բովանդակությունը սեփականատիրոջ կողմից գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործությունների ամբողջությունն է:

Տիրապետումը գույքի նկատմամբ սեփականատիրոջ տնտեսական իշխանության (փաստացի տիրապետման) իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Տիրապետումը լինում է երկու տեսակի՝ օրինական և անօրինական:

Օրինական (տիտղոսային) տիրապետումը լինում է.

ա) սեփականատիրոջ օգտին (օրինակ՝ հավատարմագրային կառավարում, սեկվեստր⁴, վիճարկվող գույքի պահատվություն, հանձնարարություն),

բ) տիրապետողի օգտին (օրինակ՝ վարկ, փոխառություն, ուզուֆրուկտ⁵),

գ) սեփականատիրոջ և տիրապետողի օգտին (օրինակ՝ փոխադրում, պահատվություն, կապալ, կոմիսիա, վարձակալություն):

Անօրինական տիրապետումը, իր հերթին, լինում է բարեխիղճ և անբարեխիղճ: Այս դասակարգումն ունի գործնական նշանակու-

¹ Indossum – lat, indossament – լատ.՝ փոխանցագիր, մուրհակի (չեկի) հակառակ կողմին արված փոխանցման նակագրություն:

² Confiscation – լատ.՝ բռնագրավում, գույքի անհատույց առգրավում:

³ Reguisitio – լատ.՝ պահանջ, գույքը հարկադրաբար վերցնելը՝ վճարմամբ:

⁴ Segustrum – լատ.՝ արգելակալանք, վիճարկվող գույքը պահատվության հանձնելը:

⁵ Ususfructus – լատ.՝ օգտագործում, եկամտի ստացում, ուրիշի գույքի և եկամտի օգտագործման իրավունք:

թյուն և հանգեցնում է իրավական տարբեր հետևանքների. բարեխիղճ տիրապետողը տեղյակ չէ կամ պարտավոր չէ տեղյակ լինել իր տիրապետման անօրինականության մասին, ուստի չի ունենում գույքային զրկանք, իսկ անբարեխիղճ տիրապետողը տեղյակ է կամ պարտավոր է տեղյակ լինել իր տիրապետման անօրինականության մասին, ուստի կրում է գույքային զրկանք:

Օգտագործումը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու և օգուտ (եկամուտ, պտուղ, աճ) ստանալու՝ իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Տնօրինումը գույքի ճակատագիրը որոշելու՝ իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Չարք 3. Ընդհանուր սեփականության իրավունք (189-201-րդ հոդվածներ)

Ընդհանուր սեփականության իրավունքը երկու և ավելի անձանց (համասեփականատերերի) միևնույն գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման՝ քաղաքացիական իրավանորմերով սահմանված հնարավորությունն է: Գոյություն ունի ընդհանուր սեփականության իրավունքի երկու տեսակ՝ ընդհանուր բաժնային և ընդհանուր համատեղ: Առաջին դեպքում մասնակիցների բաժիններն առանձնացված են, երկրորդ դեպքում՝ ոչ (ինչը չի նշանակում, թե ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գույքը ենթակա չէ բաժանման): Ընդհանուր բաժնային սեփականությունը կարող է առաջանալ օրենքով կամ պայմանագրով թույլատրելի հիմքով, որի մասնակիցներ կարող են լինել քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները:

Ընդհանուր համատեղ սեփականության համասեփականատերերը միայն քաղաքացիներն են (օրինակ՝ ամուսինները, գյուղացիական տնտեսության անդամները):

Ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի տիրապետումն ու օգտագործումը կատարվում են բաժնեմասին համապատասխան՝ բոլոր մասնակիցների փոխհամաձայնությամբ, նաև դատարանի սահմանած կարգով:

Ընդհանուր համատեղ սեփականությամբ գույքը տիրապետում և օգտագործում են բոլոր մասնակիցները՝ համատեղ կամ միասին:

Ընդհանուր բաժնային սեփականությամբ գույքի բաժնեմասի տնօրինումն իրականացվում է ինքնուրույն, սակայն մյուս մասնակիցների գնելու նախապատվության իրավունքով՝ վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով:

Համատեղ սեփականությամբ գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ՝ անկախ նրանից, թե ով է կնքել գույքը տնօրինելու գործարքը:

Հարց 4. Սեփականության իրավունքի քաղաքացիաիրավական պաշտպանությունը (273-277-րդ հոդվածներ)

Սեփականության իրավունքին բնորոշ է բացառիկ բնույթը: Սեփականատերը գույքի նկատմամբ իրավագոր անձն է, որի իրավունքի խախտումից պետք է ձեռնպահ մնան բոլորը: ՀՀ օրենսդրությամբ (սահմանադրական, քրեական, վարչական, ֆինանսական, հողային, քաղաքացիական) նախատեսված են սեփականության, նաև այլ գույքային իրավունքները պաշտպանելու հատուկ եղանակներ:

Սեփականության իրավունքի քաղաքացիաիրավական պաշտպանությունն այն միջոցների և եղանակների համակցությունն է, որ կիրառվում է սեփականատիրական հարաբերությունների (սեփականատիրոջ իրավունքների և շահերի) խախտման դեպքում և ապահովում դրանց վերականգնումը:

Սեփականության իրավունքի քաղաքացիաիրավական պաշտպանությունն իրականացվում է ուղղակի կամ **գույքաիրավական** և անուղղակի կամ **պարտավորական** հայցերով: Գույքաիրավական հայցերը երեքն են.

1. Վինդիկացիոն¹, ըստ որի սեփականատերը դատարանի միջոցով պահանջում է ուրիշի ապօրինի տիրապետության տակ գտնվող իր գույքը, ինչպես նաև այն եկամուտը, որն իրավախախտը ձեռք է բերել իր գույքով: Հարկ է ընդգծել, որ ապօրինի տիրապետողի կողմից գույքի (հատկապես՝ անհատապես որոշվող) ոչնչացման փաստի դեպքում սեփականատիրոջ հայցը կբավարարվի ոչ թե վինդիկացիոն, այլ վնասի հատուցման սկզբունքով:

2. Նեգատոր², որի համար հիմք է սեփականատիրոջ իրավունքի ամեն մի խախտում, թեկուզև դրանք զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ: Այլ խոսքով, թեպետ գույքը գտնվում է սեփականատիրոջ տիրապետության ներքո, սակայն այլ անձանց

¹ Vindicatio-լատ.՝ պաշտպանություն, սեփականատիրոջ կողմից դատարանի միջոցով գույքը հետ պահանջելն ապօրինի տիրապետողից:

² Negatoris-լատ.՝ ժխտող, մերժող, տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումը վերացնելու պահանջ:

կողմից խոչընդոտներ կան (օրինակ՝ բնական բավարար լուսավորությունից զրկելու, օժանդակ հարմարություններից օգտվելու) պատշաճ օգտագործելու, տնօրինելու իրավագործությունը: Նեգատոր հայցով սեփականատերը պահանջում է վերացնել հենց այդ խոչընդոտները:

3. Տիրապետման որն իրավաբանական գրականության մեջ կոչվում է նաև սեփականության իրավունքը ճանաչելու հայց:¹

Տիրապետման հայցերը ներկայացվում են սեփականության իրավունքը ճանաչելու կամ փաստացի տիրապետումը վերականգնելու պահանջով:

Պարտավորական հայցերը բխում են.

- ա) պայմանագրի խախտումից՝ պարտավորության բնեղենով կատարման պահանջով,
- բ) վնաս պահանջելուց՝ վնասի հատուցման պահանջով:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- բնորոշել գույքային իրավունքի տեսակները և առանձնացնել սեփականության իրավունքը,
- յուրացնել սեփականության իրավունքի՝ որպես տնտեսական գործունեության հիմքի առանձնահատկությունները,
- իմանալ ընդհանուր սեփականության իրավունքի առանձնահատկությունները:

Ստուգիչ հարցեր

- Որո՞նք են սեփականության իրավունքի բովանդակության տարրերը:
- Որո՞նք են սեփականության իրավունքի ծագման ու դադարման հիմքերը:
- Սեփականության իրավունքի պաշտպանության ի՞նչ եղանակներ կան:

¹ Բարսեղյան Ս., ՀՀ քաղաքացիական իրավունք, մաս առաջին, Ե., 2014, էջ 386:

ԹԵՄԱ 9. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ (345-469-րդ հոդվածներ)

Չարք 1. Պարտավորության և պարտավորական իրավունքի հասկացությունը (345-346-րդ հոդվածներ)

Ինչպես իրավունքի տեսությունում¹, այնպես էլ գործնականում պարտավորությունն ունի մի քանի իմաստ և տարբերակվում է որպես.

- քաղաքացիաիրավական պայմանագիր,
- գործարքի կողմերի կոնկրետ պարտականություն,
- կոնկրետ պարտականություն նախատեսող փաստաթուղթ (օրինակ՝ փոխառությամբ գումար ստանալու),
- իրավահարաբերություն:

Գիտաուսումնական գրականության մեջ պարտավորությունը բնութագրվում է իբրև նյութական արժեքների տեղաշարժը միջնորդավորող հարաբերություն պահանջի իրավունք ունեցող՝ իրավագոր անձի՝ պարտատիրոջ և պարտավորությունը կրող (կատարող) անձի՝ պարտապանի միջև, ընդ որում, պարտավորության կողմեր կարող են լինել մեկ կամ ավելի պարտապան և պարտատեր:

Այսպիսով՝ պարտավորությունը նյութական բարիքների, արժեքների ապրանքային տեղաշարժն ու վերաբաշխումը միջնորդավորող, հարաբերական այն իրավահարաբերությունն է՝ ըստ որի մեկ անձը՝ պարտապանը, պարտավոր է մեկ այլ անձի՝ պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն (վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն) կամ ձեռնըպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից, իսկ պարտատերն ունի պարտավորության կատարման պահանջի իրավունք:

Պարտավորությունները, ծագման առումով, որոշակի առանձնահատկություն ունեն: Ի տարբերություն սեփականության իրավունքի, որը ծագում է միայն օրինական կամ իրավաչափ հիմքերով, պարտավորությունը (պարտավորական իրավունքը) կարող է ծագել և՛ իրավաչափ, և՛ ոչ իրավաչափ կամ դելիկտային² գործողություններից:

¹ Богатых Е., Гражданское и торговое право, М., „Контракт,, с. 131.

² Delictum – լատ. իրավախախտում:

Պարտավորական հարաբերությունները և դրանց շարքը կարգավորող նորմերի ամբողջությունը կոչվում են պարտավորական իրավունք:

Պարտավորական իրավունքն իրավանորմերի այն համակցությունն է, որը կարգավորում է գույքի փոխանցման կամ ժամանակավոր օգտագործման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, դրամի վճարման կամ նման գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունները:

Պարտավորությունների առաջացման իրավաչափ հիմքեր են պայմանագիրը, միակողմ գործարքը, վարչական և դատական ակտերը, խաղեր և գրազ կազմակերպելը, հրապարակային մրցույթի, պարզևի հրապարակային խոստման, առանց հանձնարարության ի շահ ուրիշի գործելու միակողմ գործողությունները: Ոչ իրավաչափ հիմքեր են ուրիշին վնաս պատճառելը, անհիմն կամ առանց բավարար հիմքի հարստամալը:

Պարտավորություններն ունեն նաև դադարման հիմքեր: Դրանք այն իրավաբանական փաստերն են, որոնց ուժով վերանում են պարտավորական կապերը և դրանց վրա հիմնված իրավունքներն ու պարտականությունները: Այդ հիմքերն են.

- պարտավորության կատարում,
- կողմերի համաձայնություն, որը, իր հերթին, ունի երեք տեսակ՝ պարտքի ներում, հրաժարագնի սահմանում և նովացիա¹ (նորոգում, բարեփոխում),
- հաշվանցում,
- կատարման անհնարիություն, որը կարող է լինել իրավական (իրավասու մարմնի ակտը) և ֆիզիկական (ֆորս-մաժոր),
- պարտապանի և պարտատիրոջ՝ մեկ անձի մեջ համընկնում (օրինակ՝ իրավաբանական անձանց միաձուլումը),
- պարտապան և պարտատեր քաղաքացու մահ (անձնական բնույթի պարտավորությամբ),
- իրավաբանական անձի լուծարում (եթե պարտավորությունը չի դրվում այլ անձի վրա),
- օրենքով սահմանված առանձին հիմքեր (օրինակ՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, քաղաքացուն անգործունակ, անհայտ բացակայող, մահացած ճանաչելը և այլն):

¹ Novatio- լատ.՝ նորոգում, փոփոխում:

Յարց 2. Պարտավորության տեսակները (359-364-րդ հոդվածներ)

Պարտավորությունները քաղաքացիական շրջանառության մեջ չափազանց բազմազան են ու բազմաթիվ, հետևաբար՝ դասակարգվում են ըստ որոշակի չափանիշների, մասնավորապես.

- Ըստ ծագման հիմքի՝ պայմանագրային և արտապայմանագրային (դելիկտային): Պայմանագրային պարտավորություններն առաջանում են իրավաչափ գործողություններից, կողմերի կամքով և համաձայնությամբ, իսկ արտապայմանագրայինը՝ ուրիշի գույքին կամ անձին վնաս պատճառելուց, առանց բավարար կամ օրինական հիմքի գույք ձեռք բերելուց:
- Ըստ կողմերի իրավունքների ու պարտականությունների բաշխման՝ միակողմ և փոխադարձ: Միակողմ պարտավորություններն առաջանում են ոչ իրավաչափ, ինչպես նաև միակողմ այլ գործողություններից: Փոխադարձ պարտավորությունները, իրենց հերթին, լինում են պարզ և բարդ: Պարզ են այն պարտավորությունները, որոնց մի կողմն ունի իրավունք, մյուսը՝ միայն պարտականություն (օրինակ՝ փոխառություն), բարդ, երբ երկու կողմն էլ ունի և՛ իրավունք(ներ), և՛ պարտականություն(ներ) (օրինակ՝ մատակարարում):
- Ըստ առարկայի՝ գույքային (օրինակ՝ առուծախ) և ոչ գույքային (օրինակ՝ գաղտնիքի չիրապարակում):
- Ըստ օբյեկտի՝ ստույգ կամ որոշակի (օրինակ՝ հատուցում՝ միայն դրամական վճարմամբ) և ընտրանքային, որը, իր հերթին, լինում է երկընտրելի և ֆակուլտատիվ: Երկընտրելի է, օրինակ, սահմանված հատուցման ձևերից պարտապանի ընտրությամբ՝ կա՛մ դրամական վճարումը, կա՛մ համարժեք աշխատանքի կատարումը, իսկ ֆակուլտատիվ, երբ թեպետ պարտապանն ունի գլխավոր պարտավորություն, սակայն նրան իրավունք է տրվում դրա փոխարեն կատարելու այլ՝ ֆակուլտատիվ կամ լրացուցիչ համարվող գործողություն:
- Ըստ կատարման ձևի կամ եղանակի՝ բաժանելի և անբաժանելի:
- Ըստ դերի՝ գլխավոր (օրինակ՝ վարկ) և լրացուցիչ (օրինակ՝ գրավի համաձայնություն):
- Ըստ կատարման կամ վարքագծի՝ նեգատիվ կամ գործողությունը բացառող և ակտիվ գործողությամբ կամ նպատակային ուղղվածության, այսինքն՝ գույքի փոխանցման, պարտականությունների, աշխատանքների կատարման, դրամական վճարման, ծառայությունների մատուցման:

Պարտավորությունների շարքում առանձին տեղ ունեն անձնական բնույթի, այսինքն՝ կատարողի անձով (օրինակ՝ նկարչի) պայմանավորվածությունները:

Հավելենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է նաև ռեգրեսային¹ պարտավորություն, որի ուժով պարտապանի մեղքով երրորդ անձին դրամ վճարած կամ գույք հանձնած անձն իրավունք ունի պարտապանից պահանջելու վճարած գումարը կամ հանձնած գույքը (օրինակ՝ գլխավոր կապալառուի կողմից ենթակապալառուի մոնտաժային աշխատանքների թերությունների համար պատվիրատուին իր փոխանցած դրամական հատուցումների հետադարձ պահանջը մոնտաժային կազմակերպությունից):

Հակիրճ անդրադառնանք պարտականությունների մեջ անձանց բազմաթվության և փոփոխության հարցին: Ցանկացած պարտավորություն ունի երկու կողմ, ընդ որում, որպես կողմեր կարող են հանդես գալ մեկից ավելի պարտապան և պարտատեր, ինչը նշանակում է, որ առկա է անձանց բազմաթվությամբ պարտավորություն: Այս դեպքում յուրաքանչյուր մասնակից օժտված է որոշակի իրավունքներով և պարտականություններով, որոնց բնույթով պայմանավորված՝ այդ պարտավորությունները լինում են երեք տեսակի՝ բաժնային, համապարտ (համիրավ պահանջ) և սուբսիդիար² կամ լրացուցիչ:

Բաժնային պարտավորության մասնակից երկու կամ ավելի պարտատիրոջ համար որոշակի է պահանջի իրավունքը, իսկ պարտապանների համար՝ կատարման մասը կամ բաժինը: Համապարտ պարտավորության պարտատերն իրավունք ունի թե՛ բոլոր պարտապաններից համատեղ, թե՛ յուրաքանչյուր պարտապանից առանձին պահանջելու պարտավորության կատարումը, ընդ որում, ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով: Համապարտ պարտավորության հիմքում «մեկը՝ բոլորի փոխարեն» սկզբունքն է, ուստի որևէ պարտապանի կողմից ամբողջ պարտավորության կատարումը մյուսներին ազատում է դրանից: Նույն կերպ, պահանջների համիրավության դեպքում համիրավ պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի լրիվ ծավալով պահանջ ներկայացնելու պարտապանին, իսկ համիրավ պարտատերերից մեկի հանդեպ պարտավորության լրիվ կատարումը պարտապանին ազատում է մյուս պարտապանների հանդեպ պարտավորությունը կատարելուց: Ըստ սուբսիդիար պարտավորության, հիմնական պարտապանից բացի, կատարման պարտավորություն ունի լրացուցիչ պարտապանը, սա-

¹ Regressus – լատ.՝ հետդարձ, վերադարձ:

² Subsidiarius – լատ.՝ օժանդակ, լրացուցիչ:

կայն հիմնական պարտապանի չկատարած մասով կամ չափով: Ընդ որում, պարտատերը լրացուցիչ պարտապանին իրավունք ունի պահանջ ներկայացնելու հիմնական պարտապանին ներկայացնելուց և հրաժարում ստանալուց կամ ողջամիտ ժամկետում պատասխան չստանալուց հետո:

Գործնականում հաճախ առաջանում է պարտավորության մասնակիցների փոփոխության անհրաժեշտություն: Պարտատիրոջ փոփոխությունը կոչվում է ցեսիա¹ կամ պահանջի զիջում (օրինակ՝ ֆակտորինգի պայմանագրով դրամական պահանջի զիջումը ֆինանսական գործակալին), իսկ պարտապանը՝ պարտքի փոխանցում (օրինակ՝ սուբսիդիար պարտավորությունը՝ երաշխավորության գործարքով):

Պարտավորության կատարումը և կատարման ապահովումը (347- 398-րդ, 412-րդ հոդվածներ)

Պարտավորության կատարումը պարտապանի կողմից օրենքով (այլ իրավական ակտերով, պայմանագրով, գործարար շրջանառության սովորույթով) սահմանված գործողության իրականացումն է կամ ձեռնպահ մնալը:

ՀՀ քաղ. օր.-ի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ կերպով՝ ըստ ամենայնիվ, բոլոր պայմանների հաշվառմամբ, այսինքն՝ պատշաճ պարտապանի կողմից, պատշաճ պարտատիրոջ օգտին, պատշաճ ժամկետում, պատշաճ տեղում, պատշաճ եղանակով և ըստ պատշաճ առարկայի: Այլ խոսքով, պարտավորությունների կատարման ամենակարևոր սկզբունքը՝ պատշաճ կատարումը, ունի հիմնական պայմաններ, որոնք վերաբերում են պարտավորության առարկային, սուբյեկտների, կատարման ժամանակին, տեղին և եղանակին:

1. Պարտավորության առարկա և օբյեկտ: Պարտավորության առարկան կարող է լինել գույքային և ոչ գույքային, իսկ օբյեկտը՝ ստույգ և այլընտրանքային:

Որպես կանոն, պարտապանը պարտավորությունը կատարում է՝ հօգուտ պարտատիրոջ: Այս ընդհանուր դրույթից ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է 2 բացառություն. պարտատերն իր պահանջի իրավունքը զիջում է ուրիշին (ցեսիա) կամ պայմանագիրը կնքում է՝ հօգուտ 3-րդ անձի:

Հօգուտ երրորդ անձի է համարվում այն պայմանագիրը՝ ըստ որի կողմերը սահմանում են, որ պարտապանը պարտավոր է պարտավորությունը կատարել՝ ոչ թե հօգուտ պարտատիրոջ, այլ պայ-

¹ Cession - լատ.՝ իր իրավունքն ուրիշին փոխանցելը, պահանջի զիջումն այլ անձի:

մանագրում նշված կամ չնշված 3-րդ անձի, որն իրավունք ունի պարտապանից պահանջելու իր օգտին կատարել այդ պարտավորությունը:

II. Պարտավորության սուբյեկտ: Պարտավորական հարաբերությունները կարող են լինել ինչպես մեկ պարտապան, մեկ պարտատեր կողմերի միջև, այնպես էլ անձանց բազմաթվությամբ, այսինքն՝ բաժնային, համապարտ (համիրավ պահանջ) և սուբսիդիար: Որպես պարտավորության սուբյեկտներ կարող են հադես զալ պետությունը, վարչատարածքային կազմավորումները, կազմակերպությունները, քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրացիները:

III. Պարտավորության ժամկետ: Կարող է լինել.

ա) հիմնական և միջանկյալ,

բ) ընդհանուր (միասնական նշանակության) և հատուկ (օրենքի ուղղակի ցուցումով),

գ) պարտավորության սկիզբը և վերջը սահմանող,

դ) ողջամիտ (գործնականում՝ հնարավոր). եթե պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և դրա որոշման պայմաններ չի բովանդակում, ապա պարտավորությունը պետք է կատարվի դրա ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում,

ե) պահանջի պահով. պարտատիրոջ՝ պահանջ ներկայացնելուց հետո 7-օրյա ժամկետում,

զ) վաղաժամկետ. թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով, պարտավորության պայմաններով կամ բխում է գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

IV. Պարտավորության վայր (տեղ): Սահմանվում է պայմանագրով, հակառակ դեպքում.

ա) դրամական պարտավորությունը՝ պարտատիրոջ գտնվելու վայրում,

բ) անշարժ գույք հանձնելու պարտավորությունը՝ գույքի գտնվելու վայրում,

գ) գույք հանձնելու ձեռնարկատիրոջ պարտավորությունը՝ դրա պատրաստելու կամ պահպանելու վայրում, եթե պարտավորության ծագման պահին այն հայտնի է եղել պարտատիրոջը:

V. Պարտավորության կատարման եղանակ (ծավալ): Պայմանագրերից բխող պարտավորությունները կարող են կատարվել.

ա) ամբողջությամբ (միանվագ) կամ մաս-մաս,

բ) անմիջապես կամ հետագայում,

գ) անձամբ կամ այլ անձի միջոցով (պարտքի փոխանցում կամ վերահանձնարարում),

դ) պարտքը դեպոզիտ մուծելով. այս ձևով կատարելու հիմքերը սահմանվում են ՀՀ քաղ. օր.-ի 366-րդ հոդվածով, որոնք են.

- պարտատիրոջ բացակայությունը կատարման վայրից,
- պարտատիրոջ անգործունակությունը և ներկայացուցիչ չունենալը,
- պարտատեր անձի բացահայտված չլինելը,
- պարտատիրոջ խուսափելը պարտքի կատարումն ընդունելուց կամ կետանցը:

Պարտավորությունների կատարման մյուս կարևոր սկզբունքը ռեալությունն է: Պարտավորությունների ռեալ կատարման սկզբունքի հարցը քաղաքացիական իրավունքում տեղ գտած վիճելի հիմնախնդիրներից մեկն է¹: Սակայն, առավելապես ընդունված է պարտավորությունների ռեալ կատարում համարել բնեղենովը, այսինքն՝ նախատեսված գործողության (աշխատանք, ծառայություն) կատարումը պարտատիրոջ օգտին կամ նախատեսված գույքի (աշխատանքի արդյունքի) հանձնումը:

Պարտավորության պատշաճ և ռեալ կատարման միջև էական տարբերություն չկա: Դրանք առանձնացնելու նպատակով նշենք, որ ռեալ կատարումը պատշաճ կատարման մի ցուցանիշ է, սակայն կարևոր այն ցուցանիշը, որով ապահովվում է պարտավորությունների բոլոր էական պայմանների անխախտ իրականացումը:

Պարտավորությունների ապահովման սկզբունքներ են նաև դրանց կատարումը խնայողությամբ (պաշտպանելով մյուս կողմի շահերը), փոխօգնությամբ, համագործակցությամբ (նախատեսված աջակցության ապահովում) և գործարար պարկեշտության սկզբունքի պահպանմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է պարտավորությունների կատարումն ապահովող լրացուցիչ կամ արքեսոր² միջոցներ, որոնք կարևոր դեր ունեն գործնականում՝ երաշխավորելով պարտավորությունների պատշաճ կատարում: Պարտավորությունների կատարման ապահովումը ներկայացնում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ պարտապանի նկատմամբ սահմանված գույքային ներգործության լրացուցիչ միջոց, որը հարկադրում է նրան կատարել պարտավորությունը և ապահովել պարտատիրոջ շահերը պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:

ՀՀ քաղ. օր.-ի 368-396-րդ հոդվածների համաձայն՝ պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել գրավով³, տուժան-

¹ Булатецкий Ю., Коммерческое право, М., 2017, с. 202.

² Accessorius – լատ.՝ լրացուցիչ, հավելյալ:

³ *Ծանոթություն.* գրավի տեսքի և իրավական գնահատման հարցում իրավաբանական գրավառության մեջ և իրավաբանական համակարգերում գոյություն ունեն

քով, նախավճարով (կանխավճարով), պարտապանի գույքի պահումով, երաշխավորությամբ, երաշխիքով և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներով: Նշված 6 իրավական միջոցներից առաջին 4-ն իրենց բովանդակությամբ գույքաիրավական են և պարտատիրոջը տալիս են անձամբ պարտապանի գույքից իր պահանջը բավարարող մասի չափով ձեռքբերման ռեալ հնարավորություն, իսկ երաշխավորությամբ և երաշխիքով պարտապանի շահի պաշտպանությունն իրականացվում է այլ անձի կողմից՝ այդ ապահովման պարտականությունը ստանձնելու հիմքերով:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- հասկանալ պարտավորության սուբյեկտների կարգավիճակի առանձնահատկությունները,
- իմանալ պարտավորությունների ծագման հիմքերը,
- տարանջատել պարտավորության տեսակները,
- սովորել պարտավորությունների կատարման և կատարումն ապահովելու իրավական միջոցները,
- իմանալ պարտավորությունների խախտման իրավական հետևանքները:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է պարտավորությունը, որո՞նք են դրա տեսակները:
- Որո՞նք են պարտավորությունների ծագման ու դադարման հիմքերը:
- Ի՞նչ է պայմանագրային պարտավորությունը:
- Ի՞նչ է արտապայմանագրային պարտավորությունը:

տարբեր կարծիքներ: Դ՞ք քաղաքացիական օրենսդրությունը գրավը սահմանում է որպես պարտավորությունների կատարումն ապահովող իրավական միջոց, ԱՄՆ օրենսդրությունը՝ պարտավորությունների գույքային ապահովման հիմնական ձև, Ֆրանսիայի օրենսդրությունը՝ գրավը և հիպոթեքը տարբերակում է որպես պարտավորությունների ապահովման երկու առանձին աքցեսոր միջոցներ, իսկ Գերմանիայի օրենսդրությունը գրավի տեսակների դասակարգումը կատարում է ըստ գրավի առարկայի՝ այն բաժանելով երկու խմբի՝ անշարժ ու շարժական գույքի գրավ և գույքային իրավունքների գրավ: ՌԴ օրենսդրության մեջ գրավը համապատասխանում է Անգլիայի օրենսդրության մեջ կիրառվող «գրավ» (залог) և «հիպոթեքային կամ տիտղոսի զիջմամբ գրավ» (ипотечный залог) հասկացությունների:

ԹԵՄԱ 10. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (436-469-րդ հոդվածներ)

Չարց 1. Պայմանագրի հասկացությունը, բովանդակությունը և կնքման կարգը (436-438-րդ, 441-րդ, 448-465-րդ հոդվածներ)

Պայմանագիրը երկու և ավելի անձանց՝ օրենքին համապատասխան կայացրած այն համաձայնությունն է, որն առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում է քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները: Այս իմաստով, դա իրավաբանական փաստ է, պարտավորությունների առավել տարածված և գլխավոր հիմքերից մեկը:

Պայմանագիրը տնտեսական հարաբերությունները և շրջանառությունը միջնորդավորող իրավական ձև է, կողմերի իրավունքների ու պարտականությունների սահմանման եղանակ, առաջարկի և պահանջարկի ճիշտ գնահատման և արտադրության ու սպառման կապի միջոց: Յուրաքանչյուր պայմանագրի բովանդակությունը ներառում է դրա պայմանները:

Ցանկացած պայմանագրով կողմերը կարող են նախատեսել տարատեսակ պայմաններ, սակայն, համաձայն ՀՀ քաղ. օր.-ի 448-րդ հոդվածի, պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել դրա բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին, օրենքով կամ այլ իրավական ակտերով որպես էական մատնանշված կամ պայմանագրի տվյալ տեսակին անհրաժեշտ (պարտադիր) պայմանները, և այն պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է ձեռք բերվի համաձայնություն: Այս իմաստով, ձեռնարկատիրական պայմանագրերի էական պայմանները պարտադիր և առաջնահերթ են, քանի որ դրանց վերաբերյալ կողմերի միջև համաձայնության փաստն է պայմանագիրը կնքված համարելու պայմանը: Պայմանագրերում տեղ են գտնում նաև սովորական և պայմանագրի կողմերի սահմանած կամ պատահական պայմաններ: Սովորական են համարվում պայմանագրում մեխանիկորեն ընդգրկված պայմանները, եթե դրանք նախատեսված են օրենքի իմպերատիվ, ինչպես նաև դիսպոզիտիվ այն նորմերում, որոնց բովանդակությունը չի փոփոխվել պայմանագրի կողմերի համաձայնությամբ: Այսպես՝ պայմանագրային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում շատ հաճախ առկա է հետևյալ պայմանը. պարտավորությունը խախտող կողմը կրում է պատասխանատվություն՝ ըստ գործող օրենքի:

Քաղաքացիական օրենսդրությունը կարևորում և սահմանում է ոչ միայն պայմանագրի հասկացությունը և բովանդակությունը, այլև կնքման պահի ու ձևի պահանջները, փոփոխելու և լուծելու կարգն ու հիմքերը:

ՀՀ քաղ. օր.-ի 441-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր դառնում կնքելու պահից: Կնքման պահ է համարվում պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ կողմերի միջև օրենքով պահանջվող ձևով համաձայնության ձեռքբերումը:

Ըստ ՀՀ քաղ. օր.-ի 451-459-րդ հոդվածների.

ա) Պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա¹ (մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկ) ուղարկած անձի կողմից դրա ակցեպտը² (համաձայնությունը, առաջարկության ընդունումը) ստանալու պահից:

բ) Օֆերտան պետք է լինի ստույգ ու հաստատուն, բովանդակի պայմանագրի բոլոր էական պայմանները և ակցեպտի ժամանակի մատնանշումը: Հասցեատիրոջ ստացած օֆերտան չի կարող հետ կանչվել դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում:

ՀՀ քաղ. օր.-ի 448-450-րդ հոդվածների համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել գործարքներ կնքելու համար նախատեսված ձևերով՝ գրավոր և բանավոր:

Գրավոր պայմանագրի բացակայության դեպքում կողմերի միջև պայմանագրային հարաբերությունների առկայությունը պետք է հաստատվի այնպիսի փաստաթղթերով, որոնք ցույց են տալիս, որ մեկ կողմի առաջարկը փաստացի ընդունվել է մյուսի կողմից, այսինքն՝ առկա է ակցեպտ (օրինակ՝ ապրանքների ընդունման-հանձնման ակտեր, ապրանքային կարգագրեր):

Քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է հատուկ ընթացակարգով պայմանագրերի կնքման եղանակ: Խոսքը վերաբերում է սակարկություններին (աճուրդ, մրցույթ³)՝ ըստ որոնց կողմե-

¹ Offertus - լատ.՝ առաջարկ, առաջարկված, պայմանագրի կնքման առաջարկ՝ անհրաժեշտ բոլոր պայմաններով:

² Acceptus - լատ.՝ ընդունված, պայմանագրի կնքման համաձայնություն:

³ Աճուրդի և մրցույթի միջև էական տարբերություններ չկան: Աճուրդը կարելի է համարել նույն մրցույթը՝ բարձր գնի պայմանի վերապահումով: Նույնկերպ մրցույթը կարող ենք բնորոշել «աճուրդ» հասկացությամբ, քանի որ մրցույթն այն աճուրդն է, որի մասնակիցներից ընտրվում է լավագույն պայմաններ առաջարկող, այսինքն՝ հայտարարված չափանիշները և պահանջները բավարարող մրցակիցը: «Աճուրդից» և «մրցույթից» պետք է տարբերակել «տենդեր» հասկացությունը, քանի որ դա ոչ թե սակարկության առանձին տեսակ է, այլ մրցակցային սակարկու-

րը համաձայնություն են կայացնում պայմանագրի գնի շուրջ: ՀՀ-ում գործում է նաև պարտադիր սակարկությունների կարգ՝ պետական գույքի սեփականաշնորհման, պետական գնումների, պետական կարիքների համար կապալային (շինարարական, նախագծային ու հետազոտական) աշխատանքների կատարման նպատակով: Պարտադիր սակարկությունների շարքին կարելի է դասել սնանկ ճանաչված անձի գույքի վաճառքը, գրավի առարկայի իրացումը, կալանքի տակ դրված անշարժ գույքի վաճառքը՝ հարկադիր կատարմամբ և այլն:

Պայմանագիրը սակարկությամբ կնքելու նպատակը ներդրողներ ընտրելն ու ներգրավելն է, կոնտրագենտի ընտրությունն է, ենթադրյալ կոնտրագենտների միջև մրցակցություն սահմանելով՝ առավել ձեռնտու գործարքի ապահովումն է: Պետք է նկատել, որ սակարկությամբ պայմանագիր կնքելու կարգ սահմանող նորմերը չեն արգելում միաժամանակ և՛ աճուրդի, և՛ մրցույթի պայման առաջադրելը, որի դեպքում հաղթող կճանաչվի առավել բարձր գին և լավագույն պայմաններ առաջարկած մրցակիցը:

Անդրադառնալով պայմանագիրը փոփոխելու, լուծելու կարգին ու հիմքերին:

ՀՀ քաղ. օր.-ի 456-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել.

ա) կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով. այդպիսի մի վերապահում է սահմանվում 3-րդ անձի օգտին կնքված պայմանագրի դեպքում, երբ կողմերն առանց վերջինիս համաձայնության չեն կարող փոփոխել կամ լուծել պայմանագիրը (հոդված 446):

բ) կողմերից մեկի պահանջով ու դատարանի վճռով մյուս կողմի՝ պայմանագրի էական խախտման դեպքում և հանգամանքների էական փոփոխության հետևանքով. խախտումն էական է համարվում, եթե հանգեցնում է այնպիսի վնասների, որ մյուս կողմին զգալիորեն զրկում է այն բանից, ինչ նա իրավունք ուներ ակնկալելու պայմանագիր կնքելիս: Հանգամանքների էական փոփոխություն ասելով պետք է հասկանալ, որ դրանք այնքան են փոփոխվել, որ կանխատեսելու դեպքում կողմերը կա՛մ կկնքեին էականորեն տարբեր պայմաններով պայմանագիր, կա՛մ ընդհանրապես պայմանագիրը չէր կնքվի:

Պայմանագիրը փոփոխելը կամ լուծելը պետք է կատարվի օրենքով սահմանված կարգով և հիմքերով, ինչպես նաև նույն ձևով, ինչ-

թյուն, որն անցկացվում է աշխատանքների և ծառայությունների պայմանագրի կնքման համար:

պես կնքվել է: Փոփոխման դեպքում կողմերի պարտավորությունները պահպանվում են ըստ փոփոխված պայմանագրի, իսկ լուծման դեպքում՝ դադարում: Հետևաբար՝ պարտավորությունները փոփոխված կամ դադարած են համարվում պայմանագրային կողմերի համաձայնությունը կայացնելու, իսկ դատական կարգով՝ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից (հոդված 469):

Հարց 2. Պայմանագրի տեսակները (439-րդ, 442-446-րդ հոդվածներ)

Իրավաբանական գրականության, ինչպես նաև օրենսդրության մեջ պայմանագրերը դասակարգվում են ըստ տարատեսակ հիմքերի ու հատկանիշների:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսվող պայմանագրերը կարելի է դասակարգել ըստ այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են կնքման պայմանները, հիմքերը, կարգն ու պահը, կողմերի կարգավիճակն ու նրանց միջև առկա կապերի բնույթը, ինչպես նաև դերը տնտեսական ոլորտում:

Ներկայացվող գծապատկերն ընդգրկում է մեկ տասնյակից ավելի չափանիշներ, որոնք հնարավոր են դարձնում ըստ ամենայնի պարզաբանել պայմանագրերի բոլոր տեսակները և ապահովել դրանց համալիր պատկերը:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- յուրացնել պայմանագրի կնքման ու բովանդակության պայմանները,
- դասակարգել պայմանագրերը:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է պայմանագիրը և ի՞նչ բովանդակություն պետք է ունենա:
- Որո՞նք են պայմանագրի կնքման ձևերը:
- Ի՞նչ տնտեսական սանկցիաներ է առաջացնում պայմանագրի պայմանների խախտումը:

	Պայմանագրի տեսակ	Բնութագիր	Օրինակներ
1.	Միակողմ երկվորյակ	Մեկ կողմն ունի իրավունք, մյուսը՝ պարտավանություն	փոխառություն, բանկային ավանդ
ա)	համալրժեք	կողմերից յուրաքանչյուրն ունի և՛ իրավունք, և՛ պարտավանություն	առք ու վաճառք, ասպիտակագրություն, փոխադրում, գործակալություն
բ)	ոչ միալրժեք (պատահական)	կողմերի իրավունքներն ու պարտավանությունները միալրժեք չեն կամ մեկի համար կարող են առաջանալ ինչ-որ հանգամանքի ի հայտ գալով	պահատվություն (էթե պահառուն լրացուցիչ ծախսեր է կատարում չնախատեսված օբյեկտի վատ-ճամբերով, նա ձեռք է բերում փոխառուցման պահանջի իրավունք)
2.	Վերացական	պայմանագրի վավերականությունը կախված չէ դրա առաջացման հիմքից	բանկային երաշխիք
Կարուզալ	պայմանագրի առաջացման հիմքը դրա վավերականության պայման է	առք ու վաճառք, կապալ, գույքային վարձակալություն	փոխառություն, պահատվություն, գրավ, բեռնակիր-խաղրում, բանկային ավանդ
3.	Ոճալ	կնքված է համարվում գույքի փոխանցմանը, հանձնմանը	առք ու վաճառք, կապալ, գույքային վարձակալություն
Կրոններուալ	կնքված է համարվում սուկ կողմերի համաձայնությամբ	առք ու վաճառք, փոխադրում, վարկ, մատակարարում, վարձակալություն, ռենտա, կրծիփա, պահատվություն	առք ու վաճառք, փոխադրում, վարկ, մատակարարում, վարձակալություն, ռենտա, կրծիփա, պահատվություն
4.	Չատուցելի	պարտապանն իր ստանձնած պարտավորության համար հատուցում է ստանձնում	գույքի անհատույց օգտագործում, փոխառություն
5.	Անհատույց	պարտապանն իր կատարած պարտավորության համար ոչինչ չի ստանձնում	առանց %-ի, նվիրատվություն
Ազատ կնքվող	կողմերի ազատ կանքից, ցամաքությունից	պայմանագրի կնքումն ամբողջությամբ կախված է կողմի համար	առք ու վաճառք, փոխառություն, գույքային վարձակալություն, կապալ, գրավարկված գույքի ասպիտակագրություն, ստեղծվող իրավաբանական անձի հաշվարկային հաշիվ, ասպիտակագրության մատակարարում պետական կարիքների համար
Չրապարտակալին	կատարող կողմը պարտավոր է դառնում դիմող և պատվեր ներկայացնող ցանկացած անձի նկատմամբ		վարձույթ, ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում

1.	Կոնտստիտվ (փոխանակային) Ալեատոր (ժիպային)	պայմանագրի երկու կողմի օգուտներն ու կորուստները (վնաս) կարող են զմահատվել պայմանագրի կնքելիս պայմանագրի կնքելիս կողմերի օգուտներն ու կորուստները որոշվել չեն կարող, դրանք կախված են այս կամ այն հանգամանքի առկայությունից կամ բացակայությունից	առջ ու վաճառք, փոխանակություն, կապալ նվիրատվություն, փոխառություն ապահովագրություն, կապալ, խաղեր ու գրագրեր կազմակերպելն ու անցկացնելը
7.	Պայմանագրի կողմերի (մեկ կողմի) օգտին երկրորդ անձի օգտին	իրավունքներ ու պարտավորություններ, օգուտներ ու կորուստներ ստանում են պայմանագրի կողմերը	առջ ու վաճառք, մատակարարում, փոխառություն, կապալ, ռենտա, նվիրատվություն, գույքի անհատույց օգտագործում բեռնափոխադրում, ապահովագրություն
8.	Փոխանակման մեջված Միանալու	պարտավանք կատարման պահանջի իրավունք ձեռք է բերում 3-րդ անձը կողմերը կամքի ազատ դրսևորմամբ, փոխադրված համաձայնությամբ ընտրում են պայմանագրի պայմանները պայմանագրի պայմանները կողմերից մեկը սահմանում է ստանդարտ, բանաձևային կաղապար ներառում է այն պայմանները ըստ որոնց հետազայում կողմերը կցցում են հիմնական պայմանագիրը	առջ ու վաճառք, կապալ, փոխառություն, մատակարարում, ռենտա, նվիրատվություն գույքի անհատույց օգտագործում կրմիսիա, սակարկություն, աճուրդ
9.	Նախնական	առաջացում է կողմերի իրավունքների և պարտավանությունների անմիջական իրականացման հարաբերություններ	առևտրային կազմակերպության պատվերի պայմանագիր, առջ ու վաճառք, փոխադրումների կազմակերպման պայմանագիր, առջ ու վաճառք, մատակարարում, բեռնափոխադրում
10.	Գլխավոր	հիմնություն, այլ պայմանագրերից (հարաբերություններից) անկախ	առջ ու վաճառք, ռենտա, մատակարարում, փոխառություն, փոխանակություն գրավ, երաշխավորություն
11.	Լրացուցիչ Սովորական Պայմանով ա) հետաձգող բ) վերացնող Սակարկություններով	պայմանագրի գործողությունն անկախ է արտաքին փաստերից պայմանագրի ուժի մեջ մտնելը կախված է այնպիսի հանգամանքից, որի իրագործումը հայտնի չէ կողմերին որև՛ հանգամանքի իրագործմամբ թաղաղող կնքվում է մրցություն կամ աճուրդում հաղթած անձի հետ	առջ ու վաճառք, մատակարարում, փոխառություն, կարծակալություն գույքի անհատույց օգտագործում առջ ու վաճառք

ԹԵՄԱ 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐ¹

Հարց 1. Առք ու վաճառքի պայմանագիր (470-570-րդ հոդվածներ)

Բոլոր ժամանակների օրենքներում առք ու վաճառքի գործարքների կարգավորումը եղել է առաջնային: Մերօրյա տնտեսական պայմանագրերի նախատիպը հենց վաղ և միջնադարյան ժամանակներում կիրառություն գտած առևտրային գործարքն է: Այսօր էլ առուծախի պայմանագիրը քաղաքացիական շրջանառությունում ամենատարածվածն է և միտված է շուկայական տնտեսության ու ապրանքադրամական հարաբերությունների պատշաճ ապահովմանը:

Առք ու վաճառքի պայմանագրով կողմերից մեկը՝ վաճառողը, պարտավորվում է մյուս կողմին՝ գնորդին որպես սեփականություն հանձնել ապրանք (գույք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գին):

Առք ու վաճառքի պայմանագիրը կոնսենսուալ է, հատուցելի և երկկողմ, կարող է կնքվել քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտների մասնակցությամբ, գրավոր (հասարակ՝ նոտարական վավերացմամբ, օրենքով սահմանված դեպքերում՝ նաև պետական գրանցմամբ) և բանավոր ձևերով: Ձևի ընտրությունը պայմանավորված է պայմանագրի առարկայով (շարժական, անշարժ գույք, գույքային իրավունք²), գնով (չափ, հաշվարկման կարգ), կատարման ժամկետով (որոշակի, ողջամիտ, պահանջի պահ), սուբյեկտների կարգավիճակով (քաղաքացի, կազմակերպություն, համայնք, մարզ, պետություն):

Վաճառող կողմը գույքի սեփականատերն է: Նրա հիմնական իրավունքը գնի, նաև գույքային վնասների պահանջն է, իսկ պարտականությունը՝ ապրանքը (ըստ որակի, քանակի, տեսակի, տեսականու, կոմպլեկտի, տարայի ու փաթեթի) և դրա պատկանելիքներն ու տեխնիկական փաստաթղթերը գնորդին հանձնելը: Գնորդի պարտականությունը ապրանքի ընդունումն ու դրա գնի վճարումն է: Գնորդն իրավունք ունի վաճառողից պահանջելու.

- փոխել պայմանագրին չհամապատասխանող ապրանքը,
- համաչափ նվազեցնել ապրանքի գինը,

¹ Թեման ընդգրկում է «Իրավագիտություն» դասընթացի ծրագրով նախատեսված պայմանագրերը:

² ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ նշված չեն առք ու վաճառքի պայմանագրի առարկա համարվող գույքային իրավունքները: Գործնականում այդպիսին է արժեթուղթը:

- ողջամիտ ժամկետում վերացնել ապրանքի թերությունները,
- հատուցել թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը,
- հրաժարվել պայմանագրից (հետ պահանջել վճարած գումարը):

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է առուծախի պայմանագրի հինգ տեսակ:

Մանրածախ առք ու վաճառքի պայմանագրով ապրանքների մանրածախ վաճառքի ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնող վաճառողը պարտավորվում է գնորդին հանձնել ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված՝ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված ապրանք (հոդված 508):

Մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետ(ներ)ում հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար (հոդված 521):

Պետական կարիքների համար ապրանքների մատակարարում է համարվում պետական պայմանագրի հիման վրա և դրան համապատասխան՝ մատակարարի և պետական պատվիրատուի կողմից նրան ամրակցված գնորդի հետ կնքված պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվող ապրանքները գնորդին հանձնելու պայմանագիրը: Պետական պայմանագրով մատակարարը (կատարողը) պարտավորվում է ապրանքը հանձնել պետական պատվիրատուին կամ նրա ցուցումով այլ անձի, իսկ պետական պատվիրատուն՝ վճարել մատակարարված ապրանքների համար (հոդված 540):

Էներգամատակարարման պայմանագրով էներգամատակարարող կազմակերպությունը պարտավորվում է սպառողին (աբոնենտ) միացման ցանցի միջոցով մատուցել էներգիա, իսկ սպառողը՝ վճարել ստացած էներգիայի համար, ինչպես նաև պահպանել պայմանագրով նախատեսված սպառման ռեժիմը, ապահովել իր տնօրինության տակ գտնվող էներգետիկ ցանցերի շահագործման անվտանգությունը և իր կողմից օգտագործվող էներգիայի սպառման հետ կապված սարքերի ու սարքավորումների սարքինությունը (հոդված 550):

Անշարժ գույքի առք ու վաճառքի պայմանագրով վաճառողը պարտավորվում է գնորդի սեփականությանը հանձնել հողամաս,

շենք, շինություն, բնակարան կամ այլ անշարժ գույք (ընդերքի մաս, մեկուսի ջրային օբյեկտ, ամտառ, բազմամյա տնկի), իսկ գնորդը՝ վճարել անշարժ գույքի համար (հոդված 561):

Ֆարց 2. Վարձակալության պայմանագիր (606-684-րդ հոդվածներ)

Վարձակալության պայմանագրով վարձատուն (գույքի սեփականատերը կամ նրա ներկայացուցիչը) պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել չսպառվող գույք:

Վարձակալության պայմանագիրը կարող է կնքվել քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտների մասնակցությամբ, գրավոր (հասարակ, նոտարական վավերացմամբ) ձևով: Վարձակալության պայմանագիրը կոնսենսուալ է, հատուցելի, երկկողմ և ժամկետային: Ժամկետը կարող է լինել որոշակի և անորոշ՝ պայմանագրով չորոշված, որի դեպքում ցանկացած կողմ պայմանագրից հրաժարվելու իրավունք ունի՝ մյուս կողմին տեղեկացնելով մեկ ամիս, իսկ անշարժ գույքի վարձակալությամբ՝ երեք ամիս առաջ:

Վարձակալության պայմանագրի առարկա կարող է լինել անշարժ և շարժական, առանց թերությունների (վարձատուն պատասխանատու է մինչև գույքի հանձնումն առաջացած թերությունների համար) ու գույքի նշանակությանը համապատասխան վիճակով, անհատապես որոշվող և չսպառվող այն գույքը, որը հանված չէ քաղաքացիական շրջանառությունից: Վարձակալության հանձնվող օբյեկտի վերաբերյալ ստույգ տվյալների չնշումը պայմանագրի առարկայի պայմանը համարում է չհամաձայնեցված, իսկ պայմանագիրը՝ չկնքված: Վարձակալության պայմանագրի կարևոր պայման է գինը, որը գույքի օգտագործման համար որոշված վարձավճարների ընդհանուր գումարն է: Վարձավճարի փոխարեն կողմերը կարող են սահմանել գույքի օգտագործման համար հատուցման այլ եղանակներ, այն է՝ վարձակալի որոշակի ծառայությունը, վարձակալի կողմից սեփականության կամ վարձակալության իրավունքով գույք հանձնելը, գույքի բարելավման ծախսերը վարձակալի վրա դնելը, վարձակալված գույքի օգտագործմամբ ձեռք բերված եկամուտներից մասնահանումը, նաև վճարման խառը ձևը (նշվածների զուգակցումը):

Վարձատուի հիմնական իրավունքը վարձավճարի պահանջն է: Նա ունի նաև պայմանագրի լուծման և վնասների հատուցման պահանջի իրավունք՝ վարձակալի կողմից գույքի օգտագործման պայ-

մանները խախտելու դեպքում: Վարձատուի պարտականությունն է առանց թերությունների ու գույքի նշանակությանը համապատասխան վիճակով վարձակալության առարկայի հանձնումը՝ դրա պատկանելիքներով ու փաստաթղթերով, վարձակալության առարկայի նկատմամբ երրորդ անձի իրավունքների (սերվիտուտ¹, գրավ և այլն) մասին վարձակալին տեղյակ պահելը, գույքի հիմնանորոգումը:

Վարձակալի հիմնական իրավունքն է վարձատուից պահանջել վարձակալության պայմանագրին համապատասխան գույք: Նա վարձատուի հանդեպ ունի նաև գույքի հիմնանորոգում ապահովելու, գույքի թերությունները վերացնելու կամ դրանք վերացնելու համար իր կատարած ծախսերը հատուցելու, վարձավճարը նվազեցնելու և պայմանագրի լուծման և վնասների հատուցման պահանջի իրավունք՝ վարձատուի կողմից պարտականությունները խախտելու դեպքում:

Վարձակալը կարող է վարձատուի համաձայնությամբ գույքը հանձնել ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման, գրավ դնել (կամ որպես ավանդ ներդնել), վարձակալության իրավունքը, պայմանագրային իրավունքներն ու պարտականությունները հանձնել այլ անձի: Վարձակալը պարտավոր է սահմանված կարգով վճարել վարձավճարը, գույքը պահպանել պատշաճ կատարելով ընթացիկ նորոգում և օգտագործել այն ըստ նշանակության, պայմանագրի դադարման դեպքում՝ վերադարձնել վարձատուին:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է վարձակալության պայմանագրի հիմգ տեսակ.

1. Վարձույթի պայմանագրով, որպես մշտական ձեռնարկատիրական գործունեություն, գույքը վարձակալության հանձնող վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել շարժական գույք (հոդված 606): Վարձույթի պայմանագրին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- պայմանագրի առարկան միայն շարժական գույքն է, որն օգտագործվում է սպառողական նպատակներով,
- պայմանագրի ժամկետը մինչև մեկ տարի է,
- արգելվում է ենթավարձակալությունը, գույքն անհատույց օգտագործման հանձնելը, վարձակալության իրավունքը գրավ դնելը (կամ որպես ավանդ ներդնելը),

¹ Servitutis /servitus/ - լատ.՝ սեփականության իրավունքի որոշակի սահմանափակում, ուրիշի գույքի օգտագործման իրավունք:

- պայմանագրի կնքումը հրապարակային է, կնքման ձևը՝ գրավոր,
- վարձատուն պարտավոր է կատարել վարձակալության հանձնված գույքի և՛ հիմնական, և՛ ընթացիկ նորոգումը,
- վարձակալը ցանկացած ժամանակ իրավունք ունի հետ հանձնելու վարձակալած գույքը, որի դեպքում վարձատուն էլ պետք է վերադարձնի ստացած վարձավճարի ավելի մասը:

2. ա) Անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով (ժամկետով ֆրախտ)¹ վարձատուն վճարի դիմաց տրանսպորտային միջոցը հանձնում է վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը և իր ուժերով ծառայություններ է մատուցում կառավարման և տեխնիկական շահագործման համար (հոդված 635): Միաժամանակ, վարձակալը վճարում է տրանսպորտային միջոցի առևտրային շահագործման կապակցությամբ առաջացած ծախսերը (ներառյալ՝ վառելիքի), ինչպես նաև տուրքերը:

բ) Առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով վարձատուն վճարի դիմաց տրանսպորտային միջոցը հանձնում է վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը՝ առանց կառավարման և տեխնիկական շահագործման համար ծառայություններ մատուցելու (հոդված 645):

Անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով՝ վարձատուն, իսկ առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձատրության պայմանագրով՝ վարձակալը պարտավոր են.

- ապահովել տրանսպորտային միջոցի անձնակազմը, նրա որակավորումը և վարձատրությունը,
- ապահովել տրանսպորտային միջոցի պատշաճ վիճակը,
- կատարել տրանսպորտային միջոցի հիմնական և ընթացիկ նորոգում,
- ապահովագրել տրանսպորտային միջոցը,
- հատուցել տրանսպորտային միջոցով երրորդ անձանց պատճառված վնասը:

3. Շենքի կամ շինության վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր օգտագործմանը կամ տիրապետմանն ու օգտագործմանը հանձնել շենք կամ շինություն (հոդված 653): Շենքի կամ շինու-

¹ Fracht – գերմ.՝ նավափոխադրավարձ, բեռ, տոննաժ:

թյան վարձակալության պայմանագիրն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման,
- պետք է նախատեսի վարձավճարի չափ, հակառակ դեպքում՝ կհամարվի չկնքված,
- վարձակալին են փոխանցվում նաև հողամասի այն մասի նկատմամբ իրավունքները, որն զբաղեցված է այդ շենքով կամ շինությանը և անհրաժեշտ է դրա օգտագործման համար,
- շենքը կամ շինությունը վարձատուի կողմից հանձնելը և վարձակալի կողմից ընդունելն իրականացվում են փոխանցման ակտով, նույն կարգով կատարվում է պայմանագրի դադարումից հետո շենքի կամ շինության հետհանձնումը վարձատուին:

4. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրով մի կողմը՝ բնակելի տարածության սեփականատերը կամ նրա լիազորած անձը (վարձատուն), պարտավորվում է փոխհամաձայնեցված վճարի դիմաց մյուս կողմի (վարձակալի) տիրապետմանը և օգտագործմանը հանձնել բնակելի տարածություն (հոդված 660):

Բնակելի տարածության վարձակալության պայմանագիրն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման,
- պայմանագրի օբյեկտ է միայն մշտական բնակության համար պիտանի բնակատարածքը,
- կնքվում է որոշակի ժամկետով, որի որոշված չլինելու դեպքում պայմանագիրը համարվում է անորոշ ժամկետով կնքված:

Ըստ բնակելի տարածության վարձակալության պայմանագրի՝ վարձակալը պարտավոր է բնակելի տարածքը պահպանել պատշաճ վիճակում, ժամանակին կատարել վարձավճարը, կրճատել ծախսերը և ընթացիկ նորոգումը: Նա կարող է իր պատասխանատվությամբ վարձակալված տարածքում մշտապես կամ ժամանակավոր բնակեցնել այլ քաղաքացիների, կնքել ենթավարձակալության պայմանագիր, պայմանագիրը լուծել ցանկացած ժամանակ՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով (վարձատուն նման իրավունքն ունի միայն դատական կարգով, եթե վարձակալը խախտել է գույքի օգտագործման կամ վարձավճարի պարտականությունը):

5. Ֆինանսական վարձակալության (լիզինգի)¹ պայմանագրով վարձատուն (լիզինգատուն) պարտավորվում է վարձակալի (լիզինգառուի) նշած գույքը² սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել (անձամբ կամ մատակարար-վաճառողի կողմից) վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար (հոդված 677): Լիզինգի պայմանագիրն ունի բազմաթիվ առանձնահատկություններ, որոնցից կարևորներն են.

1. Լիզինգը, որպես գույքի ձեռքբերման և այն վարձակալության հանձնելու նպատակային գործունեություն, բովանդակում է փոխկապակցված պայմանագրային հարաբերությունների համալիր, որտեղ առաջնային են վարձակալությունը և առուծախը: Ըստ լիզինգի՝ առնվազն երեք մասնակցի միջև առաջանում են պայմանագրային երկու տեսակի (առուծախ, վարձակալություն) հարաբերություններ: Ավելին, կարող են տեղ գտնել նաև հանձնարարության, վարկի, գրավի, փոխառության, կոնցեսիայի, տեխնիկական սպասարկման, բրոքերային և այլ ծառայությունների հարաբերություններ: Ընդ որում, կողմերը պետք է պահպանեն սկզբում՝ լիզինգի, ապա առուծախի պայմանագրերի կնքման հաջորդականությունը: Լիզինգի պայմանագրի գործողության մեջ մտնելը պայմանավորված է այլ պայմանագրի կամ գործարքի կնքմամբ, իսկ եթե վերջինս չի կնքվել կամ համարվել է անվավեր, ապա լիզինգի պայմանագիրը կհամարվի ուժի մեջ չմտած:

2. Վարձատուն պարտավոր է վաճառողին ծանուցել, որ գույքը նախատեսված է վարձակալության հանձնելու համար. դրանով վարձատուի առևտրային ռիսկը³ սահմանափակվում է, և վարձատուն ու վարձակալը վաճառողի հետ հարաբերություններում դառնում են համիրավ պարտատերեր:

3. Վարձակալության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը գույքը կարող է անցնել վարձակալի սեփականությանը՝ պայմանագրով նախատեսված գինը⁴ վճարելու պայմանով: Դե-

¹ Lease - անգլ.՝ վարձակալություն, վարձավճար: «Լիզինգ» եզրույթի պայմանագրային առաջին գրառումը եղել է 1877 թ., երբ ամերիկյան «Բել» հեռախոսային ընկերությունը որոշեց հեռախոսային սարքերը ոչ թե վաճառել, այլ վարձավճարով օգտագործման տրամադրել:

² Լիզինգառուն կարող է գույքի ընտրությունը թողնել լիզինգատուին:

³ Գույքի պատահական կորստի ռիսկը վարձակալին է անցնում գույքը նրան հանձնելու պահից:

⁴ Պայմանագրային գինը պայմանագրի ընդհանուր արժեքի (առարկայի ձեռքբերման, տեղափոխման, մոնտաժման) և գույքի օգտագործման դրամական վճարի հանրագումարն է:

տևաբար, հիմք ընդունելով լիզինգի կառուցվածքային և բովանդակային տարրերի, կողմերի կապերի ու հարաբերությունների առանձնահատկությունները, մեր կարծիքով, ճիշտ կլինի ընդգծել, որ լիզինգի պայմանագրի գործողության ընթացքում լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը դրա տնտեսաիրավական բոլոր չափանիշների առումով չի պատկանում ո՛չ լիզինգառուին, ո՛չ լիզինգատուին: Ներկայացվող կարծիքի հիմնավորումն այն է, որ լիզինգատուն պայմանագրի առարկայի նկատմամբ չունի *jus possidenti*¹, ուստի նա չի համարվում այդ գույքի փաստացի տիրապետողը, և նրա կողմից մեկ այլ պայմանագրով այդ գույքի ձեռքբերման նպատակը (նաև պայմանը և լիզինգատուի պարտականությունը) ձեռնարկատիրական գործունեության համար այն լիզինգառուին հանձնելն է: Վարձակալն էլ, իր հերթին, չի համարվում վարձակալության տրված գույքի սեփականատեր, քանի որ, որպես կանոն, վերջինս հաշվառվում է վարձատուի հաշվեկշռում: Ընդգծենք նաև, որ լիզինգի պայմանագրով սեփականության իրավունքի սահմանափակումը հանգեցնում է պետության կողմից տրվող հարկային և անորտիզացիայի գեղչերի:

4. Պայմանագրի ժամկետը որոշակի է՝ ըստ գույքի լրիվ անորտիզացիայի ժամկետի, ընդ որում, ժամկետի պայմանն էականորեն պայմանավորում է պայմանագրի բովանդակությունը և, հատկապես, վարձավճարի չափի ու կարգի պայմանները: Միաժամանակ, լիզինգի պայմանագրում պարտադիր նշվում է այն ժամկետը, որի ընթացքում կողմերն իրավունք չունեն դադարեցնելու պայմանագրի գործողությունը (բացառությամբ՝ պայմանագրի պայմանների կոպիտ խախտման դեպքերի):

Որպես հարկային արտոնությամբ ֆինանսական ներդրման արդյունավետ եղանակ՝ լիզինգի տնտեսաիրավական կարևոր հիմքը դրա առարկայի անորտիզացիայի մեխանիզմի կիրառումն ու լիզինգային վճարումներն են: Համաձայն Օտտավայի 1988 թ. «Միջազգային լիզինգի մասին կոնվենցիայի» 2-րդ հոդվածի՝ լիզինգի վարձավճարը հաշվարկվում է այնպես, որ ծածկի դրա առարկայի անորտիզացիան լրիվ կամ էական մասով:

5. Պայմանագրի առարկան առանձնահատուկ է, այն լիզինգի համար գնվող, նոր և չօգտագործված², չսպառվող, անհատապես որոշվող, ձեռնարկատիրական գործունեության նպատակով ու լիզինգի համար լիզինգառուի հանձնարարությամբ և լիզինգատուի կողմից առուձախի պայմանագրի կնքմամբ ձեռք բերված շարժա-

¹ *Juspossidenti* I –լատ. ունենալ, տիրապետել, տիրելու (տիրապետելու) իրավունք:

² Լիզինգի պայմանագրի առարկայի շուրջ չեն կարող կնքվել մեկից ավելի վարձակալության պայմանագրեր:

կան և անշարժ գույքն է: Անշարժ գույքի լիզինգի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

Անդրադառնալով վարձակալության մյուս տեսակներին և դրանցից (նաև գործառնական լիզինգից) ֆինանսական լիզինգի էական տարբերություններին: Այսպես.

1. Լիզինգի պայմանագրի կնքմանը նախորդում է մեկ (հանձնարարության) կամ ավելի պայմանագիր կամ գործարք:

2. Առաջանում են ոչ միայն վարձակալության, այլև առուծախի պայմանագրային հարաբերություններ:

3. Գույքի հանձնումը վարձակալին իրականացվում է նրա գտնվելու վայրում, ընդ որում, ոչ թե վարձատուի, այլ հիմնականում մատակարար-վաճառողի կողմից (հոդված 682):

4. Գույքը վարձակալին տանադրվում է ժամանակավոր տիրապետման և օգտագործման իրավունքով (վարձակալության մյուս պայմանագրերով միայն օգտագործման):

5. Լիզինգի պայմանագրի առարկայի շուրջ չեն կարող կնքվել մեկից ավելի վարձակալության պայմանագրեր (վարձակալության մյուս պայմանագրերի, նաև գործառնական լիզինգի դեպքում առարկան կարող է կարճաժամկետ վարձակալության տրվել ոչ մեկ անգամ):

6. Ժամկետը որոշակի է (վարձակալության մյուս պայմանագրերում՝ նաև անորոշ):

7. Լիզինգի առարկան լիզինգառուի առաջարկով ու լիզինգի նպատակով լիզինգատուի կողմից առուծախի պայմանագրի կնքմամբ ձեռք բերված գույքն է (վարձակալության մյուս պայմանագրերի, նաև գործառնական լիզինգի դեպքում վարձատուն գույքը գնում է ոչ թե հանձնարարությամբ, այլ իր ռիսկով, որն ավելի մեծ է, քանի որ նա իր վրա է վերցնում վարկային ռիսկը և ակտիվի ռիսկը):

8. Լիզինգառուն իրականացնում է ոչ միայն ընթացիկ, այլև կապիտալ նորոգման պարտավորություն, քանի որ նրան են փոխանցվում գույքի օգտագործման ռիսկը և օգուտի իրավունքը (պայմանագրով կապիտալ նորոգման պարտավորություն կարող է սահմանվել լիզինգատուի համար): ՀՀ քաղ. օր. -ի 683-րդ հոդվածի համաձայն՝ առարկայի ռիսկը կրում է այն կողմը (որպես կանոն, լիզինգառուն), որն ընտրել է մատակարար-վաճառողին, թեպետ բոլոր իրավական համակարգերում գործում է սեփականատիրոջ ռիսկի սկզբունքը, և ռիսկի փոխանցումն իրականացվում է գույքի օտարումով:

Վերջինիս հետ կապված՝ նշենք ռւշադրության արժանի մեկ փաստ. Գերմանիայի օրենսդրությամբ¹ «տնտեսական սեփականատեր» և «իրավաբանական սեփականատեր» հասկացությունները տարանջատվում են՝ նպատակ ունենալով ցույց տալու օբյեկտիվ իրականությունը, այսինքն՝ սուբյեկտների իրավական և տնտեսական կարգավիճակը: Նման սահմանազատման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկային պարտավորություններով: Ըստ օրենսդրության՝ հարկային պարտավորություն է սահմանվում «տնտեսական սեփականատիրոջ»՝ վարձակալության առարկան օգտագործող և դրա հետ կապված բոլոր պարտականությունները կատարող լիզինգառուի համար, քանի որ լիզինգի պայմանագրով ռիսկը նրա վրա դնելը հիմք է տալիս տնտեսական կարգավիճակի առումով նրան հավասարեցնել սեփականատիրոջ հետ և համարել տնտեսական սեփականատեր:

9. Վարձակալն ունի ակտիվ դեր, որն արտահայտվում է գույքի և մատակարար-վաճառողի ընտրության ու նրա նկատմամբ պահանջի, ինչպես նաև վարձակալության առարկայի ձեռքբերման իրավունքներով: Լիզինգառուի կողմից պայմանագրի առարկայի գնմամբ վարձակալված գույքը և դրա նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում են նրան: Նկատենք, որ վարձակալության մյուս պայմանագրերի դեպքում վարձակալը չունի գույքի սեփականության իրավունքի փոխանցման պահանջի իրավունք, և առարկան միշտ վարձատուի սեփականությունն է, հետևաբար՝ պայմանագրի ժամկետի ավարտից հետո վերադարձվում է:

Ամփոփելով ընդգծենք լիզինգի լայն կիրառության փաստը շուկայական տնտեսավարման պայմաններում: Նշենք նաև, որ դրա գործնական արդյունավետությունը պայմանավորված է բազմաթիվ առավելություններով (արտոնություններ և պետական օժանդակություն):

Լիզինգառուն նախապատվություն է տալիս լիզինգին, այլ ոչ թե մեծարժեք գույքի գնմանը, քանի որ ինչ-որ ժամանակի համար անհրաժեշտ գույքը ձեռք է բերում առանց նախնական էական միջոցների ներդրման և հատուցում է պարբերական վճարումների ժամկետներում, շահագործման ընթացքում փորձարկում է այն և իր պահանջները բավարարելու դեպքում՝ ձեռք բերում սեփականության իրավունքով, ընդ որում, իր՝ որպես օգտագործողի արտոնությունների պայմանով:

Լիզինգային գործարքները ձեռնտու են վարձատուին, քանի որ դրանք տալիս են մեծ շահույթի հնարավորություն մեքենա-սարքա-

¹ Koziol-Welser, Grundriß des burgerlichen Rechts, Wien, 1979, s. 313.

վորումների խիստ կարիք ունեցողների ֆինանսական միջոցների պակասի պայմաններում, մանավանդ որ այդ գույքը նա ձեռք է բերում էժան (մատակարար-վաճառողի հետ երկարատև գործընկերային կապի շնորհիվ), պայմանագրի գործողության ընթացքում չի կրում լիզինգի առարկայի ռիսկը, ինչն ավելի է մեծացնում նրա կատարած ներդրումների ապահովվածությունը:

Ֆարց 3. Կապալի պայմանագիր (700-776-րդ հոդվածներ)

Կապալի պայմանագրով մի կողմը՝ կապալառուն, պարտավորվում է մյուս կողմի՝ պատվիրատուի առաջադրանքով, նրա կամ իր նյութերով, բայց իր ռիսկով ու միջոցներով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա դիմաց:

Կապալի պայմանագիրը կոնսենսուալ է, հատուցելի, ժամկետային և երկկողմ: Կապալառուն, որպես կանոն, անձամբ է կատարում աշխատանքը, սակայն նա իրավունք ունի կատարմանը մասնակից դարձնելու այլ անձանց (ենթակապալառուների): Այդ դեպքում կապալառուն հանդես է գալիս որպես գլխավոր կապալառու: Կապալի պայմանագիրը կնքվում է հասարակ գրավոր ձևով: Դրա առարկան կապալառուի՝ գույք պատրաստելու կամ վերամշակելու աշխատանքի առարկայացված արդյունքն է: Աշխատանքի գինը, որը կարող է լինել կայուն կամ մոտավոր, որոշվում է նախահաշվով: Կապալառուն իրավունք ունի պահանջելու կանխավճար: Կապալի պայմանագրով սահմանվում են սկզբնական, վերջնական, նաև աշխատանքի առանձին փուլերի կամ միջանկյալ ժամկետներ:

Կապալի պայմանագրով թե՛ կապալառուն, թե՛ պատվիրատուն իրավունք չունեն առանց մյուս կողմի համաձայնության երրորդ անձանց հայտնելու պայմանագրային պարտավորության կատարմամբ ստացած նոր լուծումների ու տեխնիկական գիտելիքների և առևտրային գաղտնիք համարվող տեղեկությունների մասին:

Կապալառուի հիմնական պարտականությունը պատվերի պատշաճ կատարումն է՝ ըստ պայմանագրային առաջադրանքի: Կապալառուն պարտավոր է պահպանել պատվիրատուի տրամադրած նյութերը, դրանք օգտագործել խնայողաբար և ծախսի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել, ինչպես նաև պատվիրատուին նախագուշացնել և դադարեցնել աշխատանքը՝ դրա արդյունքի պիտանելիությունը վտանգող՝ իրենից անկախ ի հայտ եկած հան-

գամանքների և պատվիրատուի տրամադրած նյութերի անպատշաճ որակի դեպքում: Վերջինիս պարագայում կապալառուն իրավունք ունի աշխատանքը չսկսելու, սկսած աշխատանքը դադարեցնելու և պահանջելու վնասների հատուցում:

Պատվիրատուն պարտավոր է պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով, կապալառուի մասնակցությամբ, գնել և ընդունել աշխատանքի պատշաճ արդյունքները և վճարել դրանց գինը, իսկ թերությունների դեպքում՝ պահանջ ներկայացնել ողջամիտ ժամկետում վերացնելու թերությունները կամ հատուցելու դրանք վերացնելու՝ իր կատարած ծախսերը կամ համաչափորեն նվազեցնելու գինը:

Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգելու աշխատանքի ընթացքն ու որակը՝ առանց միջամտելու, ինչպես նաև, մինչ աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, հրաժարվելու պայմանագրից և հատուցելու պայմանագրի դադարմամբ կապալառուին պատճառված վնասները:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է կապալի պայմանագրի չորս տեսակ՝ կենցաղային, պետական կարիքների համար, նախագծային և հետազոտական աշխատանքների, շինարարական, որը շուկայական տնտեսության պայմաններում առավել կարևոր տեղ ունի:

1. Շինարարական կապալի պայմանագրով կապալառուն (մասնագիտացված շինարարական կազմակերպությունը) պարտավորվում է սահմանված ժամկետում պատվիրատուի առաջադրանքով կառուցել որոշակի օբյեկտ կամ կատարել շինարարական այլ աշխատանքներ, իսկ պատվիրատուն՝ կապալառուի համար ստեղծել աշխատանքի կատարման անհրաժեշտ պայմաններ, ընդունել դրա արդյունքը և վճարել պայմանավորված գինը (հոդված 738): Շինարարական կապալի պայմանագիրն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- շինարարական կապալի հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն քաղաքացիական օրենսդրությամբ, այլև շինարարական նորմեր բովանդակող իրավական ակտերով,
- կապալառուն աշխատանքը պետք է կատարի ըստ նախագծանախահաշվային փաստաթղթերի,
- կապալառուն պայմանագրային աշխատանքներ կատարելիս պետք է ապահովի շրջակա միջավայրի պահպանության և աշխատանքի անվտանգության պահանջները,
- պատվիրատուն պետք է հատկացնի շինարարական հրապարակ, անհրաժեշտ շինություն կամ ապահովի այլ պայմաններ ու այլ ծառայություններ,

- պատվիրատուն շինարարության հսկողության նպատակով կարող է պայմանագիր կնքել ճարտարագետի (կազմակերպության) հետ՝ առանց կապալառուի համաձայնության,
- պատվիրատուն իրավունք ունի փոփոխություններ կատարելու, եթե չի փոխվում շինարարական աշխատանքների բնույթը և փոփոխությունից բխող աշխատանքներն իրենց արժեքով չեն գերազանցում նախահաշվային արժեքի 10%-ը,
- պատվիրատուն կատարած աշխատանքի համար վարձատրում է պայմանագրով նախատեսված չափով, ժամկետներում և կարգով,
- շինարարական կապալի պայմանագրի աշխատանքի արդյունքի հանձնում-ընդունումը կատարվում է հատուկ ակտով (մինչ օբյեկտն ընդունելը դրա ռիսկը կրում է կապալառուն),
- նոր օբյեկտի նկատմամբ պատվիրատուի սեփականության իրավունքը ծագում է դրա պետական գրանցման պահից:

2. Կենցաղային կապալի պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կապալառուն պարտավորվում է քաղաքացու (պատվիրատու) հանձնարարությամբ կատարել նրա կենցաղային կամ այլ անձնական պահանջները բավարարելու համար նախատեսված որոշակի աշխատանք, իսկ պատվիրատուն՝ ընդունել և վարձատրել աշխատանքը (հոդված 728): Կենցաղային կապալի պայմանագիրն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- պայմանագիրը հրապարակային է,
- կապալառուն աշխատում է իր ռիսկով և պատվերից շեղվելու պարագայում ոչ միայն չի վարձատրվում, այլև հատուցում է՝ պատվիրատուի նյութերով աշխատելու դեպքում,
- պատվիրատուի կողմից աշխատանքի արդյունքը ստանալուց խուսափելու դեպքում կապալառուն իրավունք ունի գրավոր զուլշացնելու, որից հետո՝
- երկու ամիս անց ողջամիտ գնով վաճառելու այդ արդյունքը, պահելու իրեն հասանելիք վճարները և մնացած գումարը մուծելու դեպոզիտ:

3. Պետական կարիքների համար կապալային աշխատանքների (պետբյուջեից ֆինանսավորվող շինարարական և նախագծային ու հետազոտական) կատարման պետական պայմանագրով կապալառուն պարտավորվում է կատարել շինարարական, նախագծային և այլ աշխատանքներ ու դրանք հանձնել պետական պատվիրատուին (լիազորված պետական մարմին), իսկ վերջինս պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել (հոդված 761): Պետական կարիքների համար կապալային աշխատանքները

տանքների պայմանագիրն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- պետական պայմանագրի պայմանները սահմանվում են հայտարարված մրցույթի պայմաններին և մրցույթում հաղթող ճանաչված կապալառուի մրցույթին ներկայացրած առաջարկությանը համապատասխան,
- պետբյուջեից կապալային աշխատանքների ֆինանսավորման միջոցների նվազեցման դեպքում կողմերը պետք է համաձայնեցնեն նոր ժամկետները և աշխատանքին անհրաժեշտ այլ պայմանները:

4. Նախագծային և հետազոտական աշխատանքների կապալի պայմանագրով կապալառուն (նախագծողը, հետազոտողը) պարտավորվում է պատվիրատուի հանձնարարությամբ մշակել նախագծային փաստաթղթեր և (կամ) կատարել հետազոտական աշխատանքներ, իսկ պատվիրատուն՝ ընդունել դրանք և վճարել դրանց արդյունքի համար (հոդված 756): Նախագծային և հետազոտական աշխատանքների կապալի պայմանագրով պատվիրատուն պարտավոր է կապալառուին հանձնել նախագծային կամ հետազոտական աշխատանքի առաջադրանքը, ըստ սահմանված պայմանների և ծավալի՝ աջակցել նրան, վճարել և հատուցել կատարած այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են ելակետային տվյալները վերջինից անկախ պատճառներով փոփոխվելու հետևանքով, իսկ կապալառուն՝ աշխատանքները կատարել նախագծման առաջադրանքին, այլ ելակետային տվյալներին ու պայմանագրին համապատասխան՝ պատվիրատուին հանձնելով պատրաստի նախագծային փաստաթղթերն ու հետազոտական աշխատանքի արդյունքները:

Չարք 4. Բեռի փոխադրման պայմանագիր (855-րդ, 857-րդ հոդվածներ)

Ըստ փոխադրման պարտավորության՝ փոխադրողը պարտավորվում է բեռը հասցնել նշանակված վայր, իսկ բեռն առաքողը՝ վճարել փոխադրման համար սահմանված վճարը:

Ըստ բեռնափոխադրման պայմանագրի՝ փոխադրողը պարտավորվում է առաքողի կողմից իրեն վստահված բեռը հասցնել նշանակված վայր և հանձնել ստանալու համար լիազորված անձին (ստացողին), իսկ առաքողը՝ վճարել բեռի փոխադրման համար սահմանված վճարը (հոդված 855): Բեռի փոխադրման պայմանագիրը կնքվում է հասարակ գրավոր ձևով, իսկ կնքումը հավաստվում է առաքողի կողմից կազմված, նրա և փոխադրողի կողմից ստորա-

գրվող փաստաթղթով՝ տրանսպորտային բեռնագրով կամ կոնոսամենթով¹, որտեղ նշվում են բեռնային տվյալները, ստացման վայրն ու ժամկետը և ստացողը:

Բեռնափոխադրման պայմանագրային հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն քաղաքացիական օրենսդրությամբ, այլև տրանսպորտային կազմակերպությունների իրավական ակտերով: Այդ պայմանագիրը հրապարակային է և երկկողմ. կնքվում է փոխադրող տրանսպորտային կազմակերպության (կամ ԱԶ-ի) և առաքողի (ցանկացած անձի) միջև՝ հօգուտ երրորդ անձի: Պայմանագրով իրավունքներ և պարտականություններ են առաջանում կողմերի համար, սակայն հիմնականում բեռը ստանում է ոչ թե առաքողը, այլ նրա կողմից մատնանշված անձը՝ ստացողը, որը բեռի փոխադրման կատարումն ընդունող մասնակիցն է, ում հետ առաքողը մեկ այլ (օրինակ՝ առուծախի) հարաբերության մեջ է: Առանձին դեպքերում առաքողը, միաժամանակ, բեռ ստացողն է:

Բեռնափոխադրման պայմանագիրը, որպես կանոն ռեալ է (որոշ դեպքերում՝ կոնսենսուալ, օրինակ՝ ֆրախտը) և կնքված է համարվում առաքողի կողմից բեռը փոխադրողին հանձնելու և փոխադրումը ձևակերպելու պահից: Այս պայմանագիրը հատուցելի է. առաքողը պարտավոր է կատարել սակագնով սահմանված և կողմերի որոշած փոխադրավարձի վճարումը: Այն, միաժամանակ, ժամկետային է. բեռի ստացման ստույգ ժամկետից բացի, պայմանագրում նշվում է փոխադրման արագությունը, ինչը սահմանվում է տրանսպորտի տվյալ տեսակի իրավական ակտերով:

Բեռնափոխադրման պայմանագիրը դասվում է ծառայությունների մատուցման պայմանագրերի շարքին, որի առարկան բեռնափոխադրման ծառայությունն է, որն իրականացվում է ցամաքային՝ երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և ջրային ներքին խողովակաշարային, ծովային տրանսպորտի միջոցներով՝ միջանցիկ, դրացիական և տարանցիկ հաղորդակցության ձևերով:

Պայմանագրի առաքող կողմի հիմնական պարտականությունը փոխադրավարձի վճարումն է, իսկ փոխադրողը պարտավոր է բեռը ստացման վայր հասցնել ժամանակին ու հանձնել ստացողին անվթարությունը ապահոված վիճակում: Փոխադրողն ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ բեռի կորուստը, պակասորդը, վնասվածքը ֆորս-մաժորի կամ այնպիսի հանգամանքների հետևանք են, որոնք փոխադրողը չէր կարող կանխել, և որոնց վերացնելն իրենից կախված չէր: Փոխադրողը պատասխանատվությունից ազատվում է նաև էմբարգոյի² դեպքում:

¹ Connaissement - ֆր.՝ նավաբեռնագիր, անդորրագիր, ստացական:

² Embargo – իսպ.՝ արգելք, բեռի փոխադրման արգելք:

Յարց 5. Փոխառության պայմանագիր (877-886-րդ հոդվածներ)

Գիտական¹ և ուսումնական² գրականության մեջ փոխառությունը համարվում է քաղաքացիաիրավական վարկավորման հիմնական ձևը:

Փոխառության պայմանագրով մի կողմը՝ փոխատու, մյուս կողմի՝ փոխառուի սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակալին հատկանիշով գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից (հոդված 877), հետևաբար՝ դա, ըստ կնքման պահի, ռեալ է:

Ըստ ՀՀ քաղ. օր.-ի 878-րդ հոդվածի՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, ընդ որում, կնքումը հավաստվում է փոխառուի ստացականով կամ նրա՝ որոշակի գումար կամ գույք ստանալը հավաստող այլ փաստաթղթով: Կնքման այս ձևը չպահպանելը հանգեցնում է պայմանագրի անվավերության. նման պայմանագիրն առաջին չ է:

Փոխառության պայմանագիրը միակողմ է, քանի որ փոխատուն ձեռք է բերում պահանջի իրավունք, իսկ փոխառուն, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում, պարտքը վերադարձնելու պարտավորություն:

Փոխառության պայմանագիրը ժամկետային է: Այն կարող է լինել հատուցելի, այսինքն՝ տոկոսով, որի չափը չի կարող ավելի լինել պայմանագրի կնքման ժամանակ ՀՀ ԿԲ սահմանած տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկից:

Փոխառության պայմանագիրը համարվում է անտոկոս, եթե պայմանագրում առկա չէ տոկոսի պայմանը: Անտոկոս փոխառության պայմանագիր կնքվում է, եթե.

ա) դրա առարկան ոչ թե դրամական գումարն է, այլ գույքը,

բ) դա կնքվում է քաղաքացիների միջև՝ նվազագույն աշխատավարձի հիմնապատիկը չգերազանցող գումարով և կապված չէ կողմերի ձեռնարկատիրական գործունեության հետ, ընդ որում, կարող է կատարվել վաղաժամկետ (տոկոսով փոխառության պայմանագրով փոխառուն գումարը վաղաժամկետ

¹ Хохлов С., Заем и кредит, М., 1998, с. 420.

² Гражданское право, под. ред. Е.Суханова, т. 2, М., 2016, с. 204.

կարող է վերադարձնել միայն փոխատուի համաձայնությամբ):

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսվում է փոխառության պայմանագրի երկու տեսակ.

ա) պետական, որի փոխառու կողմը ՀՀ-ն է, իսկ փոխատուն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք,

բ) նպատակային, այսինքն՝ որոշակի նպատակով օրտագործելու պայմանով, ընդ որում, փոխառուն պետք է ապահովի փոխառության գումարի նպատակային օգտագործման վրա փոխատուի վերահսկողության հնարավորությունը:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- տարանջատել գույքի փոխանցման, դրամական վճարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման պայմանագրերը:
- ճանաչել պայմանագրային պարտավորությունների առանձին տեսակները:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ տեսակներ և առանձնահատկություններ ունի առք ու վաճառքի պայմանագիրը,
- Ի՞նչ տեսակներ և առանձնահատկություններ ունի վարձակալության պայմանագիրը:
- Ի՞նչ տեսակներ և առանձնահատկություններ ունի կապալի պայմանագիրը:
- Ի՞նչ տեսակներ և առանձնահատկություններ ունի փոխառության պայմանագիրը:

ԹԵՄԱ 12. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (1100-1183-րդ հոդվածներ)

Չարց 1. Մտավոր սեփականության հասկացությունը (1100-1110-րդ հոդվածներ)

Մտավոր սեփականության իրավունքն այն իրավանորմերի համակցությունն է, որը կարգավորում է մտավոր գործունեության արդյունքների¹ և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցների (օբյեկտների) ստեղծման ու օգտագործման կապակցությամբ առաջացող հարաբերությունները:

ՀՀ քաղաքացիական իրավունքի համակարգի «Մտավոր սեփականություն» ենթաճյուղը պարունակում է երեք իրավական ինստիտուտներ.

- Հեղինակային (և դրան հարակից) իրավունք, որը իրավանորմերի այն համախումբն է, որը կարգավորում է գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների ստեղծման և օգտագործման կապակցությամբ առաջացող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները: Հարակից իրավունքները տարածվում են բեմադրությունների, կատարումների, ծայնագրումների, տեսակատարումների, հեռարձակող կազմակերպությունների եթերային և կաբելային հաղորդումների վրա:

- Արտոնագրային իրավունք, որը, օբյեկտիվ առումով, իրավանորմերի այն համախումբն է, որը կարգավորում է գյուտի, օգտակար մոդելի, արտադրական նմուշի և մտավոր գործունեության տեխնիկայի բնագավառի այլ արժեքների ստեղծման (ստեղծագործության նկատմամբ սուբյեկտիվ իրավունքի ծագման և ճանաչման՝ արտոնագիր հայցելու ու ստանալու) և օգտագործման կապակցությամբ առաջացող հարաբերությունները: Սուբյեկտիվ առումով, արտոնագրային իրավունքը գյուտի, օգտակար մոդելի, արտադրական նմուշի և մտավոր գործունեության տեխնիկայի բնագավառի այլ արժեքի նկատմամբ կոնկրետ անձի՝ հեղինակի իրավագործությունների ամբողջությունն է:

- Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ծառայությունների, աշխատանքների, ապրանքների անհատականացման

¹ ՀՀ քաղ. օր.-ի 1100-րդ հոդվածի համաձայն՝ մտավոր գործունեության արդյունքներ են գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները:

միջոցների նկատմամբ իրավունք, որն իրավանորմերի այն համախումբն է, որը կարգավորում է ֆիրմային անվան, ապրանքային կամ սպասարկման նշանի, ապրանքի ծագման տեղանունի օգտագործման կապակցությամբ առաջացող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները:

Չարք 2. Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ծառայությունների, աշխատանքների, ապրանքների անհատականացման միջոցների հասկացությունը և պաշտպանությունը (1167-1183-րդ հոդվածներ)

Ֆիրմային անվանում

Տնտեսական հարաբերություններում իրավաբանական անձերը, առաջին հերթին, միյնացից տարբերվում ու անհատականացվում են իրենց անվանմամբ, որը լինում է սովորական, պայմանական և ֆիրմային: Ֆիրմային է համարվում այն անվանումը, որի ներքո իրավաբանական անձը, զանազանվելով այլ իրավաբանական անձանցից, իրականացնում է իր գործունեությունը (ապրանքների, դրանց փաթեթավորման, զովազդի, ցուցանակների, հաշիվների, տպագիր հրատարակումների, պաշտոնական ձևաթղթերի և գործունեության հետ կապված այլ փաստաթղթերի, նաև իրեն պատկանող ապրանքային նշանի վրա օգտագործելու բացառիկ իրավունքով):

Իրավաբանական անձի ֆիրմային անվանումը որոշվում է նրա կանոնադրությունը հաստատելիս և գրանցվում է:

Իրավաբանական անձի ֆիրմային անվանումը պետք է բովանդակի նրա կազմակերպչիրավական ձևը բնորոշող տարրեր, ինչպես նաև հիմնադրի կողմից անհրաժեշտ համարվող տվյալներ, խորհրդանշաններ:

Ֆիրմային անվան իրավունքը՝

1. բացառիկ է. այլ անձինք չունեն դրա օգտագործման իրավունքը, և այն թույլատրվում է փոխանցել միայն իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում,
2. բացարձակ է. այլ անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այդ իրավունքի խախտումից,
3. անժամկետ է. դադարում է իրավաբանական անձի դադարմամբ,
4. անօտարելի է (բացառությամբ՝ ֆրանչայզինգի պայմանագրի),
5. պաշտպանվում է դատական կարգով:

Ապրանքային նշան

Ապրանքային (սպասարկման) նշան է համարվում գրանցված բառային, պատկերային, ծավալային կամ այլ նշանը, որը ծառայում է մեկ անձի ապրանքները և ծառայությունները մեկ այլ անձի միատեսակ ապրանքներից ու ծառայություններից տարբերելու համար:

Ապրանքային նշանին իրավական պահպանություն է տրամադրվում դրա գրանցման հիման վրա, ինչպես նաև որոշակի պահանջներ բավարարելու փաստով: Խոսքը վերաբերում է ապրանքի հատկանիշների հետ կապ ունեցող պայմանանշանին և զանազանելիության (այլ ապրանքային նշաններին շփոթելու աստիճանի չնմանվող) պահանջին:

Ապրանքային նշանի իրավունքը.

1. հավաստվում է վկայագրով,
2. ունի գրանցման գործողության ժամկետ,
3. բացառիկ է. ապրանքային նշանի սեփականատերն իրավունք ունի՝
 - ա) օգտագործելու (ապրանքի կամ փաթեթի վրա գետեղելու, գովազդում, հայտարարություններում, պաշտոնական ձևաթղթերում, ցուցակներում և ցուցանմուշ ցուցադրելիս՝ կիրառելու)
 - բ) տնօրինելու (վաճառելու),
 - գ) փոխանցելու այլ անձի՝ ապրանքային նշանը զիջելով, ապրանքային նշանի օգտագործման գրավոր թույլտվություն (լիցենզիա) տալով,
4. երաշխավորված է. օգտագործողը պարտավոր է դադարեցնել խախտումը, ինչպես նաև ապրանքի կամ դրա փաթեթի վրայից հանել ապրանքային նշանը, ոչնչացնել ըստ ապրանքային նշանի պատրաստված պատկերները և ապրանքային նշանի սեփականատիրոջը հատուցել պատճառած վնասները,
5. պաշտպանվում է դատական կարգով,
6. իրավական պահպանությունը դադարում է գրանցումն անվավեր ճանաչելու կամ չեղյալ հայտարարելու դեպքում:

Ապրանքի ծագման տեղանուն

Ապրանքի ծագման տեղանուն (ծագման տեղ) է համարվում երկրի, բնակավայրի, տեղանքի կամ աշխարհագրական այլ օբյեկտի անվանումը, որն օգտագործվում է այդ ապրանքը նշելու համար, որի յուրահատկությունները բացառապես կամ գլխավորապես որոշվում են այդ աշխարհագրական օբյեկտին բնորոշ բնական պայմաններով կամ այլ գործոններով կամ բնական պայմանների և

այլ գործոնների զուգորդմամբ: Ապրանքի ծագման տեղանունն օգտագործվում է այնպիսի ապրանքների համար, որոնց եզակի հատկությունները պայմանավորված են սովյալ վայրի աշխարհագրական, բնակլիմայական կամ այլ յուրահատուկ գործոններով:

Ապրանքի ծագման տեղանունը կարող է լինել աշխարհագրական օբյեկտի պատմական անվանումը:

Ապրանքի ծագման տեղանվանն իրավական պահպանություն է տրամադրվում (ՀՀ-ում գործող ապրանքների ծագման տեղանունների) դրա գրանցման հիման վրա¹:

Ապրանքի ծագման տեղանվան իրավունքը.

1. հավաստվում է վկայագրով (տեղանվան գրանցումը գործում է անժամկետ, իսկ վկայագիրը՝ տասը տարի),
2. օգտագործվում է ապրանքի փաթեթավորման, գովազդի, ազդագրերի, հաշիվների և ձևաթղթերի վրա զետեղելով,
3. երաշխավորված է. ապօրինի օգտագործողը պարտավոր է դադարեցնել օգտագործումը, ապրանքի փաթեթավորման, ձևաթղթի և այլ փաստաթղթերի վրայից վերացնել ապօրինի օգտագործված անվանումը և ոչնչացնել պատրաստված անվանման պատկերը (դրա անհնարինության դեպքում ապրանքը կամ փաթեթը առգրավվում և ոչնչացվում է),
4. դադարում է՝
 - ա) տեղանվան գրանցումը կամ վկայագիրը անվավեր ճանաչելով,
 - բ) վկայագրի սեփականատեր իրավաբանական անձի լուծարմամբ,
 - գ) վկայագրի սեփականատեր իրավաբանական անձի կողմից վկայագրից հրաժարմամբ,
 - դ) տեղանքին բնորոշ պայմանների վերացմամբ և դրա հատկություններով ապրանքի արտադրության անհնարինությամբ:

Անհատականացման բոլոր միջոցների նկատմամբ իրավունքների պաշտպանությունը հիմնականում իրականացվում է քաղաքացիաիրավական և վարչաիրավական եղանակներով և ուղղված է տուժողի՝ օրենքով պաշտպանվող իրավունքի վերականգնմանը և նրան պատճառված վնասների հատուցմանը:

¹ Տեղանունը կարող են գրանցման ներկայացնել.

- որոշակի տեղանքում ապրանքն արտադրող մեկ կամ մի քանի անձ,
- սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները,
- սովյալ ապրանքի արտադրության հետ առնչություն ունեցող այլ անձինք:

Ծանոթանալով այս թեմային՝ Դուք կկարողանաք.

- գաղափար կազմել մտավոր սեփականության իրավունքի մասին,
- տարանջատել հեղինակային և արտոնագրային իրավունքները:

Ստուգիչ հարցեր

- Ի՞նչ է արտոնագրային իրավունքը:
- Որո՞նք են մտավոր սեփականության մասնակիցների, աշխատանքների, ծառայությունների, ապրանքների անհատականացման միջոցները:
- Ինչպիսի՞նչ պաշտպանություն է նախատեսված մտավոր սեփականության մասնակիցների իրավունքների, աշխատանքների, ծառայությունների, ապրանքների անհատականացման միջոցների համար:

Գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրություն:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:
3. ՍՊԸ-ների մասին ՀՀ օրենք:
4. ՀՀ բաժնետիրական ընկերությունների մասին օրենք:
5. ՀՀ քաղաքացիական իրավունք, հատոր 1, ԵՊՀ, 2000:
6. ՀՀ քաղաքացիական իրավունք, հատոր 2, ԵՊՀ, 2014:
7. Абова Т., Кабалкин Ю., Гражданский кодекс РФ, научно-практический комментарий, М., 2015.
8. Балашов А., Хозяйственное право (учеб. пособие), Таганрог, ТТИУОУ, 2015.
9. Баронцов Г., Гражданское право, "Юнти-дана", М., 2016.
10. Булатецкий Ю., Коммерческое право, М., 2017.
11. Гражданское право (учебник под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого), т. 1, М., 2004.
12. Гражданское право (учебник под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого), т. 2, М., 2014.
13. Гончаров А., Маслов А., Гражданское право, "Волтерс-Клювер" М., 2017.
14. Макаров Н., Рябов Е., Предпринимательское право, М., 2016.
15. Павлова И., Гражданское право, М., 2016.
16. Пугинский Б., Белов В., Коммерческое право, М., 2017.
17. Суханов Е., Гражданское право, том 1, М., 2011.
18. Суханов Е., Гражданское право, том 1, М., 2013.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բ Ա Ժ Ի Ն 1

ԹԵՄԱ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.....	5
Հարց 1. Պետության հիմնական հատկանիշները.....	5
Հարց 2. Պետության գործառույթի հասկացությունը, տեսակները	11
ԹԵՄԱ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ	17
Հարց 1. Պետության ձևի հասկացությունը	17
Հարց 2. Պետության կառավարման ձևերը	18
Հարց 3. Պետության կառուցվածքի ձևերը	22
Հարց 4. Պետական (քաղաքական) վարչակարգի ձևերը.....	24
ԹԵՄԱ 3. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ (ՄԵՆԱՆԻՉՄԻ) ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	26
Հարց 1. Պետական ապարատի հասկացությունը	26
Հարց 2. Պետական նարմնի հասկացությունը, հատկանիշները և դասակարգումը	29
ԹԵՄԱ 4. ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	34
Հարց 1. Իրավունքի հասկացությունը, հատկանիշները.....	34
Հարց 2. Իրավունքի սկզբունքները, դրանց նշանակությունը և դասակարգումը	36
Հարց 3. Իրավունքի գործառույթի հասկացությունը և դասակարգումը	41
ԹԵՄԱ 5. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	44
Հարց 1. Իրավական նորմի հասկացությունը, հիմնական հատկանիշները և տեղը սոցիալական նորմերի համակարգում.....	44
Հարց 2. Իրավական նորմի կառուցվածքը	46
Հարց 3. Իրավական նորմի տեսակները	48
ԹԵՄԱ 6. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐՔՅՈՒՐԻ (ՁԵՎԻ) ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	53
Հարց 1. Իրավունքի աղբյուրի հասկացությունը, տեսակները.....	53
Հարց 2. Նորմատիվ և ենթաօրենսդրական իրավական ակտերի հասկացությունը, տեսակները	55

Հարց 3. Նորմատիվ իրավական ակտերի ներգործությունը տարածության և ժամանակի մեջ և ըստ անձանց շրջանակների: Օրենքի հետադարձ ուժը..... 60

ԹԵՄԱ 7. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԵՐԸ..... 64

Հարց 1. Իրավունքի համակարգի հասկացությունը, կառուցվածքը և փոխհարաբերությունը օրենսդրության համակարգի հետ..... 64
 Հարց 2. Իրավական կարգավորման առարկան և մեթոդը..... 67
 Հարց 3. Նորմատիվ իրավական ակտերի համակարգումը և ձևերը..... 70

ԹԵՄԱ 8. ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ..... 73

Հարց 1. Իրավահարաբերության հասկացությունը, հիմնական հատկանիշները..... 73
 Հարց 2. Իրավահարաբերության կառուցվածքը..... 76
 Հարց 3. Իրավաբանական փաստեր..... 82

ԹԵՄԱ 9. ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ..... 85

Հարց 1. Իրավախախտման հասկացությունը, տեսակները..... 85
 Հարց 2. Իրավախախտման տեսակները..... 88
 Հարց 3. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը, սկզբունքներն ու տեսակները..... 90
 Հարց 4. Օրինականության և իրավակարգի հասկացությունը, տարրերը..... 94

Գրականության ցանկ..... 98

Բ Ա Ժ Ի Ն 2

ԹԵՄԱ 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 99

Հարց 1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը..... 99
 Հարց 2. Սահմանադրական իրավունքի կարգավորման առարկան և մեթոդը..... 101

ԹԵՄԱ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ..... 104

Հարց 1. Սահմանադրության հասկացությունը և առանձնահատկությունները..... 104

ԹԵՄԱ 3. ՄԱՐՐՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ..... 107

Հարց 1. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը..... 107
 Հարց 2. Սահմանադրական իրավունքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունը և բովանդակությունը..... 108

Հարց 3. Անձնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների սահմանադրաիրավական կարգավորումը.....	110
Հարց 4. Մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները	118
ԹԵՄԱ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ	120
Հարց 1. Քաղաքացիության հասկացությունը	120
Հարց 2. ՀՀ քաղաքացիության սկզբունքները	122
Հարց 3. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման իրավական հիմքերը	123
ԹԵՄԱ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ...	127
Հարց 1. Ընտրական համակարգի հասկացությունը.....	127
Հարց 2. Ընտրական իրավունքի սկզբունքները.....	129
ԹԵՄԱ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ.....	132
Հարց 1. Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները	132
Հարց 2. Ազգային ժողովի կազմակերպման կարգը, կառուցվածքը, գործունեության սկզբունքները	134
ԹԵՄԱ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐԸ.....	140
Հարց 1. Հայաստանի Հանրապետության նախագահի կարգավիճակը .	140
ԹԵՄԱ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	143
Հարց 1. ՀՀ կառավարության տեղը պետական մարմինների համակարգում.....	143
Հարց 2. ՀՀ կառավարության ձևավորման, վարչապետի ընտրության և նշանակման սահմանադրաիրավական հիմքերը	144
ԹԵՄԱ 9. ՂԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՂԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	146
Հարց 1. Ղատական իշխանության սահմանադրաիրավական հիմքերը.	146
ԹԵՄԱ 10. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ	149
Հարց 1. Տեղական ինքնակառավարման իրավունք	149
Գրականության ցանկ	152

Բ Ա Ժ Ի Ն 3

ԹԵՄԱ 1. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂ	153
Հարց 1. Վարչական իրավունքի հասկացությունը, ընդհանուր բնութագիրը.....	153
ԹԵՄԱ 2. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ	157
Հարց 1. Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական	

կարգավիճակի հիմունքները	157
Հարց 2. Պետական կառավարման (գործադիր իշխանության) մարմնի հասկացությունը, համակարգը	158
Հարց 3. Պետական կառավարման մարմինների տեսակները, դասակարգումը	160
Գրականության ցանկ	164

Բ Ա Ժ Ի Ն 4

ԹԵՄԱ 1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	165
Հարց 1. Աշխատանքային իրավունքի առարկան և մեթոդը	165
Հարց 2. Աշխատանքային իրավունքի սկզբունքները և գործառույթները	168
Հարց 3. Աշխատանքային իրավունքի համակարգը և աղբյուրները	171
ԹԵՄԱ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ	175
Հարց 1. Աշխատանքային իրավունքի սուբյեկտի հասկացությունը	175
Հարց 2. Քաղաքացին (աշխատողը) որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ	176
Հարց 3. Կազմակերպությունը (գործատուն) որպես աշխատանքային իրավունքի սուբյեկտ	177
ԹԵՄԱ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ	180
Հարց 1. Աշխատանքային պայմանագրի հասկացությունը	180
Հարց 2. Աշխատանքային պայմանագրի բովանդակությունը և կնքման կարգը	184
Հարց 3. Աշխատանքային պայմանագրի տեսակները	188
Հարց 4. Աշխատանքային պայմանագրի կատարումը: Աշխատանքի պայմանների փոփոխումը	191
ԹԵՄԱ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ	194
Հարց 1. Աշխատանքային պայմանագրի դադարման հիմքերը	194
Հարց 2. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերն ու պայմանները	201
Հարց 3. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը և լուծելու արգելքը	207
Հարց 4. Արձակման նպաստը և աշխատողի հետ վերջնահաշվարկի կարգը	209
ԹԵՄԱ 5. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ	211
Հարց 1. Աշխատաժամանակի հասկացությունը	211
Հարց 2. Աշխատաժամանակի տևողությունը	213
Հարց 3. Արտաժամյա աշխատանք	217

ԹԵՄԱ 6. ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ	220
Հարց 1. Հանգստի ժամանակի հասկացությունը և տեսակները.....	220
Հարց 2. Ամենամյա արձակուրդի տրամադրման կարգը և վճարումը.....	225
ԹԵՄԱ 7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ: ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	230
Հարց 1. Աշխատանքային կարգապահության հասկացությունը և դրա սպառնալից պայմանները.....	230
Հարց 2. Նյութական պատասխանատվություն.....	233
ԹԵՄԱ 8. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐ	239
Հարց 1. Աշխատանքային վեճի հասկացությունը.....	239
Հարց 2. Աշխատանքային վեճերի ծագման պատճառներն ու պայմանները.....	240
Հարց 3. Աշխատանքային վեճերի դասակարգումը և քննության ընդհանուր կարգը.....	241
Գրականության ցանկ.....	244

Բ Ա Ժ Ի Ն 5

ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	245
Հարց 1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը, սկզբունքները (1-ին, 3-րդ հոդվածներ).....	245
Հարց 2. Քաղաքացիական իրավունքի աղբյուրները (ծները) և համակարգը (4-9-րդ հոդվածներ).....	247
ԹԵՄԱ 2. ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (132-162-րդ հոդվածներ)	251
Հարց 1. Քաղաքացիական իրավահարաբերությունների հասկացությունը, տարրերը և ծագման հիմքերը (132-133-րդ հոդվածներ).....	251
Հարց 2. Քաղաքացիական իրավահարաբերությունների տեսակները (134-162-րդ հոդվածներ).....	252
ԹԵՄԱ 3. ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ (20-131-րդ հոդվածներ)	255
Հարց 1. Քաղաքացիները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ (20-49-րդ հոդվածներ).....	255
Հարց 2. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները (50-52-րդ հոդվածներ).....	257
Հարց 3. Իրավաբանական անձի ստեղծումը և դադարումը (53-56-րդ, 63-71-րդ հոդվածներ).....	258
Հարց 4. Իրավաբանական անձի հիմնական տեսակները (70-76-րդ, 117-127-րդ հոդվածներ).....	262

ԹԵՄԱ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (72-116-րդ հոդվածներ)	265
Չարդ 1. <i>Տնտեսական ընկերակցություններ (77-94-րդ հոդվածներ)</i>	265
Չարդ 2. <i>Տնտեսական ընկերություններ (95-116-րդ հոդվածներ)</i>	267
Չարդ 3. <i>Տնտեսական ընկերակցությունների և տնտեսական ընկերությունների համեմատական բնութագիրը</i>	272
ԹԵՄԱ 5. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ (289-317-րդ հոդվածներ)	274
Չարդ 1. <i>Գործարքի հասկացությունը, վավերության պայմանները: Անվավեր գործարքներ (289-րդ, 294-325-րդ հոդվածներ)</i>	274
Չարդ 2. <i>Գործարքների տեսակները (290-293-րդ հոդվածներ)</i>	275
ԹԵՄԱ 6. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ: ԼԻԱԶՈՐԱԳԻՐ (318-325-րդ հոդվածներ)	277
Չարդ 1. <i>Ներկայացուցչության հասկացությունը և առաջացման հիմքերը (318-320-րդ հոդվածներ)</i>	277
Չարդ 2. <i>Լիազորագիր (321-325-րդ հոդվածներ)</i>	278
ԹԵՄԱ 7. ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ (331-344-րդ հոդվածներ)	280
Չարդ 1. <i>Հայցային վաղեմության հասկացությունը (331-339-րդ հոդվածներ)</i>	280
Չարդ 2. <i>Հայցային վաղեմության կասեցումը, ընդհատումը և վերականգնումը (339-344-րդ հոդվածներ)</i>	281
ԹԵՄԱ 8. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (163-225-րդ, 273-288-րդ հոդվածներ)	283
Չարդ 1. <i>Սեփականության իրավունքի հասկացությունը, ձեռքբերումը և դադարումը (164-188-րդ հոդվածներ)</i>	283
Չարդ 2. <i>Սեփականության իրավունքի բովանդակությունը (163-րդ հոդված)</i>	284
Չարդ 3. <i>Ընդհանուր սեփականության իրավունք (189-201-րդ հոդվածներ)</i>	285
Չարդ 4. <i>Սեփականության իրավունքի քաղաքացիաիրավական պաշտպանությունը (273-277-րդ հոդվածներ)</i>	286
ԹԵՄԱ 9. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ (345-469-րդ հոդվածներ)	288
Չարդ 1. <i>Պարտավորության և պարտավորական իրավունքի հասկացությունը (345-346-րդ հոդվածներ)</i>	288
Չարդ 2. <i>Պարտավորության տեսակները (359-364-րդ հոդվածներ)</i>	290
ԹԵՄԱ 10. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (436-469-րդ հոդվածներ)	296
Չարդ 1. <i>Պայմանագրի հասկացությունը, բովանդակությունը և կնքման կարգը (436-438-րդ, 441-րդ, 448-465-րդ հոդվածներ)</i>	296
Չարդ 2. <i>Պայմանագրի տեսակները (439-րդ, 442-446-րդ հոդվածներ)</i> ..	299

ԹԵՄԱ 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐ	302
<i>Հարց 1. Առք ու վաճառքի պայմանագիր (470-570-րդ հոդվածներ)</i>	<i>302</i>
<i>Հարց 2. Վարձակալության պայմանագիր (606-684-րդ հոդվածներ).....</i>	<i>304</i>
<i>Հարց 3. Կապալի պայմանագիր (700-776-րդ հոդվածներ).....</i>	<i>312</i>
<i>Հարց 4. Բեռի փոխադրման պայմանագիր (855-րդ, 857-րդ հոդվածներ).....</i>	<i>315</i>
<i>Հարց 5. Փոխառության պայմանագիր (877-886-րդ հոդվածներ)</i>	<i>317</i>
ԹԵՄԱ 12. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (1100-1183-րդ հոդվածներ) ..	319
<i>Հարց 1. Մտավոր սեփականության հասկացությունը (1100-1110-րդ հոդվածներ).....</i>	<i>319</i>
<i>Հարց 2. Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ծառայությունների, աշխատանքների, ապրանքների անհատականացման միջոցների հասկացությունը և պաշտպանությունը (1167-1183-րդ հոդվածներ).....</i>	<i>320</i>
<i>Գրականության ցանկ</i>	<i>324</i>

**Լ. Ն. ՄԵՐՐԱԲՅԱՆ
Գ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

Ի Ր Ա Վ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ուսումնական ձեռնարկ

Խմբագիր՝

Ս. Ալավերդյան

Տեխնիկական խմբագիր՝

Ն. Խչեյան

Սրբագրումը և էջադրումը՝

Ա. Բոյաջյանի

Չափս՝ 60x84 1/16:
20,75 տպ. մամուլ,
Տպաքանակ՝ 150:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն

Երևան, Նալբանդյան 128, հեռ. 010 59 34 37